# ՅԱՒԱԳԱՐԸ

## ԵՒ

# ՋՀՈՒԴԻ ԱԿԱՆՋԸ

ՊԱՏՄՒԱԾՔՆԵՐ

---

ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՊԱՏԿԵՐՈՎ

ԹԻՖԼԻՍ
1911
Տպարան «Կոյլտուրա»

891.99
Բ-66

-6 NOV

# ՑԱՒԱԳԱՐԸ

ԵՒ

# ՋՀՈՒԴԻ ԱԿԱՆՋԸ

891.99
Շ-66

Շիրվանզադէ

# ՑԱՒԱԳԱՐԸ
# ԵՒ
# ՋՀՈՒԴԻ ԱԿԱՆՋԸ

*ՊԱՏՄՒԱԾՔՆԵՐ*

---

ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՊԱՏԿԵՐՈՎ

ԹԻՖԼԻՍ
1911
Տպարան «Կուլտուրա»

15.07.2013



48391



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
6586-76

# ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

—

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

*Այս գարնան հայութիւնն ու իր գիտակիցները տօնելու են հռչակաւոր վիպագիր և դրամատուրգ Շիրվանզադէի գրական գործունէութեան երեսնամեակը, 1880—1910 թ.։ Այսպիսի ընդհանրական տօնը սովորական երևոյթ չէ. համայն հայ ժողովրդի թէ Կովկասում, թէ Թիւրքիայում, թէ Պարսկաստանում և թէ հեռաւոր գաղութներում կատարելիք արտակարգ տօնախմբութիւնը—որի մասին պարբերաբար գրւում է հայ մամուլի էջերում—և հոգեկան արտայայտութիւնն անշուշտ ունին իրենց արդարացի դրդապատճառը։*

*Այդ դրդապատճառը պարզելու համար, ստորև դրւած կենսագրական համառօտ նկարագրութեամբ ձգտելու ենք ծանօթացնել հայ մատաղ սերնդին, անգրագէտ և անտեղեակ, մանաւանդ հեռուն ապրող ազգայիններին վիպագիր Շիրվանզադէի հետ, որպէս զի նրանք էլ գիտակցութեամբ և հրճւանքով մասնակցեն այն ուրախութեան—տօնական հանդէսներին, եթէ ոչ անձամբ ներկայանալով, գոնէ սրտով ու*

հոգով։ Տօնը կատարուելու է գլխաւորաբար Թիֆլիսում, յօբելեարի ներկայութեամբ, մայիսի 7-ին սոյն 1911 թ.։

Անշուշտ այս տողերը կարդացող կամ լսող թերածանօթը իսկոյն հարց կտայ, թէ ո՞վ է Շիրվանզադէն, ի՞նչ մարդ է, որի երեսնամեայ գործունէութեան համար կատարւում է այս ընդհանրական և արտակարգ տօնը։

Ով որ 1883 թ. կարդացել է «Մշակ» լրագրում «Հրդեհ Նաւթագործարանում» և «Գործակատարի Յիշատակարանից», անշուշտ նա քաղցր յուշերով և բուռն տպաւորութեամբ մտաբերում է այդ գրուածքները, հոգու հետ խօսող երկերի և կենդանի պատկերների նկարագրող հեղինակին, որը հէնց այդ պատմուածքներով անմիջապէս գիտակից հայութեան սիրելի և գրաւիչ վիպասանը դարձաւ։ Այդ պատմուածքների յուզած վառ մտքերը և դրոշմած պատկերներն ընթերցողի գանգում այնքան խորն էին դաջուած, որ երեսուն տարուան ժամանակի հոսած ալիքները չէին կարող դրա ակօսները ջնջել, լցնել, հարթել և մոռացնել տալ հաճելի յիշատակները։

Այդ օրուանից «Մշակի» թերթերը իրենց թևերով Շիրվանզադէի պատկերը տարան հայաբնակ բոլոր վայրերը, երկրի խորքերը և հայութեան ծանօթացրին այդ նոր բարեկամի հետ, որը մի տատասկոտ ասպարէզ էր դուրս եկել ժողովրդի հոգու և սրտի հետ խանդավառ բանակցութեան մտնելու, թշուառին վշտակցելու, բիրտին գեղեցկութեան հետ ծանօթացնելու, քարասրտին կարեկցեցնելու և անտարբերին սթափեցնելու։



Ժողովրդի սրտի լարերին բախւող, նրանց հետ յարաբերութեան մտած և երեսուն տարի նրանց հետ տառապած բարեկամի չարաչար աշխատանքի մորմոքներն ամոքելու համար՝ ներկայիս գիտակից հայութիւնը ընդ առաջ է գնում գրչի զինուորի յաղթանակը տօնելու, այն տօնը, որը դարձեալ հասարակութեան փառքն է, քանի որ տօնականը ամբողջովին իր բոլոր երկերով, իր չար ու բարի ընթացքով պատկանում է իրեն արտադրող ժողովրդին։ Այն զինուորը, որ անդադար երեսուն տարի իր գրիչը վար չի դրել, անխափան յարատևել է իր սկսած գործը գլուխ բերելուն մեծամեծ զոհողութիւններով և փառահեղ երկերով, իրաւամբ արժանի է ընդհանուրի համակրանքին և խրախոյսին։

---

Հայի այս հարազատ զաւակը անգրագէտ, արհեստաւոր-դերձակ, օրական վարձով ապրող ծնողների որդի է։ Նա շատ քիչ է տարբերւում այն ընդհանրութիւնից, որի մէջ ծնելու բախտն է ունեցել Շամախի քաղաքում 1858 թ. ապրիլի 7-ին։ Շիրվանզադէն տոհմակիցներից շատերի նման մի յաղթանդամ, մեծասիրտ և ընչակորոյս հայի՝ Մինաս Մովսիսեանի որդին է, որն իր ձգտումներին ու տենչերին—հարստանալու նպատակին—զոհելով ամբողջ ընտանիքի անդորրութիւնը, շարունակ ապրել է պանդխտութեան մէջ բախտ որոնելով։ Նա եթէ տուն վերադարձել է, այդ բախտաւորութիւնը շատ կարճատև է եղել ընտանիքի համար, որը դատապարտ-

ւած է եղել Մինասի կարօտը քաշել և անձուկ վիճակով ապրել։

Ովսաննան՝ Մինասի կինը—վիպասանի մայրը իր երկու որդիների և երկու աղջիկների հետ միշտ ապրել է հայրենի յարկի տակ, Շամախի քաղաքում, սկեսրոջ՝ Ծաղիկի հովանաւորութեամբ, անընդհատ Ղուբայից՝ ամուսնուց փողի, թղթի ու տեղեկութեան սպասելով և նրա բացակայութեան կարօտը քաշելով։

Մանուկ Ալէքսանդր Մովսիսեանը—Շիրվանզադէն, Մինասի աւագ որդին որբի նման է մեծացել, առանց հօր անմիջական հովանու, անպաշտպան և առանց խնամակալի։ Ալէքսանդրը՝ որպէս տան տղամարդը՝ իր մանուկ հասակից խնամակալի դերն է ստանձնել փոխանակ ուրիշներից խնամւելու, տան հոգսն է քաշել, փոխանակ ազատ ու զւարթ աճելու։ Գուցէ մանուկ Ալէքսանդրը չկարողանար տոկալ այն ծանր ընտանեկան լծին, որ կրում էր դիւրաբեկ ուսերին, եթէ նրան չաջակցէին մայրը՝ Ովսաննան քնքոյշ խնամքով, համբերատարութեամբ, և տատը՝ Ծաղիկը հսկողի և պաշտպանողի հովանաւորութեամբ։ Ծաղիկը մի իսկական հայ կին էր, ուժեղ կամքի տէր և ամբողջ քաղաքում յայտնի իր աներկիւղ բնաւորութեամբ։ Այս տարաբախտ մայրերի խրախուսով Ալէքսանդրը դեռ երեխայ ստանձնում է տան տիրոջ և կառավարչի պաշտօնը։

Մանուկ հասակից Ալէքսանդրն այսպիսի թշւառ վիճակի էր դատապարտւած, հզօրների թոյլերին հասցրած այսպիսի հարւածներին ականատես դարձած, ճնշւած և բորբոքւած, միշտ դառնասիրտ հոգւով



զննել էր այն անդունդը, որ բաժանել էր ունևորին չունևորից։ Այս պարագան այնքան խոր տպաւորութիւն էր թողել նրա քնքոյշ սրտին, որ ամբողջ կեանքում տառապեալի բարեկամը մնաց, թշւառի տանջանքների նկարագրողը դարձաւ։ Նա անվերջ մտրակեց նենգաւորի, զօրաւորի կործանարար ընթացքը և անգութի վայրագ գործերը։

Ինչպէս մանուկ հասակից Ալէքսանդրին ահաբեկել էին Շամախի քաղաքի պարբերական երկրաշարժները, այնպէս էլ նրան յուզել էին մեծատունների, խաների, սովդաքարների դաժան գործերը, որոնք անջնջելի կերպով տպաւորւել էին նրա մատաղ սրտի և ուղեղի ծալքերում։ Սրանց ներգործութիւնն այնքան խիստ էր, որ կրթութիւնը, դէպի քաղաքակիրթ երկիրները կատարած ճանապարհորդութիւնները, ուսումն ու փիլիսոփայական վարդապետութիւնների համբերատարական հայեացքները՝ չկարողացան նրանց թողած հետքերն իսպառ ջնջել։

Մանուկ Ալէքսանդրը վեց տարեկան հասակում գնում է, ինքնակամ մտնում իրենց թաղում հիմնւած բողոքականների քարոզիչ վարպետ Սարգսի վարժարանը։ Այստեղ է սկսում առաջին անգամ Ալէքսանդրը տառերը ճանաչել՝ կարդալ ու գրել։ Այդ վարժարանում կարդալ-գրելուց նախապատւութիւն էր տրւած բողոքականի ձևով աղօթելուն, որն ատելութիւն զարգացրեց ինչպէս մանկան, նոյնպէս նրա մօր և տատի սրտում, որոնք խորշում էին այդ նորամուտ մոլութիւնից։ Ալէքսանդրը դեռ ութ տարեկան չդարձած, նրան տարան Շամախու հայոց եկե-

գեցական դպրոցը։ Այստեղ էլ երկար չըմնաց Ալեքսանդրը. տասը տարեկան հասակում նա մտաւ պետական գաւառական ուսումնարանը (уѣздное училище), որտեղ հինգ տարի սովորեց և աւարտեց տասնևհինգ տարեկան հասակում։

Պետական նախկին գաւառական ուսումնարանները աւելի բազմակողմանի կրթութիւն էին տալիս, քան թէ նրանց յաջորդող քաղաքային (городское училище) ուսումնարանները։ Այդտեղ աւարտողները աւելի պաշար էին տանում և աւելի գործնական մարդիկ էին դառնում, քան թէ վերջին տիպարի քաղաքային ուսումնարանների սաները։ Շրջանկատ Ալեքսանդրը, աւարտելով գաւառական ուսումնարանը, զարգանալու ծարաւով այնպէս տառապում էր, որ նրա հոգին չէր սեղմւում Շամախու նեղ միջավայրում։ Պատանի Ալեքսանդրը մտածում էր բարձրագոյն դպրոց գնալ կամ մեծ քաղաքներում յարմարաւոր գործ գտնել և ինքնակրթութեամբ զբաղւել, բայց միջոց որտեղից գտնէր, ո՞վ նրան պիտի օգնէր։

Այդ ժամանակները, 1872 թ., եւրոպացիները նորանոր քիմիական ներկեր էին բաղադրել, որի պատճառով Կովկասից այլևս տորոնի պահանջն իսպառ դադարեց։ Այս պարագան տորոնի վաճառականների սնանկութեան առիթ դարձաւ։ Ալեքսանդրի հայրն՝ Մինասը, որ պարապում էր Ղուբայում տորոնի մշակութեամբ, նոյնպէս սնանկացաւ, էլ չըկարողացաւ ընտանիքին ապրուստ հայթհայթել։ Ձախորդութիւնն այնպէս խոր էր ներգործել մեծասիրտ Մինասի վրայ, որ նա վճռեց այլևս տուն չըվերադառ-



նալ դատարկ ձեռքով։ Բայց մինչև մահը որոնած բախտը նրա դուռը չըբաղխեց, այս պատճառով ամբողջ տասնըհինգ տարի տուն չըվերադարձաւ և պանդխտութեան մէջ էլ հիւանդացաւ ու մեռաւ։

Այնքան կամապաշտ էր Մինասը, որ ոչ միայն 15 տարի տուն չըվերադարձաւ, չուզեց հարազատներին դատարկ ձեռքով ներկայանալ, այլ 1887 թ. երբ որդին արդէն մեծ համբաւ ստացած՝ գնաց Ղուբա հիւանդ հօրը տեսնելու և թաղելու, Մինասը, շըրջապատւած ընկերներով, ամբողջ կէս ժամ առանց որդու վրայ հայեացքն ուղղելու՝ խօսակիցներից չընդհատեց ուշքն ու աչքը, չուզեց ընկճւել որդու ներկայութեամբ։ Երբ խօսակցութիւնը վերջացաւ, Մինասը դառնալով որդու կողմը, սառնասրտութեամբ ասաց.

—Օհօ՛, մեծացել ես։

1872 թ. սոսկալի երկրաշարժից Շամախին աւերակ էր դարձել։ Բնակիչներից շատերը, մեծ մասամբ հայերը թողին իրենց ծննդավայրը և գաղթեցին Բագու, որն այդ ժամանակները «Աւետեաց Երկիր» էր դարձել։ Երկրաշարժից յետոյ Շամախի քաղաքին այնպիսի աղքատութիւն տիրեց, որ ունևոր, չունևոր թողին իրենց բնակարանները, հեռացան աւերակւած քաղաքից։ Կարիքն այնքան սաստկացաւ, որ պատանի Ալեքսանդրը նոյնպէս 1875 թ. փոխադրւեց Բագու, գրագիր մտաւ Նահանգական դատարանը՝ ամսական 15 րուբլի ռոճիկով։ Այստեղ Ալեքսանդրն ապրում էր մօրաքրոջ՝ Մարիամ Աբէլեանի տանը, ռոճիկի մեծագոյն մասը մօրն ուղարկելով։

Մօրաքրոջ տանը Ալէքսանդրը պատանեկութիւնն անց է կացնում նրա որդիների շրջանում, որոնք Շիրվանզադէի սրտակից բարեկամները դարձան։

Ալէքսանդրի մայրը՝ ամուսնուց անջատուած Ովսաննան՝ երկրորդ որդուն էլ կորցնելու սրտադողից բռնուած, չկարողացաւ երկար դիմանալ միակ զաւակի բացակայութեան կարօտին,—կրտսեր որդին՝ Գաբրիէլը արդէն մեռել էր չորս տարեկան հասակում,—ուստի վերցրեց իր փոքրիկ աղջկանը՝ Աննմանին, եկաւ Բագու։ Ալէքսանդրի մեծ քոյրը՝ Խանումը ամուսնացած լինելով, մնացել էր Շամախի։ Դեռահաս Ալէքսանդրին վիճակուել էր օտար, բազմապահանջ և թանգապրուստ քաղաքում խնամել մօրն ու քրոջը իր ամենաչնչին ռոճիկով, տաժանելի կեանքով օրերը մթնացնելով։ Բայց նա մխիթարւում էր, երբ նկատում էր, որ շատերն են իր նման ծանր բեռների տակ կռացած և դեռ ինքը բախտաւոր էր, որ Մարիամի նման բարեսիրտ մօրաքոյր և Աբէլեան եղբայրների նման յուսատու, մխիթարող բարեկամներ և նեցուկներ ունէր։

Աբէլեան ընտանիքն ամեն կողմից բարերար ներգործութիւն ունեցաւ Ալէքսանդրի ինքնակրթութեան և զարգացման վրայ։ Սովորելու տենչով բորբոքուած դեռահասը իր վշտերն ամբողջովին մոռանում էր, երբ ընկղմւում էր ընթերցանութեան անսահման ծովը։ Ալէքսանդրի լիակատար իրաւունքի տակ էր իր ծանօթների գրադարանը, որից օգտւում էր շարունակաբար։ Այդտեղ նա ծանօթացաւ Աբովեանի, Րաֆֆու, Պռօշեանցի, Աղայեանցի, Նալբանդ-



եանցի, Պատկանեանի երկերի հետ։ Այդ գրադարանում դարսուած էին «Հիւսիսափայլի», «Կռունկի» համարները, Ս. Նազարեանցի «Հանդէս Նոր Հայախօսութեան» և ուրիշ գրքեր, մեր այն շրջանի գրականութիւնն ամբողջապէս։

Ընթերցանութեան մէջ մխիթարութիւն և հոգեկան բաւականութիւն որոնող Ալէքսանդրը անվերջ շարունակեց այս ընթացքը, պարբերաբար կարդալով նոյնպէս ռուս հեղինակների նշանաւոր երկերը։ Բագւի նման մի շռայլ քաղաքում ընտանիքի պահանջը որքան որ ճնշում էր դեռահասին, նա նոյնքան եռանդով խորասուզւում էր ընթերցանութեան մէջ։ Նա արդէն ծայրէծայր կարդացել էր ոչ միայն իր ծանօթների գրքերը, այլև ուրիշ բազմաթիւ հատորներ։ Չկարողանալով պապակն յագեցնել, նորանոր հրատարակուած երկեր ձեռք բերել, նա Բագւում մի հասարակական գրադարան հիմնելու միտքն արծարծեց։

Ալէքսանդրն ու իր ընկերները միացած՝ խորհուրդ արին, դիմեցին Բագւի Հայոց Մարդասիրական ընկերութեան և խնդրեցին հիմնել Բագւի մէջ մի գրադարան։ Սրանց խնդիրը սիրով կատարեց Բ. Հ. Մարդ. ընկերութիւնը, ընթերցարան և գրադարան բացին և Ալէքսանդրին էլ հրաւիրեցին գրադարանապետ։ Ահա այս գրադարանը դարձաւ Շիրվանզադէի համար գիտութեան և գեղարուեստի ճեմարան, որտեղ նա կարողացաւ հասնել որոշ զարգացման։

Շիրվանզադէն կարդում էր առանց որոշ դասաւորութեան։ Ինչ որ հետաքրքրական գիրք ձեռքն

անցնում էր—վիպական, դրամատիքական, պատմական, նոյնիսկ գիտական և փիլիսոփայական—նա յափշտակութեամբ կարդում էր։ Ամբողջ օրն անցկացնում էր այդ գրադարանում գրքերով շրջապատուած, որոնց միջոցով Ալէքսանդրը ծանօթացաւ նոյնիսկ Մալթուսի, Սէն-Սիմօնի, Պրուդօնի և Լասսալի հետ։ Ծանր փիլիսոփայական գրականութիւնը, չոր ու ցամաք քաղաքատնտեսական խնդիրները բաւականութիւն չէին տալիս Ալէքսանդրին, նրա ոգին գեղարւեստական երկերի մէջ էր որոնում հոգեպարար սնունդ։

Այս ցանկութիւնը նա յագեցնում էր ռուս նշանաւոր վիպագիրների երկերի ընթերցանութեամբ. նրա սիրելի հեղինակներն էին՝ Տուրգենևը, Տոլստոյը և Դոստոյևսկին։ Միայն ռուս հեղինակները չէին նրան ոգևորում. նա յափշտակութեամբ կարդում էր Շէքսպիրի, Գէօթէի, Շիլլերի, Բայրօնի, Վալտեր-Սկոտի, Մոլիէրի և ուրիշ նշանաւոր գեղարւեստական հեղինակների երկերը։ Ալէքսանդրն այն ժամանակ չըգիտէր եւրոպական լեզուներ. նա օգտւում էր մեծ հեղինակների երկերի ռուսերէն թարգմանութիւններից։

Բայց Շիրվանզադէի վրայ խոր տպաւորութիւն թողին յատկապէս իրապաշտ դպրոցին հետևող հեղինակները՝ Բալզակը, Ֆլօբէրը և ապա Զօլան իրենց բնապաշտական ուղղութեամբ։ Շիրվանզադէի իրագննին բնաւորութիւնը, շրջանկատ յատկութիւնը, գեղեցկութիւնը բնութեան մէջ որոնող սիրտը՝ նրան մղեցին իրական կեանքի խորքերը։ Նա գրաւեց



իրապաշտական դպրոցի հիմնադիրների երկերով և նրանց հետևեց։

Այս ուսողական-ինքնակրթութեան շրջանում երիտասարդ գրադարանապետը յափշտակւեց մի զարգացած ռուս օրիորդի ազատ գաղափարներով, մաքուր բնաւորութեամբ և ազնիւ յատկութիւններով, որը հիւսիսից հարաւ էր իջել Կովկասի երիտասարդութեան բոցավառ սրտերը գրաւելու Արևմուտքից բերած նորանոր մտքերով։ Օրիորդի արտասովոր գաղափարները, ազատ դատողութիւնները այնպէս յափշտակեցին երիտասարդութիւն թևակոխած Ալէքսանդրին, որ նա խանդավառւեց և զուցէ ամուսնանար այդ քարոզչուհու հետ, եթէ փորձանքով ոտքը չըկոտրէր և այդ հիւանդութեան ժամանակ օրիորդը չըհեռանար Բագւից։

6586-78

Այս հիւանդութեան շրջանում այնպէս քայքայւեց Շիրվանզադէի տնտեսականը, որ նա ապաքինելուց յետոյ պարտաւորւած թողեց իր երկրպագած գրոց-տաճարը և գնաց մտաւ վաճառականական ասպարէզ, քիչ աւելի բարեկեցիկ ապրուստ գտնելու յոյսով։ Նիւթապաշտ դարում, մանաւանդ Նաւթապաշտ քաղաքում, երբ մարդիկ մարդու արժանաւորութիւնը նրա հասոյթով էին չափում, երբ մարդիկ յարգւում էին իրենց դիզած մեծ կարողութեան համար, մարդիկ երկրպագութեան էին արժանանում, երբ կարողանում էին մեծ հարստութիւն ձեռք բերել, Շիրվանզադէն էլ կարող էր սայթաքել և վաճառատուն գլորւել, որպէսզի լաւ ապրուստով մօրն



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна

էլ մխիթարէ, քրոջը՝ Աննմանին էլ ամուսնացնէ և իր պահանջներին էլ բաւարարութիւն տայ։

Սակայն Ալէքսանդրի հոգին ու միտքն այնքան գրաւած էին գեղարւեստական-գրական երկերով, որ վաճառատան մատեանների թւերի արձանագրութիւնը նրան չէին կարողանում կենտրոնացնել ընթացիկ գործերը վարելու համար։ Ընդհակառակը, նաւթարդիւնաբերողի հորերից ու շատրւաններից ստացւած ամենօրեայ կէս միլիոն պուդ քարիւղը, սրա 25—30 հազար րուբլի արժէքն աւելի յուզում էին նրա ներքին աշխարհը։ Ամբողջ գործի մէջ բանող հարիւրաւոր բանւորները, մի քանի տասնեակ մասնագէտ գործակատարները, գրասենեակը, հողի սեփականատէրը, փորողների խմբակը, մեքենաների և ստաղձի մատակարարը—բոլորը միասին չէին ստանում մի տասերորդ բաժինը այն հասոյթի, ինչ որ թափւում էր շատրւաններից գործատիրոջ գանձարանը։ Ալէքսանդրը հաշւապահի մատեանների վրայ գնում էր թերթիկներ և թղթակցութիւններ էր գրում, իսկ հաշւէգրքերի, մատեանների բալանսները կազմելու համար ձեռնհաս հաշւապահներ էին հրաւիրում, որպէսզի տարւայ վերջին գործի շահուշէնը գտնեն։

Շիրվանզադէն ինքնազարգացման շրջանում չըկարողանալով արտայայտւել, հրապարակական ասպարէզ իջնելու բուռն ցանկութիւնները զսպել, դեռ 1878 թ. սկսեց թղթակցել „Бакин. Извѣстія“, „Тифлис. Вѣстникъ“ և „Голосъ„ լրագրերին։ Իսկ հայ գրականութեան մէջ Շիրվանզադէն երևաց միայն



1880 թւականին, երբ սկսեց շարունակաբար իր թղթակցութիւնները հասցնել նախ պահպանողական «Մեղուին» և ապա ազատամիտ «Մշակին»։ Բագւի բանւորների կենցաղի մասին գրած թղթակցութիւններն այնքան աչքի ընկան, որ մասամբ թարգմանւեցան և հրատարակւեցան „Кавказъ“ լրագրում։

Թղթակցի դերը Շիրվանզադէի կոչումը չէր։ Լրագրական յօդւածները նրան հոգեկան բաւականութիւն չէին պատճառում։ Նրա հոգին վեր, դէպի բարձրն էր թռչում, դէպի հսկայ լեռնագագաթները սաւառնում, և ձգտում էր անվերջ բարձրանալ։ «Մշակ» լրագիրն առաջին անգամ տեղ տւեց Շիրվանզադէի «Հրդեհ Նաւթագործարանում» պատմւածքին, որ հաճութեամբ և ոգևորութեամբ կարդաց հայ հասարակութիւնը։ Գ. Արծրունին այդ ոգևորութիւնը նկատելով՝ իր թերթի էջերը լայն բացեց արդէն հեղինակի հռչակի հասած Շիրվանզադէի երկրորդ պատմւածքի՝ «Գործակատարի Յիշատակարանի» համար։

Այս երկու պատմւածքներն այնպէս գրաւեցին հասարակութեան, որ Րաֆֆիի «Խենթի» հրատարակիչ Աբէլ Ապրեսեանը դրանք էլ միասին հրատարակեց առանձին գրքոյկով, որ և շատ շուտով տարածւեց ամեն կողմ։ Այդ ժամանակ բացի Րաֆֆին՝ ոչ ոք իր գրւածներով այնպէս չէր գրաւած հասարակութեան, մանաւանդ երիտասարդութեան սիրտը, ինչպէս իր գրւածներով հմայեց Շիրվանզադէն։ Այս ոգևորութիւնից խրախուսւած երիտասարդ գրողը՝ թողեց ոչ միայն հաշւապահի պաշտօնը, այլև տեղափոխւեց Թիֆլիս 1883 թ. օգոստոսին, և այդտեղ հաստատւեց ու ամբողջովին նւիրւեց հայ գրական գործին։

Շիրվանզադէից առաջ գեղարուեստական-վիպական հայ գրականութիւնը իրապաշտ հսկաներ չունէր, որ դրանք կարողանային նոր գրողի վրայ իրենց խոր ազդեցութիւնը թողնել։ Աբովեանի, Պռօշեանցի, Րաֆֆիի և Աղայեանցի ազգագրական և ռոմանտիքական երկերը չէին կարող յափշտակել Բալզակի, Ֆլօբերի և Զօլայի դպրոցին երկրպագու և նրանց տիպարներով տոգորուած հոգուն։ Ոչ ոք չի կարող հերքել, թէ առաջին անգամ Շիրվանզադէն մտցրեց հայ վիպագրական աշխարհը զուտ իրապաշտական գրականութիւնը, հերոսների բնաւորութեան ճշգրիտ հոգեբանական ուսումնասիրութիւնը։ Որպէս իրապաշտ գրող, Շիրվանզադէն արուեստագէտի հետախոյզ աչքով զննեց իրեն շրջապատող կեանքը, այնտեղից ամենայն ճշտութեամբ և հաւատարմութեամբ, միանգամայն ճարտար ընտրութեամբ արտանկարեց իր հերոսների յոյզերն ու կրքերը։

Շիրվանզադէի առաջին սէրը զարգացած, բարեկիրթ և գաղափարական ռուս օրիորդի հետ, այն էլ երիտասարդութեան սկզբնական շրջանում, այնպիսի խոր ազդեցութիւն ունեցաւ դիւրազգաց սրտի վրայ, որ նա իրական կեանքում սիրոյ հոգեբանութիւնը ուսումնասիրեց անձնական զգացումներով։ Կենսական այս փորձը նրա ապագայ թէ կեանքի և թէ գրուածքների վրայ խոր ազդեցութիւն ունեցաւ։ Այս սիրուց սկսան բղխել Շիրվանզադէի նկարագրած սիրային յաջող տեսարանները, բնական արտայայտութիւնները, իրար յաջորդող արկածների հոգեբանական ճշգրիտ հետևողականութիւնը։



1885 թ. Շիրվանզադէն հրատարակեց իր առաջին մեծ վէպը—«Նամուս» վերնագրով։ Գրուածքի նիւթը վերցրած էր նրան քաջ ծանօթ մի գաւառական քաղաքի ժողովրդի գռեհիկ խաւերի կեանքից։ Ամբողջ վէպը բուռն զգացումների, հոգեկան յոյզերի, ներքին մաքառումների մի հաւաքածու էր, գեղեցիկ և բնական դասաւորութեամբ։ Այստեղ ընտանիքի, նահապետական յարկի, պատուախնդիր ծնողների և նշանուածների տանջանքներն են հանդէս բերուած, նրանց դէմքերն են նկարուած և առօրեայ կեանքն է լուսաբանուած։ Դա մի հայելի է, որտեղ ամեն մի գաւառացի, գռեհիկ կամ թերուս, իր պատկերն է տեսնում և զգացումները կարդում։ Դրա մէջ ոչ ընկճուած հայրենիքի մասին խօսք կայ, ոչ Թուրքի, քրդի բռնութիւնների դէմ պայքար, ոչ էլ քաղաքական ատառ։ Սոսկ ընտանեկան առօրեայ յոյզերը, իրար բաղխւող կրքերը և մրրկած զանգերն էին կազմում Շիրվանզադէի վէպի նիւթը, հերոսների սրտի ներքին խորշերն էին նկարուած խիստ և վառ գոյներով։

Վէպը խոր տպաւորութիւն թողեց, մանաւանդ գաւառական քաղաքներում, աւաններում թերևս, ընթերցանութեան հակուած ժողովրդի սրտի վրայ։ «Նամուսը» ձեռքէ ձեռք էին խլում և յափշտակութեամբ կարդում։ Այս վէպով Շիրվանզադէն իր գրիչ-նժարը ժողովրդի ժահրակալած այնպիսի վէրքերի վրայ էր դրել, որ ընթերցողն այնտեղ հայելու նման տեսնում ու զննում էր իր հոգեկան աշխարհի երկմիտ, կասկածոտ, տատանւող և յանցաւոր պատկերը։ Վէպի թունաւոր նկարագրութիւնը խստացնում էր

ընթերցողի վէրքի կսկիծը։ Իսկ պանդխտութեան մէջ կեանք վարող հայերի սրտերը մրրկւեց, ալեկոծւեց «Նամուսի» մտքերից, պատկերներից ու տեսարաններից. ամենքը յուզւում էին իրենց նամուսի խնդրով, որն իւրաքանչիւրի համար «լինել թէ չլինելու» հարց էր։

Այդ վէպը թարգմանել է ռուսերէն Ալեքսանդր Խատիսեանը, որը լաւ ընդունելութիւն գտաւ և շատ նպաստաւոր քննադատութեան արժանացաւ։

Այս միջոցին Շիրվանզադէի կեանքի մէջ մի նոր յեղափոխութիւն ևս կատարւեց. նա յափշտակւեց մի արամբի կնոջով, և փոխադարձ սիրոյ արժանացաւ, որը նրան նիւթ մատակարարեց հետևեալ տարին հրատարակած «Արամբի» վէպին։ Գնդապետ Զաքարիա Լօռու-Մելիքեանի դուստրը՝ Նինան ամուսնանալով Շիրվանզադէի հետ, ոչ միայն վիպագրի հոգեկից ընկերը դարձաւ, այլև նրան քնքշութեամբ խնամեց ու խրախուսեց առաջ գնալու այն ասպարիզում, ուր մաքառում էր գրչի զինւորը։

«Նամուսի» հասարակութեան մէջ գտած ընդունելութիւնն այնքան ոգևորիչ էր, որ հետևեալ տարին՝ 1886 թ. „Արձագանքի“ խմբագրութիւնը որոշ ռոճիկով Շիրվանզադէին աշխատակից հրաւիրեց։ „Արձագանքում“ պարբերաբար տպագրւեցին Շիրվանզադէի „Օրիորդ Լիզա“, „Խնամատար“, „Արամբի“, „Զուր Յոյսեր“, „Խելագարը“ վէպերը։ «Օրիորդ Լիզան» ժամանակին թարգմանւեց և հրատարակւեց ռուսերէն։ Այս բոլոր գրւածքների մէջ Շիրվանզադէն չըդաւաճանեց իր ուղղութեանը և հայ հասարակու-



թիւնը մեծ հաճոյքով հետևեց ու կարդաց նրա գրւածքները։

Ամբողջ վեց տարի աշխատակցեց Շիրվանզադէն «Արձագանքին», վարելով երբեմն նոյնիսկ խմբագրի պաշտօնը։ «Արձագանքի» մէջ տպագրւած վէպերն այնպէս հռչակեցին Շիրվանզադէի անունը, որ 1888 թ., Րաֆֆիի մահից յետոյ, ժողովուրդը Շիրվանզադէին համարում էր հանգուցեալի յաջորդ հայ վիպական գրական ասպարիզում, ուր այդ միջոցներին նա մրցակից չունէր։

1892 թ. Շիրվանզադէն «Մուրճ» ամսագրում հրատարակեց իր «Արսէն Դիմաքսեան» մեծ վէպը։ Այդ ժամանակները մեր մամուլում սկսւեց գրական քննադատութիւնը բոլորովին նոր աշխարհահայեացքով, ինչպէս բովանդակութեան, նոյնպէս և տենդենցի կողմից։ «Արսէն Դիմաքսեանը» անսպառ նիւթ մատակարարեց քննադատներին, որոնք աւելի խօսում էին այս ու այն անկիւնում, քան թէ գրում լրագրութեան և հանդէսների էջերում։ Իսկ երբ ականջից ականջ տարածւեց, թէ «Արսէն Դիմաքսեանի» հերոսները ժամանակակից գործիչների նկարներն ու դէմքերն են, հասարակութիւնն սկսեց աւելի եռանդուն կարդալ կրկին ու երրորդ անգամ։

«Արսէն Դիմաքսեանը» այն ժամանակւայ հայ գործիչների գործելակերպի ընդհանրական նկարագրութիւնն էր։ Այդտեղ ոչ իրական դէպքեր էին նկարագրւած և ոչ էլ որոշ դէմքերի պատկերն էր նկարւած։ Բայց վէպի հերոսների դէմքերը, բնաւորութիւններն այնպէս կենդանի և իրական գոյներով

էր նկարագրել հմուտ գեղարուեստագէտը, որ բոլոր ընթերցողները իրենց շրջապատողների համանմաններն էին այնտեղ տեսնում և աւելի հետաքրքրութեամբ կարդում։

Իննսնական թւականների թրքահայերի վրայ կատարուած համիդական խժդժութիւնները Կովկասում կազմակերպեցին ծայրայեղ արմատական և ընկերավարական խմբակցութիւններ, որոնք տոգորուած էին գլխաւորաբար իրենց ցեղակիցների վիճակի բարւոքման խնդրով։ Շիրվանզադէի նման մի իրապաշտ վիպագիր չէր կարող դրանց համակրութեան և խրախուսանքին արժանանալ, քանի որ վիպագրի ձգտումներն ու գաղափարները բոլորովին տարբեր էին այդ խմբակցութիւնների ընթացքից։ Այս պատճառով Շիրվանզադէն հալածւում է այդ հոսանքներից։

Շիրվանզադէն հալածանքից ընկճւող մարդ չէր, այլ, ընդհակառակը, աւելի եռանդով առաջ մղեց իր պաշտած գործը լի հաւատով, անսահման յոյսով, հաստատ համոզումներով և իրար ետևից գրեց «Կրակը» 1892 թ., որ տպագրեց առանձին գրքով 1896 թ. և իր գլուխ գործոց՝ «Քաոսը» 1893 թ., որ տպագրեց առանձին գրքով 1898 թ.։ Չընայելով, որ մեր արմատական երիտասարդութեան անվերջ բացասական քննադատութեանն էին մատնուած Շիրվանզադէի երկերը, ժամանակի անտրամադիր, ալեկոծ մտքերի ներհակ հոսանքի կողմից, այս վէպերը դարձեալ գրաւեցին հասարակութեան լուրջ ուշադրութիւնը, կարդացւեցին մեծ յափշտակութեամբ, տարածւեցին ինչպէս



ինտելիգենցիայի, նոյնպէս և ժողովրդի խաւերում։ «Քաոսն» այնքան գրաւիչ էր, որ նրա մասին ոգևորութեամբ էին խօսում նոյնիսկ Շիրվանզադէի հակառակորդները։

Թէև հակառակորդները անվերջ մտրակում էին Շիրվանզադէի գործերը, օգտւելով ամեն մի առիթից, բայց այդ հալածանքը միմիայն նրա երկերի աւելի շատ տարածմանն էր նպաստում։ Շիրվանզադէի վիպական գործերն այնպիսի հետաքրքրութիւն էին զարթեցնում, որ հակառակորդները չէին կարող չըխոստովանել նրա տաղանդը, առաւել ևս՝ երբ նրան գնահատեց ռուս քննադատ Վէսելօվսկին իր „Հայ Բէլէտրիստները“ վերնագրով գրւածքում։

Մինչև 1895 թ. Շիրվանզադէն Կովկասից դուրս չէր եկած։ Առաջին անգամ նա այդ թւականին գնաց Ռուսաստան, տեսաւ քառորդ դար առաջ ճորտութիւնից ազատուած մուժիկին իր „խատա“-ի մէջ (խրճիթում), զննեց ու քննեց, թէ ժողովրդի ինչ վէրքերն են աւելի նիւթ մատակարարել ռուսականաւոր արւեստագէտներին՝ Տուրգենևին, Տօլստօյին, Դոստոյևսկուն իրենց գեղարուեստական երկերն յօրինելիս։ Նա շարունակեց իր ճանապարհորդութիւնը մինչև մայրաքաղաքները՝ Մոսկւա և Պետերբուրգ։ Վերադառնալով Կովկաս, երբ պատրաստւում էր ամփոփել ճանապարհորդական խոր տպաւորութիւնների ճնշման տակ և մի երկ սկսել, դեկտեմբերի սկզբներին նրան իբրև յեղափոխականի կալանաւորեցին և զետեղեցին Մետեխի ամրոցում առանձնական բանտարկութեան։ Այն մարդը, որ հալածւած էր յե-

ղափոխականներից անյեղափոխական գործունէութեան և բնաւորութեան համար, յեղափոխականի տանջանքներին մատնեց երեք ամիս, որը մաշեց առանց այն էլ նրա քայքայւած առողջութիւնը։

Բանտում Շիրվանզադէն գրեց իր „Յիշատակարանը“, որը դուրս գալիս գրաւեցին։ Թէև բանտից արձակեցին, բայց քննութիւնը շարունակւեց երկու տարի։ 1898 թ. սկզբին նրան առաջարկեցին երկու տարի ժամանակով հեռանալ Կովկասից։ Այս ճգնաժամ տարիներում Շիրվանզադէն ոչինչ չկարողացաւ արտադրել, բայց աքսորավայրում՝ Օդեսսայում գրեց „Մելանիա“ վէպը։

Դեռ 1892 թ. Շիրվանզադէն յայտնի դերասանուհի տիկին Սիրանոյշի թախանձանքով գրեց իր առաջին դրաման՝ „Իշխանուհի“ անունով։ Դրամայի հերոսուհու դերում բեմ բարձրացաւ տ. Սիրանոյշը, և պիէսի կենդանացնելու համար ջանք չէր խնայած։ Բայց դրամատուրգի այս առաջին ստեղծագործութեան կեանք չէր վիճակւած. նա քննադատութեան չըդիմացաւ, չայրեց։ Հեղինակն էլ անձամբ կրակին տւեց այդ աշխատութիւնը։

Օդեսսայի աքսորը անչափ օգտաւէտ կողմեր ունեցաւ. Շիրվանզադէն այնտեղ, ազատ խնտրիգներից և վէճերից, սկսեց հետևել դեղարւեստին, թէ թատրոններում, օպէրաներում և թէ նոյնիսկ համալսարանի դասախօսութիւններին յաճախելով։

„Իշխանուհու“ անյաջողութիւնը երբէք չընկճեց Շիրվանզադէի հոգին, ընդհակառակը, միշտ ծրագրում էր մի հոյակապ դրամայով նորից բեմ դուրս գալ։



Աքսորից վերադառնալուց յետոյ Շիրվանզադէն բեմ հանեց „Եւգինէ“ դրաման, որը մեծ յաջողութիւն ունեցաւ ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս Բագւում և ուրիշ քաղաքներում։ Այսօր „Եւգինէն“ հայ հասարակութեան սիրած պիէսներից մէկն է, որի բազմաթիւ կրկնութիւնները երբէք ձանձրացուցիչ չեն եղել։

Դրամաների հետ զուգընթացաբար և աւելի աշխոյժով Շիրվանզադէն շարունակում էր իր վէպերը։ 1900 թ. «Մուրճում» տպագրւեց նրա «Արտիստը», որ հեղինակի երկերի մէջ բոլորովին նորագոյն ներկերով է փայլում։ Հետևեալ տարին «Հորիզոն» հանդիսում լոյս տեսաւ «Ցաւագարը». սոյն վէպը ահա երկրորդ անգամ տպագրում է Շիրվանզադէի 30-ամեայ գործունէութիւնը տօնելու համար կազմակերպւած Յոբելեանական Մասնաժողովը։ Այս գրւածքները այնպէս են ցնցում ընթերցողներին, որ դեռ երկար տարիներ պիտի գրաւեն մատաղ սերնդին։

Այս երկու երկերն էլ թարգմանւած և տպագրւած են ֆրանսերէն լեզւով։ «Ցաւագարը» Frédéric Macller-ի յառաջաբանով, Er. Lerout-ի հրատարակութիւնն է, որի ճակատին ցուցադրւած է Petite Biblothegue Arménienne և յայտարարւած է, որ հեղինակի միւս երկերն ևս պարբերաբար պիտի թարգմանւեն և հրատարակւեն։ Այս գործերի առթիւ Շիրվանզադէն ստացաւ շնորհաւորականներ և հիացմունքի արտայայտութիւններ Անատօլ Լըռուա-Բօլիէից, Ռօնի էնէից, Պիէռ-Լօտիից, Էդմօն Ֆագէից և ուրիշներից։

«Եւգինէի» յաջողութիւնից խրախուսուած՝ Շիրվանզադէն գրեց 1902 թ. «Ունէր իրաւունք» դրաման, ուր հեղինակն իր դաւանանքի հետեւողականութեամբ դուրս եկաւ դարձեալ կնոջ իրաւունքի պաշտպան։ Այս դրաման այնքան էլ դուր չեկաւ մեր կեանքի նեխուած մթնոլորտին։ Թէև բարոյախօսները շշուկներ բարձրացրին, նահապետական ժողովրդի ընտանեկան սրբութիւններին անկոչ պաշտպան հանդիսացան, բայց դրաման ոչ միայն բեմ հանուեց, այլ մինչև անգամ տպագրուեց կղերական համարուած «Լումա» հանդէսում։

1904 թ. հայ բեմը հարստացաւ «Պատւի համար» դրամայով, որ առաջին անգամ Բագու բեմ հանուեց և դարձեալ հրատարակուեց «Լումայում»։ Այս դրաման Թիֆլիսում ներկայացնելուց յետոյ՝ այնպիսի ընդունելութեան գտաւ, որ նա դարձաւ հայ ժողովրդի ամենասիրելի պիէսը։ Ահա եօթը տարի է այս դրաման շարունակ ներկայացուել է աւելի քան 300 անգամ, վաթսունից աւելի քաղաքներում, Կովկաս, Պարսկաստան և Տաճկաստան, ուր նման յաջողութիւն և կայունութիւն չեն ունեցել հայ բեմի վրայ Շիրվանզադէի ոչ նախորդների, ոչ էլ ժամանակակիցների պիէսները թէ Կովկասում և թէ Թիւրքիայում։

«Պատւի համար» դրաման թարգմանուել է վրացերէն, թուրքերէն, ռուսերէն և ֆրանսերէն։

Շիրվանզադէն իր վէպերը, դրամաները, երգիծաբանական գրուածքները հրատարակելու միշտ տեղ ունէր։ Գրական հանդէսները միշտ բաց էին անում



իրանց էջերը նրա համար։ Մանաւանդ վերջին տարիները «Լուման» նուիրեց իր էջերը Շիրվանզադէի երկերի հրատարակութեանը։ Այնտեղ տպագրուեց «Հաւատարիմ Ընկեր», «Գաղափարի Գերին» պատմուածքները և «Վահան Ահրումեան» մեծ վէպի առաջին մասը։

1905 թ. ամառը Շիրվանզադէն թողնում է Կովկասը, ընտանիքով փոխադրւում Փարիզ։ Նրա երկու որդիները դեռ քան տարին չըթևակոխած գիմնազիոնն աւարտել էին, պէտք էր նրանք բարձրագոյն դպրոց մտնէին։ Այս նպատակին հասնելու համար ծնողներն յանձն են առնում ամեն զրկանք, որպէսզի զաւակների բաղձանքը կատարեն։ Մինչև 1910 թ. ամառը Փարիզում մնաց Շիրվանզադէն, չը հեռացաւ ընտանիքից—զաւակներից։

Այս ճանապարհորդութիւնը, Փարիզում երկար ու ձիգ տարիներ ապրելը, գեղարւեստի ովկիանի ալիքների հետ շարունակ բաղխւելը՝ անհնար էր, որ իրապաշտ գրողի հոգեկան աշխարհի վրայ խոր ազդեցութիւն չունենային։ Միայն Փարիզի շքեղ փողոցները, հրաշալի շէնութիւնները, կոթողներն ու յուշարձանները, նոյնիսկ թատրոնները, կաբաւները, ձիարշաւները բաւական էին բոլորովին ընդարձակելու Շիրվանզադէի նման զննող և մինչև հոգու խորքը թափանցող արւեստագէտի աշխարհահայեացքի սահմանները։ Բայց Շիրվանզադէն շարունակ այցելում էր Սորբոն՝ գրականութեան, արւեստի, պատմութեան փիլիսոփայութեան դասախօսութիւնները լսելու։ Նա երեք-չորս տարի հետեւում էր Էմիլ Ֆագիէի բըն-

նդատական, Օլարի պատմագիտական, Դիւրգէյմի փիլիսոփայական, Դիւմայի հոգեբանական դասախօսութիւններին։

Փարիզի կեանքի ներգործութեան տակ Շիրվանզադէն գրեց «Ջհուդի Ականջը» պատմուածքը, որ տպուեց 1906 թ. «Արշալոյս» լրագրում, և որ այժմ հրատարակում է սոյն գրքոյկում Յոբելեանական Մասնաժողովը։ Այնտեղ գրեց նաև «Աւերակների վրայ», «Կործանուածը» և «Արմենուհի» դրամաները։ Այս վերջին դրաման այս տարի Թիֆլիսում բեմ հանեց Հայոց Դրամատիկական Ընկերութեան նախաձեռնութեամբ և տպագրեց Մոսկուայի «Գարուն» հանդէսի երկրորդ գրքում։

Շիրվանզադէն շարունակ թղթակցում էր Փարիզից Թիֆլիսի թերթերին։ Նրա նամակները մեծ մասը պտոյտ էին գալիս ժամանակակից գեղարուեստի շուրջը։ Առանձին ուշադրութեան արժանի են նրա ուսումնասիրութիւնները Ռօդէն արձանագործի ճարտարեղ ձեռակերտների, նրա գեղարուեստական ուղղութեան և հայեացքների մասին։ Փարիզում Շիրվանզադէն գրել է նոյնպէս մի կատակերգութիւն „Շառլատանը“ վերնագրով։

---

Շիրվանզադէն իր բնաւորութեան համաձայն Փարիզումն էլ դրամաների հետ գրեց և վէպեր։ Նրա գզրոցներում ներկայումս շարուած են սկսած, շարունակուած և հոգեկան անդորր ժամերի սպասող մեծամեծ վէպերի և դրամաների կիսատ տետրակները։ Վիպասանը հասել է փորձառութեան և աշխարհա-



հայեցողութեան այն շրջանին, որ սրանից յետոյ պիտի իրագործէ իր գրական լայն ծրագիրները։ Շիրվանզադէն շատ տարիք չունի· այժմ 53 տարեկան է, մի այնպիսի շրջան, որտեղից սկսում և աւարտում են մեծ գրողների ամենալուրջ երկերը։ Նա ծեր չէ, ընդհակառակը, աւելի քան աշխոյժ և պատրաստական գործելու։ Միայն թէ անհրաժեշտ է նրան հոգեկան խաղաղ վիճակ, որ տաղանդաւոր գրչի գինուորը կարողանայ լրջութեամբ արտադրել։

Այն մշակից, որ ամբողջ երեսուն տարի իր «Կեանքի բովերի», ինչպէս ինքը գրում է, և այնքան հալածանքների շրջանում կարողացել է այսպիսի արդիւնք տալ մեր աղքատիկ գրականութեան, այդ մշակից այժմ իրաւամբ աւելի ևս յուսալու ենք։ Ճշմարիտ է, երեսուն տարուան գրչի գինուորը անչափ տառապել է իր ընտրած տատասկոտ ասպարիզում, յաճախ տանջուել ու հալածուել, բայց նա ինչպէս արիութեամբ տարել է ամեն տեսակ անարգանք ու զրկանք առանց բաժանուելու իդէալից, այնպէս էլ նա կարող է տանել հետագայ կեանքի դժուարութիւններն առանց խոտորելու ընտրած շաւղից, որի վրայ թափել է իր քրտինքն ու արիւնը, աչքի լոյսն ու ոյժը։

Թէև անչափ խեղդող և ճնշող է Շիրվանզադէի այժմեան վիճակը, երբ նրա կրտսեր որդին՝ Արմէնը Փարիզի իրաւագիտական ճեմարանն աւարտելու օրերին հիւանդացաւ և այժմ փոխադրուած է տառապեալների բուժարանը, բայց այս վիշտը չի կարող ընկճել այն արիասիրտ հօրը, որն երեսուն տարի

հայ ժողովրդի նոյնանման վշտերն է նկարագրել։ Նա չի կարող հեռանալ, հէնց այս վշտի դէմ կռուելու համար, իր միակ մխիթարական և պաշտամունքի առարկայ գրական ասպարիզից, որը միայն կարող է նրան տոկունութիւն տալ կեանքի այս դառն փորձանքների դէմ մաքառելու։ Շիրվանզադէն պէտք է գրէ, որ ապրի, պիտի արտադրէ, որ մխիթարուի, պիտի հրատարակէ, որ իր սիրած ընթերցողների հետ բաժանէ իր վիշտը և թեթևացնէ բեռը։

Այն գրիչը, որ երեսուն տարի միայն կենսական պայքարով է կեանք վարել, այդ պայքարի ընթացքում իր գործերի շարքերն արտադրել, որի գրուածքների ընդարձակութիւնը, գեղեցկութիւնը, գոյների խտութիւնը և տիպերի զօրեղութիւնը պարտական ենք նրան հալածողներին, որը վշտի գրկումն է յղացել իր երկերը, դառնութեան արտասուքով բեղմնաւորել և ուղեղի հիւթովը սնդել, այդ գինուորին չեն կարող և չըպիտի ընկճեն բնական պատահարները։ Շիրվանզադէին կարող է վհատեցնել միայն ամլութիւնը, գրելու հնարաւորութեան բացակայութիւնը։

Բայց ինչպէս կը կարողանայ Շիրվանզադէն շարունակել, իր վէպերի անչափ շահեկան շարքերն ընդլայնել և զարդարել նորագոյն երկերով, երբ 1903 թ. սկսած նրա «Երկերի Ժողովածուն» միջոցների սղութեան պատճառով դադարեց երրորդ հատորով, և ահա եօթը տարի է, հնարաւորութիւն չունի գոնէ խոստացուած չորրորդ հատորն անգամ հրատարակելու։ Գրելու և մեր իրապաշտ գրականութեան ընտիր և գեղեցիկ գործեր տալու համար



անհրաժեշտ է գրողի կեանքն ապահովել, որից զուրկ է հայ գրականութեան գործիչը։

Միայն այն ժամանակ գրագէտը կարող է օգտակար, վսեմ գործեր արտադրել, երբ նրա աշխատանքը արժանաւորապէս կըգնահատուի, տասնեակ հազարներով կըվճարուի, հրատարակիչը տասնեակ հազարներով կըվճարի գրողի երկը գնելիս։ Ինչպէս Էռնէստ Ռընանն ասում է, միայն այն ժամանակ գրականագէտը կարող է մեծ երկ հեղինակել, երբ նա ապրուստի կողմից բոլորովին ապահովուած կըլինի, իր գործին անհրաժեշտ աղբիւրները ձեռքի տակ կունենայ և կարիքից չի տապակուի։

Բայց այս առաւելութիւնները ո՞վ կըտայ հայ գրողին։

Մեզ նման մի խեղճ ժողովրդի գրականութիւնը, Կովկասի միայն միլիոն ու կէս ազգաբնակութիւնը երբ կարող էր այնպիսի երկերով զարդարուել, ինչպիսի գրուածքների գոհարները կազմում են Շիրվանզադէի գործերը, եթէ հայ հեղինակները օժտուած չըլինէին հերոսական զոհաբերութիւն կատարելու ընդունակութեամբ։ Երբ մի հեղինակի և հրատարակչի գործը, այն էլ մի հազար օրինակով չեն սպառւում տարիների ընթացքում, երբ հազար հոգի հայից մէկն անգամ չի հետաքրքրւում մայրենի գրականութեամբ, յայտնի բան է, աւելի քան հերոսներ են պէտք տոկալու այդ տաժանելի աշխատանքին։

Հեղինակի վերջին շրջանի արտայայտութիւններն ապացուցանում են, որ հոգու անդորրութեան իւրաքանչիւր վայրկեանը ընդունակ է ներշնչել Շիր-

յանգադէին այնպիսի եռանդ իր սիրած գրիչը շարժելու և «Կեանքի բովից» այնպիսի պատկերներ արտադրելու, որոնք միմիայն ընթերցողին և ապագայ սերնդին կարող են կապել հայ գրական երկերի հետ, հետամտել և սիրել մայրենի լեզուով ընթերցանութիւնը։

Եթէ համայն հայութեան հաճելի է ոգևորիչ շատ ու շատ վայրկեաններ և ժամեր տալ Շիրվանզադէին և սրանից յուսալ աւելի գեղեցիկ գործեր, յոյս ունինք, որ նա, սոյն յոբելեանական տօնին, կըմասնակցի ստուար մեծամասնութեամբ և այնպիսի հոգեկան բուռն արտայայտութեամբ, որ կըխրախուսէ, կըմխիթարէ և կոգևորէ, որ վիպագիր-դրամատուրգը աւելի մեծ եռանդով շարժէ այն գրիչը, որ երեսուն տարի անընդհատ մեզ տուել է այնքան գեղեցիկ և սրտառուչ երկեր։



# ՑԱՒԱԳԱՐԸ

## I.

Այն քաղաքը, ուր կատարուել է այս անցքը, այժմ էլ այնպէս աննշան է և աշխարհից մոռացուած, որպէս շատ տարիներ առաջ։ Նրա բնակիչները աղքատ են, տները մեծ մասամբ աւերակ, փողոցները քարերի ու հողի կոյտերով լի, տխուր, ամայի։

Գեղեցիկ է միայն այդ քաղաքի բնութիւնը։ Օդը քնքոյշ է, երկինքը կապոյտ ու պայծառ, շրջակայ դաշտերը ծաղկազարդ, ձորերը հովասուն։ Այնտեղ գարնանը գիշերը մինչև լոյս երգում են սոխակները գաւիթների բարձրագագաթ բարդիների վրայ, իրանց գեղգեղանքը խառնելով տերևների հանդարտ սօսափիւնի հետ։

Մի խումբ երեխաներ, մի կիսաւեր տան փլատակների վրայ ցրուած, վազվզում էին այս ու այն կողմ, ծիծաղում, աղաղակում, կենդանութիւն տալով մռայլ քաղաքի դատարկ փողոցին։ Նրանց մէջ կար և՛ մի եօթը տարեկան աղջիկ, որին ընկերուհիները կոչում էին «Սիրուն» Սօնա։ Ոտաբաց, գլխա-

բաց, մի ձեռին բռնած մի կտոր հաց, միւս ձեռով ճակատի վրայ սփռւած ոսկեգոյն մազերը ուղղելով, կանգնած էր մի հողաբլրի վրայ և աղաղակում էր.

—Եկէք, եկէք, եթէ կարող էք, ինձ բռնեցէք։

Նրա սևորակ աչքերը վառւել էին սև ադամանդների պէս։ Նա ուրախ էր, որովհետև ոչ ոք նրա պէս վազել չգիտէր։ Արդէն երեք-չորս անգամ պտտել էր բլրակի շուրջը, և խաղընկերները չէին կարողանում նրան բռնել։ Արդարև, նա սիրուն էր։ Արեգակը այրել և սևացրել էր այտերն ու քիթը, քարերը քերել էին ոտները և կոպտացրել, բայց, այնուամենայնիւ, սիրուն էր։ Սիրուն նոյն իսկ այն երկու կտոր ցնցոտիների մէջ, որ հազիւ հազ ծածկում էին նրա մարմինը և որ չքաւորների լեզւով կոչւում են «հագուստ»։

—Եկէք, եկէք, թէ կարող էք, ինձ բռնեցէք...

Դարձեալ խաղընկերները յարձակւեցին նրան բռնելու։ Նորից կամեցաւ փախչել, բայց այս անգամ պատահեց մի բան։ Մի քանի քայլ չարած, յանկարծ մի վայրենի ճիչ արձակեց և երեսնիվեր ընկաւ հողաբլրի վրայ։ Ոչ այնպէս, ինչպէս սովորաբար ընկնում են նրա հասակակիցները և խկոյն ոտքի կանգնում։ Նա ուղղակի թաւալւեց ինչպէս գնդակահար եղած մի փոքրիկ գազան, մռնչալով սաստիկ վէրքից։

Խաղընկերները մի ակնթարթում մօտեցան նրան բարձրացնելու։ Նա մի տարօրինակ շարժում գործեց։ Ամենը սարսափած դէս ու դէն ցրւեցին։ Նրա ամբողջ մարմինն ու երեսի մկանունքները ընդարմացել էին։ Աչքերը կիսաբաց էին, բիբերը խոշորացած և



անշարժ։ Բերանից հոսում էր փրփրալի թուքը թանձրը չարաւի պէս։ Նրա ձեռների բութ մատները, ինչպէս ոլորուն պարան, ծռւել էին դէպի ափերը և սեղմւել միւս մատների տակ, իսկ ոտների ոլոքները ցցւել էին չորացած ընկոյզների նման։ Դէմքը առաջին վայրկեան դեղնեց, յետոյ սկսեց կապտել, մթագնել, վերջապէս, բոլորովին կարմրեց։ Ծնչառութիւնը մի քանի վայրկեան ընդհատւեց, ապա վերադարձաւ։ Այս դրութեան մէջ մնաց մի րոպէի չափ։ Յետոյ նրա ձախ երեսի մկանունքները սկսեցին ցնցւել, ապա ցնցւեց աջ երեսը, պարանոցը և այնուհետև—ամբողջ մարմինը։ Այժմ նա շնչում էր արագ-արագ, ուժգին և, կարծես, հառաչներով։

Այս անսպասելի դէպքը ապշեցրել էր նրա խաղընկերներին։ Քսան քայլ հեռու հաւաքւած, նրանք նայում էին իրանց ընկերուհուն։ Բոլորի դէմքերի վրայ նկարւած էր և՛ երկիւղ և՛ հետաքրքրութիւն։ Ի՞նչ պատահեց սիրուն Սօնային։ Մի րոպէ առաջ վազվզում էր ամենից արագ, ինչո՞ւ այժմ, գետնին թաւալւած, երկիւղալի շարժումներ է անում։ Ո՛վ գիտէ, քարով խփեցին նրան։ Բայց ոչ ոք Սօնային ձեռ չէր տւել։ Նա ինքն ընկաւ. այս տեսան բոլորը։

«Սևիկ» Մարգարիտը վազեց Սօնայի ծնողներին լուր տալու։ Տանը ոչ ոք չըկար։ Սօնայի հայրը շուկայումն էր, իսկ մայրը գնացել էր ուրիշների համար հաց թխելու։ Նա շրջիկ հացթուխ էր։ Ա՛խ, եթէ իմանար, ինչպէս նրա միակ զաւակը, անտէր, անօգնական, ընկած է փողոցում, արեգակի տակ, ինչպէս նրա մազերը գզգզւել են, փոշով ծածկւել և ինչպէս

նա խրխռում է վիզը կտրած գառնուկի պէս։

—Գիժ-Դանէլը, գիժ-Դանէլը,—գոչեցին մանուկները միաբերան և մի վայրկեանում ցրուեցին այս ու այն կողմ։

Փողոցի ծայրից գալիս էր մի մարդ, հաստ ու երկայն գաւազանը կրծքի վրայ սազի պէս բռնած, բարձր ձայնով Թուրքերէն երգելով։ Նա ոտաբոբիկ էր և գլխաբաց։ Նրա սևացած և բրդբրդոտ կուրծքը բոլորովին մերկ էր, ալեխառն միրուքն ու մազերը կեղտոտ և փշերի պէս ցցուած։ Նրա հագուստը բաղկացած էր հաստ կտաւից կարած մի շապկից և կարճ անդրավարտիկից, որ ծածկուած էին թանձր կեղտով։ Ո՞վ չէր ճանաչում գիժ-Դանէլին և չէր տեսել նրան։ Օրը մինչև երեկոյ պտտում էր կիսաւեր քաղաքի փողոցներում, մերթ ողբալով փլատակները, մերթ վազվզելով և երբեմն չորքոտանի մանգալով, որ աւելի վախեցնի վախկոտ մանուկներին և ծիծաղեցնի անվեհերներին։

Նա մօտեցաւ Սօնային, բղաւեց նրա վրայ։ Աղջիկը չըվերկացաւ, չըշարժուեց։ Դանէլը զարմացաւ. այն ո՞ր յանդուգն երեխան է, որ գիժ-Դանէլից չի սարսափում։ Եւ նայեց աղջկայ երեսին։ Այժմ Սօնայի ձեռներն ու ոտները չէին կծկւում, միայն նա շատ գունատ էր և զարմացած աչքերով մտիկ էր անում Դանէլի երեսին։ Նրա բերնի փրփուրը, խառնուելով գետնի փոշիի հետ, ցեխոտել էր երեսն ու մազերի մի մասը։ Նա հանդարտիկ բարձրացրեց ծանրացած գլուխը և նստեց։

—Քեզ խփե՞լ են,—հարցրեց գիժ-Դանէլը։



Սօնան լուռ նայում էր նրա երեսին։ Նա իր մարմնի մէջ զգում էր սաստիկ թուլութիւն։ Ոչինչ չըգիտէր այն յանկարծահաս հարուածի մասին, որ նրբան թաւալեց գետին։

—Գլուխս ցաւում է,—արտասանեց նա նուաղած ձայնով։

Գիժ-Դանէլը խէթ-խէթ նայեց նրա երեսին, և յանկարծ սովորական բարկութիւնը տեղի տուաւ մի անսովոր մեղմութեան։

—Մանիշա՛կս, Մանիշա՛կս, գոչեց նա,—լաւ միտս է, նա՛ էլ չէր խօսում, չըվերկացաւ։ Դու վերկաց, ես քեզ կօգնեմ։

Նա բռնեց Սօնայի բազուկներից և ոտքի կանգնեցրեց, հետաքրքրութեամբ նայելով նրա աչքերին, հասակին, մազերին։ Յետոյ, նայելով իր չորս կողմը, այնպէս որ, կարծես, վախենում էր տեսնեն, համբուրեց Սօնայի ճակատը, գրկեց նրան և բարձրացրեց։

—Է՜յ, լակոտներ, եկէք, ցոյց տուէք Մանիշակիս տունը, ես ասլան Դանէլն եմ, պատառ-պատառ կանեմ, հում-հում կուտեմ։

Ուրիշ ժամանակ Դանէլի այս սովորական սպառնալիքը կըստիպէր փոքրիկներին անհետանալ։ Այս անգամ, տեսնելով, որ նա հայրական խնամքով գըրկեց ընկերուհուն, սիրտ առան և, առաջ գալով, ցոյց տուին Սօնայի բնակարանը։

Փողոցի միջին մասում, երկու փոքրիկ տների մէջտեղ, երևում էր տասը քայլ երկայնութեամբ մի պատ, որ կազմուած էր միմեանց վրայ առանց շա-

ղախի ղարսած քարերից։ Երկու հնամաշ տախտակներ, իրարու հետ բևեռուած, ծառայում էին դըռան փոխարէն։

Գիժ-Դանէլը, Սօնային գրկած, մտաւ մի կեղտոտ բագ, որի խորքում գտնւում էր Սօնայի բնակարանը, որ գիւղական խրճիթի տեսք ունէր։ Նա զգուշաբար բեռը դրեց խրճիթի դռների առջև և, դառնալով մանուկներին, հարցրեց.

—Այս երեխան մայր ունի՞։

—Մայր էլ ունի, հայր էլ։

—Համ։ Մանիշակս մայր չունէր, մազերը այսպէս էին, ճակատն էլ, աչքերն էլ։ Է՛յ, լակոտներ, այստեղից չըհեռանաք մինչև նրա մօր գալը. իմացա՞ք, պատառ-պատառ կանեմ, հում-հում կուտեմ։

Նա չոքած էր Սօնայի առջև. յենուեց գաւազանի վրայ, որ բարձրանայ։ Այդ միջոցին խրճիթին մօտեցաւ մի կին տեղական հագստով, կռնատակին բռնած երկու թաժա հաց։ Հակառակ քաղաքի սովորութեան, այդ կնոջ երեսը բաց էր, չընայելով երիտասարդ հասակին։ Տեսնելով խրճիթի առջև խմբուած մանուկներին, նա թոյլ ձայնով արտասանեց.

—Էլի քամբախտը...

Բայց երբ նկատեց Սօնային, ձեռները թուլացան, հացերը կռնատակից վայր ընկան։ Նա յարձակուեց իր աղջկայ վրայ, գոչելով.

—Երեխա՛ս, երեխա՛ս...

Քրտինքը անձրևի պէս թափւում էր երեսից։ Այտերը այնչափ կարմրած էին, որ այրած աղիւսի էին նմանւում։ Աչքերը լի էին արիւնով, պարանոցը



փքուած, կոկորդի երակները ուռած և կապտած։ Այդ օրը հացթուխ Շուշանը մի քանի հարիւր անգամ գըլխիվայր թեքուել էր վառ թոնրի մէջ։ Կրակը կիզել էր նրա այտերը և արիւնը խփել գլխին։

—Դրսում ընկած էր, ասլան Դանէլը բերեց այստեղ,—ասաց խենթը։

—Դրսո՞ւմ, ընկա՞ծ,—կրկնեց հացթուխը,—ինչո՞ւ էր ընկել։

—Բերանից փրփուր էր գալիս, կարմրել էր քեզ պէս, ոտները տափին էր խփում...

Հացթուխը ընդհատեց խենթի խօսքը մի ճչով։ Նայեց Սօնայի ապուշ աչքերին և, կարծես, մի մոռացուած բան մտաբերեց։ Ձեռները բարձրացնելով, խփեց իր գլխին և բացականչեց.

—Վա՛յ նրա մօրը...

Մի քանիսը Սօնայի խաղընկերներից, միմեանց խօսքը կտրելով, պատմեցին պատահած անցքի մանրամասները։ Քանի նրանք պատմում էին, այնքան հացթուխի դէմքը փոխւում էր։ Նա շարունակ գլխով հաւանական շարժումներ էր անում ամեն մի խօսք լսելիս։ Երբ բոլորը ուշադրութեամբ լսեց, դարձեալ խորը-խորը նայեց Սօնայի երեսին, և այժմ նրա կասկածը բոլորովին փարատւեց։ Վերջին տարւայ ընթացքում այդ երրորդ համանման դէպքն էր, որ պատահում էր Սօնային։ Առաջին և երկրորդ անգամ Սօնան տանն էր։ Բացի ծնողներից ոչ ոք չըտեսաւ նրա դժբախտութիւնը։ Իսկ այժմ փողոցո՞ւմ, խաղընկերների մօտ...

—Գնացէք,—գոչեց հացթուխը դառն սրտմտու-

թեամբ, ղառնալով մանուկներին ու աղջիկներին,— ինչ բան ունեք մեզ հետ, մենք անբախտ ենք։ Դանէլ ապեր, գնա, ոչ ոքի չասես, եթէ հոգի ունիս։ Երեխայ է, ընկաւ, ինչ անենք, ուրիշներն էլ ընկնում են... Ի՞նչ փրփուր, ինչ կապտել, կարմրել, սուտ է...

Վշտացած կնոջ դառը խօսքերը Դանէլին խորհրդաւոր թւացին։ Նրան խնդրում էին լռել, և նա զգաց, որ այս խնդիրը մի լուրջ իմաստ ունի։ Նա ձեռով ծածկեց բերանը, մէջքից թեքւեց և, դառնալով երեխաներին, շշնջեց.

—Սուսս, ո՛չ ոքի... պատառ-պատառ կանեմ, հում-հում կուտեմ...

Յետոյ, գաւազանը շարժելով, փախցրեց բոլորին և ինքն էլ նրանց ետևից դուրս գնաց, թուրքերէն երգելով.

«Զար որսորդի նետը մտաւ
«Իմ ձագուկի սրտի մէջ...

Հացթուխը գրկեց Սօնային, տարաւ խրճիթի ներսը, հանեց սենեակի միջին պատի մեծ խորշից անկողին և փռեց յատակի վրայ։ Պառկեցրեց այնտեղ հիւանդին և ինքն էլ նստեց նրա մօտ, իւր խանդակաթ հայեացքը յառելով նրա երեսին։ Սօնան լուռ էր և տակաւին ապշած նայում էր այս ու այն կողմ։ Մօր հարցերին անորոշ պատասխաններ էր տալիս։ Գանգատւում էր միայն, թէ գլուխը ցաւում է, յոգնած է, մարմնի վրայ զգում է ինչ-որ ծանրութիւն։

Մի քանի րոպէ անցած ներս մտաւ հացթուխի



ամուսինը—պայտառ Ոսկանը և, կանգնելով աղջկայ գլխի կողմում, հարցրեց.

—Ի՞նչ է պատահել։

Մօտ քառասուն տարեկան մի մարդ էր Ոսկանը, միջահասակ և տգեղ։ Նրա ձեռները, երեսը, պարանոցը ածուխի մրով սևացած էին։ Նրա սրածայր քիթը ծածկւած էր փոքրիկ արիւնագոյն բշտիկներով։ Իսկ ականջների տակ, ծնօտի վրայ երևում էին երկու կապտագոյն բծեր, որ փոքրիկ աչքերի ու թաւ ունքերի հետ միասին հրող ազդեցութիւն էին անում մարդու վրայ։

Հացթուխը չընայեց նրա կողմը։ Միայն աչքերը բարձրացրեց դէպի վեր և ձեռները տարածեց օդի մէջ։ Նա երկնքից համբերութիւն էր աղերսում։ Ոսկանը իր թերմաշ չուխայի տակից ձգեց յատակի վրայ գոյնզգոյն թաշկինակի մէջ փաթաթած մի կտոր միս, ասելով.

—Վեր կաց, խորովիր, քաղցած եմ...

Տասն ու մէկ տարի էր հլու կինը չարչարւում էր այդ մարդու ձեռքին, ինչպէս վաճառւած ստրուկ։ Միայն Ոսկանի գռեհիկ բնաւորութիւնը չէր հացթուխին տանջողը։ Յաճախ նա տուն էր գալիս հարբած։ Այդ ժամանակ կնիկը նայում էր նրա փոքրիկ և դեղնագոյն աչքերին։ Վա՜յ նրան, եթէ սխալ էր հասկացել այդ աչքերի իմաստը։ Առանց այլ և այլի իր մէջքի վրայ պիտի ընդունէր կոպիտ պայտառի բռունցքի հարւածները։

Ծոյլ ու պղերգ մարդը, կարծես, կնոջ վիշտը աւելի կատարեալ անելու համար մի սովորութիւն ևս

ունէր։ Օրւայ մեծ մասը յօրանջելով պտտում էր ուրիշների խանութները, պատահած տեղը ընդունելով սրանից նրանից մի բաժակ օղի։ Այդ էլ բաւական չէր։ Նա բոլոր մեռելներին ուղեկցում էր մինչև գերեզմանատուն, երբ «մեռելահաց» ուտելու յոյս ունէր։ Ամենից աւելի հացթուխին վիրաւորում էր այս ձրիակերութիւնը։ Չքաւորի վիճակը այդ կնոջ սրտում չէր ոչնչացել, ընդհակառակը հիւանդութեան աստիճանին էր հասցրել պատւի զգացումը։ Օրը մինչև երեկոյ քրտինքը երեսին կրում էր մի տաժանակիր աշխատանք իր ընտանիքի օրւայ պարէնը վաստակելու համար։

—Տեսնո՞ւմ ես ինչ օրի ընկաւ երեխաս,—գոչեց հացթուխը, առաջին անգամ համարձակւելով իր կսկիծը բարկացոտ ձայնով արտայայտել։— Կատարւեց չար երազս։ Հայրդ նստած էր մի սև ձիու վրայ, երեխայիս էլ դրել էր քամակին... գնում էին, գնում, չըգիտեմ որտեղ... Ինչո՞ւ, նրա գերեզմանը տակն ու վրայ լինի, ինչո՞ւ երեխայիս հետը տարաւ... Ընկնաւո՞ր, Տէր Աստուած, ո՞ր մեղքիս համար...

Այս գանգատը արտասանեց մի այնպիսի ազդու ու կսկծալի եղանակով, որ Սօնան դարձրեց դէպի նա թախծալի աչքերը և սկսեց հանդարտիկ լաց լինել։ Արտասուքի խոշոր կաթիլները գլորւում էին նրա գունատ այտերի վրայով և թրջում մօր կուրծքը։ Կարծես, հացթուխի յուսակտուր խօսքերի մէջ զգաց և հասկացաւ, թէ ինչ պատուհաս էր եկել իր գլխին։

Ոսկանը սևացած մատներով երկաթեայ ունելիքի պէս ճանկեց՝ կոշտ աւելի նման՝ միրուքը։ Կնոջ խօսքերն ու աղջկայ արցունքները ազդեցին նրա վրայ։ Նա արդէն հասկացել էր, ինչ չարաբաստիկ դէպք է տեղի ունեցել։ Նա միայն հարցրեց.

—Էլի՞ որտեղ ընկաւ...

—Փողոցում, ընկերների առաջ...

Տիրեց մի ճնշող լռութիւն։ Մայրը գրկել էր աղջկայ գլուխը, աչքերը յառել առաստաղին և մտքում աղօթում էր։ Սօնան դեռ լալիս էր, ձեռները փաթաթած մօր պարանոցին։ Ոսկանը անցուդարձ էր անում եօթ-ութ քայլ երկայնութիւն ունեցող սենեակում։ Նա կանգ առաւ, մատները հանեց միրուքի միջից, թեքւեց, գրկեց Սօնային և համբուրեց նրա ճակատը։

Դա առաջին հայրական համբոյրն էր այն օրից, երբ Սօնան կարող էր զգալ ծնողների համբոյրը։ Նա բռնեց հօր կոշտ ձեռը և սեղմեց շրթունքներին...

---

## II

Այդ օրից «Սիրուն» Սօնային ընկերուհիները այլ ևս չէին տեսնում փողոցում։ Մայրը փակեց նրան տանը այն հասակում, երբ դեռ մի-երկու տարի մընում էր ազատ վազվզել դրացի աղջիկների հետ։

Կարող էր Սօնայի թշուառութեան լուրը տարածւել քաղաքում, այն ժամանակ նրա ապագան փչացած էր։ Ո՞վ կըհամաձայնւէր նրան կին առնել։ Այսպէս էր մտածում հացթուխը։ Նա չէր հոգում, թէ դիցուք Սօնայի ցաւը յաջողեց թաքցնել մինչև նրա ամուսնանալը, յետոյ մի՞թէ մի օր իրականութիւնը

չըպիտի յայտնուէր։ Նա յոյս ունէր Աստծու գթութեան վրայ և չէր ուզում հաւատալ, որ իր զաւակը վարակուած է անբուժելի ախտով։

Դեռ մի տարի չէր անցել չարաբախտ օրից, Սօնան արդէն երկու անգամ ուշաթափուել էր։ Վերջին անգամ ընկաւ ուղղակի հօր գիրկը։ Այդ միջոցին Ոսկանը ծալապատիկ նստած էր յատակի վրայ։ Նա նոր էր վերադարձել մի հարուստ մեռելահացից։ Համբարձում աղային էին թաղում, մի՞թէ կարելի էր քաղաքի առաջին մարդու հոգու համար «արքայութիւն» չըմաղթել, նրա ազգականներին էլ «Աստծով մխիթարուէք» չասել։

Նա կարծեց, թէ Սօնան անզգուշաբար սայթաքեց և ընկաւ։ Ձեռի մի շարժումով բարկացած շըպրտեց նրան մի կողմ։

Հիւանդը ընկաւ սենեակի մէջտեղն ու սկսեց խըխռալ։ Այն ժամանակ միայն հարբած պայտառը զգաց նրա ցաւը։ Նա վերկացաւ, դրեց աղջկան իր ծնկների վրայ, նայեց նրա ամուր փակուած աչքերին, որ ծռուել էին դէպի վեր և մտել ունքերի տակ։ Նորից հիւանդին բաց թողեց դէպի յատակը և ինքը, երեսին խաչակնքելով, յետ ու յետ քաշուեց։

Օրը գարնանային էր։ Բնութիւնը նոր նոր ըսկսել էր ծաղկել։ Սենեակի օճորքի տակ բուն դրած ծիծեռնակները ճախր էին գործում Սիրուն Սօնայի գլխի վրայ, ծլվլալով և իրանց ձագուկների համար կերակուր որսալով։ Արևի պայծառ ու դուրեկան լոյսը տարածուել էր դէպի խրճիթի ներսը։ Նրա մի շողը խաղում էր յատակի վրայ թաւալուած Սօնայի



բաց ճակատին, որի շուրջը գանգուր ոսկեգոյն մազերը կազմել էին մի սքանչելի պսակ։ Դրսից լըսւում էին վազվզող աղջիկների և մանուկների ուրախ ձայները։ Պատի տակ նստած էր հարբած պայտառը և, նայելով իր աղջկան, քթի տակ ինչ-որ մրմրթում էր։

Երբ հացթուխը ներս մտաւ, Սօնան արդէն ըսթափուել էր։ Սենեակը աղմկեց Շուշանի կսկծալի աղաղակով։ Նա վազեց և յարձակուեց աղջկայ վրայ, կամեցաւ գրկել և համբոյրներով հեկեկալ։ Բայց Սօնան այնքան թոյլ էր, որ մօր գրկում չըկարողացաւ շունչ քաշել։ Գլուխը դրեց յատակին, կամացուկ արտասանելով.

—Ոտներս ու մէջքս ցաւում են։

Դարձեալ լսւում էին դրսում խաղացող երեխաների ձայները։ Հացթուխը, ատամները կրճըտելով, կուրծքը եղունգներով ճանկռտելով, վերկացաւ և խրճիթի դռները ծածկեց։ Օհ, ո՛րքան ծանր ազդեցութիւն էին գործում նրա վրայ այդ առոյգ ձայները, ինչպէս նախանձի և ատելութեան զգացումը կրծում էր նրա սիրտը։

—Այս էր իմ օրն էլի,—կրկնեց նա երրորդ անգամ և, դառնալով ամուսնուն, շարունակեց.—Գնա՛, չոքիր եկեղեցու դռների առջև, ճակատդ քսիր քարերին, աղաչիր Աստծուն, ասա. «Տէր, Դու չարը հանես երեխայիս միջից. Տէր, Դու նրան ազատես...»

Բայց բեռնագործը վաղուց էր մոռացել եկեղեցու ճանապարհը և վաղուց էր սառել դէպի Աստուած, ոչ այն պատճառով, որ հաւատ չունէր։ Ո՛չ, նա չը-

գիտէր ինչ ասել է աղօթք, սրբութիւն, Աստուած։ Մի անտարբերութիւն տիրել էր նրա հոգուն և այնտեղ մեռցրել ամեն մի զգացում։ Քանի՜ տարի էր նա հարբում էր։ Նրա ուղեղը օրից օր բթանում էր, միտքը կաշկանդւում։ Ահա ինչու չէր զգում հոգեկան մխիթարութեան կարիք։ Նա դարձել էր մի անբան կենդանի և վարում էր լոկ բուսական կեանք։

Այն ինչ հացթուխը ամեն առաւօտ և ամեն երեկոյ այցելում էր քաղաքի կիսախարխուլ եկեղեցին, կանգնում էր մոմերի ծխից սևացած սիւներից մէկի տակ և աղօթում։ Երբեմն ամբողջ ժամերգութեան միջոցին մնում էր մերկ քարայատակի վրայ չոքած։ Նրա աղօթքը ոչ երկար էր, ոչ բարդ։ Հասարակ «Հայր մերն» անգամ ուղիղ չգիտէր։ Նա միայն աղերսում էր.

«Տէր, Դու իմ երեխային փրկիր չարից, Տէր, ինձ տուր նրա ցաւը...»

Քանի՜ քանի՜ անգամ էր օրուայ ընթացքում կրկնում այս դարձուածը։ Ոչ միայն տանը ու եկեղեցում, այլև փողոցներում, այլև ուրիշների տներում, ժամանակ-անժամանակ։ Յաճախ նա, գլուխը դուրս բերելով վառ թոնրի միջից, երեսի քրտինքը սրբելով իր կոշտ գոգնոցով, աչքերը դարձնում էր դէպի վեր։ Ներկայ եղողները լսում էին նրա շշնջիւնը, բայց չգիտէին ինչ է մրմնջում։

Զուր էին անցնում նրա ջերմ արցունքները, հաւատով լի աղերսանքները։ Սօնան ոչ միայն չէր փրկւում, այլև օրից օր աւելի ու աւելի էր ենթարկւում «չարին»։ Յուսահատութիւնը երբեմն հաւա-



տացեալ կնոջ սիրտը ձգում էր մի տեսակ կասկած աստուածային արդարամտութեան մասին։ Միթէ Աստուած փակել էր իր լսելիքը նրա աղօթքների համար։ Շատ անգամ իր ամբողջ շաբաթուայ վաստակի կէս մասը բաժանում էր մուրացկաններին, միւս կէսով մոմ էր գնում և վառում եկեղեցում այս կամ այն սրբի պատկերի առջև։ Բայց սրբերն էլ չէին օգնում, և նրա հառաչանքները ցնդւում էին դատարկ օդի մէջ։ Իսկ Սօնան ամեն օր մորմոքում էր նրա սիրտը.

—Մայրիկ, ինձ ե՞րբ կըթողնես փողոց գնամ։

—Այժմ դու մեծ աղջիկ ես, փողոց դուրս գալը ամօթ է։

Ուրիշ պատասխան չէր կարողանում գտնել մայրը։ Այն ինչ՝ Սօնայի ութ տարին դեռ նոր էր լրացել։ Նա շատ լաւ գիտէր, որ իր հասակակիցները տակաւին վազվզում են դրսում։ Մատաղահաս աղջկայ սիրտը ուժգին բաբախում էր, երբ դրսից լսում էր իր ընկերուհիների զուարթ քրքիջները կամ լացն ու աղաղակները։ Թևերը կտրած թռչունի պէս, ամբողջ օրը պտտում էր փոքրիկ գաւթում, չէր համարձակւում դէպի փողոց նայել անգամ, երբ ծնողները տանն էին։ Իսկ երբ հայրը շուկայումն էր լինում, մայրը, աշխատանքի գնալիս, գցում էր նրան խրճիթ և դռները դրսից կողպում։ Թող այնտեղ ընկնի, եթէ մեռնի էլ, գոնէ ուրիշները չեն տեսնիլ։

Այդ ժամանակ Սօնան աւելի էր զգում իր թշուառութիւնը։ Խրճիթը լուսամուտ չունէր։ Լոյսը գալիս էր միայն դռների վերին կողմի մի փոքրիկ

մասից, որ ծածկուած էր իւղած թղթով։ Ստէպ ստէպ նա մօտենում էր դռներին և նրանց արանքով նայում դէպի դուրս։ Այնտեղ աքաղաղները կռւում էին, հաւերը կչկչում, ծառերը ծլվլում։ Նա երանի էր տալիս այդ թռչունների ազատութեանը։ Յետոյ լալիս էր, յոգնում էր, պառկում յատակի վրայ և նիրհում։ Գալիս էր մայրը, բաց էր անում դռները, գրկում էր նրան և, կատաղի համբոյրներով երեսը ծածկելով, թևից բռնած դուրս էր տանում ու ասում.

—Տես Աստծու լոյսը։

Երբեմն նա Սօնային թոյլ էր տալիս բարձրանալ խրճիթի տափակ հողային կտուրի վրայ, իսկ ինքը հսկում էր նրան արթուն աչքերով։ Ամեն վայրկեան սպասում էր սարսափելի երևոյթի կրկնուելուն։ Սօնայի մի թեթև ճիչը, մի արագ շարժումը ցնցումն էր պատճառում նրան։ Նայում էր հիւանդ աղջիկը այս կողմ այն կողմ, տեսնում էր միայն հարևան գաւիթների թթենիները կամ կիսաւեր տների պատերը։ Շուտով ձանձրանում էր և խնդրում մօրը ցած բերել իրան կտուրից։

Բայց ժամանակը հետզհետէ ստիպեց Սօնային ընտելանալ իր վիճակին։ Մօր յամառ մերժումները բոլորովին կտրեցին նրա յոյսերը երբևէ տեսնել իր ընկերուհիներին։ Նա սկսեց ինքն իր համար զւարճալիներ որոնել տանը։ Մայրը բերում էր նրա համար զանազան լաթերի կտորներ։ Սօնան կաւից խաղատիկիններ էր շինում, հագցնում էր նրանց այդ կտորներից կարած գոյնզգոյն շապիկներ, դնում էր



նոյնպէս կաւից շինած մի տեսակ պատուանդանի վրայ և խաղում նրանց հետ։ Իւրաքանչիւր խաղատիկին ունէր յատուկ անուն, որ Սօնան ընտրել էր իր ընկերուհիների անունների մէջ։ Նա խօսում էր ամեն մէկի հետ համաձայն այս կամ այն ընկերուհու բնաւորութեան։

—Մարգարիտ, թևս մի կծիր. Մանան, շապիկդ կեղտոտեցիր. Իֆ, տափը մտնես, Զավահիր, տես Զառվարդը ինչ խելօք է...

Օրից օր նա հասունանում էր։ Ինչպէս ջերմանոցի քնքոյշ ծաղիկ, չընայելով բնական շրջանից անջատուած լինելուն, փակ մթնոլորտի մէջ աճում էր և հետզհետէ ստանում բնութիւնից սահմանուած բոլոր ձևերն ու գեղեցկութիւնը։ Մայրական փաղաքշանքները և գգուանքներն էին կազմում նրա կեանքի ամենակենսատու հիւթը։ Ծծում էր այդ հիւթը ամբողջ հոգով, և նրա մանկական սիրտը լեցւում էր որդիական սիրոյ ու երախտագիտութեան զգացումներով։ Այլ ևս չէր տխրում, այլ ևս չէր ձգտում դէպի փողոց։ Ձանձրալի էին նրա համար այն ժամերը, երբ մայրը տանը չէր, որ խաղատիկինները բազմեցնէր նրա առջև, ցոյց տար իւրաքանչիւրի զգեստը, ուրախանար նրա հետ։

Կար և՛ մի ուրիշ անձ, որ ուրախակից էր Սօնայի ուրախութեանը և վշտակից նրա վշտին, ով գիտէ, գուցէ ոչ պակաս, քան նրա մայրը։

Այն օրից, երբ տեղի ունեցաւ տխուր անցքը, գիժ-Դանէլը շաբաթը մի-երկու անգամ մտնում էր հացթուխի գաւիթը և հարցնում Սօնայի մասին։ Մի

զարմանալի հոգատարութիւն էր ցույց տալիս այդ փողոցային խենթը փոքրիկ աղջկայ վերաբերմամբ։ Կարծես, այնօրուայ դէպքը պարտականութիւն էր դրել նրա վրայ՝ հետաքրքրուել Սօնայի ճակատագրով, ինչպէս մի փափկասիրտ արենակից։

Սկզբում հացթուխը փորձեց թաքցնել նրանից իր աղջկայ ցաւը, մանաւանդ որ խենթը երբէք չէր յիշեցնում այդ մասին։ Նա հաւատացած էր, որ վաղուց Սօնայի ուշաթափուիլը մոռացել են թէ գիժ-Դանէլը և թէ աղջիկներն ու մանուկները։ Բայց մի օր Սօնան ընկաւ գաւթի մէջ խենթի ներկայութեամբ, և այդ օրից այլևս անկարելի էր գաղտնիքը նրանից թաքցնել։

Գիժ-Դանէլը ծանօթ էր այդ տեսակ ցաւերին, կեանքում ընկնաւորներ տեսել էր։

—Սուրբ է,—ասաց, երեսին խաչակնքելով,—տեսնենք ինչ մարգարէութիւն է անում։

Նա չոքեց Սօնայի առջև, պատկառանքով ականջ դրեց, բայց հիւանդի խրխռոցից ոչինչ չըհասկացաւ։

—Դանէլ-ապեր, հիմա ամեն բան իմացար,—ասաց հացթուխը աղերսական ձայնով,—թող երկնքում Աստուած, երկրում միայն մենք իմանանք։

—Սո՛ւսս, Մանիշակս քնած է,—շշնջաց խենթը, ձեռով ծածկելով իր բերանը։

Այդ վայրկեանին նրա դէմքն այնքան խորհրդաւոր էր, որ հացթուխը կարիք չըզգաց իր խնդիրը կրկնելու։

Այնուհետև խենթն աւելի յաճախ էր այցելում հացթուխի խրճիթը։ Երբեմն գալիս էր պայտագործի



հետ միասին։ Թւում էր, Ոսկանը մի տեսակ համակրանք էր տածում դէպի այդ անկոչ բարեկամը։ Գուցէ պատճառն այն էր, որ երբ պայտագործը հարբած էր լինում, խենթն էր նրա թևի տակ մտնում ու տուն բերում։ Կամ գուցէ այն, որ նա էլ Ոսկանի պէս սիրում էր մեռելներին ուղեկցել մինչև գերեզմանատուն։ Բայց ուղեկցում էր ոչ թէ քէլեխ սիրելուց, այլ ունէր մի գաղտնիք, որ տակաւին յայտնի չէր պայտագործին։ Այսպէս թէ այնպէս, նա Ոսկանի համար մի սքանչելի ընկեր էր։ Նրանք միշտ միասին էին գնում գերեզմանատուն, միասին ծալապատիկ նստում բաց օդի տակ, կանաչազարդ գետնի վրայ սփռած սեղանի շուրջը, միասին «արքայութիւն» մաղթում հանգուցեալին և շատ անգամ միևնոյն ամանից ուտում։ Խենթն ինքը շատ քիչ էր խմում, բայց եռանդով կատարում էր իր բարեկամի խնդիրը—միմեանց ետևից լցնում էր նրա բաժակը, կրկնելով.

—Ոսկան ապեր, ներսդ տաքացրու։

Երբեմն յանկարծ թողնում էր սեղանը և, գերեզմանաքարերի միջով ոստոստելով, հեռանում էր։ Թէ ուր էր գնում—յայտնի չէր։ Կէս ժամ անցած՝ վերադառնում էր, գլուխը կրծքին թեքած, քթի տակ երգելով ինչ-որ տխուր երգ։

Ամեն անգամ նա մեռելահացից բաժին էր բերում Սօնայի համար—մի քանի խաշած ձու կամ մի կտոր միս, իսկ մեծ մասամբ բարակ լաւաշի մէջ փաթաթած «հալւա», որ ալիւրից, իւղից և մեղրից պատրաստած մի տեսակ տեղական քաղցրաւենի էր։

Հացթուխը հոգով դէմ էր այդ բաժիններին, բայց ներում էր խենթին։ Նա երախտապարտ էր համարում իրան այդ մարդու առջև և չէր ուզում ոչ մի բանով նրա սրտին դիպչել։ Շատ անգամ հրաւիրում էր խենթին ճաշի, նստեցնում էր իր ամուսնու մօտ և երկուսին էլ հաւասար խոնարհութեամբ ծառայում։

Իսկ Սօնան օրից օր ընտելանում էր գիժ-Դանէլին։ Չըկար այլևս առաջւայ երկիւղը այդ մարդուց։ Այժմ ծիծաղում էր իր նախկին ընկերուհիների վրայ, որ այնպէս փախչում էին Դանէլից։ Օ՜օ, նա բոլորովին գիժ չէ, բարի է, խաղաղ, անվնաս։ Բայց ինչու համար է այնքան ցաւակցում Սօնային։ Այս հարցը երբեմն Սօնային ձգում էր մտատանջութեան մէջ։ Առհասարակ նա հետզհետէ դառնում էր մտախոհ, մելամաղձոտ։ Թւում էր, որ նրա փոքրիկ գլուխը անգործ չէ, և շատ մտքեր են նրան զբաղեցնում։ Ամենից պարզ զգում էր մի բան, այն՝ թէ կայ մի ցաւ, որ թունաւորում է իր մօր կեանքը։ Ի՞նչ է այդ ցաւը։ Հօր արբեցութի՞ւնը, կոպիտ վարմո՞ւնքը։ Եթէ այդ է, ինչու առաջ նրա մայրը այնպէս տխուր չէր, ինչպէս այժմ։ Նա չէր զգում միայն իր սեպհական ցաւը, չըգիտէր, որ ինքն է մօր թշւառութեան առաջին պատճառը։ Այդ նրան ոչ ոք չէր ասում։ Մի անգամ, անգութ հարւածից յետոյ ուշքի գալով, տեսաւ իր մօրը հեկեկալիս ու հարցրեց.

—Մա՛յրիկ, ես հիւա՞նդ եմ։

—Չէ՛, որդի...

—Գլուխս էլի ցաւում է. քնա՞ծ էի։



—Հա՛, որդի...

—Բաս ինչու ես լաց լինում։

Հացթուխի լեզուն պապանձւեց, չըկարողացաւ պատասխանել։ Նա միայն գրկեց Սօնայի գլուխը և համբուրեց նրա շքեղ մազերը, սպիտակ ճակատը, գունատ այտերը։ Ժամանակը թշւառ մօրը հաշտեցնում էր իր վշտի հետ։ Նա տանջւում էր, բայց ոչ առաջւայ չափ։ Նա բողոքում էր իր ճակատագրի դէմ, բայց և՛ օրհնում էր Նախախնամութեան կամքը։

«Ասում են, երբ Աստուած մէկին շատ է սիրում, նրան շատ է տանջում,—մխիթարում էր ինքն իրան յուսահատ րոպէներին,—ով գիտի, կարելի է Աստուած ինձ շատ է սիրում»։

Նա ձգտում էր իր թշւառութեան համար արդարացուցիչ պատճառներ գտնել։ Շատ խիստ էր ճակատագրի վճիռը, և չէր ուզում հաշտւել այն մտքի հետ, թէ այդ վճիռը կայացնողը կարող է, առանց մի մեծ պատճառի, լինել այդքան անիրաւ, այդքան անողոք։ «Աստուած արդար է և ողորմած», հնչում էին նրա ականջին այս խօսքերը, որ ամեն օր լսում էր եկեղեցում։ Մի՞թէ քահանան կարող է սուտ ասել, մի՞թէ եկեղեցին կարող է խաբել։

—Մեղայ Քեզ, մեղայ Քեզ,—կրկնում էր հացթուխը ամեն անգամ, երբ սրտում զգում էր կասկածի նշոյլ, և այդ նշոյլը նոյն վայրկեանին անհետանում էր, տեղի տալով խորին հաւատի զգացման։

---

III

Ամեն օր հացթուխ Շուշանը, աշխատանքի գնալիս, տեսնում էր խումբ խումբ տղաներ և աղջիկներ, որոնք գրքերը կռնատակերին, աշխոյժ-աշխոյժ խօսակցելով, ուսումնարան էին գնում։ Աղջիկների ուսումնարանը նոր էր բացուել։ Հացթուխը լսել էր, որ այնտեղ բացի գրել-կարդալուց, սովորեցնում են սիրուն շալեր ու սփռոցներ հիւսել։ Ախ, ինչ լաւ կըլինի, որ Սոնան էլ այդ ուսումնարանը գնայ։ Թող նա էլ ուրիշների շարքն ընկնի, թող ոչ ոքից յետ չըմնայ, իր ծնողների մի հատիկ զաւակն է։

«Ի՞նչ անենք, որ հայրը հարբեցող է, ես հացթուխ։ Չեմ ուտի, չեմ խմի, բերանիցս կըկտրեմ, երեխայիս համար գիրք կառնեմ, հագուստ կառնեմ»։

Այսպէս էր մտածում Շուշանը, երբ Սոնայի հիւանդութիւնը դեռ չէր յայտնուել։ Այժմ երևակայել անգամ չէր ուզում այդ երջանկութեան մասին։ Ի՞նչ, որ ամբողջ ուսումնարանը իմանայ Սոնայի ընկնաւոր լինելը։ Չէ, աւելի լաւ է նա յետ մնայ իր ընկերուհիներից, քան թէ նրանց ծաղրի առարկան դառնայ։ Թող բախտաւոր մայրերի բախտաւոր զաւակները գրել-կարդալ սովորեն։

«Ինձ նման մի անբախտի աղջկան այնքանն էլ հերիք է, ինչքան մայրը գիտի...»

Եւ հացթուխը սկսեց Սոնային սովորեցնել այն, ինչ-որ ինքը գիտէր. հօր հագուստը կարկատել, գուլպաներ հիւսել, սենեակի պատերը և յատակը շաբաթը մի անգամ շիրայել, այսինքն ներկել տեղական



կապտագոյն թրջած կաւով։ Նա սովորցնում էր Սոնային և՛ աղօթել։ Ամեն առաւօտ և ամեն երեկոյ արտասանել էր տալիս. «Աստուած, Դու ինձ փորձանքից ազատես...»

Շատ անգամ երեկոները Սոնան, ճրագի առջև նստած, գուլպայ էր հիւսում մինչև ուշ գիշեր։ Մայրը թախանձում էր նրան չըյոգնեցնել իր աչքերը։ Իսկ հայրը պատուիրում էր հիւսել ու հիւսել, որ շուտով զոյգը վերջանայ։ Եւ այս դէպքում աղջիկը հօր պատուէրն էր կատարում։ Վաղն ուրախ-ուրախ կըյանձնի նրան մի զոյգ նոր գուլպայ, որ տանի շուկայում ծախի։ Ի՛նչ անենք, որ գուլպաների գինը սովորաբար օղեվաճառին էր տրւում։ Այդ Սոնայի գործը չէր։

Եւ այսպէս, արբշիռ պայտագործը հարստահարում էր հիւանդոտ աղջկայ աշխատանքը դեռ այն ժամանակ, երբ նրա մատները հազիւ հազ սովորել էին կարել ու հիւսել։ Քանի՜ քանի՜ անգամ այս պատճառով ընդհարումներ էին ունեցել մարդ ու կին։

—Չէ, դու խղճմտանք չունիս։ Երեխաս մի շալ չունի ուսերին գցելու, ցրտից սրսըռում է, դու ամեն օր խմում ես նրա աշխատած փողով...

—Քո բանը չի, Սոնան իմս է,—պատասխանում էր պայտագործը։—Այնպէս չէ՞, Սոնա, դու հօրդ սիրում ես, չես թողնիլ, որ մի բանի կարօտութիւն քաշի։

Մանկահասակ աղջիկը, հաւասար սիրով և գըթւանքով համբուրելով թէ մէկին և թէ միւսին, վերջ

էր տալիս իր ծնողների վեճին։ Այն ինչ՝ այն օրից, երբ պայտագործի համար բացվեց եկամտի մի նոր աղբիւր—իր աղջկայ ձեռքի վաստակը—նա աւելի ու աւելի ծուլանում էր։ Մի և նոյն ժամանակ, աւելի ու աւելի պահանջող, քմահաճ և կոպիտ էր դառնում։ Շատ անգամ տուն էր վերադառնում դատարկ ձեռներով և հրամայում իսկոյն ուտելիք պատրաստել։ Կինը երբեմն պատասխանում էր, թէ տանը ոչինչ չկայ, թէ ինքն այսօր ոչինչ չի վաստակել։

—Պատճա՞ռը,—գոռում էր պայտագործը։

—Այսօր ինձ ոչ ոք հաց թխելու չի կանչել։

—Հոգիդ դուրս գայ, գնա՛, ողորմութիւն հաւաքիր, խոմ քաղցած ապրել չի կարելի։ Հը՛մ, դու ասա, Սօնա ջան, մարդ քաղցած փորով կարո՞ղ է ապրել։ Տեսնո՞ւմ ես, մայրդ ինչ աներես ու քարասիրտ է։ Համ ասում է տանն ուտելու բան չըկայ, համ էլ ինձ չի թողնում գերեզմանատուն գնամ մեռելահաց ուտելու...

—Օրից դէնն ուր ուզում ես—գնա՛, կե՛ր, խմի՛ր. քո բանը պրծած է։

—Որ մեռել չըկայ, ո՞ւր գնամ։

Այս խօսքերը պայտագործը արտասանում էր այնպիսի եղանակով, որ, կարծես, մարդիկ չէին մեռնում հէնց նրան քաղցած թողնելու համար։

Մի անձրևային օր նա ճաշի միջոցին, ներս մտաւ աչք-ունքը կիտած։ Երեք օր էր չէր խմել, ուստի սաստիկ վատ տրամադրութեան մէջ էր։ Իսկ քրիստոնեաները երդւել էին չըմեռնել, և Ոսկանը անիծում էր բոլոր կենդանի հարուստներին։ Սօնան



խրճիթի առջև ծալապատիկ նստած, կարկատում էր հօր հնամաշ արխալուխը։ Ուրախացաւ, հօրն արթուն տեսնելով։

—Մայրդ տա՞նը չի։

—Չէ։

—Վե՛րկաց տեսնեմ, ինչ ես տալիս ուտելու։

Սօնան մտաւ խրճիթ և այնտեղից բերեց հաց, պանիր և մի քիչ կարագ։

—Դա ինչ է,—ասաց պայտագործը, ծուռ-ծուռ նայելով Սօնայի բռնած սկուտեղին,—շատ հարկաւոր է քո կարագը։ Փա՛հ, երեք օր է չեմ խմել, սիրտս էլ չոր-չոր բան է ուզում, մի կտոր ձուկ կամ միս, իսկ դա ինձ կարագ է տալիս, այն էլ ծտի աչքի չափ։ Դէնը տար...

Սօնան վշտացաւ։ Կարագը իր բաժինն էր, պահել էր յատկապէս հօր համար։ Սկուտեղը ձեռին՝ նայում էր պայտագործին այնպիսի դէմքով, որ, կարծես, ոտից գլուխ մեղաւոր էր նրա առջև։

— Դու ինձ ա՛յն ասա, Սօնա ջան, մայրդ փող ունի՞։

Հարցը Սօնային նեղը գցեց։ Գիտէր, որ մայրը պատի մեծ խորշի մէջ թաքցրած ունի մի քանի արծաթի ու պղնձի դրամներ։ Դա հայթուխի սեպհական վաստակն էր։ Կոպէկ-կոպէկ հաւաքել էր, և Սօնան չըգիտէր ինչու համար։

—Հը՛մ, ինչո՞ւ չես պատասխանում, ասա՛, մայրդ փողից-բանից ունի՞...

—Չեմ իմանում։

—Դրուստն ասա։

—Չեմ իմանում,—կրկնեց Սոնան, աչքերը անգիտակցաբար դարձնելով դէպի այն խորշը, ուր թաքցրած էին մօր կոշիկները:

—Ի՞նչ ես դէս ու դէն մտիկ անում, դրուստ ասա, սուտ ասելը մեղք է:

Այո, տասներկու տարեկան աղջիկը շատ անգամ էր մօրից լսել, թէ սուտ ասելը մեղք է, թէ սուտ ասողին Աստուած պատժում է: Եւ նա երբէք սուտ չէր ասել: Բայց գիտէր և՛ այն, որ գողութիւնն էլ մեղք է և աւելի մեծ մեղք:

—Չեմ իմանում, կայ թէ չըկայ, չեմ իմանում,—կրկնեց նա:

Ձայնը և դէմքի այլափոխուելը մատնեցին նրան:

—Սոնա,—գոռաց պայտագործը,—դու հօրդ խաբում ես, այս տանից փողի հոտ է գալիս, ես քաղցած ու ծարաւ եմ:

Սոնան տատանուեց: Նրա սիրտը տանջւում էր խղճի խայթից: Նա ինքն իր հետ կռւում էր. մի կողմից սատխոսութիւն, միւս կողմից գողութիւն: Մի կողմից հօր աղաչանքը, միւս կողմից մօր դառն աշխատանքը, որի գնով ձեռք էին բերած այնտեղ թաքնուած կոշիկները:

Ո՞րը ընտրել:

—Ինչպէս տեսնում եմ, մօրդ հետ խօսք ես կապել ինձ քաղցած ու ծարաւ թողնել: Դուք ինձ խաբում էք, տանջում էք: Որ այդպէս է, էլ իմ երեսը չէք տեսնիլ: Գնա՛, Սոնա ջան, գնա՛ քեզ համար ինձանից լաւ հայր ճարիր:

Նա քայերը բարկացած ուղղեց դէպի դուռը: Դա



մի խորամանկութիւն էր, որ իսկոյն ունեցաւ ցանկալի հետևանք: Ո՛չ. Սոնան ուրիշ հայր չի ուզում: Աշխարհի երեսին պայտագործից աւելի լաւ հայր չըկայ: Նա մօտեցաւ Ոսկանին, իր փոքրիկ ձեռներով բռնեց նրա կոշտ, սևացած ձեռը, համբուրեց և արտասուեց: Յետոյ մօտեցաւ պատի խորշին, կանգնեց մի քանի վայրկեան անշարժ և նայեց հօրը: Ա՛խ, վատ բան էր ուզում անել, այդ ինքն էլ գիտէր և երկիւղից դողում էր: Բայց այնտեղ, սենեակի մէջտեղում, կանգնած էր հայրը, աչքերը ագահաբար յառած նրա երեսին: Եւ ինչպէս փայլում էին այդ աչքերը: Երևի պայտագործը արդէն զգում էր օղիի սքանչելի հոտը և վաղօրօք ճաշակում քաղցրութիւն:

—Մի՛ վախենար, Սոնա ջան, մի՛ վախենար, ես մտիկ եմ տալիս, հէնց որ եկաւ—կասեմ:

Սոնան սկսեց խորշի մէջ որոնել այն ցնցոտին, որ մայրը խնամքով թաքցրել էր անկողինների տակ:

—Ի՛նքդ վերցրու,—ասաց դողդոջուն ձայնով և գունատուեց,—ես վախենում եմ: Ա՛յ, այն կապոյտ կապոյի մէջ է:

Պայտագործը շտապեց վերցնել կապոցը, ծանր ու թեթև արեց ձեռի ափի մէջ և դրեց արխալուղի դրպանը:

—Քեզ համար ծամոն կըբերեմ,—ասաց, համբուրելով աղջկան, և շտապեց դուրս:

Երբ նա անհետացաւ, Սոնան վազեց սենեակի անկիւնը, ընկաւ երեսի վրայ և սկսեց հեկեկալ: Նրա գեղեցիկ թիկունքները չթեայ արխալուղի տակ ուժգին բարձրանում էին և ցած իջնում ալիքների պէս:

Նրա սպիտակ պարանոցը ուռել ու դողդողում էր։ Նա կողոպտեց իր սիրելի և խեղճ մորը, որ օրը մինչև երեկոյ արխն-քրտինք է թափում մի քանի հատ հաց կամ մի քանի պղնձի դրամներ վաստակելու։ Նա գողութիւն արեց. ինչո՞ւ, ո՞ւմ համար։ Ա՛խ, մի՞թէ բոլոր աղջիկների հայրերն այդպէս են…

Արտասուքը սպառեց, բայց վիշտն աւելի համակեց Սօնայի սիրտը։ Նա խորհում էր իր անելիքի մասին։

Գիշերը ցերեկ կանի, չի ուտի, չի քնի, գուլպայ կըհիւսի, հօրը կըտայ ծախելու, փողերը կըդնի այնտեղ։ Չէ՛, չէ՛, մայրիկին չի ասի, նա լաց կըլինի. Սօնան թակելուց չի վախենում, մայրը լաց կըլինի։ Ի՜նչ վատ բան է, Տէր Աստուած, ի՛նչ վատ բան է գողութիւնը…

—Այս դռներն ո՞վ բաց արաւ,—լսեց Սօնան իր մօր ձայնը և սոսկալով ոտքի թռաւ։

Հացթուխը կոնատակին դրած էր սովորական երկու թաժա հացերը և ափի մէջ ամուր սեղմած մի քանի պղնձի դրամներ։ Նա ներս մտաւ թէ չէ՝ պառկեց յատակի վրայ, ծանր հառաչելով և արտասանելով.

—Փառք քեզ, Աստուած, որ ինձ նման խեղճերն էլ կարող են պառկել. հոգիս դուրս եկաւ…

Ահա՛ նա, այդ խեղճ կինը. ինչպէս երեսն ու ձեռները այրուել են թոնրի կրակից. ահա՛ ում կողոպտեց Սօնան։

—Ինչո՞ւ ես տխուր նստել, մօտ եկ, Սօնա, եկ, մի քիչ ուսերս տրորիր…



Սօնան լուռ մօտեցաւ մօրը։

—Հայրդ եկե՞լ էր, էլի գնա՞ց, բան կերա՞ւ։

Սօնան հառաչեց։

—Ինչո՞ւ ես հառաչում։ Երևի, հօրդ քէֆը լաւ էր։

—Չէ, խմած չէր, քաղցած էր…

—Բաս ո՞րտեղ գնաց քաղցած փորով։

—Չեմ իմանում։

—Աղջի՛, դու լա՞ց ես եղել։

—Չէ, չէ,—կրկնեց Սօնան շտապով, երեսը մի կողմ դարձնելով։

Մայրը զգաց, որ անշուշտ մի բան է պատահել, և, ի հարկէ, կասկածեց, թէ ինչ կարող է պատահած լինել։ Բայց նա մի խորը հայեացք ձգեց Սօնայի աչքերի մէջ և այնտեղ չընկատեց այն տարօրինակ բթութիւնը, որ երևում էր ամեն անգամ «հարուածը» ստանալուց յետոյ։

—Սօնա, հայրդ քեզ վրայ գոռացե՞լ է, թթու խօսք է ասել, ով գիտէ, ծեծել է…

Այլևս Սօնան չըկարողացաւ իրան զսպել։ Գլուխը թաքցնելով մօր գրկում, երկրորդ անգամ հեկեկաց, և այս անգամ աւելի ուժգին։ Քանի մի րոպէ անցած, նա անկեղծօրէն խոստովանեց իր յանցանքը։ Մի վայրկեան հացթուխը մոռացաւ հարազատ զաւակի թշուառութիւնը, հրեց նրան ուժով, կատաղեց և գոռաց։ Նա մինչև անգամ ձեռը բարձրացրեց Սօնային խփելու։ Բայց իսկոյն ուշքի եկաւ և, երկու ձեռները ծնկներին զարկելով, գոչեց.

—Քանդուի հօրդ տունը։

Նա յայտնեց գողացուած փողերի գաղտնիքը։ Նա

մտադիր էր Զատկին մի գառ գնել, եկեղեցու դռների առջև մորթել և աղքատներին բաժանել Սոնայի համար։ Ուրեմն Սոնան իր «մատաղի» փողերը գողացաւ։ Այս միտքը մասամբ թեթևացրեց աղջկայ վիշտը։

—Ես մատաղ չեմ ուզում,—ասաց նա, կարծելով, թէ դրանով կարող է հանգստացնել մօրը։

—Բաս որ գողութիւն ես արել, գող ես,—գոչեց հացթուխը, մի քանի անգամ կրկնելով «գող» բառը։

Աւելի մեծ պատիժ չէր կարող լինել Սոնայի համար, քան այս յանդիմանութիւնը։ Նրա մանկական անմեղ աչքերի մէջ փայլեց ահ ու սարսափ։ Ինչպէս երկչոտ նապաստակ թփի տակ, սեղմուեց սենեակի անկիւնում, աջ ու ձախ նայելով։ Կարծես, սպասում էր իր յանցանքի արժանի պատժին։ Մայրը մօտեցաւ, ձեռից բռնեց, չոքեցրեց երեսը դէպի արևելք և ասաց.

—Խաչակնքէ՛ր երեսդ, ասա. «Մեղայ Աստծու», երեք անգամ. հա, այդպէս, ասա. «Աստուած, այս անգամ բախշիր, էլ չեմ անիլ»։ Դէ լաւ, վե՛րկաց, էլ չ'անես։

—Չեմ անիլ,—կրկնեց Սոնան, փաթաթուելով մօր պարանոցին։

Իրիկնադէմին պայտագործը տուն վերադարձաւ ոտից մինչև գլուխ ցեխոտուած։ Ներս մտաւ թէ չէ, թաւալուեց յատակի վրայ։ Հացթուխն այդ օրն առաջին անգամ հայհոյեց նրան լսելի ձայնով։ Պայտագործը աշխատեց տեղից վերկենալ, նորից ընկաւ.



կրկին յենուեց ձեռների վրայ, ոտքի կանգնեց և, բռունցքը բարձրացնելով, մօտեցաւ հացթուխին։ Կինը խոյս տուեց, և մարդը իր հարուածի ուժգնութիւնից նորից ընկաւ յատակի վրայ։

Այս այլանդակ տեսարանի միակ վկան, սենեակի մի անկիւնում կուչ եկած, լուռ դիտում էր։ Յանկարծ մի սուր ձայն արձակեց։ Այդ վայրկեանին մատաղահաս աղջկայ աչքին հարազատ հայրը թւաց իսկական գազան։ Եւ ինչ տարօրինակ գազան. ահագին, երկար ժանիքներով, ահռելի բերանով և սարսափելի աչքերով։ Կարծես, այդ բերանը ահա՛ ահա՛ պէտք է բացուէր և կլանէր թէ՛ Սոնային և թէ՛ նրա մօրը։

—Վախենում եմ, վախենում եմ,—արտասանեց Սոնան, հեռու ու հեռու խոյս տալով իր հօրից։

Նա վազեց, մտաւ պատի մեծ խորշը և գլուխը թաքցրեց անկողինների մէջ։ Հացթուխը շուարել էր։ Մօտեցաւ աղջկան, բռնեց նրա գլուխը, նայեց երեսին։ Յետոյ վազեց դուրս, սառը ջուր բերեց, սրսկեց երեսին։

Սոնան մի փոքր սթափուեց։ Բայց ինչպէս գունատ էր և ինչպէս դողում էր։ Նա ընկաւ մօր գիրկը, երկու ձեռներով ամուր սեղմեց նրա պարանոցը, կրկնելով.

—Մի՛ հեռանար, մի՛ հեռանար ինձանից...

—Անէծք քեզ, չար սատանայ, անէծք քեզ, չար սատանայ,—կրկնում էր հացթուխը, խաչակնքելով մերթ իր, մերթ աղջկայ երեսը։—Կորի՛ր,—դարձաւ

ամուսնուն,—կորէ՛ր այս տնից, անաստուած, անսիրտ, անհոգի, դու սպանեցիր երեխայիս…

«Ոտաբոբիկ թափառում եմ սար ու ձոր,
«Ես Քեարամն եմ, ինձ զրկեցին Ասլիից:
Խաբար տարէք խեղճ աշուղիս հօր ու մօր,
«Սազս զրկեն, ես փախչում եմ դիւնեայից…

Այս ձայնը սթափեցրեց Սօնային: Նա մի վայրկեան գլուխը բարձրացրեց մօր կրծքից, ականջ դրեց ինչպէս մի սոխակ, երբ քաղցր սուլոցի ձայն է լսում, յետոյ վազեց դուրս: Կարծես, այնտեղից գալիս էր նրա համար մի երկնային օգնութիւն:

—Սօնա խաթուն, եկ, եկ, քեզ համար նշխարք եմ բերել:

Գիժ-Դանէլը մի կտոր թղթի միջից հանեց նշխարքի մի փշրանք, դրեց իր շրթունքներին, յետոյ ճակատին և ապա տուեց Սօնային, ասելով.

—Յիսուս Քրիստոսի զօրութիւնը քեզ պահի, պահպանի… Բա՜հ, աղջի, ինչո՞ւ ես դողում, սրրդնել ես… Շուշան բաջի, Սօնա բալիս ի՞նչ է պատահել:

Հացթուխը, արտասուքը աչքերին, կանգնած էր խրճիթի շէմքի վրայ և նայում էր Սօնային ու խենթին:

—Գնա՛նք ներս,—ասաց խենթը, բռնելով Սօնայի ձեռից:

Աղջիկը խլեց նրանից իր ձեռը և հեռացաւ խրճիթից:

—Բա՛հ, ումի՞ց ես վախենում, տաս, ես ցոյց կըտամ քեզ վախեցնողին, պատառ-պատառ կանեմ, հում-հում կուտեմ:



Հացթուխը բռնեց խենթի թևից և, ներս տանելով, ասաց.

—Նրանից է վախենում:

Սենեակի իրիկնային կիսախաւարի մէջ գիժ-Դանէլը ճանաչեց իր քելեխասէր բարեկամին:

—Կոնծել է ու ընկել, էհէ՜, համր տանում է, էլ ես նրան քելեխի չեմ տանի: Շուշա՛ն բաջի, երազ եմ տեսել: Տասնութ աժդահա դուրս եկան առաջս: Քեօռօղլին կանգնեց բուրջի գլխին: Ղաթի բերանից կրակ էր դուրս գալիս: Ա՛յ, այսպիսի մազեր ունէր, անունը Սօնա չէր, Մանիշակ… մեծ-մեծ քարեր էին ընկել, մէկը ճակատին, միւսը—կրծքին: Մայրը հորումն էր: Գլխից արիւն էր գալիս: Ասլան Դանէլը խեղճ մարդ էր, գլուխը քաշ դարգութիւն էր անում: Ասեղս առան, աչքս կոխեցին. մկրատս վերցրին, սիրտս կտոր-կտոր արին մահուդի պէս: Սօնա խաթուն, Մանիշակ ջան, ինչո՞ւ փախար ձեռքիցըս… Եգուց կըգնամ գերեզմանը տեսնելու, սիրտ չունիմ, սիրտս մեռաւ… Շուշա՛ն բաջի, Սօնան լաւ աղջիկ է, եա Ալլա՜հ, գալիս եմ… Փարհա՛դ, Փարհադ, տունդ տակնուվրայ լինի…

Արտասանելով այս անկապ և օտարոտի խօսքերը, խենթը գաւազանը օդի մէջ շարժեց և ոստոստալով դուրս վազեց:

Այդ գիշեր Սօնան զառանցում էր, տէպ-տէպ քնից զարթնելով: Մայրը «աղօթում էր» նրա վրայ, սեղմելով նրա ուսերին և գլխին իր աջ բռունցքը, որի մէջ սեղմած էր մի բուռն աղ:

Արեգակը նոր նոր բարձրանում էր քաղաքի

շրջակայ լերան ետևից, երբ Սոնան աչքերը բաց արաւ։ Որքա՜ն նման էր նրա դէմքի գոյնը այն վաղառաւօտեան թոյլ-դեղնագոյն ճառագայթին, որ խըրճիթի դռներով ընկաւ յատակի վրայ։ Նրա մռայլ և անշարժ աչքերը նայում էին դէպի մի անորոշ տարածութիւն։ Կարծես, մտքերը սաւառնում էին հեռու։ Նրա գլխի կողմը նստած էր մայրը և թախծալի հայեացքով նայում էր նրա շրթունքներին, որ տակաւին սեղմուած էին։

—Քեզ համար թուզ եմ գնել, - ասաց հացթուխը, կամենալով խօսեցնել աղջկան։

Սոնան մռայլ աչքերը դարձրեց դէպի մայրը։ Մտաբերում էր երեկւայ տեսարանը, յիշում էր իր սարսափելը հօր կերպարանքից։ Նա ակամայ նայեց հօր կողմը։ Պայտագործը դեռ քնած էր ծանր և անհանգիստ քնով։ Սոնան հագնւեց, մօտեցաւ հօրը, նայեց նրա երեսին։ Այժմ գազանային ոչինչ չըկար այդ դէմքի վրայ։ Ի՞նչ վախկոտ աղջիկ է Սոնան, ինչո՞ւ այնպէս գոռաց։ Ահա՛ շուտով կըզարթնի պայտագործը։ Սոնան նրա ձեռներին ջուր կածի, որ երեսը լւանայ, կըխօսի հետը։

Եթէ չըբարկանայ, կաղաչի, կըպաղատի, որ էլ մօրը չըծեծի, չըկռւի նրա հետ։ Կասի. «Քեզ համար երկու օրը մի զոյգ գուլպայ կըգործեմ, մի՛ ծեծիր, մի՛ գոռար, մի՛ կռւիր...»

Պայտագործը զարթնեց սաստիկ գլխացաւով։

Նախընթաց օրւայ քէֆից յետոյ զգում էր անտանելի տխրութիւն։ Մտաբերեց երեկւայ իր վարմունքը և զգաց խղճի մի թեթև խայթոց։ Կամեցաւ



Սոնային մի քիչ փաղաքշել և սրա համար դիմեց մի տարօրինակ կատակի։ Ոլորեց իր միրուքը խողովակի ձևով, թելով կապեց, ծայրից քաշ արաւ մի մեծ ասեղ, ուսերին տակնուվեր ձգեց ձմերային մուշտակը, դուրս եկաւ և կանգնեց խրճիթի դռների առջև։

Այդ միջոցին Սոնան, մէջքից թեքւած, աւելում էր բակը։ Դեռ նրա աչքի առջև էր երեկւայ տեսարանը։ Նա գլուխը բարձրացրեց երեսին սփռւած մազերն ուղղելու, տեսաւ հօրը և սարսափեց։ Աւելն ընկաւ նրա ձեռքից, դարձեալ լսեց մի սուր ձայն։ Սոնան ցնցւեց և կողքի վրայ տարածւեց գետնին։

Հօր կոպիտ կատակի հետևանքն եղաւ աղջկայ մարմնի փէտանալը, ապա կծկւելը, ցնցւելը և անզօր կերպով թաւալւելը։

Արևն իր շողը ձգեց ընկնաւոր աղջկայ գունատ ճակատի վրայ, որի շուրջը մազերը դարձեալ մի գեղեցիկ պսակ էին կազմել։ Սոնան ընկած էր երեսն արևելք, դէպի ուր աղօթում էր նրա մայրը...

---

## IV

Տասնուվեց տարեկան հասակում Սոնան արդէն զգում էր բնական ցաւի բոլոր ծանրութիւնը։ Եւ այն միտքը, թէ թշւառ է, նրա մատաղ հոգու վրայ գործում էր ճնշող տպաւորութիւն։ Ժամերով առանձնացած, անձնատուր էր լինում իր մելամաղձիկ մտածումներին։

Նրա նորահաս խելքը ձգտում էր գտնել թշւա-

ութեան հիմնական պատճառը և ոչինչ չէր կարողանում որոշել կեանքի մթութեան մէջ։ Լալիս էր լալիս, և միայն արցունքներն էին րոպէապէս թեթևացնում նրա սիրտը։

Նա անում էր այն բոլորը, ինչ-որ հարկաւոր էր Աստծու գութը շարժելու համար և ինչ-որ սովորել էր իր մօրից։ Պահում էր տարւայ բոլոր պասերը, իսկ մեծ պասը—կրկնակի։ Տարէնը մի անգամ ամբողջ եօթնեակ ծոմ էր պահում։ Իր մօր հետ այցելում էր քաղաքի շրջակայքում գտնւող սրբավայրերը։ Բայց բոլորը զուր։

Ինչո՞ւ,—ահա հարց, որ զբաղեցնում էր Սօնայի միտքը։ Ինչո՞ւ Աստուած չի լսում նրա ձայնը, չի խղճում, ո՞ր մեղքերի համար։ Կեանքում մի անգամ մի յանցանք գործեց—ցոյց տւեց հօրն իր մօր խնայած կոպէկների տեղը։ Հայրը գողացաւ և վատնեց այդ ողորմելի կոպէկները։ Բայց ո՛րքան զղջաց, ո՛րքան աղօթեց և ո՛րքան արտասւեց այդ յանցանքի համար։ Ո՛չ, այդ չէ պատճառը։

«Մայրս ասում է, որ վեց տարեկան էի, երբ առաջին անգամ ուշաթափւեցի...»

Ուրեմն, ինչո՞ւ, ինչո՞ւ։ Եւ որքան հասարակ հարցը գրգռում էր Սօնային, այնքան նրա մտքերը շփոթւում էին։ Նոյն հարցը նա տալիս էր մօրը, և միշտ ստանում միևնոյն պատասխանը.

—Դա Աստծու կամքն է։

Այո՛, դա Աստծու կամքն է։ Բայց մի՞թէ Աստուած առանց պատճառի մի բան կատարում է։

—Մայրիկ, ինչո՞ւ մէկը ստեղծւում է առողջ և բախտաւոր, միւսը—հիւանդ և թշւառ։



Երկիւղած և աստուածապաշտ հացթուխը սարսափում էր աղջկայ հոգու մէջ ծագող կասկածներից։ Կար ժամանակ, որ նրա մէջ էլ ծագում էին այդպիսի կասկածներ։ Բայց շուտով խեղդեց նրանց իր սրտում և դարձեալ հաշտւեց այն մտքի հետ, թէ Աստուած արդարամիտ է, անաչառ և գթառատ։

—Մի՛ ասիլ, որդի, մի՛ ասիլ, Աստծու դէմ տըրտնջողի գլխին երկնքից կրակ կըթափւի։

Սօնան զսպում էր իր լեզուն։ Սակայն անխուսափելի հարցը հետևում էր նրան ստւերի պէս։ Ի՞նչ անի, ինչպէս չըբողոքի։ Ինը տարի է փակւած է իր հայրական խրճիթի չորս պատի մէջ, և մի՞թէ պէտք է յաւիտեան անջատւած մնայ աշխարհից։ Մի՞թէ գոնէ իր ընկերուհիներին այլևս չըպիտի տեսնի մի հարսանիքում, մի մեռելատնում, կամ եկեղեցում Զատկի և Ջրօրհնէքի երեկոյ։

Նրա ընկերուհիներից մի քանիսն ամուսնացել էին, ոմանք մայրեր էին արդէն։ Նա հեռւից լսում էր իւրաքանչիւր պսակւողի հարսանիքին ածող զուռնայի ձայնը։ Այսօր այն սևիկ և ծիծաղկոտ Մարգարիտն է պսակւում։ Երանի թոյլ տային Սօնային մի անգամ տեսնել նրան։ Արդեօք, ի՞նչքան է մեծացել նա, ինչպէս է հասակը. գեղեցկացե՞լ է, թէ էլի նիհար է շագանակի կեղևի պէս։

Սօնան յիշում էր, որ իր ընկերուհիներն իրան կոչում էին «Սիրուն Սօնա»։ Առաջ նրա համար դա ոչինչ նշանակութիւն չունէր, այժմ էր հետաքրքրում նրան։ Ճշմարի՞տ է, որ ինքը սիրուն է, թէ՞ ընկերուհիները ծաղրում էին։ Նա կանգնում էր ամեն օր

պատից քաշ արած այն հասարակ հայելիի առջև, որ մայրը, իբրև օժիտ, ստացել էր մի ազգականից իր հարսանիքի օրը:

Նրա խիտ և գանգուր մազերը շքեղ հիւսուածներով սփռուած էին մէջքին: Տնային ծանր աշխատանքը, կարծես, մազու չափ չէր ազդել նրա կազմուածքի վրայ: Նա միջին հասակից քիչ բարձր էր, կանոնաւոր իրանով: Այո, այժմ աւելի էր սիրուն, քան մանուկ հասակում: Միայն նրա երեսը չունէր իր տարիքին յատուկ կայտառութիւնը: Նրա գոյնը նուազ էր, հիւանդոտ. մի նուրբ դեղնութիւն պատել էր ամբողջ դէմքը, նոյն իսկ ականջները: Սևորակ և խոշոր աչքերի բիբերն աւելի խոշորացել էին: Այնտեղ երևում էր հոգու ծանր թախիծը: Րոպէ առ րոպէ, երբ բարձրանում էին յամրաշարժ կոպերը, այդ աչքերի մէջ նշմարւում էր մի տեսակ ապշութիւն:

Նա նայում էր հայելուն, բայց չըգիտէր սիրո՞ւն է ինքը, թէ տգեղ: Չըկար մէկը, որի հետ համեմատէր իրան կամ նրա կարծիքը հարցնէր: Մայրը ասում էր, թէ Սօնան նրան է նմանւում: Արդարև, կար նմանութիւն մօր և աղջկայ մէջ, թէև տարիքը և ծանր ու տաժանակիր աշխատութիւնը վաղուց հացթուխի դէմքից ջնջել էին բնական գեղեցկութիւնը:

—Մայրիկ, ով գիտէ, դու շատ սիրուն ես եղել...

Դա մի անմեղ խորամանկութիւն էր, որի միջոցով Սօնան ուզում էր խօսք քաշել իր մօրից: Մայրը այդ չըհասկացաւ և պատասխանեց.



— Մարդ պէտք է բախտ ունենայ, գեղեցկութիւնը ինչին է պէտք:

Մի օր հացթուխը ասաց Սօնային, որ այդ երեկոյ վաղ պառկի քնելու:

—Ինչո՞ւ:

—Էգուց պէտք է շուտ զարթնես, սար գնալու ենք սուրբ Կարապետի մասունքը համբուրելու:

—Էգո՞ւց է ուխտի օրը...

—Միւս օրն է: Մենք էգուց կըգնանք, գիշերը սրբի ոտքին կըմնանք, միւս օրն ուխտներս կըկատարենք, յետ կըգանք:

Վերջապէս, դարձեալ մի երջանիկ օր, երբ Սօնան կարող է մարդու երես տեսնել: Երկար ժամանակ այդ գիշեր չէր կարողանում քնել: Իսկ երբ նիրհեց, երազները պաշարեցին նրան: Նա շտապում էր դէպի սրբավայրը, բայց գնում էր գնում, չէր հասնում: Ամեն քայլափոխում արգելքների էր հանդիպում: Մի տեղ նրա առջև բարձրանում էր մի պատ և կտրում ճանապարհը, միւս տեղ բացւում էր ճահիճ, որի միջով պիտի անցնէր: Այստեղ կորցնում էր գլխի շալը, այնտեղ կօշիկները և այլն և այլն...

—Վե՛ր կաց, օրը լուսացել է,—լսեց նա մօր ձայնը և աչքերը բաց արեց:

Հացթուխն արդէն վաղուց պատրաստուել էր ճանապարհ ընկնելու: Սօնան շտապով ոտքի թռաւ և հագնուեց: Մայրը տուեց նրան մի թեթև կապոց, որ պարունակում էր երկու օրւայ ուտելիք, իսկ ինքը բռնեց գաւթում թռչկոտող մեծ աքաղաղին, ոտները կապեց, դրեց կռնատակին: Նրանք ճանապարհ ընկան:

Արևն արդէն բաւական բարձրացել էր, երբ քաղաքից դուրս եկան։ Հացթուխը հրամայեց Սօնային կօշիկները հանել և ոտաբաց քայլել։ Նոյնն արեց և ինքը։ Նախընթաց օրը իմացել էր, որ քաղաքից մի քանի ընտանիքներ էլ պիտի գնան ուխտ։ Ահա ինչու կանուխ ճանապարհ ընկաւ, որպէսզի աղջկայ հետ մենակ չըգնայ ամբողջ եօթ վերստ ճանապարհը։ Հարիւր տեսակի մարդիկ են անցնում, ով գիտէ, ի՛նչ կարող է պատահել։

Հեռւում երևացին մի քանի սայլեր։ Հացթուխը ասաց Սօնային, որ քայլերը արագացնի։ Նրանք շուտով հասան սայլերին։ Ջահիլ աղջիկների մի խումբ գնում էր ոտով, իսկ պառաւ և հասակաւոր կանայք նստած էին սայլերի վրայ։ Ջահիլները դհօլ էին զարկում, հարմօնիա էին ածում. երգում էին, ծիծաղում, հռհռում, թռչկոտում, ազատ, համարձակ, երեսները բաց։

Սօնան իր մօր հետ և նրա ցանկութեամբ գնում էր սայլերից հեռու, ճանապարհից դուրս, կանաչ խոտի միջով։ Ուղին հարթ չէր։ Երեք օր առաջ անձրև էր եկել, և անցուդարձ անող սայլերի անիւները թանձր ցեխի մէջ խոր ակօսներ էին գոյացրել։ Ցեխը չորացել էր և ճանապարհը ծածկել դերբուկներով։ Անկարելի էր այնտեղ ոտաբոբիկ քայլել։ Բացի դրանից, հացթուխը խոյս էր տալիս ոտով գնացող աղջիկների խմբից։ Ո՛վ գիտէ, մի գուցէ յանկարծ Սօնան ուշաթափւի, ինչու՛ ուրիշները տեսնեն։ Այն ինչ, Սօնայի սիրտը մղւում էր դէպի աղջիկների խումբը։ Ախ, որքա՜ն նա փափագում էր միանալ այդ



խմբին, նոյնպէս երգել, զւարճանալ։ Բայց հեռո՜ւ, հեռո՜ւ այն ճանապարհից, որով գնում են ուրիշները։ Նա միայն առողջների և բախտաւորների համար է բաց...

Սայլերին առաջնորդում էր մի ձիաւոր, գդակը ծուռ դրած, մտրակը ծնկան վրայ յենած, հանդարտ երգելով։ Երբեմն նա ձիու գլուխը դարձնում էր յետ և սպասում սայլերին։ Մի անգամ յետ մնաց և, ձիու սանձը քաշելով, կանգ առաւ, նայեց երկու ուխտաւոր կանանց։

—Սօնա, շալդ քաշիր երեսիդ, —ասաց հացթուխը։

Սօնան ծածկեց երեսը, յետոյ շուտով բաց արաւ։ Մի՞թէ այդ արձակ դաշտումն էլ իրաւունք չունի մի քիչ ազատութիւն վայելելու։ Նա ուզում է լսել իր հասակակիցների երգը, ծիծաղը, ուզում է մի քիչ մօտենալ նրանց։ Եւ մօտենում է։

—Ա՛յս կողմով, Սօնա, ա՛յս կողմով,—կրկնեց հացթուխը, ցոյց տալով դաշտի խորքը։

Այդ միջոցին ձիաւորը մօտեցաւ հացթուխին։

—Ո՞ւխտ ես գնում,—հարցրեց նա։

—Հա, որդի։

—Ընդունելի լինի։

—Ամեն. քոնն էլ։

Ձիաւորը չըհեռացաւ։ Նա ընթանում էր հացթուխի և նրա աղջկայ հետ հաւասար քայլով, մինչդեռ սայլերն արդէն բաւական հեռացել էին։

—Յոգնած կըլինէք, համեցէք, սայլերի վրայ տեղ կայ, նստեցէք,—առաջարկեց նա հացթուխին։

—Շնորհակալ եմ, Աստված քեզ պահի, որդի, ուխտ ենք արել ոտով գնալ, գնում ենք։

Ձիաւորը մի խոր հայեացք ձգեց Սոնայի վրայ։ Աղջիկը շտապեց երեսը շալով ծածկել։ Հայթուխը այլևս չէր խօսում։ Ձիաւորը մտրակեց ձիուն և հասաւ սայլերին։

Այդ միջոցին Սոնան լսեց մի ծանօթ ձայն.

«Պսպղում էր սև օձի պէս մերկ թուրը,
«Սլանում էր բազէի պէս քեօհլան ձին,
«Քամուն տալով բերնից վազող փրփուրը։
«Կատաղել էր, կոտորում էր Քեօրօղլին։

Սոնան յետ նայեց և տեսաւ գիժ-Դանէլին, որ, գաւազանը պարանոցին հորիզոնաձև դրած, ձեռները հովւի պէս յենած ծայրերին, քայլում էր առաջ, ոտաբոբիկ, գլխաբաց։

—Սուրբ Կարապետը մուրազիդ հասցնի, Շուշան բաջի,—ասաց նա, շուտով հաւասարւելով հայթուխին։—Խաթուն Սոնա, բարով տեսանք։

Սոնան ուրախացաւ խենթի անսպասելի կերպով երևալուն։ Նրա հետ արգելւած չէ խօսելը, այժմ գոնէ կարող է հարցուփորձ անել սայլերի հետ գնացող աղջիկների մասին։

—Մերոնք են,—պատասխանեց գիժ-Դանէլը,—ուխտ ենք գնում։ Երկու ոչխար, մէկ ղօչ ենք տանում։ Սոնա խանում, տեսնո՞ւմ ես, քո լւացած հալաւն եմ հագել,—դարձաւ նա Սոնային, ցոյց տալով իր շապիկը, որ, սովորականին հակառակ, մաքուր էր։

—Ամեն շաբաթ բեր, լւանամ,—ասաց Սոնան։

—Չէ, նորը պիտի կարես։ Ես կտորը կառնեմ,



դու կըկարես։ Նա չէր կարում, պտուկ էր, մատեր ունէր շիմշադի պէս...

—Էլի կօշիկներ չե՞ս հագել։ Ի՞նչ արիր քեզ համար հիւսած գուլպաները։

—Պահում եմ, Սոնա խանում, հարսանիքիդ պիտի հագնեմ։ Հարսանիք, հարսանիք, չըմեռնեմ, Մանիշակիս տեսնեմ սուրբ սեղանի առաջ։ Տւէք քարը —կրծքիս խփեմ, վայ կանչեմ, տւէք հողը— գլխիս ածեմ, լաց լինեմ։ Շուշան բաջի, լաւ մտիկ արա այն ձիաւորին։ Հետը խօսում էիր, տեսայ, էհ, ասլան-Դանէլը մի բան է իմանում, շատ լաւ բան, շատ լաւ բան...

Արտասանելով վերջին բառերը, ոստոստաց առաջ, գաւազանով ջարդելով ճանապարհի եզրին բուսած մորենիի թփերը և երգելով. «Քեօհլան ձիու վրայ նստած է Քեօրօղլին, է՜յ ջամահաթ, ճամբայ տւէք Ղաթին»։ Յետոյ նա, գաւազանը բարձրացնելով, գոռաց. «Մուրադ, հէյ, հէյ, Մուրադ, քշի՛ր, քշի՛ր, ասլանը եկաւ»։

Նա վազեց դէպի ձիաւորը, յետոյ յանկարծ կանգ առաւ և սպասեց հայթուխին։ Նրա հատուկտոր խօսքերից հասկացւում էր, որ սայլերից երկուսի վրայ գնում են Նրա ազգականները։ Ձիաւորը խենթի հօրեղբօր որդին էր, անունը Մուրադ։

—Էգուց էլ մեծ եղբայրը կըգայ։ Նրանց մօտ չեմ մնայ, կըգամ ձեզ մօտ։ Բազարով անցնելիս, Ոսկանին պատահեցի։ Չէ, Շուշան բաջի, նա կոնծած չէր։ Ասաց. «Դանէլ աղբէր, աղջկաս լա՜ւ մտիկ արա»։ Մի՛ վախենալ, Սոնա խաթուն, աչքիս լոյս, քե-

Ֆիդ դիպչողին պատառ-պատառ կանեմ, հում-հում կուտեմ…

Նա անցաւ հացթուխի կողմը և սկսեց շշնջալ։ Սօնան ոչինչ չէր լսում, բայց գուշակում էր, որ խօսակցութիւնը լուրջ բանի մասին է։ Խենթը շուտ-շուտ երեսին խաչակնքում էր և սուրբ Կարապետի անունով երդւում։

—Բա՛ն եմ ասում, աչքովս եմ տեսել, ականջովս լսել,—լսւում էին միայն այս խօսքերը։

Նրանք հասան սրբավայր։ Դա մի ամայի վանք էր բաւական ընդարձակ գիւղի ծայրում։ Պահապան տիրացուն այնքան բարի գտնւեց, որ հացթուխին յատկացրեց մի առանձին խուց շրջակայ կիսախարխուլ շէնքի մէջ։ Մայր և աղջիկ տեղաւորւեցին այնտեղ։ Գիժ-Դանէլը, հակառակ հացթուխի ցանկութեան, վազեց ու իր ազգականներից բերեց մի փոքրիկ կապերտ, մի բարձ և մի դօշակ։

—Սօնա խաթունիս համար է, յոգնած է, թող հանգստանայ,—ասաց նա, հայրական խնամքով կապերտը սփռելով խցի մերկ հողայատակի վրայ։

Միւս օրը, առաւօտը կանուխ զարթնելով, խենթը մորթեց հացթուխի աքաղաղը և բաժանեց գիւղի մերկանդամ մանուկներին։ Սօնան հեռւից նայում էր այդ ոտաբոբիկ էակներին և յիշում իր կեանքի այն միջոցը, երբ ազատ վազվզում էր փողոցներում։ Անցա՜ւ այդ երջանիկ պահը, որ այնքան կարճ տեւեց նրա կեանքում։ Այժմ նա սրտից արձակում է կսկծալի հառաչանքներ, աղօթում է սրբերին, լիզում է նրանց գերեզմանների հողը, իր ցաւի համար ճար



աղերսելով։ Նա լսում էր գիժ-Դանէլի առասպելական անկապ, անսկիզբ և անվերջ պատմութիւնները սրբերի հրաշքների մասին։ Քանի՜ քանի կաղեր, կոյրեր և համրեր են բժշկւել հէնց այս խարխուլ վանքում։

—Աչքովս եմ տեսել, մէկ-մէկ կարող եմ ցոյց տալ,—հաւաստացնում էր խենթը։—Նասր-էդդին շահի գալու տարին էր, երկինք-երկիր չորացել էր։ Ռաշպարը կուրծք էր թակում, Աստւած կանչում։ Եկան մասունքը առօք-փառօք տարան քաղաք, թափօր էր։ Արևը մարդ էր խաշում, եղունգիս չափ թուխպ չըկար երկնքում։ Մէկէլ տեսնենք աղօթարանի կողմը մթնեց, անձրև բռնեց. ի՜նչ անձրև, ճիպոտ-ճիպոտ։ Այն տարի ցորենի խալւարը ծախւեց հինգ մանէթով։

Մինչ խենթը պատմում էր, այնտեղ, վանքի գաւթում, ուխտաւոր աղջիկները նւագում էին, պարում և երգում։ Կարծես, նրանք ոչ մի ցաւ չունէին, եկել էին այդ սրբավայրը յատկապէս զւարճանալու և Սօնայի նախանձը շարժելու համար։ Բա՛հ, միթէ մեղք չի սրբի մասունքի մօտ ծիծաղել ու հրհռալը։ Բայց ի՜նչ լաւ սազ է գալիս այդ զւարճութիւնը ջահիլ աղջիկներին վանքի կանաչ գաւթում, այդ մամռապատ քարերի շուրջը, այդ վայրենի թփերի մօտ։ Մռայլ երկիւղածութեան զգացումը Սօնայի սրտում տեղի էր տալիս նախանձի զգացմանը։ Հասակակիցների անզուսպ զւարճութիւնը նրան թւում էր իբրև մի տեսակ նախատինք, որ նա ցաւագար է, Աստծուց պատժւած, մարդկանց երեսից զրկւած։

Ճաշից յետոյ, ուխտաւորները, իրանց իրեղէնները թողնելով վանքում, ցրուել էին գիւղից դուրս զբօսնելու։ Գիժ-Դանէլը գնացել էր վանքից ոչ հեռու գտնւող մի ձորակի աղբիւրից ջուր բերելու։ Սօնան իր մօր հետ բարձրացաւ մի փոքրիկ դալարազարդ բլրակի վրայ և այնտեղից նայում էր հեռաւոր ձիւնագագաթ լեռներին։ Վանքի պատի առջև նկարուեց մի տղամարդի կերպարանք։ Սօնան իսկոյն շալը քաշեց երեսին։ Մի քանի վայրկեան անցած, կրկին երեսը բաց արաւ։ Այս անգամ ճանաչեց այն բարեսիրտ ձիաւորին, որ նախընթաց օրը առաջարկում էր նրանց սայլ նստել։ Գդակը դարձեալ ծուռ դրած, մի ձեռը յենած դաշոյնի դաստապանին, միւսը դրած դեղնագոյն չուխայի տակ, համարձակ աչքերով նայում էր Սօնային։ Երբեմն շփում էր իր բարակ ընչացքը և նայում կրծքին, կարծես, ինքն իրանով հիանալով։ Եւ իրաւունք ունէր հիանալու։ Նրա բարձր հասակը, առոյգ դէմքը և առողջ կուրծքը միասին գումարած՝ տեղական չափահաս աղջիկների համար ներկայացնում էին մի գրաւիչ փեսացու քսանուվեց տարեկանից ոչ աւելի։ Սօնան դարձեալ երեսը ծածկեց։ Երիտասարդը տեսնելով, որ աղջիկն ամաչում է, համեստութեամբ հեռացաւ և և թաքնուեց պատի ետևում։

Այդ միջոցին գիժ-Դանէլը սառն ջրով լի կուժը իր կիսամերկ ուսի վրայ դրած, մօտենում էր վանքին։ Սօնան նրա դէմքի վրայ նկատեց մի խորամանկ ժպիտ, որի նմանը առաջին անգամն էր արտայայտում այդ դժբախտ դէմքը։ Երբ մայր ու աղջիկ



վերադարձան վանքի գաւիթը, գիժ-Դանէլը, գաւազանը սազի պէս կրծքին բռնած, երգում էր։ Տեսնելով հացթուխին, վազեց առաջ և սկսեց նրա հետ շշնջալ։ Նա խօսում էր դեղնագոյն-չուխաւոր երիտասարդի մասին։ Պնդում էր, թէ այդ երիտասարդը շատ է հաւանել Սօնային և մտքում դրել է նրան «ուզել»։ Առաջին անգամ Սօնային տեսել է փողոցով անցնելու ժամանակ, դռների միջով, երբ Սօնան իրանց տան գաւիթը աւելելիս է եղել։ Նա հարցրել է անծանօթ աղջկայ մասին իր տնացիներին։ Ոչ ոք չի ճանաչել։ Մի անգամ էլ երիտասարդը, նոյն փողոցով անցնելիս, տեսել է, որ Դանէլը դուրս է գալիս այդ տնից։ Նա հարցրել է Դանէլին, և «սալանը» այնքան գովել է Սօնային, որ Մուրադը «հոտից ուռել է»։

—Ես քեզ ասում եմ գժւել է, գժւել,—աւարտեց խենթը խօսքը, ձեռը բարեկամաբար խփելով հացթուխի ուսին։—Այսօր էգուց մարդ կուղարկի, էլ չի համբերիլ...

Մի ժամ յետոյ խցի առջևով անցան երկու կին—մէկը պառաւ, միւսը դեռ երիտասարդ—և հետաքրքրութեամբ նայեցին Սօնային։ Խենթը ասաց հացթուխին, որ պառաւը Մուրադի մայրն է, իսկ երիտասարդը—եղբօր կինը։

Հացթուխը վերջին անգամ աղօթեց վանքում և Սօնայի հետ ճանապարհ ընկաւ դէպի քաղաք։ Խենթը նրանց ուղեկցում էր։ Նա շարունակ խօսում էր Մուրադի մասին, գովում էր նրա խելքը, գեղեցկութիւնը, տունուտեղը։ Մինչև այդ ժամանակ խօսում

էր բոլորովին առողջ մարդու պես։ Հենց որ բարձրացավ ճանապարհի վրա գտնվող մի մեծ բլուրի գագաթը, որտեղից երևում էր քաղաքի շրջակայքը, գիժը յանկարծ փոխվեց։ Նա ընդհատեց իր խոսքը, ձեռով ցույց տվեց քաղաքից երկու վերստաչափ հեռու գտնվող գերեզմանատունը և աղաղակեց.

—Այնտեղ է, ա՜յ, այնտեղ...

Վազեց առաջ, գավազանը բարձր բռնած, գավազանի ոլես մանչիններ արձակելով։ Առաջին անգամն էր Սոնան խենթին տեսնում այնպես կատաղած։ Նա չըվախեցավ։ Հարիւր քայլաչափ վազելուց յետոյ գիժ-Դանիէլը կանգնեց և, գավազանը գլխի վրայ հորիզոնաձև բռնած, խոշոր քայլերով մոտեցավ իր ուղեկիցներին, արտասանելով.

—Եա՜, սուրբ Կարապետ, եա՜, սուրբ Կարապետ...

Նա իրանից ձևացնում էր մի լարախաղ, աչքերը յառած դէպի մի որոշ կէտ և ուսերը շարժելով։ Սոնան նայում էր նրան, արտաքուստ ժպտում, ներքուստ ցավում։ Ինչո՞ւ այդ մարդը պատժվել է Աստծուց, մի՞թէ նա էլ մեղք է ունեցել։ Զգում էր, որ խենթի հոգեկան հիւանդութիւնը ունի պատճառ։ Բայց թէ ինչ էր — չըգիտէր և չէր համարձակւում ակնարկել անգամ։ Միայն, երբ խենթը մոտեցավ, Սոնան հարցրեց.

—Դանիէլ ապէր, հիմա գիշերները ո՞րտեղ ես քնում։

—Ժամհարի մոտ։

—Ինչո՞ւ եղբորդ որդիների տանը չես քնում։

Խենթը, պատասխանի փոխարէն, սկսեց երգել



մի պարսկերէն երգ, ամեն տնից յետոյ կրկնելով.

«Սիրտդ քար է, ոսո՜րդ,
«Ինչո՞ւ բալիս խփեցիր.
«Ինչո՞ւ բալիս խփեցիր...»

---

V

Այժմ գիժ-Դանիէլը ամեն օր էր այցելում իր բարեկամներին։ Նա բերում էր իր ազգականների մասին ամեն անգամ նոր տեղեկութիւն և միշտ կրկնում, թէ ահա, ահա այսօր-վաղը նրանց կողմից միջնորդ կըգայ «Սոնային ուզելու Մուրադի համար»։

Հայթուխը նրա ասածը հաղորդեց ամուսնուն։ Պայտագործն ուրախացավ և սկսեց աւելի բարեկամաբար վերաբերւել խենթին։

—Ինչո՜ւ չէ,—ասաց նա մի օր, ձեռը խփելով Դանէլի ուսին,—Սոնայիս պէս աղջիկ ո՞վ ունի... Խօմ ինձ էլ ճանաչում ես, Դանէլ ջան, բանը փողը չէ, մենք էլ մարդ ենք, քաղաքում անուն ունինք։ Թող մէկը դուրս գայ ու ասի — Ոսկանն այսպէս է, այնպէս է։ Պատւաւոր մարդու տղայ, պատւաւոր մարդ ենք։ Եղբօրդ որդին թող ուրախութիւնից գլխի վրայ քեալլա-մալլաղ կանգնի, որ իմ փեսան է դառնում։ Ինձի Ոսկան կասեն, հանաք-մասխարա չիմանաս...

Խենթը համաձայնւեց նրա ասածներին, բայց, միևնոյն ժամանակ, նրան թւաց, որ իր բարեկամը շատ էլ պարծենալու իրաւունք չունի։ Ասենք, Ոսկանը

նամուսով է, գլխին տղամարդի գդակ ունի, միայն ժամանակ—ժամանակ իրան կորցնում է։

—Խօսքս այն պահրումարի մասին է, քի՛չ ածա փորդ, տնաքանդ, խոմ ներսդ չե՞ս այրելու։

—Ասում ես, օրինակ, էլ չըկոնծե՞նք էլի,—հարցրեց պայտագործը։

—Կոնծի՛ր, ո՞վ է ասում. քի՛չ-քի՛չ, մէկ-մէկ, երկու-երկու, աւելի-չէ...

Խենթի խրատը, ըստ երևոյթին, շատ ծիծաղելի թւաց արբշիռ պայտագործին։ Մի աչքը փակելով, նա գլուխը ծռեց դէպի ուսը և հեգնաբար ասաց.

—Արի, Դանէլ աղբէր, եպիսկոպոս ձեռնադրուիր, խիստ լաւ ես քարոզում։

Ցեռոյ, ձեռը խփելով բարեկամի ուսին, աւելացրեց.

—Դու ինձ ասա, տեսնեմ, աղջիկս բախտաւոր կը լինի՞ էլի։

—Ասում եմ, էլի կասեմ, ինքդ էլ կըտեսնես։

—Բաս, ապրես, Դանէլ ջան, լաւ մարդ ես։ Խելքդ ինչ է կտրում, օրինաւոր ազգականներ ունենալը լա՛ւ բան է, չէ՞։ Դու այն ասա, որ փո՛ղ շատ ունենան, փո՛ղ, թէ չէ, ես նրանց աղջիկ չեմ տալ, ձեռնտու չէ։ Մենք էլ պատուաւոր մարդ ենք, գրպանի ծախք է հարկաւոր... Իսկի չըլինի, խոմ, մի բաժակ հացի եա ջաջի արաղ կտան, որ կենացները անուշ անենք, հը՞մ...

Խենթը զգաց, որ բարեկամը լաւ բան չի ասում։ Առանց այդ էլ արդէն նրա գլուխը ձանձրացել էր



լուրջ խօսակցութիւնից։ Նրա աչքերը յանկարծ պըսպղացին, գաւազանը ձեռին դողաց։

—Ոսկան աղբէր, ճանաչո՞ւմ ես սալան Դանէլին,—գոչեց նա կատաղած։

Պայտագործը վախեցաւ։ Խենթի կերպարանքը շատ մոլեգին արտայայտութիւն էր ստացել։

—Լա՛ւ, մի՛ չարանար, Դանէլ ջան,—ասաց նա, բռնելով իր բարեկամի ձեռը։

—Կնիկդ, աղջիկդ լաց են լինում գիշեր-ցերեկ, ճանաչո՞ւմ ես սալան Դանէլին, քի՛չ խմիր։

—Է՛հ, չեմ խմիլ, վաս սալամ, արաղ քաշողի էլ հէրը գեօրբէգեօռ լինի...

Այս խօսքերը մի փոքր հանգստացրին խենթին։ Նա գաւազանը դրեց կռնատակին։

Այդ օրից նա պայտագործին այլևս չէր տաշնորդում դէպի գերեզմանատուն քելեխ ուտելու։ Եւ միշտ հացթուխին հարցնում էր. ինչպէ՞ս է Ոսկանը վարւում նրա հետ, խոմ չի՞ ծեծում նրան կամ Սօնային։ Կարծես, մէկը նրա վրայ պարտականութիւն էր դրել ամեն բանում հովանաւորել աղքատիկ ընտանիքին։ Նրա ոպառնալիքը Ոսկանի վրայ չազդեց։ Շաբաթը երեք-չորս անգամ պայտագործը տուն էր վերադառնում օրօրւելով և հայհոյանքը բերանին։

Մի օր խենթը, վազելով, մտաւ հացթուխի խըրճիթը և շնչասպառ ասաց.

—Հիմա կըգայ, աչքովս տեսայ, ականջովս լսեցի, բռնդ տես...

Ասաց ու ինքն իսկոյն անհետացաւ։ Հացթուխը հասկացաւ ում մասին է խենթի խօսքը. շտապով

կարգի բերեց խրճիթը և սկսեց ականջ դնել դէպի դուրս։ Արդարև, մի քանի րոպէ անցած, լսեց քայլերի ձայն և Սօնային հրամայեց թագնուել պատի մեծ խորշում, վարագոյրի ետևում։ Ներս մտաւ մի փոքրահասակ և կաղ կին, համարձակ դէմքով և շարժուածքով։ Քաղաքի յայտնի միջնորդն էր դա, որին կոչում էին «Զօլախ Սահարնազ»։

Նա, առանց պատասխանի և հրաւէրի սպասելու, նստեց յատակի վրայ, սենեակի վերին կողմում։

—Ինչպէս տեսնում եմ, մարդդ տանը չէ,— ասաց, աջ ու ձախ նայելուց յետոյ։—Շատ լաւ է, կնկայ բանը կնիկը շուտ կըդրստի։ Մօտդ խէր խաբարով եմ եկել։

—Խէրում մնաս, ասա, տեսնենք...

Առանց երկար յառաջաբանի, Զօլախ Սահարնազը անմիջապէս յայտնեց իր այցելութեան նպատակը։ Ինչ խօսք, որ Շուշան բաջին «չորաթան» Ջառնիշանի տղայ մուրադի մասին լսած կըլինի։ Ամբողջ քաղաքի աչքն է, նմանը չկայ, ջահիլ, գեղեցիկ, շիր ու շնորքով։ Չի հարբում, չի ծխում, ղումարբազ (խաղամոլ) չէ, գլուխը քաշ իր բանին է։ .

—Քաղաքում աղջիկ շատ կայ,—շարունակեց Սահարնազը,—ով ասես, որ չորաթան-Ջառնիշանի տաները չըպաչի։ Բախտը քեզ է ընկել։ Մուրադը տեսել է աղջիկդ, հաւանել է։ Հիմա դու էլ կնիկ ես, գլխիդ խելք ունիս, մտածիր, ինձ էլ մի խօսք ասա, գնամ...

—Ի՞նչ ասեմ,—պատասխանեց հացթուխը, մի քիչ մտածելուց յետոյ,—փառք Աստուծոյ, որ տղան



ինքն է հաւանել։ Է՛հ, աղջիկ է էլի, լաւ-վատ գիտի կարել, կարկատել, եփել։ Ծնողների պատիւը ճանաչող, խոնարհ, Աստծու գառն է. մարդ տեսնելիս շալը հինգ ծալ է անում երեսին։ Մի խօսքով, աղջիկ է էլի. եթէ ուրիշներից լաւ չէ, վատ էլ չէ։

Մինչ երկու կանանց բանակցութիւնը շարունակւում էր, Սօնան հետաքրքրութեամբ ականջ էր դնում, աշխատելով ոչ մի բառ բաց չըթողնել։ Նրա սիրտը բաբախում էր յուզմունքից։ Չըգիտէր, ինչ մտածէր իր ապագայի մասին. բոլորը թողել էր մօր կամքին։ Ծնողն իր հարազատ աղջկայ վատը չի կամենայ, թող, ինչպէս խելքը կտրում է, այնպէս անի, միայն թէ այդ խեղճ կնիկը մի քիչ բախտաւորուի։

Հացթուխը վարագոյրը յետ քաշեց և Սօնային հրամայեց դուրս գալ խորշից։ Ամօթից կարմրած ու քրտնած՝ կանգնեց տասնուվեց տարեկան աղջիկը միջնորդի առջև, աչքերը խոնարհեցնելով յատակին և շրթունքները յուզմունքից կրծոտելով։

Զօլախ Սահարնազը դիտեց նրան ոտից գլուխ իր փորձառու աչքերով, խօսեցրեց, որ իմանայ համր չէ արդեօք, հարց ու փորձ արաւ «խելքը չափելու» համար և ուղարկեց մի բաժակ ջուր բերի խմելու, որ քայլուածքը տեսնի և իմանայ, կաղ չէ՞, արդեօք։

Երեք օր անցած, հացթուխի տունը ներկայացնում էր մի տեսարան, որի նմանը այնտեղ դեռ չէր կատարուել և չըպիտի կատարուէր յաւիտեան։ Պայտագործը մաքուր լուացել էր, գզգզած միրուքը սանրել և հագել քսան տարի առաջ պսակադրութեան համար կարած արխալուխը։ Հացթուխը գլխին դցել

էր մի նոր շալ և մեջքին կապել մետաքսեայ կարմիր գոտին—ուրախութեան նշանը։ Յատակի վրայ վառւում էին հարևաններից ժամանակաւոր բերւած մի զոյգ կանթեղներ, լուսաւորելով աղքատիկ խրճիթի ողորմելի կահ-կարասին։ Սենեակի մի անկիւնում դրւած էր մատուցարանը մի շիշ օղիով և երկու տեսակ մուրաբայով, որ, Աստւած գիտէ, ո՛ր ժամանակից էր պահել հացթուխը։ Պայտագործը յուզւած անցուդարձ էր անում անկիւնից անկիւն, տեղ-տեղ նենգամիտ հայեացքներ ձգելով օղիի շիշի վրայ և ծոծրակը անհամբերութեամբ քորելով։

Սօնան կանգնած էր սենեակի վայրի անկիւնում, ձեռները կրծքին դրած, դողալով, ամաչելով։ Երկու դրացի կանայք նստած էին հացթուխի աջուձախ կողմերում և խօսում էին օրւայ հանդիսի մասին։

—Գալիս են, առա՛ջ գնա,—ասաց հացթուխը ամուսնուն և ինքն էլ իսկոյն ոտքի կանգնեց։

Պայտագործը շտապեց դուրս՝ հիւրերին ընդունելու։

Նախ ներս մտաւ տէր Մարկոսի գաւազանը, ապա երևացին նրա գորգագոյն փարաջայի փեշերը, յետոյ ինքն ամբողջովին, իր երկայն ու տափակ գդակով, որ մի մեծ թիակի էր նման։

Նրա ետևից երևաց փեսացւի մայրը—«չորաթան» Զառնիշանը, առանց չարսաւի, մի կինամոնագոյն շալ ուսերին գցած։ Իսկ-որ այդ կինը «չորաթան» էր, այնքան ցամաքած էր։ Նրա ոսկորոտ դէմքին, լայն կզակին, մեծ բերանին մի առանձին խստութիւն էին տալիս այն մի զոյգ սուր աչքերը, որ պսպղում էին ինչպէս վառւած ածուխի կտորներ։



Սօնայի մարմնով անցաւ մի ցնցում, երբ նրա հայեացքն ընկաւ այդ կնոջ վրայ. մի ցնցում, որ մարդ կարող է զգալ, երբ հանդիպի շարժուն կմախքի, որի աչքերի խոռոչների մէջ տեղաւորւած են երկու փայլուն որդներ։ Բայց պառաւի քայլւածքն այնքան կենդանի էր, որ, ըստ երևոյթին, նա բնաւ ցանկութիւն չունէր երբ և է կմախք դառնալու։

Դռների մօտ, օդի մէջ ցցւեց Բուխարի մորթուց կարւած մի սրածայր գդակ, որի տիրոջ մարմինը, յայտնի չէր ինչու, տատանւում էր ներս մտնել։

—Համեցէ՛ք, խնամի, համեցէ՛ք,—կրկնում էր պայտագործը դրսից։

Վերջապէս, խրճիթի շէմքի վրայ երևաց մի մարդկային ոտ սպիտակ գուլպայով ծածկւած, ապա երկրորդը, ապա մի երկայն չուխայ։ Յայտնւեց, որ նրանց տէրն է—փեսացւի աւագ եղբայրը։ «Զօփուռ» Կարապետը—այսպէս էին կոչում ներս մտնողին—մօտ քառասուն տարեկան տղամարդ էր ամուր կազմւածքով, փոքրիկ աչքերով և դուրս ցցւած այտերով, որոնց վրայ ծաղիկը խոր փոսեր էր թողել։

Սօնայի մարմնով դարձեալ մի սարսուռ անցաւ, երբ նա շալի տակից նայեց այդ մարդու կերպարանքին։

Վերջապէս, ներս մտաւ չորրորդ և վերջին հիւրը—Կարապետի կինը՝ Գիւլնազը, ոտից գլուխ չարսաւի մէջ փաթաթւած։

Բաւական երկար ժամանակ տևեց, մինչև որ հիւրերը համաձայնւեցին նստել այն կարգով, որ ցանկանում էին տանտէրերը։ «Զօփուռ» Կարապետը

անպատճառ․ ուզում էր դռների մօտ նստել, հարկաւ, համեստութիւն ցոյց տալու համար: Պառաւ Զառնիշանը յամառութեամբ իր մէջքից վերցնում էր և մի կողմը ձգում, իսկ հացթուխը նոյն յամառութեամբ սեղմում էր նրա մէջքին մի փափուկ բարձ: Այն ինչ, պառաւի հարսը—Գիւլնազը, կարծես, վճռել էր պայտագործին համբերութիւնից հանել, այնքան ծանրութարակ էր շարժւում: Երբ երևան եկաւ նրա դէմքը, Սոնան դարձեալ մի սարսուռ զգաց:

Այդպիսով, նա երեք անգամ ցնցուեց, և երրորդ ցնցումն ամենից զօրեղն էր…

Նրա հայեացքը մի անբացատրելի զօրութեամբ յառեց իր ապագայ տալոջ երեսին: Ինքնըստաինքեան այդ կնոջ դէմքն առանձին ուշադրութեան արժանի բան չէր ներկայացնում: Նա տակաւին երիտասարդ էր, ոչ նիհար, ոչ գէր, ոչ այնքան բարձր և ոչ էլ ցածր հասակով: Նայելով նրա շիկագոյն ունքերին, պէտք էր ենթադրել, որ գլխի մազերի բնական գոյնն էլ շէկ է, բայց նրանք հինայած էին, ուստի և մուգ-կարմրագոյն: Տարօրինակ էին միայն այդ կնոջ աչքերը: Իսկապէս դրանք աչքեր չէին, այլ մի զոյգ փայլուն ապակիներ, սառած և անշարժ իրանց շրջանակների մէջ: Երբ նա իր հայեացքը ձգեց Սոնայի վրայ, խեղճ աղջկայ ոտները դողացին: Զրգիտէր հօրից թէ մօրից լսել էր օձի հայեացքի ձգողական ոյժի մասին: Պատմել էին նրան, որ երբ գորտը նայում է օձի սուր աչքերին, մի անյաղթելի զօրութեամբ մղւում է, ընկնում նրա բերանը: Սոնան չէր մղւում դէպի այդ կինը, ընդհակառակը, մի բան



հրում էր նրան, բայց չէր էլ կարողանում իր հայեացքը դարձնել նրանից:

Նորից սկսուեց սովորական բանակցութիւնը, թէև ամեն բան վճռուած էր արդէն: Նորից լսուեցին փեսայի մասին գովասանքներ, խոստումներ, հարց ու փորձ, և նորից Սոնային զանազան պատրուակներով ստիպեցին խօսել, քայլել, ատամները ցոյց տալ: Վերջապէս, պառաւ Զառնիշանը դարձաւ հացթուխին.

—Աղջիկդ դրսից դուր է գալիս ինձ. եթէ ուրիշ պակասութիւն չունի—մեր ապրանքն է:

—Լաւ-վատ, տեսնում ես, հաւանում ես—հալալ լինի,—արտասանեց հացթուխը, սարսափելով պառաւի վերջին խօսքերից:

—Ինչքան դրսումն ես տեսնում, խնամի ջան,—մէջ մտաւ պայտագործը, որ արդէն սկսել էր ձանձրանալ այդ ձևականութիւնից,—երկու այնքան էլ ներսումն է:

—Տայ Աստուած,—ասաց «չօփուռ» Կարապետը:

—Ներսինը իմանալ դժուար է,—աւելացրեց նրա կինը, ապակեայ աչքերը յառելով Սոնայի երեսին:

—Ես ձեզ աղջիկ չեմ տալիս, այլ հալած ոսկի,—շարունակեց պայտագործը սեպհական տրամաբանութիւնից ոգևորուած,—խելք ասես—ծով, շնորհք ասես—էլ աւելի: Այս տունը նրա վզին է: Կերակուրներ է եփում, որ ուտելիս մատերդ էլ հետն ես ուտում, էլ չեմ ասում կարելն ու լւանալը: Մէկ էլ որ մեր պապերի խօսքն է. լաւ որդին օջաղից կըճանաչւի: Ախար, մենք էլ այս քաղաքում մի օջաղ ենք, անուն ունինք: Տէր հայր, ինչ կասես:

—Իսկութիւնն ես հրամայում:

Հացթուխը տեսնելով, որ իր ամուսինն արդէն պատրաստ է սուր փչել, շտապեց ընդհատել նրա ոգևորութիւնը.

—Մախլաս, աղջիկ է էլի շատ. էլ գովենք, ի՞նչ դուրս կըգայ, դո՛ւք պէտք է հաւանէք:

Հոգու խորքում զգում էր, որ առանց այդ էլ խաբում է իր հիւրերին, թաքցնելով նրանցից Սօնայի ցաւը: Նա մտածում էր, որ իր արածը վատ է, աններելի, Աստծու կամքի և մարդկանց օրէնքների հակառակ: Բայց ույժ չունէր միակ դստեր բախտի դէմ կանգնելու, ինքն իր բերանով նրան խայտառակելու:

Մի վայրկեան միայն չըկարողացաւ իրան զըսպել: Դուրս եկաւ խրճիթից և իր անհանգստութիւնը յայտնեց Դանէլին: Խեղճը կանգնած էր դռների մօտ և դրսից դիտում էր ներսում կատարւող տեսարանը: Ազգականները նրան պատւիրել էին այդ երեկոյ չերևալ հացթուխի տանը: Բայց նա չըդիմացաւ, կամեցաւ բարեկամների ուրախութեան հանդէսը կամ, ինչպէս ինքն էր ասում, «Մանիշակի նշանդրէքը» իր աչքերով տեսնել:

—Բանիդ կաց, ասում եմ քեզ,—խրախուսեց նա հացթուխին,—ալան-Դանէլը ոչ ոքի չի ասիլ, սուսս...

Յետոյ, մի հատ կարմիր նուռ հանելով ծոցից, տուեց հացթուխին:

—Ա՛ռ, Շուշան բաջի, Աստուած շնորհաւոր անի, խկլի մի վախենար: Ասա Մանիշակիս, որ նրա բաշ-



խած գուլպաները հագել եմ. ա՛յ, քօշեր էլ ունիմ...

Տէր Մարկոսը շտապեց «պահպանիչն» ասել, մատանին օրհնեց և դրեց Սօնայի մատին, կանխապէս մի սուր հայեացք ձգելով խնամիների բերած մի գլուխ շաքարի վրայ:

Անշուք հանդէսը վերջացաւ, հիւրերը գնացին: Պայտագործը յարձակւեց մնացած օղիի վրայ և սկսեց բաժակ բաժակի ետևից դատարկել: Սօնան, խրճիթի մի անկիւնում կուչ եկած, հեկեկում էր: Նրա ձայնը դուր չեկաւ պայտագործին: Առանց այդ էլ նա արդէն ձանձրացել էր հիւրերի շատախօսութիւնից:

—Ի՞նչ ես քէֆս փչացնում,—գոռաց նա,—ա՛յ կնիկ, աղջկադ ազդոցը կտրիր:

Հացթուխի համար սրբապղծութիւն էր այդ հանդիսաւոր երեկոյ վիրաւորել հիւանդոտ աղջկայ սիրտը: Ահա ինչու չըկարողացաւ իրան զսպել և բարկացած պատասխանեց.

—Լակում ես—լակի՛ր, ձեռդ բռնող չըկայ:

—Ի՞նչ ասացի՛ր, լակե՞մ, փա՛հ, բաս ես շուն եմ էլի,—կատաղեց պայտագործը, ոտքի կանգնելով:

—Շուն չես, շան պէս ես վարւում աղջկադ հետ:

Պայտագործի աչքերը մթնեցին: Բռունցքն ամուր սեղմելով, առաջ քայլեց: Արդէն պատրաստ էր խփելու հացթուխին, երբ Սօնան վազեց, բռնեց նրա արխալուղի փեշերից երկու ձեռներով և ուժով յետ քաշեց նրան, աղաղակելով.

—Չեմ թողնի, չեմ թողնի...

Բայց բռնակալն այնքան կուրացել էր, որ երեսը

յետ դարձրեց և ձեռը բարձրացրեց իր աղջկան խըփելու, գոռալով.

—Խօսք խօսքի էք տուել, հա՛մ...

Այդ վայրկեանին մէկն ամուր բռնեց նրա ձեռն օդի մէջ:

—Չեմ թողնիլ, աղան կասեն ինձ, չեմ թողնիլ...

Պայտագործի աչքերը հանդիպեցին գիժ-Դանէլի կատաղի աչքերին, որոնցից կայծեր էին ցայտում: Նա ձեռը ուժով խլեց նրանից, գոչելով.

—Դո՛ւրս կորիր, դու ի՞նչ գործ ունիս իմ տանը, գիժ...

Բայց գիժ-Դանէլի կերպարանքն այնքան սարսափելի էր, որ մի վայրկեանում պայտագործը այլափոխուեց, ձեռները թուլացան: Նա վախեցաւ խենթից:

—Դանէլ աղբէր, դո՛ւ ես, համեցէք, նստիր, համեցէք, Սօնայիս նշանդրէքն է...

Խենթի աչքերը մթնել էին: Նա ոչինչ չէր տեսնում և միայն գոռում էր.

—Մանիշակիս քարի տակը դրեցին, աղան-Դանէլը քարը կըտայ գլխովդ...

Այս ասելով, բռնեց պայտագործի կոկորդը երկու ձեռներով և սկսեց մոլեգնաբար խեղդել նրան: Հացթուխը, աղաղակելով, մէջ ընկաւ իր մարդուն ազատելու: Գիժ-Դանէլը նրա վրայ ուշք չըդարձրեց, և բոլոր ուժով թափահարում էր պայտագործին: Նոյն միջոցին, երբ Ոսկանի լայն բացուած բիբերը պտտում էին իրանց շրջանակների մէջ, Սօնան քաշ ընկաւ խենթի ձեռներից, կրկնելով.



—Դանէլ ապէր, Դանէլ ապէր, Մանիշակն եմ:

Պատահեց մի տարօրինակ բան: Անկարելի էր երևակայել, որ խենթը ձեռքից բաց կըթողնի պայտագործին: Բայց լսելով Սօնայի ձայնը և Մանիշակ անունը, տեսնելով նրա սարսափած երեսը, յանկարծ սթափուեց: Նա բաց թողեց պայտագործին և չոքեց Սօնայի առջև:

—Մեղայ Աստծու, մեղայ Աստծու,—կրկնեց նա, երեսը խաչակնքելով և Սօնայի արխալուղի փեշերը համբուրելով:—Մանիշակ ջան, ես քո ղուլն եմ, վիզս կտրիր...

---

## VI

Երբէք հացթուխի տառապանքն այնքան ծանր չէր եղել, որքան Սօնայի նշանադրութեան օրից մինչև հարսանիքը, այդ չորս ամսւայ ընթացքում: Նա գիտէր, որ իր աղջկայ բախտը խախուտ հիմքի վրայ է դնում: Նախազգում էր, որ Սօնան օտար շրջանում, թէկուզ ամուսնու յարկի տակ, երջանիկ լինել չի կարող, քանի որ մի չար ոգի հետամուտ է նրա կեանքին: Դեռ մի ամիս չէր անցել նշանդրէքից, երբ Սօնան ընկաւ գուլթում, և նրա ծնօտը, քարին դիպչելով, վիրաւորուեց:

Սակայն մեծ էր այդ կնոջ հաւատը դէպի Նախախնամութեան գութը, և նրա սիրտը լիքն էր ունայն յոյսերով: Նա հաւատում էր, որ Սօնան անպաշտպան չի մնալ ամուսնական կեանքում: Նա Դա-

նէլի բարեկամական զգացումները վերագրում էր Նախախնամութեան կամքին։ Եթէ մի մարդ, որին ամբողջ քաղաքը գիժ է համարում, այնքան համակրանք է ցոյց տալիս նրա թշւառ աղջկան, անշուշտ այստեղ կատարւում է ճակատագրի վճիռը։ Ինչո՞ւ, ուրեմն, կարծել, թէ առողջ խելքի տէր մարդիկ քարասիրտ կըլինին և չեն խղճալ մի երիտասարդ կնոջ, որի ցաւը Աստուծոյ է ուղարկւած։ Թող Սօնայի ապագայ ամուսինը գիժ-Դանէլի սրտի կէսի չափ բարեսիրտ, ազնիւ և համեստ լինի—դա էլ հերիք է։ Նա չի թողնիլ իր հարազատ մօրն էլ մի թթու խօսք ասել Սօնային միայն այն պատճառով, որ նա ընկնաւոր է։ Բայց, ով գիտէ, կարելի է Դանէլը բան չի հասկանում, խաբւում է, լաւ չի ճանաչում իր եղբօր որդուն։

—Դանէլ ապէր, ասա, ինչպիսի տղայ է Մուրադը,—հարցնում էր հացթուխն ամեն օր։

Եւ գիժ-Դանէլը ամեն օր տալիս էր միենոյն պատասխանը.

—Ոսկի տղայ է։

Դա էր խեղճ կնոջ միակ մխիթարութիւնը, և խենթը նրան թւում էր մի տեսակ սփոփիչ հրեշտակ։ Մի անգամ նա հարցրեց.

—Դանէլ ապէր, հարսանիքից յետոյ Սօնայիս ցաւը կըբացւի խնամիների համար, ինչ կանեն նրանք երեխայիս...

Ինչպէս երևում էր, խենթը բնաւ այդ մասին չէր մտածել։ Նա գիտէր մի բան—որ ոչ ոքի չըպիտի յայտնել Սօնայի ընկնաւոր լինելը։ Կարծում էր, թէ



այսքանը բաւական է գաղտնիքը թաքցնելու համար։ Մի վայրկեան ընկաւ մտատանջութեան մէջ, ապա, գաւազանը օդի մէջ պտտեցնելով, ասաց.

—Մանիշակիս քէֆին դիպչողի գլուխը փշուր փշուր կանեմ...

Ո՞վ էր Մանիշակը, ինչո՞ւ էր խենթը Սօնային այդպէս անւանում—յայտնի չէր։ Նկատելի էր միայն, որ միշտ այդ անունը արտասանելիս նրա աչքերն առանձին արտայայտութիւն էին ստանում, և նա առանձին գգւանքով էր նայում Սօնայի երեսին։ Իսկ Սօնան խենթի հայեացքի մէջ զգում էր մի խոշոր հեռաւոր վիշտ, ամրացած նրա սրտի անթափանցելի խորութեան մէջ։ Շատ անգամ ձգտում էր գուշակել այդ վիշտը։ Եւ ոչինչ չէր կարողանում պարզել։ Զգում էր սակայն, որ օրից օր իր համակրանքը դէպի այդ մարդն աւելանում է։ Նա ուրախանում էր, երբ խենթին տեսնում էր ուրախ և անհոգ, տխրում էր, երբ խենթը երևում էր տխուր։

Մի օր գիժ-Դանէլը ներս մտաւ կռնատակին դրած մի կտոր հասարակ կապտագոյն կտաւ և, ձգելով Սօնայի գիրկը, ասաց.

—Սօնա խանում, արխալուղ կարիր աղան Դանէլի համար, հարսանիքդ մօտենում է։

Խենթը պիտի արխալուղ հագնէր։ Դա Սօնայի համար չըտեսնւած բան էր։

Արդէն երեք շաբաթ էր մնում մինչև հարսանիքի օրը։ Այժմ Սօնայի միտքը զբաղւած էր մի խնդրով. արդեօք ինչ է սպասում նրան ամուսնական կեանքում։ Իբրև իր շրջանի հարազատ զաւակ,

ամուսնութեան մասին ունէր մի շատ պարզ և անբարդ գաղափար։ Աղջկայ վիճակը համարում էր ծնողների կամքին ենթարկուած։ Նրանք են պահում, մեծացնում իրանց զաւակին, նրանք էլ պէտք է նրա կեանքի ընկերն ընտրեն։ Տանը մնացած աղջիկն իր ծնողների համար մի ծանր բեռն է։ Կնիկարմատը պէտք է իր մարդու աշխատանքով ապրի, ծնողները պարտաւոր չեն նրան մինչև մահ կերակրել։ Այս պատճառով ամեն աղջիկ, եթէ նա երկու աչքերով կոյր չէ, պէտք է ամուսնանայ թէկուզ մի մուրացկանի հետ։

Բայց այս պարզ գաղափարը բարդանում էր և անլուծելի խնդիր դառնում, երբ կապւում էր այն մտքի հետ, որ ինքը, Սօնան ընկնաւոր է։ Աստուած նրան ստեղծել է թշւառ, իսկ մայրն ուզում է անպատճառ բախտաւորեցնել նրան։ Այսօր-վաղը կըբռնեն նրա թևից և մի օտար տուն կըտանեն։ Գիտէ՞ փեսացուն, նրա գլխի ապագայ տէրը, որ իր հարսնացուն ցաւագար է։ Եթէ գիտէ, ինչո՞ւ է ամուսնանում մի անբախտ աղջկայ հետ և իրան էլ անբախտացնում։ Եթէ չըգիտէ, մի՞թէ չըպիտի յայտնել։

Եւ անթիւ կասկածներ, միմեանց յաջորդելով, պաշարում էին Սօնայի թոյլ ուղեղը և կաշկանդում։ Ի՞նչ կըլինի, Տէր Աստուած, եթէ նա հէնց պսակադրութեան օրը, եկեղեցում չարից բռնւի և ընկնի։ Օ՜, ինչ անպատւութիւն, ինչ ամօթ։ Նրա ամուսինը կըթողնի նրան ու կըհեռանայ զզւանքով. մարդիկ երես կըդարձնեն, և Սօնան կըմնայ իր մօր գըրկում։ Երկա՞ր ժամանակ կըմնայ ընկած, թէ՞ շուտով



ուշքի կըգայ։ Վերջապէս, ի՞նչպէս է ուշաթափւում, ի՞նչ է անում, ի՞նչ է խօսում։

—Ասա, մայրիկ, խօսո՞ւմ եմ, դէլի՞ն եմ տալիս, ի՞նչ եմ անում,—հարցնում էր երբեմն իր մօրից։

—Ի՞նչ ես հարցնում, բալաս, ինչ-որ լինում է, Աստծու կամքով է լինում։

Աւելի լաւ չէ՞, որ Սօնան մեռնի և իր մօրն ազատի խայտառակութիւնից. մեռնի հէնց այժմ, այս րոպէին։ Բայց ո՞րտեղ է մահը, որ գար, ազատէր նրան այս ցաւերից։

—Մեղայ Քեզ, մեղայ Քեզ,—շշնջում էին Սօնայի շրթունքները, երբ նա մահ էր աղերսում,—ասում են, մահ ուզելը մեղք է...

Կիրակի և հինգշաբթի օրերը արբշիռ պայտագործը ճշտութեամբ այցելում էր խնամիներին և, եթէ ամօթը մի քիչ չըզսպէր նրան, պատրաստ էր ամեն օր այցելել, այն էլ ճիշտ այն միջոցին, երբ կարող էր ճաշի հրաւիրուել։ Նա ասում էր կնոջը, թէ փեսացուին հաւանում է, իսկ խնամիներին—ոչ։ Բռի գիւղացիներ են, մարդավարի վարւելու շնորհք չունեն։

Իսկութիւնն այն էր, որ ինքը, Ոսկանը շատ անախորժ տպաւորութիւն էր գործում խնամիների վրայ։ Նրա մրոտ ձեռները և կեղտոտ դէմքը դուր չէին գալիս մանաւանդ փեսացուի մօրը և եղբօր կնոջը։ Առանց այն էլ այդ կանայք հոգով-սրտով հակառակ էին հացթուխի աղջկանն ուզելուն և միայն փեսացուի կամքին էին հպատակւում։ Իսկ այժմ

մրոտ ու կեղտոտ պայտագործն արդէն սկսել է գլուխ ցաւեցնել։

Մի օր նրանց կողմից «չօլախ» Սահարնազն եկաւ հացթուխի մօտ և խօսակցութեան միջոցին ակնարկեց պայտագործի յաճախ այցելութիւնների մասին։ Սօնան ներկայ էր և լսում էր։ Միջնորդ կնոջ արտասանած իւրաքանչիւր բառը նա ընդունում էր իբր կծու և ամօթալի նախատինք իր հասցէին։ Հօր փոխարէն նա ինքն էր տանջւում ամօթից, որովհետև իրան էր համարում այդ նախատինքի պատճառը։ Եթէ խնամիները չեն ներում իրանց հարսնացուի հօր հարբեցողութիւնը, ի՞նչպէս կըներեն, եթէ իմանան, որ հարսնացուն ընկնաւոր է։ Մի վայրկեան Սօնայի մէջ միտք ծագեց պարզապէս յայտնել ամեն ինչ Սահարնազին։ Թող գնայ պատմի նրա ապագայ սկեսրին, որ ցաւագար է, Աստծուց պատժւած։ Թող միանգամից բանը պարզւի, «նշանը» յետ վերցնեն, Սօնան խայտառակւի։ Նա պատրաստ էր մինչև անգամ բերանը բանալ և այս բոլորն ասել Սահարնազին, երբ մօր աղերսական հայեացքն ընկաւ նրա աչքին։ Արդեօք, գուշակե՞ց հացթուխը, ինչ է կատարւում իր աղջկայ սրտում, թէ՞ դա միայն մի աննպատակ հայեացք էր, բայց Սօնայի լեզուն կաշկանդւեց։

Նոյն միջոցին պառաւ Զառնիշանն ու Գիւլնազն աշխատում էին Մուրադին համոզել, որ քանի ուշ չէ, ձեռ քաշի իր հարսնացուից։

—Մայրը հացթուխ, հայրը հարբեցող, աղքատ, տկլոր, կեղտոտ, ի՞նչ ես կպել այդ աղջկանը,—ասում էր «չորաթան» Զառնիշանը։



—Լաւ պտուղ չի լինիլ այնպիսի ծնողների զաւակը,—կրկնում էր Գիւլնազը։

—Լաւ է, թէ վատ, կաղ է, կոյր, թէ թևը կոտրած, իմ հարսնացուն է, պիտի պսակւեմ, ես ուրիշ աղջիկ չեմ ուզում,—պատասխանում էր Մուրադը դրական եղանակով։

Կանայք ստիպւեցին լռել. գիտէին, որ ապարդիւն է դիմել Մուրադի կամքին։ Նա իր ասածի մարդ է, մի անգամ վճռել է, պէտք է կատարի, թէկուզ ամբողջ ընտանիքը նրա դէմ ոտքի կանգնի և թշնամանայ։ Իսկ երկար հակառակւել Մուրադին՝ նրանք վտանգաւոր էին համարում։ Նա տան «սիւնն» էր. եթէ բարկացնէին, կըբաժանւէր եղբօրից և առանձին կապրէր։

Հասաւ, վերջապէս, հարսանիքի օրը։ Հացթուխը հրաւիրեց միայն ամենամօտիկ ազգականներին, որոնցից ոչ մէկի հետ նա մինչև այժմ յարաբերութիւն չէր ունեցել։ Նա ուզում էր, որ հարսանիքը որքան կարելի է անշուք անցնի, ոչ ոքի ուշադրութիւնը չըգրաւի։ Ընդհակառակը, պայտագործը պնդում էր, թէ պէտք է հրաւիրել քաղաքի «պատւաւոր» ընտանիքներին, թէև ինքն էլ չըգիտէր, որտեղ պէտք է նստեցնի եթէ հրաւիրի։ Յաղթութիւնն այս անգամ հացթուխի կողմը մնաց, երբ պայտագործը համոզւեց, որ շատ հիւրեր կանչելը մեծ ծախս է պահանջում, իսկ ծախսերի համար փող չըկայ։ Բայց նախ քան հարցի վճռւելը ամուսինների մէջ դարձեալ տեղի ունեցաւ մի անախորժ վէճ, դարձեալ պայտագործն ուզեց կնոջը հարւածել և դարձեալ Սօնան

արտասուքն աչքերին մեջ ընկաւ ու նրանց բաժանեց։

Արդեօք, ճշմարի՞տ է, որ հարսանիքի օրն ուրախութիւն է բերում։ Ո՛չ, երևի, այդպէս չի, սուտ են ասում։ Ինչո՞ւ. Սօնայի համար այդ օրը դարձաւ սուր տանջանքների, գաղտնի հառաչանքների, հարիւրաւոր չար կասկածների և սարսափների շղթայ։

Ահա նա։ Կանգնած է մի անկիւնում, որ բաժանուած է վարագուրով խրճիթի միւս մասից։ Երկու երիտասարդ հարսեր հագցնում են նրան պսակի զգեստ։ Նա չըգիտէ ինչ է կատարւում իր շուրջը, միայն լսում է, որ այսօր հարսանիք է։ Նա դողում է, կարմրում, գունատւում, նրա ամբողջ մարմինը մերթ զգում է սառուցի պաղութիւն, մերթ կրակի տաքութիւն։

Նա ինքն իրան լիովին յանձնել է ուրիշների կամքին և անշուշտ մեքենայի պէս կատարում է այն բոլորը, ինչ-որ ուրիշներն են կամենում։ Կեանքում նա հինա չէր գործածել. երկու շաբաթ էր արդէն նրա գլուխը տեղ-տեղ ներկում էին։ Նրա գանգուր և շքեղ մազերի գեղեցիկ մուգ-ոսկէ գոյնը, քաղաքի սովորութեան համեմատ, տգեղ են համարել և աշխատել են սևացնել։ Եւ այժմ նրա դէմքի գեղնութիւնն աւելի է աչքի ընկնում մազերի սևութիւնից։ Հայելի են տալիս նայելու, և նա ինքն իրան չի ճանաչում։

—Ի՜ֆ, թուրքի աղջկայ եմ նման,—ասում է նա, ժպտալով։

Բայց ո՞րքան թոյլ է այդ ժպիտը և ինչպէս սազ



չի գալիս նրա դէմքի մռայլութեանը։ Նրան հրամայում են թոյլ տալ մի ինչ-որ պառաւ թրքուհու, որ նրա դէմքը «գեղեցկացնի»։ Մի փոքրիկ մկրատի ծայրով թրքուհին մէկ-մէկ պոկում է նրա գեղեցիկ ունքերի աւելորդ համարած մազերը, սուրմայում է արտևանունքը, ոլորում է վարսերը։ Յետոյ նրան հրամայում են կանգնել, երեսը ծածկում են քօղով, գլխին չարսաւ են ձգում։ Ապա նրան նստեցնում են, նորից հրամայում են կանգնել, նորից նստել։ Այնուհետև նորահարսերը բռնում են նրա թևերից և առաջ են տանում։ Նրա աչքերը ծածկուած են, ոչինչ չի տեսնում։ Նա լսում է միայն նորահարսերի շշնջիւնները և կատարում նրանց պատուէրները։

Յանկարծ լսում է քահանայի ձայնը, որին հետևում է տիրացուի ձայնը։ Սկսում են երգել։ «Պահպանիչը» վերջանում է, լսում է ամեն կողմից «շնորհաւո՜ր լինի, շնորհաւոր լինի»։ Ապա նա զգում է մի թարմութիւն։ Բաց օդը, թափանցելով քօղը, զովացնում է նրա երեսը։ Նրան տանում են առաջ։ Ո՞ւր։ Այժմ մէկը քայլում է նրա հետ կից առ կից։ Ո՞վ է։ Սառն օդը մի փոքր սթափեցնում է նրան։ Զգում է, որ կից առ կից գնացողը շուտով իր գլխի տէրն է դառնալու։

Լսում է զուռնայի սուր ձայնը։ Ա՜, այդ է, ուրեմն, այն ձայնը, որ նա քանի քանի անգամ լսել է հայրական խրճիթի գաւթում, հեռուից։ Ինչո՞ւ այսօր այնպէս ուրախ չի հնչում, ինչպէս նրա ընկերուհիների հարսանիքին։ Ինչո՞ւ Սօնային թւում է, որ իրան թաղելու են տանում։ Ո՞րտեղ է նրա խեղճ

մայրը, ինչու իր աղջկանը թողել է մեն մենակ, օտարների ձեռքում...

Ահա, վերջապես, եկեղեցումն է։ Նախ լսում է ինչ-որ խուլ շշնջիւններ, որ նրա մարմինը ծակծկում են սուր ասեղների պէս։ Քահանայի և տիրացուների ձայները, կարծես, գալիս են գետնի տակից, մի մթին անդունդի յատակից։ Նրա աչքի առջևով անցնում են սոսկալի տեսարաններ, գերեզմաններ, ուր տարածուած են շղթայակապ դիակներ, դագաղներ, որոնք լցուած են խոշոր որդներով, օձեր, որ ահագին բազմութեամբ խլրտում են օդի մէջ։ Այդ ի՞նչ սարսափելի ձայներ են, ինչու Սօնային բերեցին այստեղ, ի՞նչ են անում, այդ ո՞վ է նրա կողքին կանգնած, ինչու են նրան անդադար բոթում։ Այդ ի՞նչ սառը ձեռ էր, որ բռնեց իր ձեռից և դրեց մի ուրիշ ձեռի մէջ։ Ինչու են սեղմում նրա ձեռը։ Դարձեա՜լ սոսկալի տեսարաններ. որդներով լի գանգեր, արիւնով լի դոյլեր, քայլող կմախքներ, ծիծաղող դիակներ...

—Որդի, հնազա՞նդ ես։

Մէկը ձեռը դնում է նրա պարանոցին, երեք անգամ սեղմում և երեք անգամ գլուխը թեքում դէպի կուրծքը։ Յետոյ նրան առաջ են տանում և վզին մի ինչ-որ թել ձգում, նորից հանում։ Ապա նրա երեսը դարձնում են միւս կողմ։ Ժամերգութիւնը ընդհատւում է, նորից սկսւում են խուլ շշնջիւններ։ Այս անգամ շշնջիւնները չեն ծակծկում Սօնայի մարմինը։ Դարձեալ սկսւում է մի երկար, անվերջ ճանապար-



հորդութիւն, որին ուղեկցում են զուռնայի գէլ ձայնը և մարդկանց գոռում ու գոչիւնները։

Հետզհետէ նա ուշքի է գալիս։ Այժմ հասկանում-է, որ ամեն ինչ վերջացաւ, այլևս չըպիտի վերադառնայ իր ծնողների խրճիթը։ Ա՛խ, այն ողորմելի խրճիթը, ուր այնքան տառապել է։ Այժմ նա չի յիշում այդ տառապանքները և սրտի կսկիծով է բաժանւում իր ծննդավայրից։

Ահա այն տունը, ուր նա պիտի ապրի մինչև մահ։ Նմա՞ն է արդեօք իր հայրենի խրճիթին։ Նա ոչինչ չի տեսնում. երեսի քօղը խանգարում է։ Բայց ո՞ւր է մայրը։ Կանչեցէ՛ք նրան, Սօնայի սիրտը մորմոքւում է այս անծանօթ շրջանում։ Քօղը հանդարտիկ շարժւում է, նրա տակից լսւում է նորահարսի հեկեկանքը։

Ոչինչ, դա մի նորութիւն չի։ Բոլոր նորապսակները լալիս են, այո՛, ի հարկէ, ուրախութիւնից։ Եւ ինչու չըպիտի ուրախանայ Սօնան։ Մի խեղճ հացթուխի ու մի արբշիռ, կեղտոտ պայտագործի աղջիկ, և յանկարծ այդպիսի ամուսին։ Հարուստ տուն ու տեղ, աջող առուտուր, տղան երիտասարդ, խելօք, գեղեցիկ։ Իսկ ինքը, նորահարսը, ի՞նչ է բերում հետը։—Մի ձեռք հագուստ։ Ճշմարիտ, այդ բախտ ասւած բանը իսկի աչքեր չունի, պտոյտ է գալիս պըտոյտ և յանկարծ փաթաթւում մի հացթուխի աղջկայ վզին։

Այսպէս էին մտածում և այս մասին էին քչփըրչում կանայք, մանաւանդ Սօնայի մանկութեան ընկերուհիները։ Օ՜, յիշում են նրանք այդ նորահար-

սին։ Նա մի լալկան և վախկոտ աղջիկ էր, միայն լաւ վազել գիտէր։ Ոտաբաց, գլխաբաց կըվազվզէր փողոցներում։

—Միտս է, միտս է, ջհուղի մազերով աղջիկ էր,—գոչեց Բարդամանց Մարջանը։

—Ամեն օր փափուկ հաց էր ուտում,—աւելացրեց Միսկարանց Զառվարդը։

—Մայրը սրա ու Նրա համար հաց էր թխում, կուտէր, բաս ինչ,—մէջ մտաւ Շավալիանց խորամանկ Հռուսիկը։

Մի րոպէ խօսակցութիւնը ընդհատուեց։ Խօսակիցները մէկ-մէկ մօտեցան Նորահարսին շնորհաւորելու և հերթով, քօղը բարձրացնելով, Նայեցին Նրա երեսին։ Սևիկ Մարգարիտը, յանկարծ մի բան մտաբերելով, դարձաւ իր ընկերուհիներին.

—Աղջի, միտնե՞րդ է այն օրը։

—Ի՞նչ օր, ի՞նչ օր,—կրկնեցին ամենը հետաքրքրուած։

—Այն օրն էէ, որ Սօնան, մեզ հետ խաղ անելիս, լափաշւեց հողի վրայ ու կապտեց։

—Հաա, գիժ-Դանէլն էլ եկաւ վերցրեց, տուն տարաւ։

—Իսկի չիմացանք, ինչ պատահեց այդ աղջկան։

—Էլ այն օրից երեսը չտեսանք։

Դարձեալ խօսակցութիւնը ընդհատուեց։ Խօսողները սկսեցին ծափահարել Նորափեսայի մեծ քրոջը, որ, մէջտեղ ընկած, պարում էր, «մինթանայի» փէշերն օդի մէջ ֆրֆրացնելով։



—Ասում են, որ է՛հ... սկսեց դարձեալ սևիկ Մարգարիտը և խօսքն իսկոյն կուլ տուեց...

—Ի՞նչ են ասում, ի՞նչ են ասում։

—Ես ինչ գիտեմ, մեղքը ասողի վզին, ասում են, որ Սօնայի այս տեղը դրուստ չէ...

Նա մատով խփեց ճակատին։

—Ախար, ես էլ ասում եմ, մի բան պէտք է լինի, մի բան պէտք է լինի...

—Իսկի խելք չըկայ էէ, իսկի...

Մի քանի վայրկեան ամենը հեգնաբար և ցաւակցութեամբ Նայեցին Նորահարսի կողմը։

—Բաս ասա «չորաթան» Զանիշանի աչքը լոյս էլի, խօմ աշխարհը տակնուվրայ կանի, եթէ հարսի խելքը տեղը չի,—ասաց Բարդամանց Մարջանը։

—Աստուած ազատի Նրա ձեռից, սաթայել է,—աւելացրեց խորամանկ Հռուսիկը։

—Պակասը Նրա մեծ հարսն է՞, Գիւլնազը,—մէջ մտաւ Միսկարանց Զառվարդը,--կուտեն խեղճին, կուտեն։

—Է՛հ, ինչ էք խօսում, չեմ իմանում, գիժը գժին կըգտնի էլի. խօսեց դարձեալ սևիկ Մարգարիտը.—իրանց Դանէլը խօմ Նրանից լաւը չի...

—Հա, զորթ, Դանէլը, լաւ ասացիր, ա կնիկ, ախր Նա այսօր խնամի է։ Տեսա՞ր, ինչպէս ժամից գալիս մաշալա էր պահել հարսի առաջ, ուրախ-ուրախ թռչկոտում էր ու հուռա հուռա կանչում։

—Ընկեր է դառել...

Արդարև, եթէ կար այդ երեկոյ պայտագործից յետոյ մի մարդ, որ ամբողջ հոգով ուրախ էր—դա

խենթն էր։ Հակառակ իր ազգականների ցանկութեան, նա ոչ միայն հարսանիքի հանդիսին մասնակցեց, այլև ինքն իրանից կարգադրութիւններ էր անում։ Նա ընթանում էր ամենից առաջ, ճանապարհ բանալով նորապսակների համար, երգելով, պարելով և զուռնաչիներին զանազան եղանակներ պատուիրելով։ Այժմ ոտաբաց, գլխաբաց չէր և ոչ էլ կեղտոտ ու կիսամերկ։ Նա հագել էր Սօնայի կարած նոր արխալուղը, հիւսած զուլպաները, գլխին դրել էր մի սև մորթեայ և կիսով չափ ցեցից մաշուած գտակ։ Պարծանքով ամենին ցոյց էր տալիս արխալուղը և զուլպաները, ասելով, թէ նորահարսն է կարել և հիւսել իր համար։ Այդ երեկոյ նա, իր ասելով, երկու հարսանիք ունէր. մէկ որ նրա եղբօրորդի Մուրադն է պսակւում, մէկ էլ «խաթուն Սօնան» է մարդու գնում։

—Ուխտ եմ արել նրանց հարսանիքի մաշալան տանելու, տուէք ինձ,—ասաց նա, նաւթային ջահը խլելով մի մշակի ձեռից։

Եւ եկեղեցուց մինչև նորափեսայի տունը խենթը ձեռից բաց չթողեց այդ ջահը…

---

## VII

Կիսաւեր քաղաքի հասարակութեան մէջ հացթուխի խնամիները համարւում էին ունևոր։ Քսանուհինգ տարի առաջ այդ ընտանիքը մի մօտակայ գիւղից գաղթեց և մշտապէս հաստատուեց քաղաքում։



Այն ժամանակ ընտանիքի գլուխը Սօնայի ամուսնու հայրն էր—հանգուցեալ Սարգիսը։ Նրա աւագ որդին «չօփուռ» կոչուած Կարապետը դեռ ամուսնացած չէր, իսկ Մուրադը տակաւին երկու տարեկան երեխայ էր։ Սարգսից յետոյ ընտանիքի մէջ երկրորդ տեղն էր բռնում նրա փոքր եղբայր Դանէլը։ Այժմեան խենթը մի համեստ ու աշխատասէր դերձակ էր և վայելում էր իր արհեստակիցների շրջանում պատիւ ու յարգանք։ Տասը տարեկան հասակում նա, առաջինը քաղաք գալով, մտել էր աշակերտ մի դերձակի մօտ և այժմ արդէն վարպետ էր։ Միևնոյն ժամանակ, իր եղբօր հետ միասին պարապում էր առևտուրով։ Նրանք գիւղերում գնում էին գինի, ընկոյզ և ուրիշ մթերքներ, վաճառում էին քաղաքացիներին։ Զընայելով առևտրի յաջողութեան, Դանէլը չէր ուզում իր արհեստից ձեռք վերցնել և միշտ ասում էր.

—Իմ ասեղը միլիօնով չեմ ծախիլ։

Նա ամուսնացած էր իր նախկին վարպետի դստեր հետ, ունէր երեք տարեկան մի աղջիկ։ Վերին աստիճանի ընտանեսէր մարդ էր, փայփայում էր կնոջն ու աղջկան այնպէս, ինչպէս կարող էր փայփայել մի խաղաղասէր արհեստաւոր, որի գոյութեան նեցուկը ընտանիքն է։ Այդ տգէտ շինականի մէջ բռնակալական ոգու նշոյլ անգամ չէր երևում։ Նրա սրտի մեղմութիւնն երբեմն հասնում էր թուլութեան, մանաւանդ իր զաւակի վերաբերմամբ։ Յաճախ, համբուրելով իր աղջկան, ասում էր,

—Տէր Աստուած, կա՞յ աշխարհիս երեսին երեխայից քաղցր բան…

Աստուած ասաց—չըկայ և մի օր Դանէլի աղջկան զոհ դարձրեց ծաղիկ հիւանդութեան։ Կորուստը հօր վրայ սաստիկ ազդեց։ Ամբողջ մի տարի Դանէլի դէմքի վրայ ժպիտ չէր երևում։ Երկրորդ տարին Աստուած նրան կրկին մի սիրուն աղջիկ պարգևեց։ Բայց նրա առաջին վէրքը դեռ չէր բժշկուել, երբ ստացաւ երկրորդ և աւելի խոր մի վէրք։ Մի օր նրա կինը, ջուր քաշելիս, յանկարծ սայթաքեց և գլխիվայր ընկաւ ջրհորի մէջ։ Նրա գլուխը դիպել էր քարէ պատերին և ջախջախուել։

Երկու օր տանջուելուց յետոյ նա հոգին աւանդեց։

Այս անգամ կորուստը Դանէլի հոգու մէջ առաջացրեց յեղաշրջում։ Մի քանի ամիս շարունակ գաղտնի լալիս էր և ամեն օր այցելում իր կնոջ գերեզմանը։ Յետոյ նրան տիրեց ծանր թախիծ։ Ուրուականի պէս շրջում էր տան գաւթում օր ու գիշեր, ուտում էր շատ քիչ, աշխատում էր մեքենաբար, խօսում էր, երբ միայն խօսեցնում էին։ Միակ բանը, որ նրան հետաքրքրում էր—աղջիկն էր, որ, օր օրի վրայ մեծանալով, նմանում էր իր մօրը։ Նա դնում էր փոքրիկին իր ծնկների վրայ, շոյշոյում էր թաթիկները և երկար, երկար ժամանակ նայում պայծառ աչիկներին, որ մի զոյգ մայիսեան ցօղեր էին յիշեցնում։ Հակառակ իր շրջանի մարդկանց, Դանէլը երբէք չէր ափսոսում, որ Աստուած նրան աղջիկ է պարգևել և ոչ տղայ։ Նա աւելի ուրախ էր այդ բանին և կարծում էր, որ աղջիկն աւելի է սփոփում իր սիրտը, քան կարող էր սփոփել արու զաւակը։



Հետզհետէ նրա վիշտը սկսեց ամոքուել։ Նրա դէմքի վրայ երևաց ժպիտ։ Բայց ճակատագիրը ներհակ էր այդ մարդու բախտին։ Արդէն նրա աղջիկը եօթը տարեկան էր, երբ մի օր տեղի ունեցաւ մի ողբալի անցք։

Մայիսի սկիզբն էր, մի պայծառ և սիրուն օր։ Որքան գեղեցիկ էր բնութիւնը, այնքան անողոք դարձաւ աղքատիկ քաղաքի բնակիչների համար։ Մարդիկ, առանց գուշակելու իրանց գլխին գալիքը, զբաղուած էին առօրեայ մանր-մունր հոգսերով, երբ լսուեց մի ստորերկրեայ որոտ։ Կենդանիները սկսեցին մռնչել, երկիրը ուժգնաբար երերուեց, քաղաքը կորաւ թանձր փոշիի մէջ։ Քար քարի վրայ չէր մնում։ Ամեն ինչ ճարճատում էր, խորտակւում, դղրդում և թափւում։ Քանի մի վայրկեան առաջ շէն քաղաքը սոսկալի երկրաշարժից դարձաւ աւերակների մի կոյտ, և բնակիչները թափեցին փողոցները։

Այդ միջոցին դերձակ Դանէլը իր դազգահի մօտ նստած կար էր անում։ Ամենից առաջ, հարկաւ, նա յիշեց իր աղջկան, թողեց խանութը բաց և տաբոբիկ, գլխաբաց վազեց տուն։ Երբ բակը մտաւ, ականջին հասան լացի ձայներ։ Մի խումբ կանայք շրջապատել էին մի հողային բլուր։ Ճանապարհ տուեցին Դանէլին։ Նա առաջ վազեց, և այն, ինչ որ տեսաւ, առ միշտ խորտակեց նրա կեանքը…

Հողային բլրակի վրայ երեսնիվեր ընկած էր նրա եօթ տարեկան զաւակը։ Հինգ րոպէ չըկար դուրս էին բերել նրան քարերի և հողի տակից։ Մի կոճղ ընկել

էր նրա կրծքի վրայ և ջախջախել: Դէմքն անճանաչ էր: Արևը լուսաւորում էր նրա գունատ ճակատը: Շէկ և գանգուր մազերը, սփռուելով այդ ճակատի շուրջը, կազմել էին մի շրջանակ: Դա նրա մահուան պսակն էր…

Մի շաբաթւայ նորահարս էր Սօնան, երբ իր ամուսնու սենեակի լուսամուտի առջև նստած, լսում էր այս բոլորը: Պատմողը նրա ամուսնու մեծ քոյրն էր, Նարգիզը, որ զինագործի կին էր: Այդ կինը, որ դէմքով և բնաւորութեամբ նման էր Մուրադին, բոլոր ազգականների մէջ ամենից շուտ և ամենից աւելի մտերմացաւ նորահարսին:

—Աստուած է իմանում ինչ պատահեց այդ մարդուն,—շարունակեց Նարգիզը,—հէնց որ տեսաւ իր աղջկան: Նա ոչինչ չխօսեց, ձայն ու ծպտուն չհանեց, չհառաչեց մինչև անգամ: Նա մտիկ արաւ մեր երեսին, աչքերը չռած, յետոյ մտիկ արաւ աղջկայ երեսին: Միտս չի ինչքան ժամանակ նա մնաց սառած, քարացած: Մէկ էլ լսեցինք մի ձայն. մի ձայն, որ կասէիր գայլ է ոռնում: Դանէլը ընկաւ աղջկայ պառած մարմնի վրայ և մինչև երեկոյ մնաց այնպէս: Ոչ ոք չուզեց նրան բաժանել դիակից: Չէր էլ կարելի բաժանել, այնքան խեղճը պինդ էր կպել աղջկայ մարմնին…

Ուշքի գալով, Դանէլը սկսում է բարձրաձայն ծիծաղել, երկու ձեռները զարկելով կրծքին:

Միւս օրը տանում են նրա աղջկանը թաղելու: Դանէլը գնում է դագաղի ետևից ոտաբաց, գլխաբաց:

Այն օրից յետոյ մենք նրա գլխին գդակ, ոտներին կօշիկ չենք տեսնում,—աւելացրեց Նարգիզը, հառաչելով:—Սպասիր, սպասիր, ի՞նչ պատահեց…

Խօսքն ընդհատելով, Նարգիզը զարմացած նայեց Սօնայի երեսին և յանկարծ գոչեց.

—Միտս է, միտս է, հարսանիքիդ երեկոյ նա գդակ ու կօշիկներ էր հագել. զարմանալի է, զարմանալի…

Արդարև, շատերը զարմացան այդ երեկոյ, երբ տեսան Դանէլի գլխին գդակ, ոտներին կօշիկներ: Աղջկայ մահից յետոյ առաջին անգամն էր, որ նա հագնւեց մարդավարի:

Նա մոռացաւ իր խանութը: Տնից տուն թափառելով, երբեմն կանգնում էր այս կամ այն փլատակների վրայ և, մերկ ոտները քարերին զարկելով, կրկնում էր.

—Մանիշակս, Մանիշակս…

Գործ դրուեցին տեղական բոլոր հաքիմների դեղերը, բոլոր հմայիչների անէծքները, բոլոր կախարդական բոյսերը—ոչինչ չօգնեց: Եղբայրը ծախեց Դանէլի խանութի ապրանքը և նրա կնոջ ու զաւակների գերեզմանների վրայ քարեր գցել տուեց: Ամեն օր Դանէլն այցելում էր այդ շիրիմները, և երբ նա քաղաքի շուկայով դիմում է դէպի գերեզմանատուն, ամենքն ասում էին.

—Գիժ-Դանէլը գնում է…

Նարգիզի պատմութիւնը կսկծեցրեց Սօնայի սիրտը: Նա չկարողացաւ իրան զսպել և արտասուեց: Այսպէս, ուրեմն, ահա թէ ինչ է նշանակում Դանէլի

համար Մանիշակ անունը, որ այնպէս շուտ-շուտ արտասանում է։

—Խեղճ Դանել ապէր, խեղճ Դանել ապէր,— կրկնեց Նորահարսը, աչքերի արտասուքը սրբելով։

—Սոնա ջան, ինչպէս տեսնում եմ, լաւ սիրտ ունիս, լաց ես լինում,—ասաց Նարգիզը, համբուրելով եղբօր հարսին։

Նա չըգիտէր, ինչ էր անցնում այդ միջոցին նորահարսի սրտով։ Սոնան յիշում էր իր մօր պատմութիւնն այն օրւայ մասին, երբ Դանելը նրան փողոցից վերցրել էր և տուն բերել։ Այն ժամանակ նա եօթը տարեկան է եղել—ճիշտ այն հասակում, երբ Մանիշակը մնացել է քարերի ու հողի տակ։ Նա ընկած է եղել հողային բլրակի վրայ այնպէս, ինչպէս Մանիշակն արևի տակ—երեսնիվեր, մազերը գլխի շուրջը թափուած։ Անբախտ հայրը, տեսնելով նրան, յիշել է իր հարազատ աղջկանը, գրկել է ընկնաւորին, տուն բերել։ Այստեղից է սկսել նրա համակրանքը դէպի մի անծանօթ աղջիկ և նրա թշուառ մայրը։ Ուրեմն խենթը, Սոնային տեսնելով, մտաբերում է իր Մանիշակին և, ով գիտէ, մխիթարւում էլ է։

—Ես նրան սիրում եմ. օրից դէնը տասնապատիկ կըսիրեմ, Նարգիզ բաջի։ Ասա նրան, որ ամեն օր գայ, ես ուզում եմ նրան շուտ-շուտ տեսնել։

—Նա այս տնից փախչում է,—պատասխանեց Նարգիզը։—Ա՛յ, տեսնո՞ւմ ես այն ծառը. նրանից մի քիչ հեռու էր ընկած Մանիշակը, այնտեղ էր մեր հին տունը։ Տարէնը մի քանի անգամ կանգնում է այն ծառի տակ, փայտը կրծքին բռնում, գլուխը



բարձրացնում ու երգում։ Առաջ շատ քիչ քիչ էր գալիս, հիմա էլի շաբաթը մի անգամ երևում է... Էլի լա՞ց ես լինում, Սոնա. չէ, լաւ սիրտ ունիս, շատ լաւ սիրտ ունիս...

—Ես կուզենայի նրան մի բանով մխիթարել, անբախտը անբախտի ցաւը կըհասկանայ...

Սոնան ընդհատեց խօսքը։ Նա զգաց, որ շատ հեռու է գնում։ Նարգիզը կարող էր նրա խօսքերից մի բան հասկանալ։ Իսկ Սոնան սոսկում էր այդ բանից, որ տակաւին գաղտնիք էր նրա ամուսնու և ազգականների համար։ Այն ինչ՝ օր օրի վրայ լարւած ջղերով սպասում էր սարսափելի ճգնաժամին, ինչպէս կախաղանին դատապարտուածը իր կեանքի վերջին րոպէին։

Հարսանիքի առաջին երեք օրերը անցան Սոնայի համար մի տեսակ մառախուղի մէջ։ Տպաւորութիւնները անծանօթ էին և բազմակողմանի։ Նա չէր կարողանում կարգի բերել նրանց և հասկանալ, ինչ է զգում կեանքի անծանօթ շրջանում։ Նա դեռ երազի մէջ էր, և այդ երազն արճիճի պէս ճնշում էր նրա սիրտը։

Անցան այդ երեք օրերը, վերջացաւ հարսանիքի հանդէսը, դադարեցին հիւրերի այցելութիւնները։ Այն ժամանակ միայն Սոնայի մտքերը սկսեցին պարզուել։ Չորրորդ օրը հարսանիքի քօղը հանեցին նրա երեսից։ Այդ քօղի հետ ընկաւ և՛ նրա հոգու վարագոյրը... Ամուսնական կեանքի և կնոջ կոչման ամենատարրական, բայց և ամենանուրբ գաղտնիքը լուծուեց նրա համար։ Նոյն օրն առաւօտ, առանձնա-

ցած իր ննջարանում, երկար և երկար ժամանակ հեկեկաց։ Նա ոչ ոքի չէր ուզում տեսնել։ Սկեսրի համբոյրն այրում էր նրա շրթունքները։ Իսկ ամուսնու երեսին նայել չէր ուզում, զզվում էր անգամ նրանից։ Մարդիկ նրան թվում էին անբան անասուններ, որոնց համար չըկար ամօթի զգացում։ Բայց որքան խոր էր այդ զգացումը նրա սրտում և ինչպէս տառապում էր, յիշելով իր մօտիկ անցեալը և համեմատելով ներկայի հետ։ Գնաց, անհետացաւ այդ անցեալը, և այժմ, կարծես, ննջարանի պատերն անգամ ծաղրում են իրան։

Երբ նա տեսաւ իր մօրը—իսկ այդ օրը տեսաւ սովորականից աւելի վաղ—փաթաթւեց պարանոցին, գլուխը սեղմեց կրծքին և նորից սկսեց հեկեկալ։ Նա ամօթից չէր համարձակւում նայել հարազատ ծնողի երեսին և, միևնոյն ժամանակ, զգում էր դէպի նա մի անբացատրելի ատելութիւն։ Ինչո՞ւ այդպէս վատ վարւեցին նրա հետ։ Ինչո՞ւ, ինչո՞ւ։ Ախ, Սօնան աւելի բախտաւոր էր իր ծնողների խրճիթում, անհամեմատ բախտաւոր։ Զգո՞ւմ է արդեօք նրա մայրը իր արած սխալը։ Սօնան գլուխը բարձրացրեց և մի վայրկեան նայեց մօր երեսին, սպասելով այնտեղ կարդալ ցաւակցութիւն։ Բայց, զարմանալի բան, հացթուխը ոչ միայն չէր զգում, այլև այդ օրը ուրախ էր աւելի, քան երբ և է։ Ի՞նչ, մի՞թէ հարազատ աղջկայ ամօթը երջանկացնում է նրան։

—Թող այսօրւայ բախտաւոր օրով,—ասաց հացթուխը, համբուրելով Սօնայի երեսը, աչքերը, շրթունքները,—Աստուած վերջ տայ մեր ցաւերին։ Թող



օրհնւի ճակատիդ գիրը, չարը կալին-կապին ընկնի, բարին պահպանի քեզ էլ, մարդուդ էլ։ Տարիներով տանջւեցի, հիմա բախտաւոր եմ։ Տէր Աստուած, տէր Աստուած, թող լոյս աչքով տեսնեմ այն օրը, որ աղջիկս կարողանայ իր մարդու ու ազգականների երեսին մտիկ անել պարզերես, ինչպէս նա այսօրւայ օրն է պարզերես…

Սօնան զարմացած նայում էր մօր երեսին։ Ինչո՞ւ է այդ կինն ուրախ։

—Հա, որդի,—շարունակեց հացթուխը, պատասխանելով նրա անլուր հարցին,—Աստծու տւածի չափ ուրախ եմ այսօր, լոյս Ամենակարողին, որ էլ աւելի ուրախանամ։ Երկու երազ եմ տեսել, մէկը կատարւեց, միւսն էլ կըկատարւի… Դու լա՞ց ես լինում, էհ, ես էլ շատ եմ լաց եղել երեսիս քողը հանելիս… Կըսովորես, որդի, կըտեսնես, որ աշխարհում ապրելը լաւ բան է… քո մարդը իմ մարդու նման սևերես չէ։ Ես անբախտ էի, դու բախտաւոր կըլինիս, եթէ Աստուած ուզենայ…

Իսկապէս Սօնան հասկանում էր իր մօր խօսքերի քօղարկւած իմաստը։ Չէր հասկանում միայն, ինչպէս կարող է ինքը բախտաւոր լինել, քանի որ չի ուզում իր ամուսնու երեսին անգամ նայել։

Սակայն անցաւ ժամանակ, և այդ խնդիրն էլ սկսեց նրա համար պարզւել։ Նա հետզհետէ ընտելանում էր իր վիճակին։ Կեանքը գնալով քաղցրանում էր։ Անցնում էր նրա անբացատրելի երկիւղն ամուսնուց, ծագում էր նրա սրտում մի անսովոր ախորժելի զգացում։ Վերջապէս, տեսաւ, որ ամուսինը

կոպիտ անտաշն չէ։ Ոչ, ընդհակառակը բարեսիրտ և քաղցրաբարոյ մի բարեկամ է, որ ուզում է նրան երջանկացնել։ Նա Սոնայի հետ վարւում էր ինչպէս մի նոր բուսած նուրբ ու անգին ծաղկի հետ, վախենալով շօշափել նրան, մի գուցէ քնքոյշ տերևները թափւեն։ Նայում էր նրան ոտից գլուխ, լուռ ժպտալով և սքանչանում այնպէս, ինչպէս կարող է սքանչանալ մի մանուկ, որի ձեռն են տւել, վերջապէս, նրա սիրած խաղալիքը։ Նա չըգիտէր խօսքերով արտայայտել իր սէրը։ Բայց ակնածութեամբ և գուրգուրանքով լի հայեացքները զգալ էին տալիս Սոնային, որ այդ մարդն իրան երջանիկ է համարում։

Սոնայի սիրտը բաբախում էր այդ հայեացքներից։ Դա ամուսնական սիրոյ անդրանիկ սերմն էր, որ արդէն սկսել էր արագ-արագ աճել, զարգանալ, որովհետև ընկել էր պարարտ և կարօտ հողի վրայ։ Այժմ ամուսնու փաղաքշանքները ոչ միայն չէին վախեցնում նրան, այլև հաճելի էին թւում։ Շատ անգամ նա ինքն էր զգում փաղաքշելու պահանջ։ Բայց ամօթխածութիւնը կաշկանդում էր նրան։ Նա չէր համարձակւում իր սրտի զգացումն արտայայտել ոչ մի արտաքին ձևով։

Երբեմն յիշում էր այն մօտիկ անցեալը, երբ մահ էր աղերսում Աստծուց և սարսափում էր։ Ինչու այս ծաղիկ հասակում աշխարհից բաժանւել, քանի որ կեանքն այսքան քաղցր է։ Ա՛խ, նրա մայրը զուր չէր ասում, թէ կարող է երջանիկ լինել։ Սոնան հիմա է հասկանում նրա խօսքերի միտքը։ Այժմ այն չէ, ինչ-որ հարսանիքի առաջին օրերն էր։



Բայց կայ էլի մի չար կասկած, որ Սոնային անհանգստացնում է։ Ասենք, նա սիրում է իր ամուսնուն, իսկ ինքն իրաւունք ունի՞ սիրւելու։

«Չէ, չէ,—պատասխանում էր նա ինքն իրան,—ես անարժան եմ. ես ընկնաւոր եմ, նա չի իմանում, շուտով կիմանայ»...

Ո՛վ գիտէ, կարելի է Մուրադին հէնց այժմ էլ յայտնի է նրա ցաւը, կարելի է Սոնան արդէն ընկել է նրա առջև։ Չէ՞ որ նա երբէք չի զգում իր ընկնելը։ Եւ ստէպ-ստէպ երկիւղածութեամբ նայում էր իր ամուսնու աչքերին, յուսալով այնտեղ կարդալ նրա միտքը։ Մի օր, երբ Մուրադը քնքշաբար կատակով իր մատի ծայրով շօշափեց Սոնայի ծնօտը, նորահարսը բռնեց նրա ձեռը երկու ձեռներով, ամուր սեղմեց իր ափերի մէջ և, խոր խոր նայելով նրա աչքերին, ժպտաց։ Նա պատրաստ էր բերանը բանալ և հարցնել. «Գիտե՞ս, որ ես ցաւագար եմ». բայց նոյն վայրկեանին ցնցւեց, և հարցը խեղդւեց կոկորդում։ Մինչդեռ նորափեսայի դէմքը սքօղւած էր հոգեկան երջանկութեան ստւերով։ Նրա աչքերի մէջ փայլում էր սիրոյ և միայն սիրոյ կրակը։ Այդ մարդը, որ ծնւած էր ընտանեկան կեանքի համար, բնաւորութեամբ յիշեցնում էր իր հօրեղբօրը, Դանէլին։ Ո՛չ այժմեան խենթին, այլ նախկին Դանէլին, որի ստւերն էր այժմ շրջում աշխարհի վրայ։ Նա պարծենում էր իր կնոջով և շատ անգամ մօր և եղբօր կնոջ մօտ գովում էր նրա հեզութիւնն ու գեղեցկութիւնը։ Նա պնդում էր, թէ հազիւ ամբողջ քաղաքում Սոնայի պէս մի ուրիշ կին ճարէր, եթէ բախտի բերմամբ չըհանդիպէր նրան։

—Ի՞նչ անենք, որ ծնողներն աղքատ են,—ասում էր,—դա ամօթ բան չէ։ Թող ինքն ինձ դուր գայ, ուրիշ բան չեմ ուզում։ Գոհութիւն Աստծոյ, շատ ու շատ շնորհակալ եմ իմ բախտից։

—Տայ Աստուած, որդի, մենք խօմ քո թշնամին չենք, որ վատդ ուզենք,—պատասխանում էր պառաւ Զառնիշանը, որ տակաւին չէր հաշտւում այն մտքի հետ, թէ մի հացթուխի, մի պայտագործի աղջիկ կարող է իր որդուն բախտաւորացնել։

Այն ինչ Գիւլնազը ոչինչ չէր ասում, միայն գլուխը երկդիմի շարժում էր։ Այդ նշանակում էր. «Դեռ սպասենք և տեսնենք»։

Այդ կինը հոգով-սրտով ցանկանում էր Սօնայի մէջ մի որևէ արատ գտնել, ոչ միայն իր բնազդական կասկածն արդարացնելու համար, այլև այն պատճառով, որ նախանձում էր նորահարսի երիտասարդութեանը և գեղեցկութեանը։ Իբրև աւագ հարս, ընտանիքի մէջ աւելի մեծ իրաւունք ունէր, բայց գիտէր, եթէ Սօնան գրաւի իր սկեսրի հաւատարմութիւնը, կարող է իշխող դիրք ստանալ։ Եւ այժմ նա սկսեց ցոյց տալ իր իրաւունքները և իշխել Սօնայի գլխին։ Նորահարսը խոնարհութեամբ լսում էր նրա խրատները, թէև ոչ մի խրատի կարիք չունէր, քանի որ գիտէր իր բոլոր պարտականութիւնները։ Նա չէր ուզում ընդդիմանալ այդ կնոջը, դէպի որը զգում էր մի անբացատրելի երկիւղ, մանաւանդ երբ նայում էր նրա ապակեայ աչքերին։ Նոյն երկիւղը Սօնան զգում էր դէպի սկեսուրը, որի ոսկրոտ ճակատի տակ նստած փոքրիկ ու պսպղուն աչքերի մէջ փայ-



լում էր մի առանձին չարախնդութիւն, երբ պառաւը կարող էր նորահարսին նախատել թէկուզ մի աննշան սխալի համար։

Բայց, չնայելով այդ երկու զոյգ երկիւղալի աչքերին, որ գիշեր-ցերեկ հալածում էին Սօնային, նա տակաւին երջանիկ էր, որովհետև սիրում էր իր ամուսնուն և սիրւում նրանից։ Երբեմն այդ փոխադարձ սիրոյ գիտակցութիւնն այնքան տիրում էր նրա հոգուն, որ մոռանում էր անցեալի բոլոր թշուառութիւնները և անձնատուր լինում երջանիկ հոգեզմայլութեան։ Այդ միջոցներին նրա ճակատը պայծառանում էր, դէմքի գոյնը թարմանում, կիսով չափ անրջոտ աչքերի մէջ վառւում էր կենսասիրութեան հուրը։ Նա գեղեցկանում էր, ուրախ, աշխոյժ դառնում և այսպիսով աւելի գրգռում Գիւլնազի նախանձըն ու ատելութիւնը։

Մի անգամ Սօնան, լուսամուտի մօտ նստած, սպասում էր ամուսնուն, որ պէտք է շուտով վերադառնար շուկայից։ Բագից լսեց գիժ-Դանէլի ձայնը։ Սօնան գլուխը բարձրացրեց ուրախացած։ Վաղուց փափագում էր տեսնել իր բարեկամին։

Խենթը, գաւազանն ուսին դրած, մօտենում էր լուսամուտին, ցածր ձայնով երգելով։ Դարձեալ նա ոտաբոբիկ էր և գլխաբաց։ Գաւազանի ծայրը զարդարուած էր վայրի ծաղիկների մի մեծ փնջով։ Մօտենալով լուսամուտին, խենթն այդ փունջը զգուշաբար բաց արաւ գաւազանի ծայրից և առաջարկեց Սօնային, ասելով.

—Խանում-խաթունիս հազար բարով։ Ղըզ-Ղա-

լասի սարից եմ գալիս, քեզ համար քաղեցի այս ծաղիկները։

Սոնան սիրալիր ժպտալով, ընդունեց փունջը, հոտ քաշեց և ասաց զգացւած.

—Ի՞նչ բարի սիրտ ունիս, Դանել ապեր։ Ես կդնեմ այս ծաղիկները ջրի մեջ, կպահեմ...

—Մինչև որ կպչկեն, նորերը կբերեմ,—լրացրեց Խենթը։—Ամեն կիրակի կըգնամ Ղըզ-Ղալասի։ Քօլերի մեջ եմ քաղել, սիրուն ծաղիկներ են, հոտ արա, տես...

—Շատ լաւ են, շա՜տ լաւ են,—ասաց Սոնան, շարունակ հոտոտելով փունջը և մատներով ուղղելով նրա թերթիկները։—Ո՞րտեղ ես մնացել, Դանել ապեր, ինչո՞ւ շուտ շուտ չես գալիս մեզ մօտ։

Այս հարցը, կարծես, ազդեց Խենթի տրամադրութեան վրայ։ Նա հայեացքը ձգեց բաղի խորքը և խորհրդաւոր եղանակով արտասանեց.

—Զըկա՜յ...

Յետոյ, արագութեամբ երեսը դարձնելով Սոնային, ասաց.

—Իգիթ տեսայ, ձի էր նստած, սիրեցի. կեանքս կըտամ, թողէք գնամ իմ եարին... Լա՞ւ ես, Սոնա խանում, ուրա՞խ ես։ Մուրադին հաւանո՞ւմ ես...

Սոնան ամօթխածութեամբ գլուխը թեքեց կրծքին։ Խենթը նայեց աջ ու ձախ, թեքւեց դէպի Սոնան և ցածր ձայնով շարունակեց.

—Սկեսուրդ քեզ հետ լա՞ւ է վարւում, Կարապետի հարսը խոմ չի՞ նեղացնում...

—Չէ, Դանել ապեր, սկեսուրս էլ լաւ կնիկ է,



Գիւլնազ-բաջին էլ, ամենքն էլ լաւ են։ Շնորհակալ եմ քո ազգականներից. շատ, շատ շնորհակալ եմ։

—Զըխարե՜ս...

—Ի՞նչ ես ասում, Դանել ապեր, ես քեզ երբ եմ խաբել։

—Քէֆիդ դիպչողին պատառ-պատառ կանեմ...

Սոնան ժպտաց, յիշելով այն ժամանակները, երբ Խենթի այս սպառնալիքներից վախենում էր։

—Դանել ապեր, ինչո՞ւ էլի գլխաբաց ու ոտաբաց ես,—հարցրեց նա յանկարծ։

—Հարսանիքդ տեսայ, հերիք է... Եթէ քէֆիդ դիպչեն, ինձ ասա, ինձ ասա։ Մնաս բարով, գնամ ժամհարիս մօտ...

Նա շտապով դիմեց դէպի դուրս ահագին քայլերով։

Հեռւից լսւում էր նրա խռպոտ ձայնը, որ տարածւելով ամայի փողոցում, մի առանձին մռայլութիւն էր տալիս արևի վերջին ծիրանագոյն շողերով օծւած աւերակներին։

Նրա տխուր երգի հնչիւնները արձագանք էին գտնում այդ աւերակների մէջ և երիտասարդ Նորահարսի սրտում...

---

## VIII

Հացթուխը Սոնային այցելում էր շաբաթը մի կամ երկու անգամ։ Պայտագործը գալիս էր գրեթէ ամեն օր։ Հացթուխն երբէք չէր ընդունում իր խնա-

միների հրաւէրը—ճաշի մնալու կամ գոնէ մի բաժակ թէյ խմելու։ Պայտագործը հէնց մի այդպէսի հրաւէրի էր սպասում։ Բաւական էր մի երկդիմի ակնարկ—իսկոյն ծալապատիկ նստում էր, ահագին գդակը գըլխից հանելով և կողքին դնելով։ Ահա ինչու նրա այցերը աւելի անախորժ էին խնամիների համար։

Երբեմն Սօնան լսում էր պառաւ Զառնիշանի և Գիւլնազի ակնարկներն իր հօր «աներեսութեան» մասին։ Ոչ կարողանում էր պաշտպանել հօրը և ոչ էլ ուզում էր յայտնել նրան, որ իր այցելութիւնները կրճատի։

—Մարդ պէտք է իրան ծանր պահի, որ ուրիշներն էլ պատւեն,—ասաց մի օր Զառնիշանը, քթախոտն ուժգնութեամբ ներշնչելով քթի պնչերով ներս—թէ չէ, նրա գինը—մի գրոշ։ Ասենք, ես խօսողը չեմ, բաս, մարդ Աստծու, դու ինքդ ֆիքր չե՞ս անում, որ ցեխոտ ոտներդ կեղտոտում են իմ տունն ու տեղը. փի՜…

Նա նստած էր ծալապատիկ սենեակի վերին կողմում։ Սօնան կանգնած էր նրա առջև, ձեռները կրծքին, գլուխը ցած թեքած։

—Ես մի կտոր հացը ոչ ոքից չեմ խնայում,—շարունակեց պառաւը, աւելի ու աւելի տաքանալով,—ուզում է, ամեն օր նրա համար կուղարկեմ կերակուրներ էլ, արաղ էլ, գինի էլ։ Թող իր տանը, ինչքան ուզում է, խմի, քեֆ անի, իսկ մեր տունն օղետուն չէ…

Հետևեալ օրը Սօնան, արտասուքն աչքերին,



սկեսրի նախատինքը հաղորդեց մօրը և խնդրեց համոզել Ոսկանին, որ նա խնայի իր պատիւը։

—Մենակ սկեսո՞ւրդ է նախատում, թէ մարդդ էլ,—հարցրեց հացթուխը։

—Չէ,—պատասխանեց Սօնան,—մարդս ոչինչ չի էլ իմանում։ Եթէ իմանայ, մօր հետ կըկռւի։ Ես էլ չեմ ուզում ասել, ինչո՞ւ մեր խաթրու մայր ու որդի թշնամանան։

Նոյն օրը երեկոյեան հացթուխի և պայտագործի մէջ տեղի ունեցաւ մի խոշոր վէճ։ Կինն ասում էր, թէ ամօթ է ամեն օր խնամիներին ձանձրացնելը, թէ նրա պատճառով Սօնան է նախատինք ստանում։ Մարդը չէր հաւատում, որ խնամիները ընդդէմ են նրա այցելութիւններին։ Նրա կարծիքով, ընդհակառակը, այդ «բոլ շինականները» շատ ուրախ են, որ Ոսկանի պէս մի պատուաւոր քաղաքացի արժանի է համարում նրանց տունը ոտ դնել։

—Սօնայի հնարածն է, ես գիտեմ, այ ես նրա… գոչեց պայտագործը, մի քանի կոպիտ յիշոցներ ուղղելով աղջկայ հասցէին։—Ախր հիմա՛ ունևոր մարդու կնիկ է, ամաչում է մրոտ ձեռներիցս։ Լաւ, ինչ ուզում է, թող անի, մենք էլ մեր խելքի կարածը կանենք։ Հէնց էգուց կըբռնեմ բազարում նրա մարդուն ու հարցուփորձ կանեմ։ Ինձ Պումպուլուղանց Ոսկան կասեն։ Եթէ Մուրադն ասի, որ չի ուզում ինձ իր տանը տեսնել, լախտակ կըթքեմ նրա երեսին։ Աստուած, երկինք վկայ, պատուաւոր մարդկանց մօտ կըթքեմ ու յաւիտեանս յաւիտենից ամեն. էլ ոտ չեմ դնիլ նրա շեմքը…

Զուր հացթուխն ասաց, թէ Սօնան մեղաւոր չէ, թէ Մուրադին ոչինչ յայտնի չէ և չըպիտի յայտնել. Պայտագործը կատաղած կրկնում էր.

—Չէ, չէ ու չէ, հէնց Մուրադի բկից պէտք է կպչեմ. ես Զորաթմանին կամ Զօփուռի կնկանը խօս աղջիկ չեմ տւել...

Նա իր ասածը կատարեց։ Միւս օրն և եթ շուկայում հանդիպեց Մուրադին ու սկսեց պարզապէս նախատել նրան։ Փիէ՜, այդ ի՞նչ նոր կարգ ու կանոն են բերել քաղաք «շինականները»։ Տեսնուած բա՞ն է, որ փեսան աներոջն իր անից փախցնի, այն էլ մեղրամիսը չըլրացած։

—Թքել եմ ձեր մի բաժակ օղիի վրայ. կարօ՞տ եմ, ի՞նչ է։

Մուրադը, որին իրաւ ոչինչ յայտնի չէր, զարմացած նայեց պայտագործի երեսին և մեղմ ձայնով ասաց.

—Չեմ հասկանում էշիդ ո՞վ է կող ասել, որ փրփրում ես։ Իմ տան դռները առաւօտ-երեկոյ քեզ համար կրունկների վրայ բաց են։ Երբ ուզում ես, եկ, գնա, կեր, խմիր, ինչպէս քո տանը։

Պայտագործը մեղմացաւ։

—Հա՛ա,—ասաց նա, խօսելու եղանակը փոխելով,—որ այդպէս է, բաս քիչ թէ շատ օրինաւոր մարդ ես։ Ջահիլները մեծի-պստիկի պատիւ պէտք է ճանաչեն։ Բաս լաւ կըլինի, որ քո տանեցիներին էլ մի քիչ քաղաքավարութիւն սովորեցնես։

—Իմ տանեցիներն իրաւունք չունեն քեզ ասելու. «Ա՛ մարդ, ոտդ երւում է, դէնը դիր»։ Դու իմ



աներն ես, կըթողնեմ քեզ իմ տունը, չեմ թողնիլ—իմ գործն է...

—Ա՛ֆէրիմ աղայ,—գոչեց Ոսկանը, միանգամայն յափշտակւելով,—ա՛յ, տղամարդի խօսք, ա՛ֆէրիմ, արի, բերանդ պաչեմ...

Բայց յանկարծ նրա ամբիցիան զրգռւեց, և նա չըկամեցաւ միանգամից հաշտւել փեսայի հետ։

—Փա՛հ,—աւելացրեց նա, ուսերը վեր քաշելով և ձեռները կաշւի գօտիի մէջ խրելով,—դու կարծում ես, շատ կարօտ եմ քո տանը։ Ինձ Պումպուլուղանց Ոսկան կասեն, հազար չըխնդրեն, մէկ չեմ գնալ։ Թքել եմ հարուստների վրայ, դու պատիւ ու քաղաքավարութիւն ասա, թէ չէ—փողն ինչ է, ձեռի կեղտ, այսօր կայ, վաղը չըկայ։ Ես քեզ համար եմ մտածում. թէ չէ—ինձ ի՞նչ։ Որ դու ինձ պատիւ չանես, օրինաւոր մարդիկ մատներով աչքերդ կըհանեն։

—Ի հարկէ, ի հարկէ,—համաձայնեց Մուրադը պայտագործին հանգստացնելու համար։

Նոյն օրը Մուրադը Սօնային թախանձեց բացատրել գործի էութիւնը։ Նորահարսը երկար ժամանակ աշխատում էր խոյս տալ ուղիղ պատասխանից, բայց վերջը ստիպւեց եղելութիւնը պատմել։ Երբ Մուրադըն իմացաւ, որ իր մայրը նախատել է Սօնային, անմիջապէս գնաց պառաւի մօտ և սկսեց վրդովւած յանդիմանել նրան։

—Առաջին և վերջին անգամն եմ ասում,—աւարտեց նա խօսքը դրական եղանակով,—եթէ մէկ էլ

իմ կնոջ երեսին խօսել էք, կվերցնեմ նրան, դուրս կգամ այս տնից ու ջոկ կապրեմ։

Խնդիրը քանի գնում՝ բարդանում էր։ Պառաւ Զառնիշանը վախեցաւ որդու սպառնալիքից և աւելի սուր ատելութիւն զգաց դէպի Սոնան։ Տեսէք, տեսէք այդ հացթուխի աղջկան. մի ամիս չըկայ ոտք է դրել այս տունը և արդէն ուզում է որդուն բաժանել մօրից, եղբօրը—եղբօրից։ Չէ, պէտք է այդ անկապի կապը քաշել, որ շատ էլ ձին չափ չըտայ։

—Համբերիր, համբերիր,—ասում էր Գիւլնարը պառաւին գրգռելու համար,—դա կծիկի ճոնդն է, տես վերջն ինչ կըլինի։ Աչքերս կըհանեմ շներին կըգցեմ, եթէ այդ խլէզն ինձ էլ չըբաժանի իմ մարդուց։

Հարս ու սկեսուր սկսեցին խորհրդակցել իրանց անելիքի մասին։ Խնդիրը շատ կարևոր էր։ Եթէ Մուրադը շարունակէր կնոջ կողմը բռնել, հետևանքը կարող էր վատ լինել։ Բանն այն է, որ առևտրական գործերը գլխաւորապէս Մուրադի ձեռքումն էին կենտրոնացած։ Նա գիտէր գրել-կարդալ, հաշիւներ պահել, իսկ Կարապետը մի անգրագէտ մարդ էր, շատ անգամ չէր իմանում, ումից ինչքան ստանալիք ունի կամ ում ինչքան է պարտ։ Ինքը Կարապետը շատ լաւ էր զգում եղբօր արժէքը և շատ անգամ խոստովանում էր, որ առանց նրա—ինքը «կոպէկ չարժէ»։ Նա վշտացաւ, երբ կնոջից լսեց, թէ Մուրադը սպառնում է բաժանւել և առանձին ապրել, եթէ նրա կնոջ ու աներոջ հետ լաւ չեն վարւիլ։ Իսկապէս Կարապետը շատ էլ դէմ չէր պայտագործին և ոչ էլ



որևէ ատելութիւն էր զգում դէպի նրա աղջիկը։ Բայց Գիւլնարը համոզել էր նրան, որ Սոնան ընտանիքի մէջ խլրտումներ է գցում, ուստի նա էլ լարւել էր նորահարսի դէմ։

Այդպիսով Սոնայի դէմ կազմւեց մի եռանձնեայ դաշնակցութիւն։ Շուտով նա զգաց իր վիճակի փափկութիւնը։ Զընայելով նրա բարեկամական զգացմունքներին և հեզ վարմունքին, հակառակորդները ճգնում էին նրա վարկը գցել ամուսնու մօտ։

Սկզբում Մուրադը բարկանում էր, երբ կողմնակի ակնարկներ էր լսում Սոնայի ծուլութեան կամ անհնազանդութեան մասին։ Ապա ուշադիր եղաւ այդ յամառ ակնարկներին և կամեցաւ վերստուգել իր մօր գանգատները։ Փորձը համոզեց նրան, որ Սոնան ոչ միայն ծոյլ չէ, մեծերի պատիւը ճանաչում է, այլև ամբողջ տան գործերը նրա վզին են, և յարգում ու մեծարում է ընտանիքի աւագներին գուցէ աւելի, քան պահանջւում է։ Այս պատճառով Մուրադը մի օր ընդհարում ունեցաւ տնացիների հետ։ Գրգռւած րոպէին այս անգամ բացարձակ կասկած յայտնեց իր եղբօր կնոջ բարեխղճութեան մասին։ Գիւլնարը, հարկաւ, վիրաւորւեց, լաց եղաւ իր ամուսնու մօտ։ Հերթը հասաւ «չօփուռ» Կարապետին։ Նա յանդիմանեց Մուրադին իր կնոջ վերաբերմամբ, և առաջին անգամ երկու եղբօր մէջ տեղի ունեցաւ մի անախորժ վէճ։

Արդէն պառաւ Զառնիշանը և Գիւլնարը համոզել էին, որ անկարելի է Մուրադին լարել իր կնոջ դէմ, երբ... ճակատագիրը դաւաճանեց Սոնային։

Կիրակի առաւօտ էր։ Ամբողջ ընտանիքը խմբւած էր միջին, ընդհանուր սենեակում։ Սօնան թէյ էր պատրաստում, բերանը երեսքողով ծածկած, անբաժան շալը գլխին։ Այն վայրկեանին, երբ, բաժակներով լի մատուցարանը ձեռքին, մօտենում էր Զառնիշանին, մարմնի վրայ զգաց մի անսովոր ցուրտ։ Նրան թւաց իբր մի քանի խոնաւ և պաղ որդեր մէջքի վրայով սողում են դէպի վեր։ Նա սարսռեց ոտից մինչև գլուխ, մի սուր ճիչ արձակեց, դողաց և, մատուցարանը ձեռից բաց թողնելով, ընկաւ յատակի վրայ։

Գիւլնազը երկիւղից գոռաց։ Զառնիշանը ձեռները զարկեց ծնկներին։ Կարապետը չիբուխը բերանից հանեց և ապշած նայեց յատակի վրայ թափւած թէյին ու փշրւած բաժակներին։ Իսկ Մուրադը, մի ակնթարթում ոտքի թռչելով, մօտեցաւ Սօնային բարձրացնելու։ Բայց նայեց նրա դէմքին, սարսափեց և ապշած մնաց տեղն ու տեղն արձանացած։ Կարապետի երեխաները բարձրացրին անասելի աղմուկ։ Մեծերը սկզբում կարծեցին, որ Սօնան պատահաբար ընկաւ։ Բայց երբ տեսան նրա կարմրած երեսը, փրփրոտ բերանը, ատամների մէջ սեղմւած լեզուն, լսեցին չարագուշակ խռխռոցը, քօղը սկսեց ընկնել նրանց աչքերից։

Ամենից առաջ Գիւլնազն արտասանեց.

—Ընկնաւոր է։

Նա իր գլխի շալը ձգեց Սօնայի երեսին և երեխաներին դուրս տարաւ։ Պառաւը դարձեալ ձեռները զարկեց ծնկներին և ճչաց։ Կարապետը ցաւակցաբար



նայեց եղբօր երեսին։ Մուրադը դեռ արձանացած էր միևնոյն տեղում, աչքերը յառած կնոջ անզօր թաւալւող մարմնին։

Տեսարանը տևեց ընդամենը մի րոպէ։ Սօնայի երեսը բաց արին։ Նա արդէն ուշքի էր գալիս։

Անմիջապէս մարդ ուղարկեցին հացթուխի ետևից։ Դեռ կասկածում էին, որ Սօնան ընկնաւոր է։ Միայն Գիւլնազն էր պնդում, թէ կեանքում ընկնաւորներ շատ է տեսել, բոլորն էլ Սօնայի պէս են ուշաթափւում։

Երբ հացթուխը ներս մտաւ, պառաւ Զառնիշանը գոռաց.

—Աղջիկդ ցաւագար է…

Խեղճ մայր. այս մի հատիկ բառը բաւական էր նրան։ Նա գունատւեց, ոչինչ չասաց, և ի՞նչ ասէր։ Կասկածը փարատւեց։ Հացթուխն անցաւ իր աղջկայ սենեակը։ Սօնան այնտեղ հագուստով պառկած էր անկողնում։ Սենեակի մի անկիւնում, սնդուկի վրայ, նստած էր նրա ամուսինը, ձեռները կռնատակերին դրած, աչքերն ուղղած յատակի մի կէտին։ Նա գլուխը բարձրացրեց և նայեց իր զօքանչի երեսին։ Դա աղերսանքով և տանջանքով խառն մի հարցական հայեացք էր, միևնոյն ժամանակ, տակաւին յոյսով լի։ Նա ուզում էր հացթուխից լսել, թէ ո՛չ, Սօնան ընկնաւոր չէ, թէ նրա ուշաթափւելը պատահական էր։ Բայց հացթուխի լեզուն պապանձւել էր, և այս խորտակեց Մուրադի յոյսը։

—Աղջիկդ ընկնաւո՞ր է,—արտասանեց նա և լռեց։

Սօնան պառկած էր երեսը դէպի պատը։ Նա

զգաց, որ մայրը ներս մտաւ, չոքեց իր մօտ, բայց երեսը չըդարձրեց նրա կողմը։ Նա վախենում էր հանդիպել ամուսնու աչքերին, որովհետև հազիւ ուշքի էր եկել, երբ Գիւլնազը ուղղակի և անխնայ նրա երեսին ասաց, թէ նա ընկնաւոր է և հէնց այս րոպէին ուշաթափւեց։

—Աղջիկդ ընկնաւո՞ր է, կրկին անգամ արտասանեց Մուրադը։

—Երկինքը կրակ դառնար, թափւէր նրա մօր գլխին,—գոչեց հացթուխը։

Այլևս Մուրադը ոչինչ չասաց և շարունակեց իր հայեացքը յառել յատակի մի կէտին։ Այս լռութիւնը հացթուխի համար աւելի անտանելի էր, քան եթէ նախատէին, հայհոյէին, թուք ու մուր ածէին նրա երեսին։ Նա բախտաւոր կըհամարէր իրան, եթէ այդ բարեսիրտ մարդը, որ այնքան սիրում էր Սօնային, վերկենար յանկարծ և դաշոյնի մի հարւածով վերջ տար նրա կեանքին։ Բայց Մուրադը լուռ և անշարժ էր։

—Մի քիչ ջո՛ւր,—շշնջաց Սօնան, կարծես, վախենալով, որ մի գուցէ ամուսինը լսի։

Հացթուխը նայեց այս ու այն կողմ։ Հարկաւոր էր ջուրը միւս սենեակից բերել։ Այնտեղ թշւառ կնոջը սպասում էր եռանձնեայ դաշնակցութեան դատաստանը։ Խորին ատելութեամբ և զզւանքով լի երեք զոյգ աչքեր միաժամանակ բևեռւեցին նրա վրայ, երբ ներս մտաւ։ Նա զգաց իր սրտում այդ սուր ասեղների ծակոցները։ Հասկացաւ, որ այդ դատաւորներն իրանից բացատրութիւն են պահանջելու,



որ պէտք է, վերջապէս, դէմ առ դէմ կանգնել նրանց առջև։ Ահա ինչու, երբ Սօնային ջուր տւեց և ջրաշիշը տարաւ միւս սենեակ կրկին իր տեղը դնելու, կանգ առաւ այնտեղ։ Առաջինը խօսեց պառաւ Զառնիշանը, որի հողագոյն դէմքը թոյն էր արտայայտում։

—Բախտաւոր աղջկայ բախտաւոր ծնողին շատ, շատ բարով։ Մօտեցիր, փէշերդ պաչենք, գլխիդ վարդաջուր ածենք, ոտներիդ հինա դնենք, ա՛յ մեր աչքի լոյս խնամի։ Աղջիկդ անգին մարգարիտ է, շահընշահի մատին դնելու, խանըմ-խաթուն, հիւլ ու մեալաք։ Գնա՛, նրա ոտները ջուր արա, խմիր, հա՛ հա՛ հա՛։ Փա՛հ, երես ունիս, Աստծու լոյսին մտիկ անելու. փա՛հ, տափը պատառ-պատառ չի լինում, որ քեզ կուլ տայ. փա՛հ ոտդ դրած տեղն օձ չի բուսնում, որ ջիգեարդ դաղի, կերակուրդ աղու-լեղի չի դառնում, որ սիրտդ ու փորդ կտրտի։ Խայտառակ լինիս աշխարհում, ինչպէս մեր անունը խայտառակեցիր...

Հացթուխը լսում էր այս կծու և դառն նախատինքը, չըհամարձակւելով նայել խնամիների երեսին։

—Մենք էլ ուրախ էինք, որ ջահիլ, սիրուն հարս ենք բերել մեր տուն,—շարունակեց սկեսրի փոխարէն Գիւլնազը, աչքերը դարձնելով դատապարտեալի վրայ,—լա՛ւ ուրախացանք։ Հե՛րիք չէր թոնիր լպըրտողի ու աներես, անպատկառ հարբեցողի խնամի դարձանք, հիմա էլ մենք մեր տան մէջ պէտք է ուրիշների ցաւագար աղջկանը ծառայենք։

Հացթուխը գոգնոցի փէշը բարձրացրեց աչքերի արտասուքը սրբելու։ Հերթը հասաւ երրորդ դատաւորին։

— Ես կարճ կըկապեմ,— ասաց չօփուռ Կարապետը, ծխախոտի կրակն ուղղելով,— հէնց այսօր, հէնց հիմա, ա՛ռ աղջկադ, տար տունդ։ Մենք ընկնաւորներ պահելու գլուխ չունինք։

Դռների մէջ, շէմքի վրայ երևաց Մուրադի կերպարանքը։ Նրա դէմքը գունատ էր, շրթունքները դողում էին, երեսի մկանունքները ցնցւում։ Կարապետը չընկատեց նրան։

— Ա՛ռ աղջկադ, ասում եմ,— կրկնեց նա,— տար տունդ, քոնը լինի ծախած ապրանքդ։

— Ո՞վ է քեզ դատաւոր կարգել,— գոչեց Մուրադը յուզւած ձայնով,— ո՞վ է քեզ դատաւոր կարգել, որ ուզում ես իմ կնկան իմ տնից դուրս անել։

Ոչ մէկը չէր սպասում, որ նա կըպաշտպանի իր կնոջն այն պահին, երբ այդ կինը խորտակել էր նրա բախտը։ Կարապետը զարմացած նայեց նրա երեսին։ Ջանիբշանը չըկարողացաւ զսպել իր կատաղութիւնը։

— Մեր ամենի դատաւորը Աստւած է,— դարձաւ նա Մուրադին,— բայց ես մայր եմ, չեմ թողնիլ իմ որդուն, որ ցաւագարի հետ ապրի։

Մուրադը մօտեցաւ, պատկառանքով խոնարհւեց և համբուրեց պառաւի ձեռը։

— Որդին պարտաւոր է,— ասաց նա,— իր ծնողների առաջ խոնարհւել։ Մինչև օրս ես քո կամքին չեմ հակառակւել, ամեն բանում քո ուզածն եմ արել։ Կեանքումս մի անգամ խօսքդ չըկատարեցի, Աստւած ինձ պատժեց։ Հիմա ուզում եմ պատիժս տանեմ. թո՛ղ տանեմ, ես արժանի եմ։

— Ուրեմն չե՞ս ուզում ընկնաւորից բաժանւել,—



գոչեց պառաւը, շեշտելով «ընկնաւոր» բառը, որպէս զի որդու սիրտը սարսափ ձգի։

— Չեմ ուզում։

— Չե՞ս ուզում չարով բռնւածից, դիւահարից երես դարձնել, ինչպէս Աստւած է նրանից երես դարձրել։

— Չեմ ուզում։

— Կըփոշմանես։

— Ինչ-որ ճակատիս գրած է, պիտի կատարւի։

Այդ րոպէին Մուրադը բնազդումով երեսը դարձրեց յետ։ Սօնան գլուխը բարձրացրել էր անկողնից և ականջ էր դնում խօսակցութեան։ Նրա ճակատը սպիտակ էր, ինչպէս թուղթ, աչքերի բիբերն անշարժ և մի փոքր դէպի վեր բարձրացած։

Մուրադը խղճաց նրան իր հոգու խորքում։ Այդ վայրկեանին մոռացել էր իր վիշտը և միայն համակւել թշւառ կնոջ ցաւով։ Նա զգում էր, որքան տանջւում է այդ երիտասարդ էակը։ Բայց միայն սէրը և ցաւակցութեան զգացումը չէին, որ ստիպում էին նրան պաշտպանել Սօնային։ Աւելի մեծ դեր էր խաղում ինքնասիրութիւնը։ Նա ինքն է ընտրել այդ աղջկանը, պէտք է պաշտպանի նրան։

— Ես նրանից չեմ բաժանւիլ,— ասաց նա վճռական եղանակով,— եթէ ամենքդ էլ ինձանից բաժանւէք։

Նա անցաւ շուտով միւս սենեակը, դռները ետևից ծածկելով։ Այնտեղ հանդիպեց նրան Սօնայի շնորհակալութեամբ, երկիւղով և յոյսերով լի հայեացքը։

— Կախարդել են որդուս,— աղաղակեց պառաւ Ջանիբշանը, կախարդել են ու սատանաների ճանկը գցել…

## IX

Հարուածը նորափեսայի համար անսպասելի էր և անողոք։ Հազիւ սկսել էր ճաշակել ամուսնական փոխադարձ, խաղաղ և օրինական սիրոյ հրապոյրը, ճակատագիրը քայքայում էր նրա կեանքը։ Նա մտիկ էր անում նորատի կնոջ դէմքին, սեղմած շրթունքներին և կրծքից արձակում ծանր ու երկարատև հառաչանքներ։

Երբեմն նրա սիրտը լցւում էր ատելութեամբ դէպի այն էակը, որին ոչ միայն սիրում էր, այլև սկսել էր պաշտել և որի կենակցութեամբ երազում էր ստեղծել ընտանեկան անդորր երջանկութիւն։ Ինչո՞ւ նրան խաբեց այդ կինը անգթաբար, ինչո՞ւ յաւիտեան սևացրեց նրա օրը։

Բայց երկար չէր տևում այդ ատելութիւնը, անցնում էր Մուրադի սրտի րոպէական գրգիռը և տեղի տալիս անհուն վշտերի ու վշտակցութեան զգացմանը։

Նա բացարձակ չէր բողոքում ճակատագրի դէմ, որովհետև ամենից առաջ իրան էր համարում մեղաւոր։ Նա այն տկարոգի անհատներից չէր, որոնք կեանքի տագնապալի միջոցներին իրանց թշւառութեան պատճառները միայն և միմիայն ուրիշներին են վերագրում։ Այնքան քաջութիւն ունէր, որ կա-



րող էր բաց ճակատով կանգնել սեպհական խղճի կշտամբանքների դէմ։ Եւ եթէ նա ոչ ոքի չէր մեղադրում, միևնոյն ժամանակ, ոչ ոքի էլ իրաւունք չէր տալ իր գլխին դատաւոր կանգնելու։ Բայց ո՞վ կարող էր նրան այնպէս խիստ պատժել, որքան նա ինքը։ Նա խորասուզւել էր ցաւերի մէջ և գիշեր-ցերեկ կրծում էր իր սիրտը։ Մի շաբաթ էր անցել այն դժբախտ օրից, և նա դեռ տնից չէր դուրս գալիս։ Թւում էր նրան, որ եթէ շուկայում երևայ, ամենքը պէտք է մատնացոյց անեն նրան, ծաղրեն կամ խղճան։ Երբ աւագ եղբայրը խնդրում էր նրան ուշքի գալ և գործերով զբաղւել, նա մի յուսահատ շարժում էր անում ձեռով և ասում.

—Ես գործեր չունիմ. արա՛, ինչ-որ ուզում ես։

Այժմ նա, կարծես, մոռացել էր ամեն ինչ։ Նա ոչ կանոնաւոր ուտում էր, ոչ հանգստանում. գիշերը մեծ մասամբ անց էր կացնում անքուն, շարունակ անցուդարձ անելով գաւթում։ Նայում էր աստղերին, ականջ էր դնում շների հաչոցին, փողոցային պահապանների գոռոցներին գիշերային լռութեան մէջ և հառաչում, շարունակ հառաչում։

Շուտով նրա դէմքի վրայ երևան եկաւ մի դեղնութիւն, իսկ աչքերի մէջ հոգու դառնութիւն։ Ամենից առաջ Սօնան նկատեց այդ բանը, որովհետև ամենից զգաստ աչքով նա էր հետամուտ Մուրադի ամեն մի քայլին։ Նա զգում էր, որքան խորն է այդ մարդու տանջանքը, քանի որ արտասուքը սրտի մէջ է թափում։ Նա փափագում էր և չըգիտէր ինչպէս ամոքէր ամուսնու վիշտը։ Չոքե՞լ նրա առջև, նե-

րո՜ւմ խնդրել։ Մի՞թե այդ բաւական է։ Գոնէ Մուրադը լինէր ոչ այնպէս բարեսիրտ, այլ քինախնդիր և կատաղի, գոնէ նա չըպաշտպանէր իր ողորմելի կնոջը տնացիների մօտ։ Այն ժամանակ Սոնան աւելի քիչ կըտանջւէր խղճի խայթոցից, զգալով, որ մասամբ պատժւած է իր մեղքի համար։ Չէ, այսպէս շարունակել անհնարին է. Սոնան անկարող է տանել այդ մարդու լռութիւնը։

—Ականջ դիր ինձ,—արտասանեց նա մի օր, այլևս չըկարողանալով համբերել։

Նա նստած էր իր սենեակում, լուսամուտի առջև։ Մուրադը անցուդարձ էր անում պատշգամբի վրայ։ Նա կանգ առաւ, ծխախոտը հանեց բերանից և երեսը դարձրեց դէպի կինը։ Եւ ոչ մի թեթև յանդիմանութիւն, նախատինքի և ոչ մի թոյլ նշան այդ մռայլ դէմքի վրայ։

—Ինչո՞ւ չես խօսում,—շարունակեց Սոնան,—մինչև ե՞րբ պիտի սիրտդ մըղ-մըղ ուտես։

—Մինչև այն ժամանակ, քանի որ սիրտ կայ ուտելու,—պատասխանեց Մուրադը։

Նա շարունակեց անցուդարձ անել։

—Թող մեղաւորն ուտի իր սիրտը, դու ի՞նչ մեղք ունիս,—խօսեց դարձեալ Սոնան։

—Ո՞վ է մեղաւորը։

—Կնիկդ, ղուլդ, ինչո՞ւ նրան չես պատժում։

Մի դառն հեգնական ժպիտ սահեց Մուրադի դէմքով։ Նա ուսերը թօթւեց, գլուխը երերեց։ Ասելն էր. ի՞նչպէս պատժեմ քեզ, խեղճ էակ, քանի որ Աստուած ինքն է պատժել։



Սոնան գուշակեց այս լուռ պատասխանի իմաստը։

—Ես ինքս էլ չեմ հասկանում,—շարունակեց նա,—ինչ երեսով Աստծուց պատժւածը ուզում էր մարդկանց շարքն ընկնել։ Մի շաբաթ է գիշեր-ցերեկ մտածում եմ, մտածում ու տեսնում, որ ես իրաւունք չունիմ այս տանն ապրելու։ Թող ինձ, գնամ իմ ծնողների մօտ, մենակ նրանց գլխին պատուհաս լինիմ։ Թէ չես ուզում թողնել, գցի՛ր ինձ տներիդ տակ, շանսատակ արա, մի՛ պահիր այս դրութեան մէջ։

—Բաս ինձ ո՞վ կըսպանի, եթէ ես քեզ սպանեմ, բաս իմ ցաւե՞րը որտեղ ուղարկեմ, եթէ քեզ ծնողներիդ մօտ ուղարկեմ։ Ուշ է...

—Աստուած է յայտնի, որ քանի-քանի անգամ հօրս տնից ուզեցել եմ մեզ յայտնել, որ ընկնաւոր եմ, ի՞նչ անեմ, լեզուս կալին-կապին ընկաւ—չըկարողացայ։

Նա շալի ծայրը բարձրացրեց իր աչքերը սրբելու, ուր երեք օր էր արտասուքը ցամաքել էր։

—Հե՛րիք է, հե՛րիք է,—կէս բարկացած և կէս ընկճւած ձայնով արտասանեց Մուրադը.—Աստծու դէմ կռւել չենք կարող։ Ինչ-որ ճակատներիս գրւած է, պէտք է տանենք։ Աչքերս այնքան մթնել էին, որ եթէ ամբողջ աշխարհը հակառակւէր, էլի ես քեզ հետ պիտի պսակւէի։ Ուրեմն Աստծու կամքն էր։ Հիմա հերիք է, ասում եմ, վեր կաց, մի բաժակ թէյ ածա՛, տուր ինձ։

Այն վայրկեանին, երբ Սոնան թէյով լի բաժակը դնում էր լուսամուտի յատակի վրայ, նրա գլխին գցած շալի եզրերը միմեանցից բաժանւեցին, և կո-

կորդը բացւեց։ Մուրադը նայում էր կնոջ երեսին և այժմ էլ հիանում նրա գեղեցկութիւնով։

—Այդ ի՞նչ է,—գոչեց նա յանկարծ, երբ տեսաւ Սօնայի կոկորդը։

Սօնան իսկոյն շալը քաշեց կրծքին և երեսը յետ դարձրեց։

—Այդ ի՞նչ է,—կրկնեց Մուրադը։

—Ոչինչ, ոչինչ…

Երբ երրորդ անգամ Մուրադը իր հարցին ուղղակի պատասխան չըստացաւ, մտաւ սենեակ և ստիպեց Սօնային շալը գլխից վերցնել։ Նրա կոկորդի վրայ երևացին քանի մի արիւնոտ կարմիր-կապտագոյն գծեր։

—Ո՞վ է քեզ սովորեցրել Թուրքի պէս կուրծք պատռել,—գոչեց Մուրադը զայրացած։

Հոգեկան կսկիծն էր ստիպել Թշւառ ընկնաւորին ճանկռտել իր մարմինը։ Եթէ Մուրադն աւելի խոր նայէր, կըտեսնէր, որ Սօնայի ամբողջ կուրծքը շերտաւորւած է արիւնոտ գծերով։ Այսպէս էր պատժում ինքն իրան նորահարսը։

—Եթէ մէկէլ անես, երեսս չես տեսնիլ այս տանը,—ասաց Մուրադը վճռական եղանակով։

Սօնան հեզ և երախտագիտական հայեացքով նայում էր նրա երեսին։ Նա Մուրադի աչքերի մէջ նկատում էր վշտակցութեան հետ նաև նախկին սիրոյ ցոլքը։ Նրա ընկճւած սիրտը կրկին բաբախեց փոխադարձ զգացման բուռն հոսանքից։

—Երանի՜ ոտներիդ փոշուն արժանի լինէի,—շշնջաց նա ինքն իրան։



Նոյն վայրկեանին ուրախութեան մի թոյլ ժպիտ անցաւ նրա դէմքով։ Նա տեսաւ գիժ-Դանէլին, այն մարդուն, որի տեսութիւնը միշտ մի առանձին ուրախութիւն էր պատճառում նրան։ Խենթը բագ էր մտնում այս անգամ առանց երգելու, լուռ, կամացուկ քայլերով, գլուխը կրծքին թեքած։ Նոյն տեսակ մի ուրախ ժպիտ սահեց և Մուրադի դէմքով։ Ամբողջ ընտանիքի մէջ, Սօնայից յետոյ, նա էր մենակ, որ ոչ միայն դէմ չէր խենթի այցելութիւններին և չէր ամաչում նրա ազգակցութիւնից, այլև միշտ ինքն էր խնդրում նրան ամեն օր այցելել։

Խենթը կանգնեց բագի մէջտեղում, ձեռները յենեց գաւազանի ծայրին, մտիկ արաւ Սօնային, յետոյ Մուրադին և, գլուխը երերելով, մռայլ ձայնով արտասանեց.

—Կրծքիս խփեցի, ձայն բարձրացրի, ասացի. «Փարհա՜դ, կա՞յ աշխարհում բախտաւոր մարդ»։ Երկինքը որոտաց, երկիրը գոռաց, Փարհադը պատասխանեց. «Մա՛րդ, տա՛ր ճակատիդ գրւածը. բախտ ասածդ այն է, ինչ-որ ես եմ ճակատիդ գրել…»

Այս ասելով, նա մի զոյգ խնձոր առաջարկեց Մուրադին, աւելացնելով.

—Առաջ դու հոտ արա, Մեաջնուն, յետոյ կըտաս Լէյլիին։ Ասլան Դանէլը երկուսիդ համար է բերել։ Սպիտակ խնձորը անմեղութիւն է, կարմիրը—բախտաւորութիւն։ Երազ տեսայ, Յովհաննէս Մկրտիչը ասաց. «Ով որ անմեղ է, նա բախտաւոր է»։

Յետոյ նա ծոցից հանեց մի մոխրագոյն լաթէ կտոր և, տալով Սօնային, շարունակեց.

—Ա՛ռ, համբուրի՛ր, ճակատիդ դիր։ Մէյսարիի սուրբ Նշանի գերեզմանի հողից է։ Գիշերը քնելիս վրէն մոմ վառիր, աղօթք արա, յետոյ դիր բարձիդ տակ։ Թող նրա սուրբ զօրութիւնը քեզ պահի, պահպանի չար աչքից, չար նիաթից։

Հացթուխն արդէն հաղորդել էր խենթին Սօնայի ուշաթափուելու լուրը։

Մինչ Սօնան, ակնածութեամբ լի հայեացքը իր ամուսնու վրայ ձգած, սպասում էր, ինչ պիտի խօսի նա խենթի հետ, Մուրադը ցոյց տուեց պատշգամբի վրայ ձգած բազմոցը, խնդրեց Դանէլին նստել, թէյ խմել։

Խենթը, ձեռները փորի վրայ դնելով, գլուխ տուեց եղբօրորդուն, բայց չնստեց։ Օրը դեռ չէր մթնել։ Մայր մտնող արեգակի դեղնագոյն շողերը խաղում էին բարձր բարդենիի վերին տերևների հետ, փայլեցնելով նրանց ինչպէս բազմաթիւ փոքրիկ հայելիներ։ Խենթն արևակէզ դէմքը դարձրեց դէպի արևելք, երեսին երեք անգամ խաչակնքեց, յետոյ դարձաւ դէպի արևմուտք։ Մուրադը և Սօնան լուռ նայում էին նրան։ Խենթի աչքերի մէջ փայլում էր մի օտարոտի ոգևորութիւն։ Կարծես, նրա քայքայուած ուղեղը իր վերջին ուժերով կենտրոնացել էր մի ինչ-որ խորհրդաւոր մտքի վրայ, իսկ սիրտը լցուել բուռն զգացումներով։ Լուռ նայում էր երկնքի հեռաւոր հորիզոնին, ուր վերջնամարային ամպերը ներկայացնում էին նուրբ գոյներով օծուած անվերջ լեռների մի հսկայական շղթայ։ Նրա շրթունքները մեղմիկ շարժւում էին։ Թւում էր, որ մտքում



աղօթում է կամ լուռ խօսակցում ամպերի հետ։ Նրա գզգզուած միրուքը, որ այժմ բոլորովին ճերմակել էր, պղնձագոյն դէմքին տալիս էր մի առանձին խորհրդաւորութիւն։ Նա յիշեցնում էր այն ծերունի արևապաշտին, որ խորին հոգեզմայլութեան մէջ ձգտում է ըմբռնել իր Աստծու էութիւնը։

Նա հանդարտ քայլերով մօտեցաւ Մուրադին, երեք անգամ խաչակնքեց նրա երեսին։ Գաւազանը յենեց պատին, մտաւ սենեակ, բռնեց Սօնայի ձեռից, դուրս բերեց նրան պատշգամբ և կանգնեցրեց Մուրադի մօտ։ Մարդ ու կին տակաւին լուռ էին և, մի ինչ-որ աներևոյթ ուժից դրդուած, հետևում էին խենթի լուռ պատւէրներին։ Նա մի ձեռով բռնեց Մուրադի ձեռը, միւսով Սօնայինը և ինքը կանգնեց մէջտեղ։

—Մտիկ արէք երկնքին,—արտասանեց նա հանդիսաւոր եղանակով,—մտիկ արէք այն երկու կտորներին. մէկը սպիտակ, միւսը վարդի գոյնով։ Տեսէք, տեսէք, մօտենում են միմեանց։ Ասլան Դանէլը բարձրացել էր սարի գլուխը, այնտեղից աչքերով փնտրում էր ձեր տունը։ Տեսաւ այս ծառի գագաթը, ասաց. «Ա՛յ, Մանիշակը այնտեղ ընկաւ հողի տակ»։ Սիրուն ճակատ ունէր, մօտեցայ, պաչեցի... Տեսէք Դանէլ ապօրը, ոտները բաց, գլուխը բաց, աշխարհից ոչինչ չի ուզում։ Տեսէք, ամպերը միացան, հիմա մի կտոր է։ Տո՛ւր ինձ ձեռդ, Մուրադ, տո՛ւր ինձ ձեռդ, Սօնա։ Ասլան Դանէլը ասում է. «Սաթայէլի բաժին կըդառնայ ձեզ միմեանցից բաժանողի հոգին...»։ Գիշերները չար երազներ եմ տեսնում։ Ինձ տանում են Թուրքերի թաղը, որ շան պէս խեղդեն։ Գաւազանս

խլում են։ Մանիշակս լաց է լինում, հաց է ուզում, խաղող է ուզում։ Տեսնում եմ Մանիշակիս հողի վրայ ընկած, արևի տակ։ Վեր է թռչում, ասլան-Դանէլին ազատում է դահիճների ձեռից։ Մուրադ, Մուրադ, նրան սիրում էի աչքիս լուսի պէս, սիրիր Սօնային, ասլան-Դանէլը խեղճ է, բալա չունի։ Տէր, մեղայ քեզ, մեղայ քեզ… Սօնա խաթուն, մի լաց լինիր, ասլան Դանէլը ղուլդ է։ Մուրադը քեզ անտէր չի թողնի։ Նա ընկած էր արևի տակ, երկու մեծ քարեր էին ընկել, մէկը կրծքին, միւսը ճակատին։ Նրան խլեցին ինձանից…

Արտասուքի երկու խոշոր կաթիլներ, նրա վառ աչքերից գլորւելով ցած, կանգ առան արևակէզ այտերի վրայ։ Առաջին անգամն էր Սօնան արտասուք տեսնում այդ թշւառի աչքերում։ Եւ ով գիտէ, որ ժամանակից այդ կաթիլները չորացել էին, քարացել նրա աչքերի մէջ։ Այժմ կակղեցին և դուրս գլորւեցին։

Բոլոր իր տասնօրեայ դառն կսկիծները Մուրադին այդ վայրկեանին թւացին մի խաղալիք, համեմատելով խենթի հոգու խորքում տարիներով տիրող հսկայական վշտի հետ։ Այդ մարդը թշւառացաւ նոյնպէս իր երիտասարդ հասակում, այն ժամանակ, երբ ընտանեկան երջանկութիւն էր վայելում։ Նրանց ճակատագրի մէջ կար մի նմանութիւն—այս զգում էր Մուրադը։ Եւ այս նմանութիւնն երիտասարդի գըլխում ծագեցրեց վայրկեանաբար մի միտք։ Արդեօք Մուրադը կունենա՞ր այնքան ոյժ, որ Դանէլի չափ վիշտ կրէր, Դանէլի պէս խենթանար և յետոյ Դանէլի պէս աշխարհի երեսին սիրէր մի մարդկային էակ։



—Ի՞նչ ես ուզում ինձանից, հօրեղբայր, ասա, ես ուզածդ կըկատարեմ,—գոչեց Մուրադը ոգևորւած։

—Երդւի՛ր հօրդ գերեզմանով,—ասաց խենթը, ամուր սեղմելով նրա ձեռը,—երդւիր հօրդ գերեզմանով։

—Երդւում եմ։

—Ասա. Սօնայիս կըսիրեմ մինչև մահ. ասա, Մանիշակիս խաթրու, ասա, խեղճ է Դանէլը…

—Երդւում եմ, որ Սօնային սիրում եմ ու կըսիրեմ մինչև մահ,—արտասանեց Մուրադը յուզւած ձայնով և աւելի ու աւելի ոգևորւելով։

Նոյն վայրկեանին նա իր թևի վրայ զգաց մի ծանրութիւն։ Այնքան բուռն էր նորահարսի յուզմունքը, որ չըկարողացաւ դիմանալ խենթի սրտաշարժ համակրանքին, նւաղեց և գլուխը յենեց իր ամուսնու թևին։ Մուրադը գրկեց նրան, օգնեց վերադառնալու սենեակ և նստացրեց անկիւնում դրած սնդուկի վրայ։

Խենթը նայում էր դէպի դուրս։ Նա գաւազանը վերցրեց պատի տակից և, սպառնական ձևով շարժելով օդի մէջ, քայլերն ուղղեց դէպի փողոց։ Բակի մի անկիւնում կանգնած էին Մուրադի մայրը, եղբայրն ու եղբօր կինը. զարմացած և ուշադրութեամբ նայում էին տարօրինակ տեսարանին։ Երբ խենթն արագ քայլերով անցաւ նրանց մօտով, պառաւ Զանիշանը մօտեցաւ Մուրադի սենեակին։

—Թողէք տեսնեմ, գիժը գժի հետ խօսք խօսքի տւած ուզում են բալես էլ խելքից հանեն,—ասաց նա, մտնելով որդու սենեակը։

Նրա դեմքն արտայայտում էր վճռողականություն: Պարզ էր, որ այս անգամ արդեն նա մտադիր էր իր վերջնական խոսքն ասել որդուն:

—Ի՞նչ գործ ուներ այստեղ գիժը,—գոչեց, դառնալով Մուրադին:

—Հօրեղբայրս է, հյուր էր եկել:

—Ի՞նչ էր խոսում այնքան երկար:

—Օրհնում էր մեզ:

—Հացթուխն էր ուղարկել նրան: Ցույց տուր, տեսնեմ, ի՞նչ կապոց տվեց կնոջդ:

—Սուրբ Նշանի գերեզմանի հողից է:

—Սուտ ես ասում, գայլի բերան է կամ սև կատվի ոտի պճեղ կամ ագռավի աչք, ջադու է:

Որպեսզի պառավը երկար չվիճի, Մուրադը վերցրեց Սոնայից խենթի բերած կապոցը, բաց արեց և ցույց տվեց մորը սև հողը: Պառավը խլեց նրանից կապոցը և դրեց իր ծոցը:

—Եթե սրբերն ուզենային դիւահար կնոջդ օգնել,—ասաց նա,—մինչև հիմա օգնած կլինեին: Հերիք է, էլ ես չեմ թողնիլ, որ դու սատանաների ճանկերում մնաս: Մտիկ արա հայելուն, ինքդ քեզ չես ճանաչիլ, լղարել ես, դեղնել, աչքերդ փոսերի մեջ են ընկել: Չես ուտում, չես խմում, գիշերները քուն չունիս, դիւահարի պես երկար ման ես գալիս: Սև լիներ այն օրը, որ այդ չարը իմ տունն ոտ չըդներ. սևացրեց մեր օրը: Թոռներս հիւանդացել են, մեծ որդիս ախ ու վախով է օրերն անցկացնում. մեծ հարսս վախից գիշերները տասն անգամ տեղից վեր է թռչում: Իմ գլխին խելք չի մնացել, քունս



աչքերիցս փախել է: Երեք օր է, խելք խելքի տված, մտածում ենք, ուրիշ ճար չենք գտնում: Դու պետք է այդ դիւահարից ձեռ քաշես: Դո՛ւրս հանիր իմ տնից չարին, թող գնայ ծնողների մոտ:

—Հենց ա՞յդ էիր ուզում ասել,—հարցրեց Մուրադը,—ուրիշ ասելիք չունի՞ս:

—Ես ունիմ,—մեջ մտաւ Կարապետը:—Տասն օր է տնից չես դուրս գալիս, գործերդ մնացել են անտեր, ես մենակ ոչինչ չեմ կարողանում անել: Թե չես ուզում, որ կոտր ընկնենք, խայտառակվենք, խելքդ գլխիդ հաւաքիր, դո՛ւրս եկ տնից: Կարճ-կտրական եմ ասում. եթե այս անգամ էլ խոսքս չես լսիլ, եղբայրդ չեմ, կըթքեմ, կըհեռանամ: Ես կնիկ ունիմ, երեխաներ ունիմ, եթե քեզ համար չըմտածեմ, նրանց համար պարտավոր եմ մտածել:

Մինչ Կարապետը խոսում էր, նրա կինը—Գիւլնազն աչքերը յառել էր Սոնայի վրայ և չարախնդութեամբ ժպտում էր: Նրա դեմքն այնքան ատելի թւաց Մուրադին, որ սա չըկարողացաւ իրան զսպել և գոչեց.

—Երևի, կնիկդ է սովորեցրել քեզ կարճ-կտրական խոսել: Որ այդպես է, ես էլ իմ վերջին խոսքը կասեմ. ինչ ուզում ես, կարող ես անել, ես իմ կնոջից բաժանւողը չեմ, թեկուզ կոտր ընկնենք ու խայտառակվենք քաղաքում:

—Դա վերջի՞ն խոսքդ է,—հարցրեց Կարապետը:

—Վերջին խոսքս է:

—Լաւ: Մենք էլ մեր ասած կանենք:

Ասաց Կարապետն և երեսը խստորեն յետ դարձ-

նելով, հեռացավ: Երեք օր անցած՝ իր մոր միջոցով կրկնեց նույն առաջարկը և Մուրադից ստացավ միևնույն պատասխանը: Մնում էր, որ նա իր խոսքը կատարի, բայց այդ շատ էլ դյուրին չէր: Նախ, պառավ Զանիշանն ավելի կհամաձայնվեր ինքն երկու կտոր լինել, քան թե տեսնել իր երկու որդիներին միմյանցից բաժանված: Երկրորդ, Կարապետը, բացի այն, որ առանց Մուրադի անթև էր զգում իրան, սիրում էր և խղճում էր նրան: Նա տեսնում էր, որ օր օրի վրա Մուրադն ընկճվում է վշտի ծանրության ներքո և անկեղծ սրտով ուզում էր նրան փրկել: Նա համոզված էր, որ եթե այդպես շարունակվի—Մուրադը կխելագարվի: Գիժ-Դանելի օրինակը նրա աչքից չէր հեռանում: Նա միշտ փիլիսոփայորեն կրկնում էր.

—Վա՜յ այն մարդուն, որ իր ցավերը ներսումն է պահում...

---

## X

Դժբախտ օրից յետոյ հացթուխը մի երկու անգամ փորձեց իր աղջկանը տեսնել. խնամիները դռներից յետ դարձրին նրան: Այնուհետև նա այլ ևս չէր գնում աղջկա մոտ: Իսկ պայտագործը վաղուց արդեն դադարել էր այցելել Սոնային: Եւ կարիք էլ չէր զգում, քանի-որ ամեն օր շուկայում տեսնում էր իր փեսայի հետ: Մուրադը քաղաքավարի կերպով



իր անբրոջ ափի մեջ գրեթե ամեն անգամ սեղմում էր մի թղթադրամ, իսկ պայտագործը կրկնում էր.

—Մինչև եղբորիցդ չբաժանվես, երեսս տանդ չես տեսնի:

Այժմ, երբ Մուրադը շուկայում չէր երևում, Ոսկանի տրամադրությունը շատ վատ էր:

—Այնքան աղջկաս չեմ ուզում տեսնել, ինչքան փեսայիս,—ասում էր նա վրդովված:

Եթե համոզված լիներ, որ Մուրադը չի վռնդվի, անպայման կվազեր նրա մոտ սովորական տուրքը ստանալու յուսով: Բայց չկար մեկը, որ նրան ասեր, թե կարելի է Մուրադի հետ տեսնվել: Նա փորձեց դիմել գիժ-Դանելի միջնորդությանը, բայց խենթը-բարկացավ և երեսը դարձրեց նրանից:

Ամեն օր Դանելը շտապով գալիս էր հացթուխի մոտ, շշնջում էր նրա հետ և շտապով հեռանում: Կարծես, նա այժմ չարաչար զբաղված էր մի շատ կարևոր և անյետաձգելի գործով: Նա գնում էր Սոնայի մոտ ժամանակ-անժամանակ: Շատ անգամ նորահարսի հետ չէր տեսնվում և ոչ էլ Մուրադի հետ էր խոսում: Մտնում էր բաղը, անցնում էր այս ու այն կողմ, նայում էր այս ու այն անկյունը և իսկույն անհետանում, որպեսզի նորից երևայ անսպասելի կերպով: Երբեմն մոտենում էր այս կամ այն լուսամուտին, նայում էր ներս, խոյս տալով անցորդների հայացքից, և գավազանը սպառնական ձևով օդի մեջ պտտեցնելով, հեռանում էր: Պատահում էր, որ պառավ Զանիշանը կամ Գյուլնազը նկատում էին պատշգամբի վրայ, բացում կամ փողոցի դռները

առջև մի կապոյտ շապիկ, որ մի վայրկեան փայլում էր և իսկոյն չքանում։ Նրա հոգին տիրում էր ամբողջ տան վրայ։ Բոլորն և ամեն րոպէ զգում էին նրա ներկայութիւնը, միևնոյնն է, այնտեղ էր նա, թէ ոչ։ Ամենից աւելի զգում էր Սօնան։ Նրան թւում էր, որ իր գլխին հաւաքւում են սև ամպեր, և խենթի ոգին ճգնում էր մի սոսկալի որոտման առաջն առնել։

Այդ սև ամպերը նա տեսնում էր Գիւլնազի չարախինդ աչքերի մէջ և Ջառնիշանի հողագոյն դէմքի վրայ։ Պառաւը տենդային յուզման մէջ էր։ Այն օրից, երբ Մուրադը դրականապէս մերժեց բաժանւել իր կնոջից, նա սկսեց ամեն միջոց գործ դնել իր որդուն «չարից» փրկելու։ Սօնայի աչքից խոյս չէին տալիս այդ միջոցներից և ոչ մինը։ Նա տեսնում էր Ջառնիշանին չոքած, կուրծք ծեծելիս և աղօթելիս. լսում էր նրա անէծքներն իր դէմ և շըրթունքները ներքին կսկծից ամուր կրծոտում էր։ Նա գիտէր, որ իր սկեսուրը ոչ մի միջոց չըպիտի խնայի իր տան մէջ բուն դրած «դևից» ազատւելու համար և երբեմն խղճում էր պառաւին։

Բոլոր սրբերին աղօթելուց, բոլոր հմայիչներին դիմելուց յետոյ, մնում էր մի պառաւ պարսկուհի, որ բնակւում էր քաղաքի յետ ընկած թաղերից մէկում։ Ջառնիշանն մի օր այցելեց նրան և խնդրեց օգնել իր որդուն։ Պարսկուհին մի մեծ գաւաթ ջրի վրայ հմայեց և ասաց, որ պէտք է անձամբ տեսնի Մուրադին։

Միւս օրը Ջառնիշանն ընդունեց հմայիչին իր



տանը։ Սօնան տեսաւ պարսկուհուն և իսկոյն հասկացաւ, ինչու համար է կանչւած։ Հմայիչը դիտեց Մուրադին ոտից մինչև գլուխ, յետոյ խօսեց Սօնայի հետ։ Նրան ուղղակի ոչ ոք չէր ասել, թէ նորահարսն ընկնաւոր է, ասել էին միայն, որ նա է Մուրադի «հիւանդութեան» պատճառը։

Մի շարք կողմնակի հարցեր տալուց յետոյ, պարսկուհին յայտնեց, թէ նորապսակները չար աչքի են ենթարկւած, թէ Սօնայի աչքերում մի ինչ-որ «սև բան» է տեսնում, իսկ Մուրադը նրան թւում է կախարդւած։ Ջառնիշանը հիացաւ պարսկուհու գուշակութիւնից և աւելի հաւատաց նրա գաղտնի զօրութեանը։ Պարսկուհին պատւիրեց մի ագռաւ բռնել, գլխիվայր պահած խեղդել և թաղել բակի այն տեղում, ուր Մուրադը սովորաբար անցուդարձ է անում գիշերները։ Դա բժշկութեան նախերգանքն էր. բուն միջոցները պէտք է գործադրւէին յետոյ։ Պարսկուհին մի շաբաթ ժամանակ խնդրեց այդ միջոցների մասին մտածելու և, մի կտոր թել կապելով Սօնայի ցուցամատին, հրամայեց չըբաց անել այդ թելը մինչև միւս անգամ գալը։

Մի ծանր բեռն էր թւում Սօնային այն մի կտոր թելը։ Սնահաւատութիւնը նրան թելադրում էր, թէ այդ թելի կտորից է կախւած նրա վիճակը։ Ամեն գիշեր նա տեսնում էր տարօրինակ երազներ, որոնց մէջ նրա ցուցամատը միշտ գլխաւոր դեր էր կատարում։ Առաւօտեան զարթնելիս նա իսկոյն նայում էր ցուցամատին, կարծես, սպասելով մի որևէ հրաշքի։ Առանց այն էլ, գիշեր-ցերեկ հանգստութիւն

չունէր. այժմ իրան զգում էր երկաթեայ շղթայով կապկապուած, և այդ շղթան դարձել մահի թելն էր: Այժմ մահ էր ցանկանում, ինչպէս ցանկանում էր մի ժամանակ իր ծնողների տանը: Տեսնում էր ամուսնու լուռ տանջանքները, լսում էր նրա խուլ հառաչանքները, և այն միտքը, որ ինքն է բոլորի պատճառը, մորմոքում էր նրա սիրտը: Յիշում էր մօրը և զգում, թէ այժմ որքան է նա տանջւում:

—Ա՛ռ հոգիս, Աստուած, ա՛ռ,—շշնջում էին նրա շրթունքները առաւօտ-երեկոյ:

Պատահեց մի անսպասելի փոփոխութիւն: Մի առաւօտ Մուրադը յանկարծ տնից դուրս եկաւ և գնաց շուկայ: Տնացիները ուրախացան. ուրեմն պարսկուհու միջոցները ազդում են: Նոյն օրը Կարապետն ասաց, որ Մուրադը այժմ սկսել է գործերով հետաքրքրուել:

Իսկութիւնն այն էր, որ Մուրադը, տեսնելով իր մօր տանջանքը և եղբօր անհանգստութիւնը, փորձեց գործով զբաղուել, նրանց թախանձներից ազատուելու համար: Այնուհետև ամեն օր դուրս էր գալիս: Բայց տանը տակաւին շարունակում էր լռել և տխուր անցուդարձ անել գիշեր-ցերեկ:

Ուղիղ եօթ օր անցած կախարդուհին եկաւ: Նորից հարց ու փորձ արաւ, նորից տան բոլոր սենեակներն և անկիւնները դիտեց: Նա բաց արաւ Սօնայի մազի թելը, բարձրացրեց օդի մէջ, նայեց, նայեց և, կամացուկ քայլերով մօտենալով նորահարսի ննջարանին, յանկարծ մի ճիչ արձակեց, չոքեց շէմքի վրայ և սկսեց իր սուր եղունգներով յատակը փորել:



Բոլոր տնացիները երկիւղով և ապշած նայում էին նրան:

—Այս տան մէջ դև կայ,—ասաց պարսկուհին և ոտքի կանգնեց:

Աչքերը լայն բաց արած՝ նայում էր չորս կողմը, իր ոսկրոտ ձեռները օդի մէջ շարժելով: Կարծես, նա աշխատում էր դևին որսալ, որ խեղդի իր մատներով:

—Տուէք ինձ մի կտոր կապար, սև թել և մի հատ վէգ,—ասաց նա խորհրդաւոր:

Սօնային հրամայեցին իսկոյն բերել պարսկուհու ուզած բաները: Դողալով և սարսափահար գտաւ այդ բաները և բերաւ: Պարսկուհին եօթն անգամ թելը չափեց, եօթ թիզաչափ կարեց, եօթն անգամ փաթաթեց վէգի շուրջը, եօթն անգամ կշկռեց և եօթն անգամ զարկեց յատակին: Յետոյ վէգը փաթաթեց կապարով, տրորեց ձեռների մէջ, երեսը դարձրեց դէպի արևմուտք, աղօթեց, անէծք կարդաց երկրին, կպրած վէգը կպցրեց Մուրադի ննջարանի դռան շէմքի վրայ և թելի ծայրը բևեռեց յատակին:

Այս բոլորը նա կատարում էր դէմքը ծամռելով և խորշոմանկ աչքերը պտղղացնելով: Տնացիները լուռ և զարմացած դիտում էին նրան: Նայում էր և՛ Սօնան: Կախարդուհու ամեն մի շարժումը նրան ցնցումն էր պատճառում: Նա և՛ վախենում էր պարսկուհուց և՛ զզւում: Եւ այս երկու զգացումներն այնքան զօրեղ էին, որ նա մերթ զգում էր կրակի տաքութիւն, մերթ սառոյցի պաղութիւն:

Երևի, պարսկուհին զգում էր, որ ինքը նորա-

հարսի վրայ ազդում է, և այդ ազդեցութիւնն աւելի զօրացնելու համար նա շուտ-շուտ ունքերը կնճռում էր և սուր ու անշարժ հայեացքով նայում նրա աչքերի միջին: Այդ հայեացքը Սօնային յիշեցրեց դարձեալ օձային աչքերի ձգողական ուժը: Դարձեալ հիւանդ երևակայութիւնը սկսեց բորբոքուել: Նրա աչքերի առջև պատկերացան միմեանցից այլանդակ, անբնական և սոսկալի տեսարաններ: Յանկարծ նրան թուաց, որ պարսկուհին չքացաւ, և նրա կանգնած տեղում բացուեց մի մթին անդունդ: Սօնան քաշ էր ընկած այդ անդունդի վրայ, օդի մէջ, առանց որ և է նեցուկի: Այդ տևեց ընդամենը մի վայրկեան, ապա ամեն ինչ ստացաւ նրա աչքում սովորական տեսք: Բայց նրա հոգին տակաւին պատած էր մի տեսակ մառախուղով: Նա անգիտակցաբար անցաւ իր ննջարանը, դռները ետևից ծածկեց: Քանի մի րոպէ անցած, տնացիները այնտեղից լսեցին մի ինչ-որ խուլ թրմփոցի ձայն: Իսկոյն դիմեցին այն կողմը: Յատակի վրայ թաւալուել էր Սօնան և ցնցւում էր: Պարսկուհին խոր խոր նայեց նրան և գոչեց.

— Դևը, դևը...

Նա սկսեց կատաղի պտոյտներ գործել ընկնաւորի շուրջը: Ապա պահանջեց մի սուր: Պատի վրայ քարշ արած էին Մուրադի զէնքերը: Գիւլնազը վերցրեց մի դաշոյն և տուեց պարսկուհուն: Պարսկուհին մերկացրեց դաշոյնը, թքեց երեք անգամ նրա սայրերին և ծայրով յատակի վրայ, ընկնաւորի շուրջը, գծեց մի շրջան, արտասանելով.

—Եահուդի, ջհուդի, եահուդի, ջհուդի, այրել,



խեղդել, հալած կուպրի մէջ գցել, խաշել, խաշել, խաշել...

Եթէ Զառնիշանի սրտում կասկածի նշոյլ մնացել էլ կախարդուհու զօրութեան մասին, չքացաւ: Պարսկուհին դաշոյնը ցցեց յատակին և հրամայեց դռները փակել ու ընկնաւորին թողնել մենակ: Բոլորն անցան միւս սենեակը: Սօնան մնաց մենակ, յատակի վրայ ընկած, երեսը դէպի լուսամուտ:

Մէկը լուսամուտի փեղկերը կամացուկ բաց արաւ և մի ոստիւնով թռաւ ներս: Նա չոքեց հիւանդի մօտ և գգւանքով ու ցաւակցութեամբ լի հայեացքը ձգեց նրա երեսին: Երբ ընկնաւորը սթափուեց, նայեց շուրջը, չըճանաչեց իր մօտ նստողին:

—Ես եմ, Մանիշակ, ես եմ,—ասաց ոտաբոբիկ, գլխաբաց և կիսամերկ ծերունին, իր կոշտ ձեռով շոյշոյելով նրա մազերը...

Այդ միջոցին միւս սենեակում Զառնիշանն աղերսում էր կախարդուհուն փրկել Մուրադին այդ «դևից»: Նա չէր հոգում ընկնաւորի մասին. Թող Սօնան ոչնչանայ, միայն թէ պառաւի որդին ազատուի:

—Դևը դև է կանչում, սատանան ընկեր է սիրում,—արտասանեց կախարդուհին խորհրդաւոր եղանակով:

Երբ նրան հարցրին այս խօսքերի միտքը, նա իր ոսկորոտ ձեռների ցուցամատերը կպցրեց միմեանց և ցցեց օդի մէջ:

—Հասկանում եմ,—ասաց Գիւլնազը:

Կախարդուհին խոստացաւ Մուրադի փրկութեան մասին մտածել և, իր վարձն առնելով, հեռացաւ:

Մի ամբողջ շաբաթ չէր երևում։ Այն ինչ Մուրադի թախիծը ոչ միայն չէր անցնում, այլ օրից օր ծանրանում էր։ Ճշմարիտ է, այժմ նա տնից դուրս էր գալիս, բայց, Կարապետի ասելով, աւելի լաւ էր տանը նստէր, քան թէ դուրս գար և այնպէս պահէր իրան։

—Մի բան ես հարցնում, աչքերը չռում է, երեսիդ մտիկ անում։ Մարդկանց հետ խօսել չի ուզում։ Եթէ խօսեցնում են—նեղանում է։ Երեկ մի գիւղացու փող տալիս, տասը մանէթ աւել է տւել, միւսից պակաս է վերցրել։ Հաշիւ բան չի պահում, դաւթարներն ուզում է պատռել։ Իմ տունը քանդում է, ազատեցէք նրան այդ ցաւից...

—Կըսպանեմ ինձ ու իմ որդուն կազատեմ չարերի ձեռքից,—գոչեց Զառնիշանը, իր գլխի մազերը փետելով։

—Պէտք է ազատել,—աւելացրեց Գիւլնազը։

Այժմ նրանց ցանկութիւնն էր, որ Սոնան մեռնի, այնքան ձանձրացել էին այդ կարճ միջոցում։ Քաղաքում արդէն տարածւել էր Սոնայի ցաւագար լինելու լուրը։ Կանայք զանազան պատրւակներով գալիս էին Զառնիշանի մօտ, ընկնաւորին տեսնելու։ Ոմանք ակնարկում էին, թէ առաջ էլ գիտէին Սոնայի ցաւագար լինելը, միայն չէին ուզում ասել։ Իսկ ոմանք, կարծես, մի առանձին հաճոյք էին զգում՝ շօշափել Զառնիշանի սրտի վէրքը—մանրամասնաբար հարցնելով Սոնայի մասին։ Պառաւը զգում էր, որ շատերը թէև արտաքուստ ցաւակցութիւն են ցոյց տալիս, ներքուստ ուրախ են նրա դժբախտութեանը։



Այդ աւելի գրգռում էր նրան և աւելի նրա սիրտը լցնում ատելութեամբ դէպի Սոնան։

Գիւլնազին առանձնապէս կատաղեցնում էր Սոնայի դէմքը։ Այդ դէմքը տակաւին փայլում էր գեղեցկութեամբ, թէև օր օրի վրայ նրա կենսականութիւնը պակասում էր, սքօղելով թմրութեան թանձր ստւերով։

Այժմ կախարդ-պարսկուհին յաճախ երևում էր Զառնիշանի տանը։ Հարս ու սկեսուր միշտ խորհրդակցում էին նրա հետ։ Պարսկուհու գործ դրած միջոցները չէին օգնում։ Մուրադը քանի գնում՝ այնքան լռակյաց, անմատչելի և մռայլ էր դառնում և այնքան նիհարում։

—Որդիս կայծակ խփած ծառի պէս ոտի վրայ չորանում է,—ասում էր Զառնիշանը պարսկուհուն, ձեռները կրծքին խփելով,—ազատիր նրան։

Չորս ամսւայ ընթացքում Սոնան վեց անգամ ուշաթափւեց։ «Հարւածները» քանի գնում՝ այնքան շուտ-շուտ էին կրկնւում, միևնոյն ժամանակ, այնքան թուլանում էին։ Այլևս ընկնաւորն առաջւայ պէս սաստիկ չէր խփւում, չէր թաւալւում և ոչ էլ այնքան երկար միջոց ընկած մնում։ Ախտը յաճախ կրկնւելով, նւազում էր առանձին հարւածների ոյժը։ Բայց ընկնաւորի մարմնի թուլութիւնը, դէմքի դեղնութիւնը, աչքերի ապշութիւնը քանի գնում՝ այնքան աւելանում էին։ Նա օրից օր դառնում էր մտամոլոր, մոռացկոտ, անտարբեր։ Շատ անգամ մի սենեակից միւսը մի բանի համար գնալիս մոռանում էր, թէ ինչու համար է գնում։ Կանգ էր առնում և ապ-

շած աջ ու ձախ նայում։ Երբեմն ձեռին բռնած իրերը դուրս էին սլկում և ընկնում։ Գրեթէ օր չէր անցնում, որ մի աման չըկոտրէր։ Մի անգամ խոհանոցից դուրս գալիս, ձեռներից բաց թողեց մի ամբողջ տասնեակ ափսէներ և փշրեց։ Մի ուրիշ անգամ բաց թողեց նաւթով լի կանթեղը։ Ապակին կոտրւեց, նաւթը, տարածւելով յատակի վրայ, ապականեց թանկագին պարսկական գորգը։ Ջառնիշանն այնպէս կատաղեց, որ նորահարսի գլխին ձեռով խփեց։ Այլևս նա չէր վախենում Մուրադից։ Այնուհետև պառաւի ձեռը սովորեց հարւածել։ Գիւլնազը շտապեց նրա օրինակին հետևելու։ Սօնան ընդունում էր այդ հարւածները լուռ ու մունջ և չէր ուզում առ այժմ այս մասին յայտնել իր ամուսնուն։ Բայց նա տանջւում էր, և տանջւում էր ոչ այնքան այդ հարւածներից, որքան կախարդուհու գործ դրած միջոցներից։ Իսկապէս այդ միջոցները անմիջապէս նրան չէին վերաբերւում, բայց այն միտքը, թէ պառաւ պարսկուհին վարձւած է Մուրադին փրկելու ընկնաւոր կնոջից, մթին ուրւականի պէս գիշեր-ցերեկ հալածում էր Սօնային, պահելով նրան անընդհատ սարսափի մէջ։

—Ինձ տանջում են, չարչարում են,—ասաց նա մի անգամ միայն գիժ-Դանէլին։

Խենթի աչքերն արիւնով լցւեցին կատաղութիւնից։

—Ո՞վ է տանջում, ո՞վ,—գոչեց նա, դաւազանը ձեռի մէջ սեղմելով։

Սօնան զղջաց իր գանգատի մասին և յետ վերցրեց իր խօսքը։ Գիտէր, որ խենթը պատրաստ է բոլորի գլուխը ջախջախել իր դաւազանով։

—Քաւթառ փալչին ինչո՞ւ է գալիս այստեղ,— —հարցրեց գիժ-Դանէլը,—պատառ-պատառ կանեմ նրան...

Մի օր նա, փողոցում բռնելով պարսկուհու կոկորդից, սեղմեց նրան պատին և գոռաց.

—Դու ի՞նչ գործ ունիս այս տանը, հը՞մ, ասա, թէ չէ—կըխեղդեմ։

Բարեբախտաբար, նոյն միջոցին Մուրադը տուն էր վերադառնում, կախարդուհուն ազատեց խենթի ձեռից։ Պարսկուհին կատաղած մտաւ Ջառնիշանի մօտ, գանգատւեց, որ «դևերը» նրան քիչ էր մնում խեղդէին փողոցում և ասաց, թէ այլևս չի կարող Մուրադի բժշկութենով զբաղւել։ Ջառնիշանն աղերսեց նրան անօգնական չըթողնել իր որդուն։

Այն ժամանակ պարսկուհին պահանջեց մի գաւաթ ջուր և հմայեց։ Ձեռները յենած գաւաթի եզրին, աչքերն յառել էր առաստաղին և ինքն իրան շշնջում էր։ Նա մտքում խօսում էր դևերի հետ, կամենալով թափանցել նրանց գաղտնիքը։ Յանկարծ նրա բիբերը սկսեցին արագ-արագ պտտել շըջանակների մէջ, և մի տեսակ ինքնամոռացութեան մէջ, մատներով խեղդելով իր կոկորդը, արտասանեց.

—Այսպէս, այսպէս, պրծաւ, վեաս սալամ, շիւդ թամամ...

Ջառնիշանը և Գիւլնազը նայեցին միմեանց աչքերին ու գունատւեցին։ Կախարդուհու գնալուց յետոյ նրանք երկար ժամանակ խորհրդակցեցին։ Յայտ-

նուեց, որ պարսկուհու խորհրդաւոր ձևերի և խօսքերի իմաստը երկուսն էլ միատեսակ են հասկացել…

Օրերն անցնում էին, ընտանիքի դրութիւնը աւելի ու աւելի անտանելի էր դառնում։ Կարապետը յուսահատուած էր, գործերը քայքայւում էին։ Ձմեռւայ սկզբին բկացաւից մեռաւ նրա երկու տարեկան աղջիկը, իսկ մեծ որդին ծանր հիւանդութիւնից հազիւ առողջացաւ։ Զառնիշանը և Գիւլնազը այս բոլորի պատճառը Սօնային էին համարում։ Նա, միայն նա բերեց նրանց տուն այդ թշուառութիւնները։ Նա պէտք է տակն ու վրայ անի ամբողջ օջախը, կոտորի ընտանիքի բոլոր անդամներին։

—Երազ տեսայ, չար երազ,—աղաղակեց մի առաւօտ Զառնիշանը, անկողնից վեր թռչելով։

—Սայլերով սուրբ էինք գնում։ Մուրադը նստած էր դեղին ձի։ Նրանց առջև դուրս եկան հազարաւոր սև կատուներ։ Մուրադը մտրակով կռւում էր նրանց հետ։ Յանկարծ կատուներից մէկը մարդու պէս բռնեց նրա կոկորդից և սկսեց խեղդել։ Մուրադի բերանից փրփուր էր գալիս, երեսը կապտել էր։ Զառնիշանը գոռաց և ինքն իր ձայնից զարթնեց։

—Դեղին ձին նրա կնիկն է, սև կատուները դեւերն են, որդուս ազատեցէք,—գոչեց պառաւը, աւարտելով իր պատմութիւնը։

Դեկտեմբերի ցուրտ օրերից մէկն էր։ Մօտակայ ձիւնապատ լեռներից փչում էր շունչ կտրող սուր քամի։ Կարապետը և Մուրադը շուկայումն էին։ Գիւլնազի զաւակները գնացել էին իրանց հօրաքրոջ—Նարգիզի տուն նրա երեխաների հետ խաղալու։



Զառնիշանն և Գիւլնազը նստած էին մէջտեղի ընդհանուր սենեակում, որ «դահլիճ» էր անւանւում։ Պառաւը քրսինի վրայ քառասուներկու սիսեռներով հմայում էր, հարկաւ, Մուրադի մասին։ Գիւլնազը լաց էր անում։ Երկուսի էլ դէմքերը մտազբաղ էին, երկուսն էլ միևնոյն մտքով էին զբաղւած, այն է—ինչպէս ընտանիքն ազատել չարից։

Ներս մտաւ կախարդ-պարսկուհին, մի ծուռ փայտի վրայ յենւելով և ցրտից դողդողալով։ Նա բարևեց և անմիջապէս նստեց քրսինի մօտ։

—Սա ինչ պաղ է,—ասաց նա, երբ իր սառած ոտները մտցրեց քրսինի տակ։

—Ասա անունը կտրւածին, կրակ դնի,—դարձաւ Զառնիշանը Գիւլնազին։

«Անունը կտրւած» նա կոչում էր Սօնային։ Մինչ նորահարսը դրսում քրսինի համար նոր կրակ էր վառում, Զառնիշանը, Գիւլնազը և պարսկուհին խօսում էին նրա վերաբերմամբ։ Այսօր երեքի էլ աչքերն արտայայտում էին մի առանձին չարութիւն։ Թէ ինչ խօսեցին—այդ մնաց գաղտնիք։ Բայց թէ մի բան վճռել էին, այդ գուշակեց նրանց դէմքերից Սօնան, հէնց առաջին վայրկեան, երբ ներս մտաւ։

Նա ձեռին բռնած էր մի մեծ երկաթի ածխակալ, որ լիքն էր վառ ածուխով։ Թէժ կրակի կապոյտ լեզւակները բարձրանում էին վառ ածուխից, միմեանց շփւելով և միմեանց կլանելով։ Խոշոր կայծերը ճարճատելով ցնդւում էին օդի մէջ, հանգչում և սև բծերի պէս ընկնում յատակի վրայ։

—Կրակը լաւ չի վառւած,—ասաց Զառնիշանը

Սօնային. գլուխներս կըբռնի։

Սօնան երեսը յետ դարձրեց, որ կրակը դուրս տանի նորից փչելու...

—Լաւ, չի ուզիլ, ցրտից փէտացանք, ածա՛, ինչ կըլինի, թող լինի...

Սօնան վերադարձաւ, մէջքից թեքւեց, բարձրացրեց քրսինի վրայ ձգած կարպետն ու վերմակը և կրակն ածեց քրսինի տակ, ուղիղ կենտրոնում փորւած մի ձմերուկաչափ փոսի մէջ։ Զառնիշանը զգաց թէժ կրակի տաքութիւնը, ոտները հանեց քրսինի տակից և հրամայեց Սօնային բաց թողնել քրսինի մի կողմը, որպէս զի ածուխի վտանգաւոր հոտը դուրս գայ։

Պարսկուհին անթարթ աչքերով նայում էր Սօնայի երեսին։ Նայում էր և՛ Գիւլնազը իր ապակեայ անշարժ աչքերով։ Այն վայրկեանին, երբ Սօնան, իր սկեսրի հրամանը կատարած, ձեռը յենեց յատակին ոտքի կանգնելու, նկատեց այդ երկու զոյգ չարաշուք աչքերի սուր հայեացքները։ Նա յիշեց այն երեկոն, երբ առաջին անգամ տեսաւ Գիւլնազի ապակեայ աչքերը, և սարսափեց։ Այժմ այդ սարսափը նրան թւաց Նախախնամութեան կողմից տրւած նախազգուշութեան նշան ապագայի մասին.... Նոյն վայրկեանին նա յիշեց իր մօրը, հօրը, որոնց վաղուց չէր տեսել։ Դեռ առաւօտից մի առանձին փափագ էր զգում տեսնել իր մօրն և վճռել էր, եթէ Դանէլը գայ, խնդրի նրան մի կերպ հացթուխին տանի բերի—իր աղջկայ հետ տեսնւելու։ Ամբողջ օրը նրա աչքերի առջև էր այն աղքատիկ խրճիթը, ուր անց էր կացրել իր մանկու-



թեան ընկերներին—այն կաւեայ խաղալիկները, որոնց հետ ուրախացել էր և վշտացել։ Այժմ, այն վայրկեանին, երբ պարսկուհու և Գիւլնազի չարագուշակ հայեացքները բևեռւած էին նրա վրայ, յիշեց և՛ Մուրադին, որ ծխախոտը ձեռին, աչքերն անորոշ տարածութեան մէջ յառած, անցնում էր նրա առջևով, գունատ, մտամոլոր, դժբախտ։ Նրա ետևից անցնում էր գիժ-Դանէլը, գաւազանը կրծքին բռնած, գլուխը վեր բարձրացրած, երգելով իր մելամաղձիկ և վշտահնչիւն երգերից մինը։ Ախ, որքա՜ն պարզ և կենդանի էին այդ բոլոր պատկերները։ Նա զգում էր նրանց մերձաւորութիւնը, լսում էր նրանց շնչառութիւնն անգամ... Բայց բոլորը հեռու էին նրանից։ Մի ինչ-որ աներևոյթ ձեռ ձգեց մի սև վարագոյր նրա աչքերին...

Եւ ամեն ինչ մթնեց Սօնայի համար...

Պարսկուհու և Գիւլնազի հայեացքները շարունակ յառւած էին նորահարսի վրայ։ Իսկ պառաւ Զառնիշանը նայում էր նրան։ Գիւլնազը սփրթնած էր։ Կախարդուհու սեղմւած, հողագոյն և բարակ շրթունքները ցնցւում էին, բայց ոչ ցրտից, ինչպէս առաջ, այլ գուցէ աներևոյթ դևերի սարսափից։

Այն վայրկեանին, երբ Սօնան ընկաւ յատակի վրայ, Գիւլնազը բնազդմամբ ոտքի թռաւ, կախարդուհին նոյնպէս։ Երկուսն էլ նայեցին Զառնիշանին։

—Ազատեցէք որդուս,—շշնջաց պառաւը մի տեսակ ինքնամոռացութեան մէջ, ձեռներով աչքերը ծածկելով։

Այդ շշնջման և այդ շարժման մէջ կար սոսկալի բան։

Առաջինը Գիւլնազը բռնեց Սոնայի ցնցւող բազկից, բայց իսկոյն յետ քաշւեց: Նրա ձեռները կաշկանդւեցին: Կախարդուհին իր ջղոտ, պղնձագոյն ձեռներով բռնեց ընկնաւորի թևերից և քաշեց նրան դէպի քրսինը: Գիւլնազը փակեց սենեակի դռները և լուսամուտները: Զանիշանը շարունակ ծածկում էր աչքերը ձեռներով: Զար վհուկը նստել էր քրսինի վերմակի վրայ, աշխատելով, որ չըբարձրանայ և դրսից օդ չըմտնի քրսինի տակ:

Լսում էին խուլ խռմփոցներ, ապա մի երկարատև ճչոց և յետոյ ծանր, սարսռեցուցիչ հառաչանքներ, որ, կարծես, երկրի ստորոտից էին գալիս: Ընդամենը այդ տևեց հազիւ մի քանի րոպէ...

Այնուհետև ամեն ինչ լռեց...

Դռները դղրդացին և սենեակի մէջտեղում արձանացաւ մի ոտաբոբիկ և գլխաբաց ծերունի, որի կապտագոյն շապիկը հազիւհազ ծածկում էր նրա մարմինը: Նրա կարմրած աչքերը պտտում էին շրջանակների մէջ, աջ ու ձախ փնտրելով մէկին, իսկ գլխի գզգզւած մազերը ցցւել էին վեր, ինչպէս ամեհի առիւծի բաշը:

Գիւլնազը կանգնեց պարսկուհու առջև, որպէսզի անտեսանելի կացուցանի նրան խենթի աչքերից: Պարսկուհին բարձրացրեց քրսինի վերմակն ու կարպետը և, բռնելով ընկնաւորի ոտներից, դուրս քաշեց նրան:

— Տւէք ինձ, տւէք ինձ,— աղաղակեց գիժ-Դանէլը և, ուժգնաբար հրելով պարսկուհուն ու Գիւլնազին, յարձակւեց Սոնայի վրայ:

Ընկնաւորը անշնչացած էր: Ոչ ցնցւում էր, ոչ



խրխռում, և ոչ նրա բերանում փրփուր կար: Միայն նրա դէմքը սաստիկ կապտած էր և ուռած, աչքերի բիբերը դուրս ցցւած, մազերը խանձւած և ճակատը տեղ-տեղ սևացած...

— Պատառ-պատառ կանեմ, գոռաց խենթը և, մի ձեռով թաւալելով կախարդուհուն յատակի վրայ, սկսեց խեղդել նրան:

Զանիշանն անշարժ, սարսափած և ապշած նայում էր եղերական տեսարանին: Գիւլնազը փորձեց ազատել պարսկուհուն կատաղած Դանէլի ձեռքից: Բայց արդէն ուշ էր...

# ՋՀՈՒԴԻ ԱԿԱՆՋԸ

# ՋՀՈՒԴԻ ԱԿԱՆՋԸ

Կովել քաղաքի կայարանում մեր վագոնը լցւեց հրէաներով։ Եղանակն անձրևային էր, անախորժ, մինչև անգամ ցուրտ, թէև օգոստոսը դեռ չէր վերջացել։ Բոլոր ճանապարհորդները թրջւած էին, բոլորի իրեղէնները ցեխոտւած, որովհետև կայարանն անկարգ էր, իսկ պլատֆորմը ծածկոց չունէր։

Սկսւեց այնպիսի իրարանցում, որի նմանը չէինք տեսել Թիֆլիսից մինչև Լեհաստան, անցնելով Կովկասի վառվռուն տարրերի միջով։ Առաջին պահ չէինք լսում ոչ միայն մեքենայի խուլ թնդիւնը և կառքերի ձանձրալի դղրդիւնը, այլև իրարու ձայնը։

Ներս խուժելով, հրէաները կատուի արագութեամբ իրանց բազմաթիւ կապոցները տեղաւորեցին, գտնելով այնպիսի անկիւններ ու խորշեր, որոնց մասին ես մինչև այդ ժամանակ գաղափար չունէի։ Այսպէս է հրէան։ Ով շատ է ճանապարհորդում, նա շուտ է յարմարւում անյարմարութիւններին։ Իսկ ով չըգիտէ, որ աշխարհի երեսին ոչ ոք այնքան չի ճանապարհորդում, որքան հրէան։ Զէ՞ որ այդ անբախտ ժողովրդի ճակատին պատմութիւնը գրել է.

— Թափառի՜ր յաւիտեան։

Երբ խրարանցումը մի փոքր դադարեց, մեզ մօտեցաւ մոխրագոյն վերարկուով ու մեխակի գոյնի, լայն, ճմլուած գլխարկով մի մարդ և, տասն անգամ ներողութիւն խնդրելով, նստեց իմ դէմ։ Իսկապէս բոլոր տեղերը բռնուած էին, բայց մարդն այնուամենայնիւ նստեց, աշխատելով կարելոյն չափ իր մարմինը փոքրացնել։

Տեսե՞լ էք արդեօք մի տղամարդ, որի դէմքը ներկայացնէ գեղեցկի և տգեղի զարմանալի խառնուրդ։ Երևակայեցէք Հօրիլլօի դնչից և ամենագեղեցիկ դէմքի մի հիւսուածք, և դուք կունենաք մօտաւորապէս Նորեկ Հարևանիս պատկերը. Նրա քառակուսի ծնօտը, տափակ քիթը, լայն բերանը, հաստ շրթունքները, խոշոր կինամոնագոյն աչքերի խելացի արտայայտութեան և կանոնաւոր կազմուած գլխի, սիրուն ճակատի և նուրբ յօնքերի գեղեցկութեան հետ։

Նստեց թէ չէ այդ մարդը, սկսեց ոտքից մինչև գլուխ զննել մեզ խիստ հետաքրքիր հայեացքով, չըմոռանալով նայել իրեղէններիս։ Հրէայի ախտ դարձած հետաքրքրութիւն, որ ուզում է անպատճառ իմանալ—ո՞վքեր են իր ուղեկիցները, ի՞նչ դիրք ունին, ո՞ւր են գնում և ինչո՞ւ։ Հէնց այս յատկութիւնն է, որ ճանապարհորդութեան մէջ նրան դարձնում է մերթ ցանկալի և համակրելի ընկեր, մերթ ձանձրալի և ատելի ուղեկից։

Վերջապէս Նորեկը հեռացրեց մեզանից իր խուզարկու հայեացքը, երևի գուշակելով, որ մեզ շատ էլ դուրեկան չէ այն։



—Ցէյլդման,—դարձաւ նա իր ազգականներից մէկին,—քանուռմէկ կըխաղմն։

—Այ վա՜յ, ժամանակ չըկայ,—պատասխանեց Ցէյլդմանը, որ նստած էր մեր կողքի փոքրիկ բազմոցի վրայ,—վերջապէս ես քաղցած եմ, ուտել եմ ուզում։

Դա մի փոքրիկ, շատ փոքրիկ, արագաշարժ և արագախօս ծերուկ էր, պստիկ ճերմակ միրուքով ու թաւ սև ունքերով։ Նա անմիջապէս իր ոտների տակից «այ—վայ» անելով դուրս բերեց և ծնկների վրայ դրեց մի զամբիւղ, ուտելեղէնով լիքը։ Շուտով մեր վագօնում տարածուեց կանաչ սոխի և ինչ-որ ապխտած ձկան հոտ։ Ցէյլդմանն ուտում էր կապկի պէս, այսինքն երկու ձեռները մօտեցնելով բերանին, քիչ-քիչ, բայց արագ-արագ և արագ-արագ ճպճպելով աչքերը։

—-Է՜հ, բաս ի՞նչ անեմ, տխուր է,—ասաց Հարևանս, անգիտակցաբար իր լայն գլխարկը բարձրացնելով ծծրակի կողմը։

Այդ միջոցին տասը տարեկան աղջիկս ծիծաղելով ասաց.

—Հայրի՜կ, չե՞ս տեսնում, այդ մարդու մի ականջը չըկայ։ Նայի՛ր։

Արդարև, Հարևանիս ձախ ականջը կտրած էր մինչև բլթակը, և այս թերութիւնը նրա կերպարանքին տալիս էր աւելի տարօրինակ տեսք։

Ես կարծեցի, որ փոքրիկի անմեղ ծիծաղը կըդիպչի այդ մարդուն և շտապեցի զսպել նրան։ Բայց պատահեց հակառակը։ Հրէան սիրալիր ժպտաց, բաց անելով իր լայն բերանը մինչև վերջին ատամները։

Եւ այդ ժպիտը նրա դէմքից քշեց այն բոլորը, ինչ-որ անսամնական էր։ Մատը թափ տալով օդի մէջ, նա հայրական եղանակով ասաց.

—Մադմուազել, մի՛ ծիծաղիր ականջիս վրայ, առնէտները կըբարկանան։ Գիտե՞ս, նրանք են կերել օրը ցերեկով իմ ականջը։ Ախ, նրանք սոված են, շատ են սոված, այդ գարշելի, հոտած առնէտները։ Հէյ մէյ, ինչ կուշտ ծիծաղում ես, երանի՜ քո հասակին...

—Ապա նա, իր տեղը լայնացնելով, դարձաւ ինձ.

—Ո՞ւր էք գնում։

—Առայժմ Վարշաւա։

—Գործո՞վ։

—Ոչ, հէնց այնպէս։

—Ի՞նչ ազգից էք,—շարունակեց նա, տեղն աւելի լայնացնելով։

—Հայ։

—Ա՜, հա՞յ էք,— գոչեց նա, կարծես, ուրախանալով և, մի և նոյն ժամանակ, տեղն աւելի լայնացրեց,—ո՞րտեղից էք գալիս։

—Թիֆլիսից։

—Թիֆլիսից գնում էք Վարշաւա,—արտասանեց նա դառն հեգնական ծիծաղով,—կընշանակէ դժոխքից գնում էք գեհեն։

—Մի՞թէ։

—Կատարելապէս, գոչեց հրէան և այս անգամ տեղն այնպէս ուղղեց, որ այլևս որդիս հարկադրուեց վեր կենալ։

—Ես ասացի, որ մենք միայն մի օր ենք մնալու Վարշաւայում։



—Օ՜, և ո՛չ մի ժամ, ո՛չ մի ժամ չըմնաք, պարոն։ Վատ է, շատ վատ այնտեղ։

Եւ բացատրեց, թէ ինչու է վատ այնտեղ։ «Ազգերը և դասակարգերը» խառնուել են միմեանց և ոտքի կանգնել։ Փողոցներում տեղ-տեղ իջնում է կարմիր դրօշակ։ Նրա գոյնը խիստ գրգռում է «ոմանց», ինչպէս ոսորդի աչքերը օրհասական արջին։ Ատրճանակ, դաշոյն, հրացան, ռումբ, լրտեսութիւն, մատնութիւն, կողոպուտ—ահա ինչեր են տիրում այնտեղ։ Որտեղ նայում ես—արիւն։

—Եւ մեծ մասամբ մեր արիւնը, հասկանո՞ւմ էք, մերը, ազգերից ամենաբախտաւորինը։ Օ՜, երկու հազար տարի է ծծում են մեր սրբազան արիւնը և դեռ չեն կշտացել անիրաւները։ Մի՛ գնաք այդ անիծեալ քաղաքը, որովհետև այնտեղ հրէաներ կան։ Առհասարակ փախէք Ռուսաստանից։ Ես էլ ստիպուած եմ գնում։ Ընտանիքս Բիշինևից տարայ այնտեղ. կարծում էի աւելի ապահով կլինի։ Բայց Աստուած իմ, Աստուած իմ, ե՞րբ պիտի վերջապէս խելքի գան բռնակալները։

Նա լռեց, ծանր ու երկարատև մի հառաչանք արձակեց կրծքից։ Ապա իր խելօք և խորը թափանցող աչքերը—նրանց մէջ արդէն վառուել էր պատմական վիշտը—դարձրեց դէպի լուսամուտ։

Աղմուկը չէր դադարում։ Այժմ հրէաները զբաղուած էին մի տեղ թուղթ խաղալով, միւս տեղ ուտելով։ Նրանք վիճում էին բարձրաձայն, այնպէս որ կարծում էիր, թէ ահա, ահա պիտի պայթի կռիւ և պիտի ջարդոտեն միմեանց քիթն ու պռունգը։

Բայց գոռում-գոչիւններին հետևում էր բարձրաձայն ծիծաղ, ապա վայրկենական դադար, ապա դարձեալ գոռոցներ և հայհոյանք։

Դրսում անձրև չէր, մենք անցել էինք նրա սահմանը։ Կառախումբն արդէն կտրում էր Լեհաստանի դաշտերն ու անտառները։ Աջ ու ձախ երևում էին գիւղեր, ագարակներ և մերթ ընդ մերթ ամառային դղեակներ,—մի ժամանակւայ փարթամ Լեհաստանի բեկորները։ Ոչխարների հօտերը և ձիերի երամները արածում էին աշնանային դեղնագոյն կանաչը, անտառների մէջ ցրւած։ Գիւղացիները հերկում էին ոսկեգոյն հողը, ուշադրութիւն չդարձնելով անցնող կառախմբի վրայ։ Գեղջկուհիները իրանց կապոյտ գոգնոցների մէջ ժողովում էին կաղամբ, գետնախնձոր, եգիպտացորեն, որ մեծ մասամբ երկաթուղու գծի մօտ էին ցանւած։ Տեղ-տեղ, խոշոր տերևների միջից ժպտում էին հասուն դդումներ, իսկ արևածաղկի դեղին աչքերն ապուշ-ապուշ նայում էին մայր մտնող արեգակին, ծծելով նրա վերջին ճառագայթները։

Աշխատութիւնը եռում էր, բայց կեանքը մեռած էր։ Մարդկանց յոգնած դէմքից չէր նկատւում զւարթութիւն, ա՛յն, ինչ-որ բանաստեղծի երևակայութիւնն է յօրինում գիւղական կեանքի համար։ Չէր երևում, որ այստեղ մարդիկ պարում են ու երգում և իրանց կայտառ քրքիջը միացնում բնութեան երգեհոնին, այնպէս, ինչպէս ես տեսայ Բելգիայի սքանչելի մարդերում։ Մռայլ դէմքերի և կորացած մէջքերի վրայ զգացւում էր քաղաքական հեղձուցիչ մթնոլորտի ճնշումը։ Արդէն Վարշաւայում պայթող



ռումբերի թնդիւնը արձագանք էր գտել Լեհաստանի գիւղերում։ Արդէն իր գոռոզութեամբ և պատմական կամակորութեամբ նշանաւոր ժողովուրդն արթնացել էր հարիւր տարւայ թունաւոր նիրհից և ականջ էր դնում դէպի հիւսիս։ Նա բռունցքները սեղմում էր կատաղի, ատամները կրճտում էր բորբոքւած և մռնչում վանդակի մէջ փակւած վագրի պէս։ Բայց... տակաւին անզօր...

Սիրուն է Լեհաստանն իր հազիւ-հազ երկրի մակերևոյթից բարձրացող բթածայր բլուրներով, խիտ անտառներով, ոչ-խորը ձորերով, պարզ գետակներով և ոչ պարզ երկնքով։ Այնտեղ երկիրն այնքան դաժան և մերկ չէ, որքան բուն Ռուսիայում, այդ անվերջ անապատներում։ Այնտեղ գիւղացու տնակը ռուս մուժիկի խրճիթից տարբերւում է, որովհետև տնակ է իր եւրոպական ձևով և եւրոպական մաքրութեամբ։ Զգում ես, որ երկիրը բռնած է մի ընդունակ ազգ, որի հարուստ պատմութիւնը միայն արիւնոտ էջերից չի կազմւած և որի զաւակների միակ պարծանքը անցեալի ու ներկայի կրած բռնութիւնը չէ....

Հրէան հայեացքը հեռացրեց պատուհանից։ Ես ևս։ Նա նայեց աղջկաս մեղմ հայեացքով, որքան թոյլ էր տալիս դէմքն և ասաց.

—Ա՛մ, մադմուազել, էլի դու ականջիս ես նայում։ Օ՜, ծիծաղի՛ր, ծիծաղի՛ր, քանի որ կարող ես. շուտով այդ ապրանքը կըթանգանայ։

Եւ արագութեամբ դարձաւ ինձ.

—Պարոն, կորած ականջս պատմութիւն ունի, կարո՞ղ էք երևակայել։

—Ձեր ակա՞նջը։

—Այո՛, իմ այս անիծեալ ականջը,—կրկնեց նա, երկու մատների ծայրերով քաշելով կարմիր բլթակը, որ չորացած բակլայի էր նման,—կըկամենա՞ք լսել։ Բնորոշ է, պարոն, շատ բնորոշ մեր ժամանակների համար։ Ա՛ռ, ի՞նչ կասէք, չէ՞ որ պէտք է մի բանով զբաղուել ճանապարհին։ Ֆէյլգմանը դեռ խպշտում է։ Յետոյ երևի չքանալու է։ Չէ՞, Ֆէյլգման, դու կարծեմ պիտի ննջես։

—Երեք կայարանից յետոյ կասեմ,—պատասխանեց Ֆէյլգմանը, իւղոտ մատները սրբելով մի գոյնգոյն կեղտոտ թաշկինակով։

Ես ոչ միայն համաձայնեցի լսել հարևանիս պատմութիւնը, այլև հետաքրքրուեցի։ Հրէայի պատմածը չի կարող անիմաստ լինել։

—Լսեցէք,—սկսեց նա, գլխարկը դնելով ծնկների վրայ,—բայց դեռ թոյլ տուէք կապոցներս ուղղեմ։ Ընը՛, այսպէս, լսեցէք,—շարունակեց նա, այլևս միանգամայն ապահովելով իր համար ընդարձակ տեղ,—ես հրէայ եմ, ո՛չ, ջհուդ եմ, բառիս իսկական մտքով, Իսրայէլի զաւակ։ Անունս է Ահարոն Այզելման։ Եւ ինչպէս ջհուդ, ի հարկէ, առուտուրով եմ պարապում։ Ի՞նչ արած, Հայր Աբրահամը մեզ համար հող չի թողել, որ մշակենք... Այնպէս չէ՞, Ֆէյլգման։

—Եւ, հի՜ հի՜ հի՜,—ծիծաղեց Ֆէյլգմանը իր փոքրիկ դէմքը ցցելով օդի մէջ և աչքերը փակելով։



—Ես ունիմ, ա՛հ, ինչ եմ ասում, ունէի անիծուած քաղաքներից ամենաանիծեալ Օդեսայում պատրաստի հագուստեղէնի և մաշկեղէնի խանութ։ Ի՞նչ խանութ, ահագին մագազին էր, հինգ աչք ունէր, մեծ հայելի ապակիներով։ Բայց առաջ ես մի հասարակ դերձակ էի—այս է գլխաւորը։ Ունէի մի փոքրիկ ցածր խանութ, որ գտնւում էր քաղաքի մեծ փողոցներից մէկում, մի հարուստ մագազինի մօտ։ Այդ մագազինի տէրն էր Սերգէյ Պախոմովիչ Ագրինցևը։ Վաճառում էր նա պատրաստի հագուստեղէն, մաշկեղէն և զանազան ասուեայ կտորներ։ Ախ, երանի ես հարևան չլինէի, չտեսնէի այդ հարստութիւնը և չըմոլորուէի։ Ով գիտէ, գուցէ այն ժամանակ աւելի բախտաւոր կըլինէի։ Ֆէ՛յլգման, այնպէս չէ՞։

—Աստուած մեզնից լաւ գիտէ. ինչ որ եղաւ, պէտք է լինէր,—ասաց Ֆէյլգմանը, բառերը կտորակների նման օդն արձակելով։—Ծխի՛ր։

Հարևանս վերցրեց իր ընկերոջ առաջարկած ծխախոտը, վառեց և շարունակեց.

—Այդ Ագրինցևը Օդեսայի գազաններից մէկն էր։ Ապրանքը վաճառում էր իր ուզած գնով, ապառիկ ոչ ոքի չէր տալիս, միևնոյն ժամանակ գնողների հետ վարւում էր կոպիտ։ Մարդը կուշտ էր, կարիք չունէր ուրիշներին շողոքորթելու։ Բայց գլխաւորն այն է, որ մաշկեղէնի առուտուրի մէջ մրցակից չունէր։ Ապրանքն ստանում էր առաջին ձեռքից։ Սիբիրի բոլոր նշանաւոր վաճառականների հետ անմիջական յարաբերութեան մէջ էր։ Մի խօսքով,

հսկայ էր, գոնէ իմ աչքում: Իսկ ես... ես մի քուսոտ ջհուդիկ էք... դերձակ: Ճշմարիտ է, Ֆեյլգման:

—Աստծու օրէնքի պէս:

—Խանութս պարոն Ագրինցևի մագազինին կպած էր, ինչ ասեմ, ինչպէս մի կեղտոտ կարկատան մի նոր և փառաւոր մուշտակի: Այս բանը նրան դուր չէր գալիս: Նա ուզում էր ինձ դէնը շպրտել, բունս քանդել, մեծացնել և միացնել իր մագազինին: Բացի դրանից նա չափազանց ատում էր մեր ցեղը, աչքով աչք չունէր մեզ տեսնելու: Բայց ես էլ յիմար չէի: Այդ բանը շատ լաւ իմանալով, ես վաղօրօք տեղս ամրացրել էի: Տանտիրոջ հետ ունէի տասներկու տարով նոտարի մօտ կապած պայմանագիր: Եթէ նա ժամանակից թէկուզ մի շաբաթ առաջ ինձ դուրս անէր, պարտաւոր էր վճարել երկու հազար րուբլի տուգանք: Դուրս անե՜լ, հի՜, ոչ, Ահարոն Այզելմանը նպատակ ունէր: Նրա գլխում յղանում էր մի մեծ, յանդուգն ծրագիր: Ես տեսնում էի, որ հարևանս շատ է չարանում, չափից դուրս: Եւ բոլորովին անարժան: Այդ մարդը, պարոն, ոչ խելք ունէր, ոչ ճարպկութիւն: Նա վաճառական չէր: Կարդալ-գրելում կաղում էր, ինչպէս կառապան: Այն ինչ, ես օր չէր անցնում, որ մի կամ երկու լրագիր չըկարդայի: Գիտէի առուտուրը որտեղ է ծաղկած, որտեղ է ընկած, բորսայում ինչ թղթեր են բարձր, որոնք են ցածր, մի խօսքով, ինչ որ կարելի էր իմանալ լրագրներից, իմանում էի:

—Երբ հարևանիս, ինչպէս հարկն է, լաւ ճանաչեցի և նրա գործերին տեղեկացայ, տեսայ, որ սա-



նա իրաւունք ունէր. շուտով այդ երևաց: Յիմարութիւնն առհասարակ ինքն է իր համար փոս փորում: Ագրինցևը, տեսնելով, որ մեզ չըբանտարկեցին, լուր տարածեց, թէ մենք կաշառել ենք ոստիկանութիւնը: Կաշառելը, պարոն, հրէաների քաղաքացիական պարտականութիւններից մէկն է: Բայց քաղաքական գործերում մենք զգոյշ ենք...

Լուրը հասաւ ոստիկանապետին, յետոյ նահանգապետին: Երկուսն էլ դադարեցին այցելել Ագրինցևի տունը, մինչև անգամ ընդհատեցին նրա հետ ամէն մի ծանօթութիւն: Այս մի մեծ հարուած էր Ագրինցևի համար: Լսեցի, որ նա մի քանի անգամ գնում է նահանգապետին բացատրութիւն տալու, չի ընդունւում: Մէջ է ընկնում պատուարժան աւագ քահանայ, Վլադիմիրը և հազիւ կարողանում է ոստիկանապետին միայն հաշտեցնել «պատրիոտ» Ագրինցևի հետ: Այդ հայր Վլադիմիրն էլ մի պատիժ էր տեղական հրէաների համար: Ամէն կիրակի իր քարոզներով գրգռում էր ռուս ամբոխին մեր դէմ: Եւ յաջողութիւն ունեցաւ...

Ագրինցևը դիմեց մի ուրիշ միջոցի. իր գործակատարների բերանով տարածեց, թէ ես ու Շմուլ Մօզերը լրտեսներ ենք: Մի օր ինձ մօտ եկան երկու անծանօթ երիտասարդներ և բացատրութիւն պահանջեցին: Մէջ ընկաւ Ռաբինօվիչը և նրանց բաւարարութիւն տուեց: Ի հարկէ, մենք կարողացանք մաքրել մեր անունը, բայց չէ՞ որ այս տեսակ զրպարտութիւններն անհետևանք չեն մնում: Գտնուեցին թեթևամիտներ, որ մեզնից երես դարձրին:

Բայց այդ մեր գործին վնաս չբերեց։ Վերադարձան մեր բոլոր հին գնորդները, երբ հասկացան, որ մենք կրկնակի զրպարտուած ենք։

Նոյն միջոցներին Ագրինցևի գործերը քայքայուել էին այնպէս, որ մեծ խելք էր հարկաւոր նրանց ուղղելու համար։ Այն ինչ՝ Ագրինցևը զրկուել էր իր մեծ գլխում ամփոփուած փոքրիկ ուղեղի մնացորդից էլ։ Դուրս եկաւ, որ այդ մարդը պարտքերի մէջ խրուած է աւելի, քան մենք կարող էինք սպասել։

Մի օր նրա մուրհակը բողոքի ենթարկուեց։

Դա ողբերգութեան սկիզբն էր. շարունակութիւնը շուտով տեսանք։ Մարդը կորցնում էր իր վարկը արագ-արագ։ Ֆաբրիկներն արդէն կրճատել էին նրա կրեդիտը, իսկ մէկը միանգամայն մերժել էր։ Այս բոլորը մենք շատ լաւ գիտէինք և նպաստում էինք։ Աշնան սկզբին նա նոր ապրանք չըստացաւ, իսկ հինը ամառուայ ընթացքում կերուել էր ցեցից։

Ագրինցևն անզօր էր կանգնել անկման կէս ճանապարհին։ Հարբում էր նա այժմ բօսեակի պէս։ Մագազինը փոխեց կնոջ անունով, որովհետև ինքն արդէն սնանկ էր ճանաչուած։ Կառքերն ու ձիերը ծախուեցին։ Կինը ամաչում էր տնից դուրս գալ կամ հիւրեր ընդունել։

Ագրինցևն երբեմն կանգնում էր իր անցեալ փառքի դռների առջև և ձեռքով ինչ-որ սպառնալիքներ ուղարկում դէպի մեր կողմը։ Ես դեռ վախենում էի նրանից, և այժմ աւելի քան առաջ։ Յուսահատութիւնը սարսափելի է, պարոն։ Ահա ինչու չէի կարողանում խղճալ այդ մարդուն։



Խղճա՞լ, ոչ, նա շատ էր անարգել մեզ։ Մի օր Շմուլ Մօզերն ասաց.

«—Այգելման, մենք արդէն վարձատրուած ենք։

«—Ի՞նչ ես ուզում ասել,—հարցրի ես։

«—Ագրինցևը խանութը փակում է վաղը։

«—Տեսնում եմ. յետո՞յ։

«—Նա կորած է։ Անցեալ շաբաթ մեր սինագոգը շուն գցողների մէջ տեսել են և՛ Ագրինցևին։

Այդ արդէն ես չըգիտէի։

Անցաւ կէս տարի ևս։ Ագրինցևը չքացել էր ասպարիզից։ Բայց մենք նրան չէինք մոռացել, և ինչպէս կարող էինք մոռանալ մի մարդու, որ դեռ մի քանի տարի առաջ առաջնակարգ քաղաքացիների շրջանումն էր։ Իսկ այժմ... այժմ, ո՞վ գիտէ, ո՞ւր։ Մի օր, յարգելի պարոն, պատահեց հետևեալը։ Մադմուազել և դուք, պատանի պարոններ, լաւ լսեցէք, զուարճալի է։ Որքան շատ են տանջւում ծնողները, այնքան պիտի խելօքանան զաւակները։ Հէնց այս է պատճառը, որ հրէան ծեր է և խոհեմ օրօրոցից սկսած։

Այո՛, պարոն, պատահեց այն, որ ես ամբարտաւանութիւնը ցեխի մէջ տեսայ։

Նստած էի մագազինումս։ Շմուլն ու գործակատարներիս մի մասը գնացել էին ճաշելու։ Յանկարծ դռների առջև յայտնուեց մի մարդկային կերպարանք։ Այնքան այլանդակ էր նա, որ ես առաջին րոպէին չըճանաչեցի։ Կարծեցի թափառական մուրացկաններից է, որոնց դէմքը յարատև սովը այնքան աղաւաղում է։

Յարգելի պարոն, ես եղել եմ Եւրոպայի համարեա բոլոր երկրներում, ճանաչում եմ Ռուսիայում կենող բոլոր ազգութիւնները և կարող եմ ասել, որ ոչ մի ազգ այնքան շուտ չի հաշտւում ճակատագրի հարւածների հետ, որքան ռուսը։ Երէկւայ հարուստը այսօր կառապան է, և այս նրա համար, կարծես, սովորական բան է։ Երէկ նա շանպայն էր խմում, այսօր, փոյթ չէ, սիվուխա կըխմի։ «Ոչինչ»—ասում է նա և շուտով ամեն բան մոռանում։ «Ոչինչ», եթէ դու բացատրես նրան իր դրութիւնը և փորձես ամաչեցնել։ «Ոչինչ», դա նրա պատմական ախտն է…

Դուք արդէն գուշակեցիք, որ հիւրս Ագրինցևն էր։ Հագնւած էր նա այնպէս, ինչպէս, տեսած կըլինէք, հագնւում է օղիի գերի ռուս փոքրիկ չինովնիկը, երբ պաշտօն չունի և թափառում է դատարանների առջև, սրան ու նրան իր ծառայութիւնն առաջարկելով։ Այն տարբերութեամբ, որ չինովնիկի անցեալից մնացել է «ֆուրաշկայի» կոկարդն ու կարմիր ժապաւէնը, իսկ Անգրինցևի հարստութիւնից՝ մի մուշտակ, հնամաշ, օձիքի մազերը թափւած, փեշերն ու կուրծքը կեղտի բծերով ծածկւած։

Նա հարբած չէր այդ օրը։ Դէմքը լուրջ էր, եթէ կարող է լուրջ լինել, ինչ ասեմ, մի մեծ կապոյտ-կարմրագոյն ուռուցք։

«—Բարով,—Այգելման,—ասաց նա օղիից քայքայւած ձայնով, որի մէջ, սակայն, դարձեալ զգացւում էր արհամարհանք դէպի ինձ։

«—Պատիւ ունիմ, Սերգէյ Պախոմովիչ,—պատասխանեցի ես առանց հեգնութեան, այնպէս, որ,



կարծես, ոչինչ փոփոխութիւն չէր պատահել նրա ճակատագրի մէջ։ Ես մինչև անգամ չըգլացայ ոտքի կանգնել—այդ փողոցային շըջմոլիկի համար։

«—Այգելման, ես եկել եմ քեզ մի բան առաջարկելու։

Ասաց պարոնը և ձգւեց աթոռի վրայ, ոտներն երկարացնելով և ձեռները խոթելով պանթալօնի գրպանը։

«—Հրամայեցէք։

«—Առաջինը՝ արի հաշտւենք, այսինքն՝ դու ինձանից ներումն խնդրիր, և ես կըներեմ։ Աստւած վկայ, կըներեմ։

Լսո՞ւմ էք, պարոն, դեռ ես պիտի նրանից ներումն խնդրէի, դեռ նա պիտի ինձ ներէր։

Գործակատարներս, քիթ-քթի տալով, սկսեցին ծիծաղել։

«—Նո՛ւ, խնդրի՛ր—կրկնեց նա,—ուղղափառ ռուսը չար չէ։ Որքան էլ կատաղի, սիրտը բարի է, ոխ պահել չըգիտէ։ Ես անցեալը մոռանում եմ, դու էլ մոռացիր, ա՞…

«—Սերգէյ Պախոմովիչ, ես ձեր դէմ ոխ չունիմ, կարող էք հանգիստ լինել,—ասեցի ես մի փոքր։

«—Ա՛մ, այդպէ՞ս, շատ լաւ, շատ լաւ։ Ուրեմն, ես քեզ ներում եմ։ Թողնենք այդ։ Դատարկ բան է, չարժէ խօսել անցեալի մասին։ Մեր կեանքը գետ է, երբէք յետ չի դառնում, մեր հոգին էլ այսպէս պէտք է լինի։ Ա՛մ, դու ուզում ես ասել, որ քեզ մի քանի անգամ հայհոյե՞լ եմ։ Ինչ կայ. այժմ դու կարող ես ինձ հայհոյել։ Կըլսեմ։ Դրանից իմ հօր ոսկորները գերեզմանում տրեպակա չեն պարիլ։ Այգելման,

ես եկել եմ քեզ առաջարկելու ահա թէ ինչ. արի ընկերանանք և միասին տանենք մեր գործը։ Ա՛մ, ինչ կասես։

«—Ընկերանա՛նք, դու և ե՞ս, Սերգէյ Պախոմովիչ։

«—Այո՛, հէնց ես ու դու, ինչ կայ։

Մարդը կատակ չէր անում. ես էլ լուրջ խօսեցի։

«—Բայց ես մի պիղծ ջհուդ եմ, Սերգէյ Պախոմովիչ, մի կեղտոտ և հոտած անհաւատ։ Եւ ինչպէս դուք, ուղղափառ քրիստոնեայ, կարող էք ձեզ ստորացնել, ընկերանալով ինձ հետ։

«—Դէ, լաւ, մի՛ ծաղրիր ինքդ քեզ, լաւ չէ. ազգային պատւի զգացում ունեցիր։

«—Բայց ինչ կասի հայր Վլադիմիրը, եթէ ես ունենամ ազգային պատւի զգացում։ Նա չի՞ գժւի, երբ մեր խանութի ճակատին կըկարդայ միասին գրւած «Ագրինցև և Այգելման»։ Ա՛մ, նա ձեզ կանիծի, այդ բարեպաշտ քրիստոնեայ հայրը…

«—Հայր Վլադիմիրին ես ուղարկեցի սատանաներին, այլ ևս նա իմ տուն չի գալիս։

«—Հասկանում եմ. այլ ևս փորը չի կարող կշտացնել ձեր տանը։ Խելօք մարդ է, ուրեմն…

Ագրինցևը հասկացաւ իմ վիրաւորանքը և կուլ տւեց։

«—Հը՛, սամ,—շարունակեց նա,—երբ ենք պայմանագիրը ստորագրում։ Ասում ես, պիղծ ջհուդ ես։ Ես էլ այդ մասին շատ եմ մտածել, բայց և այնպէս վճռել եմ ընկերանալ։ Ի՞նչ անենք, ջհուդներն էլ ինձ նման մարդիկ են։ Իսկապէս ես նրանց դէմ ոչինչ չունիմ։ Կարող են իրանց սինագոգում որքան քէ-



ֆերն է «ալէլուեա» կանչել։ Ջհուդ ես, ես էլ հէնց այն պատճառով եմ ուզում ընկերանալ քեզ հետ, որ ջհուդ ես։ Օհ, ջհուդները դևեր են վաճառականութեան մէջ։ Նրանց հետ ոչ ոք չի կարող մրցել։ Ա՛մ, ինչ կասես, շնորհակալ չե՞ս, որ քեզ այսքան պատիւ եմ անում։

Ռաբինովիչը մօտեցաւ և ականջիս շշնջաց.

«—Թողէք այդ խրտւիլակին շպրտեմ փողոց։ Նա դարձեալ մեզ անարգում է։

Բայց ես ուզում էի Ագրինցևի հետ խօսել. այժմ նա ինձ հաճոյք էր պատճառում։

«—Օհ,—ասացի ես, հազիւ զսպելով ծիծաղս,—շատ և շատ շնորհակալ եմ։ Լա՛ւ, ընկերանանք։ Ո՞ւր է ձեր դրամագլուխը։

«—Ինչպէ՞ս թէ դրամագլուխը։

«—Այո՛, ո՞րն է ձեր դրամագլուխը։

«—Իմ դրամագլուխն է անունս և ազգանունս։

«—Յետո՞յ։

«—Յետոյ այն, որ ես ուղղափառ քրիստոնեայ եմ։ Ինձ հետ ընկերանալով, դուք կարող էք բոլորովին հանգիստ լինել, որ ոչ մի քրիստոնեայ ձեզ չի վիրաւորիլ։ Մի խօսքով, ես Սերգէյ Պախոմովիչ Ագրինցևն եմ։

Այս անգամ արդէն ծիծաղս չըկարողացայ զսպել։

«—Այգելման,—վիրաւորւեց Ագրինցևը և ոտքի թռաւ,—դու ինձ չե՞ս հաւատում։ Զգուշացիր, Այգելման, ես դեռ առիւծ եմ։

Պէտք էր ճշմարտութիւնն ասել, և ես ասացի, չըվախենալով նրա կատաղութիւնից։ Ժամանակն էր,

որ ես վրեժս առնէի իմ թշնամուց, որ այնքան անարգել, այնքան հալածել էր ինձ։

Ես ասացի, վաճառականութիւնը կանոններ ունի, որոնց մոռացողը չարաչար պատժւում է։ Մի մարդ, որ իր կոպտութեան, գոռոզութեան և շռայլութեան շնորհիւ կորցրել է ամեն ինչ, չի կարող նոյն իսկ խօսել վարկի մասին։

«—Դուք ոչ միայն փողով էք սնանկ, Ազրինցև, —շարունակեցի ես,—այլև խելքով։ Երբ դուք հարբում էիք և մեզ հրէաներիս հրապարակօրէն անարգում, մտածո՞ւմ էիք, արդեօք, որ մի օր պիտի այդպէս ստորանաք իմ առջև։ Ո՞ւր է այժմ ձեր անցեալը։ Կարողութիւնը չեմ ասում, այլ գոռոզութիւնը։ Ո՞ւր են ձեր ուղղափառ հաւատակիցները. ինչո՞ւ Մոսկուայի քրիստոնեայ ֆաբրիկանտները աւելի առաջ բողոքեցին ձեր մուրհակները, քան Վարշաւայի հրէաները։ Եթէ դուք մարդ լինէիք, ես ձեզ չէի կործանիլ մինչև այդ աստիճան։ Ցոյց կըտայի ձեր փրկութեան ճանապարհը։ Ա՛խ, Սերգէյ Պախոմովիչ, Սերգէյ Պախոմովիչ, մի՞թէ այժմ էլ խելքի չէք եկել, մի՞թէ այժմ էլ ուզում էք ինձ ծաղրել։ Բայց չէ՞ որ դո՞ւք էք արժանի ծաղրի։ Ո՛չ, ո՛չ, պարոն, ոչ ծաղրի, այլ ցաւակցութեան։ Նայեցէք ձեզ ոտքից մինչև գլուխ, ի՞նչ օրի էք հասել։ Զգո՞ւմ էք, արդեօք, որ կորած էք յաւիտեան։

Կարող էք երևակայել, պարոն. այն մարդը, որ կարելի է ասել, կեանքում չըգիտէր ինչ ասել է արտասուք, յանկարծ արտասուեց, ինչպէս մի ողորմելի կին։ Այստեղ ես նրան խղճացի, բայց միայն մի քանի



րոպէ։ Կարո՞ղ էի մոռանալ հէնց միայն այն օրը, երբ նրա կինը անպատւել էր կնոջս, գլխարկ պատրաստող ֆրանսուհու մօտ, անուանելով նրան… Օ՜օ, ես պատրաստ էին այդ ամբարտաւան քրիստոնեային կօշկիս կրունկով խփել և գցել ցեխի ամենաթանձր տեղը։ Թող նա այնտեղ խեղդուէր, աւելի լաւ վիճակի արժանի չէ՞ր։

«—Շարունակեցէք, Սերգէյ Պախոմովիչ, շարունակեցէ՛ք,—ասացի ես կծու հեգնութեամբ,—արտասուքը մաքրում է մեր հոգին կեղտերից։ Անշուշտ հայր Վլադիմիրը ձեզ ասած կըլինի, որ զղջալը քրիստոնէի պարտաւորութիւններից մէկն է։

Բայց, աւա՜ղ, նա՛ չէր զղջում։

«—Դու ծաղրում ես ինձ, անհաւատ,—գոչեց նա, արտասուքն արագ սրբելով և ոտքի կանգնելով,—ես քեզ ցոյց կըտամ։

Ես հանդարտ ձայնով պատասխանեցի.

«—Ո՛չ, Սերգէյ Պախոմովիչ, ո՛չ, ես այլ ևս ձեզանից երկիւղ չունիմ։ Դուք անզօր էք։ Լսեցէք, դուք այժմ փող չունիք, վարկ չունիք, խելք չո՛ւնիք, իսկ պատւի մասին չըխօսենք։ Դուք ընկած էք, ով քրիստոնեայ, այնպէս, ինչպէս միայն ձեզ նմանները են ընդունակ ընկնելու։ Եւ որովհետև ձեր ուղղափառ քրիստոնեաները ձեզ չեն օգնում, ես կօգնեմ։ Լսեցէք, ես ձեզ կընդունեմ ինձ մօտ դռնապան… Կընշանակեմ ամսական քսանուհինգ րուբլի ռոճիկ, որ ինձ պահպանէք խուլիգաններից։ Ուտելիքդ էլ կըտամ։ Մի՛ վախենաք, ես ձեզ սոխով և ապխտած ձուկով չեմ կերակրիլ։ Այն ես կըշարունակեմ ուտել։ Ես ձեզ կըտամ ձեր բօրշչը, կվասը և սիվուխան…

Հարուածս զօրեղ էր։ Ագրինցևը վայրկենաբար գունատուեց։ Նրա ուռած երեսն աւելի այլանդակուեց։ Երկիւղալի էր նա։ Բռունցքները սեղմելով, յարձակուեց վրաս։ Բայց նոյն վայրկեանին երկու առողջ երիտասարդական ձեռներ բռնեցին նրան ետևից։ Ռաբինովիչն էր, որ ուզում էր դուրս վռնդել այդ կեղտն իմ խանութից։ Ես դարձեալ թոյլ չըտուեցի։

Ներս մտաւ Շմուլ Մօզէրն, և մի վայրկեանում բոլորը հասկացաւ։

Ագրինցևն ուշքի եկաւ, սթափուեց։ Այն ժամանակ կատարուեց ուրիշ տեսարան։ Նա մօտեցաւ ինձ, այս անգամ ընկճուած և խեղճացած։

«—Սամ,—գոչեց նա տարօրինակ ձայնով,—սաս, ինչի՞ց էք ստեղծուած դուք, ջհուդներդ։ Սամ, ինչի՞ց։ Մի՞թէ միևնոյն նիւթից, որից ես և ուրիշները։ Սամ, ի՞նչից են շինուած քո գլուխն ու քո լեզուն, քո աչքերը, քո ձեռները, ոտները։ Ի՞նչու քո լեզուն աւելի լաւ է խօսում, ի՞նչու դու ինձանից աւելի լաւ ես տեսնում, ինձանից լաւ լսում։ Ինչո՞ւ կիսիս չափ չըկաս—տասն իմ չափ եռանդ ունիս։ Ինչո՞ւ դու ոտքով աւելի արագ էիր կատարում գործերդ, քան ես կառքով։ Ինչո՞ւ դու կարողանում էիր առաւօտներն ինձանից աւելի վաղ զարթնել, գիշերները ինձանից ուշ քնել։ Ինչո՞ւ դու գիտէիր գուշակել, թէ մի տարի յետոյ ո՛ր ապրանքն է թանգանալու, որն է էժանանալու։ Ինչո՞ւ դու բոլոր վաճառականների գործերին տեղեակ էիր, իսկ ես իմ հաշիւներին էլ վերահասու չէի։ Սամ, ի՞նչ կայ քո աչքերի մէջ, որ այդպէս լաւ են տեսնում։ Սաս, որ ես



դուրս գջլեմ եղունգներովս։ Սամ, ի՞նչ կայ քո ականջների մէջ, որ այնպէս լաւ են լսում հեռուից։ Սամ, Սյզելման, ինչու դուք հրէաներդ անյաղթելի էք։ Ինչո՞ւ ձեզ ոչ ծեծն է ցաւ պատճառում, ոչ հալածանքը յուսահատեցնում, ոչ անարգանքը ընկճում։ Սամ, պատասխանի՛ր, ես չեմ բարկանում, տեսնո՞ւմ ես, այլ խնդրում եմ…

Տարօրինակ հարցեր են, այնպէս չէ՞։ Ես կամեցայ ինչ-որ ասել, բայց Շմուլ Մօզէրն ինձ առաջեց։

—«Ե՛ս կըպատասխանեմ,—ասաց նա հանդարտ ձայնով և մօտեցաւ Ագրինցևին։—Ասում էք ինչ նիւթից է ստեղծուած հրէան։—Միևնոյն նիւթից, միևնոյն Աստծոյ ձեռքով։ Հող է այդ նիւթը և հող պիտի դառնայ, թէ՛ ձեր Աւետարանով և թէ մեր Թալմուդով։ Բայց դուք, ով քրիստոնեաներ, այնքան հունցել, այրել, ծեծել, կռել էք մեզ, որ դարձել ենք պողպատ։ Հազար իննը հարիւր տարի է դուք հրէայի դարբինն էք, և պէտք է ասած, երևելի վարպետ էք ձեր գործում։ Դուք էք, որ սրել էք հրէայի լեզուն, նրբացրել էք նրա տեսանելիքը և լսելիքը։ Հարցնում էք, ինչո՞ւ ենք մենք ձեզանից աւելի շուտ զարթնում, ձեզանից ուշ քնում։ Ինչո՞ւ։—Որովհետև առաւօտները ձեր կօզակների ձիերի տրոփիւնն է մեզ զարթեցնում, իսկ գիշերները ոստիկանների շւոցներն է խափանում մեր քունը։ Մենք այդ տրոփիւնն ու այդ շւոցները ձեզանից լաւ ենք լսում, որովհետև ձեր լսելիքը դեռ կոպիտ է։ Ոչ. այդ չէ միայն. մենք ստիպուած ենք քիչ քնել, բնաւ չըքնել, որովհետև քնում են միայն տէր ու պահապան ունեցողները.

Իսկ մեր գլխին յաւիտեան կախուած է բռնութեան սուրը։ Մենք վազում ենք — ձեր կառքը մեզ չի հասնում, որովհետև մենք հալածւողներ ենք։ Իսկ հալածւողների ոտները փետուրից են։ Ախ, կար ժամանակ, երբ մենք էլ ձեզ նման գոռոզ էինք և ամբարտաւան։ Անցա՜ւ, կործանուե՜ց ամեն ինչ, ցրւեց մեր բոյնը, դարձեալ ձեր ձեռքով, ով Քրիստոսի աշակերտներ։ Եւ մենք ցրւեցինք աշխարհի բոլոր կողմերը։ Դժոխք է մեզ համար տիեզերքը, և այդ դժոխքի ամենասոսկալի վայրն է մեզ վիճակւել... Ռուսիան։ Ի՞նչ էք ուզում իմանալ, ինչո՞ւ մենք յաջող ենք վաճառականութեան մէջ։ Բարի քրիստոնեայ, ի՞նչ կլինէր մեր դրութիւնը, եթէ այդքանն էլ չունենայինք։ Չէ՞ որ մեր միակ ապաւէնը ճարպկութիւնն է։ Միակ միջոցը գոյութեան։ Ա՞յն էլ ուզում էք խլել։ Խլեցէք, մենք ուրիշը կըգտնենք։ Զարմանում էք, թէ ինչպէս մենք ձեզ այդ օրին հասցրինք։ Շատ պարզ է։ Մենք ուզում էինք ապրել, իսկ դուք արդէն ապրում էիք։ Մենք բախտ էինք որոնում, իսկ դուք արդէն ունէիք այն։ Մենք դժգոհ էինք մեր վիճակից, դուք գոհ — ահա՛ ձեր դժբախտութեան հիմքը։ Ձեր խելքը և եռանդը նիրհում էր ձեր ամբարտաւանութեան մէջ, իսկ մենք արթուն էինք և պիտի կռուէինք։ Այսպիսի հանգամանքներում դժւա՞ր էր ձեզ թաւալել գետին ու խեղդել։ Ոչ։ Եւ մենք թաւալեցինք ու խեղդեցինք ձեզ։ Ի՞նչ էք ուզում այժմ մեզանից։ Ընկերանա՞լ։ Շատ բարի, համեցէք ընկերանանք։ Բայց ամեն մի ընկերութիւն հիմնւում է իրաւունքների հաւասարութեան վրայ։ Տւեցէք ձեր



իրաւունքները մեզ էլ, կամ վերցրէք հազարաւոր շղթաները մեր ձեռներից ու ոտներից, և մենք կարող ենք ընկերանալ։ Վերջապէս, մեր վարք ու բարքերի մէջ կա՛յ ահագին անդունդ, նախ լեցրէք այն — յետոյ։ Դուք, պարոն Ագրինցև, ծնւած էք գոռալու, հայհոյելու, հարբելու, ծեծելու, կոտրատելու և մատնելու համար։ Ախ, ինչ երևելի ոստիկան կլինէիք դուք, եթէ ժամանակին հասկանայիք։ Նայեցէք. ձեր այդ խոշոր բազուկները, կարծես, ստեղծւած են մեզ խեղճերիս բռնելու և բանտ տանելու համար։ Եւ դուք ուզում էիք, որ մենք չըկարողանա՞նք յաղթել ձեզ վաճառականութեան մէջ։ Ի՜նչ կոպիտ մոլորութիւն։ Մեր հայրերը և մեր նախահայրերը, մեր հարիւրաւոր սերունդները առևտուրի մէջ են մաշել իրենց խելքը։ Եւ դուք, որ երէկ էք դուրս եկել արջի մորթուց, ուզում էք մեզ հաւասարւե՞լ։ Հեռացէք, բաւական է։ Հեռացէք, ձեր տեղն այս չէ։ Ահա ձեր տեղը, Օդեսայի նաւահանգիստը։ Այնտեղ է հաւաքւած ձեր պարծանքը... մարդկային կղկղանքը...

Ագրինցևը, այդ անհամբեր և ոչ ոքի հակաճառութեանը չընդդիմացող մարդը, լուռ լսում էր Շմուլ Մօզէրի թունաւոր խօսքերը։ Երբ ընկերս աւարտեց, նա նայեց շուրջը նախանձի և չարութեան սուր հայեացքով։ Ապա մօտեցաւ ինձ մի քանի քայլ և ասաց.

«— Այդ շան ձագին ես չեմ պատասխանիլ։ Իմ հաշիւը քեզ հետ է։ Ահա ինչ կասեմ քեզ, Այզելման. տեսնո՞ւմ ես այս դանակը։ Սա քեզ համար է...

Նա գրպանից հանեց մի մեծ դանակ, ցոյց տուեց և նորից դրեց գրպանը։ Աստուա՜ծ իմ, այս

վայրկեանիս էլ աչքերիս առջև փայլում է նրա դեղնագոյն կոթը։

—Անցան ամիսներ։ Այդ միջոցներին հրէաների դրութիւնը սոսկալի էր։ Ինչ-որ անյայտ չար ոգիներ գործում էին եռանդով։ Պատրաստւում էր այն դժոխային անցքը, որի մասին գիտէք, պարոն, և որը յետոյ պիտի կրկնուէր աւելի զօրեղ կերպով։

Մենք յիմար չէինք, գուշակում էինք։ Երբեմն ժողովներ էինք անում, խորհրդակցում, բայց ինչ կարող էինք անել։ Մեր թշնամին պարզ էր ով է․ նա զօրեղ էր, իսկ մենք—տկար։ Պէտք է դիմէինք իր իսկ օգնութեան, և մեր դրութիւնն այս անգամ յիշեցնում էր առասպելական մկներին։

Նահանգապետը մերոնցից մի քանիսին ասել էր․

«—Հրէաները երազումն էլ վտանգ են տեսնում։ Բայց ոչ մի երկրում այնքան նրանք բախտաւոր ու ապահով չեն, որքան Ռուսաստանում։ Նրանք իրանք են ուրիշներին հալածում ու ճնշում։ Նրանք խռովարարներ են։

Եւ այն և այլն—պատմական խօսքեր, որ վաղը, միւս օրը բեմերից պիտի արտասանւի իբրև ծաղր և ամօթ։

Մի երեկոյ խանութիս առջև նկատեցի Ագրինցևին։ Մի խումբ կասկածելի մարդկանցով շրջապատուած՝ նա ինչ-որ խորհրդակցութիւն ունէր նրանց հետ։ Երբէք քաղաքի կենտրոնական փողոցներում այդպիսի դէմքեր չէի տեսել։ Դա մարդկութեան այն տականքն էր, որ թափառում է մթին խորշերում, կեղտոտ անկիւններում։



Ես մօտեցայ դռներին և պարզ լսեցի այս խօսքերը․

«—Այս ամենահարուստ մագազիններից մէկն է մեր քաղաքում։ Մի ահագին սնդուկ կայ ոսկով լի։ Բոլորը ձերը կլինի։ Բայց տիրոջը ձեռք չտաք․ նա իմն է…

Աչքերս մթնեցին, ոտներս դողացին։ Եթէ Ագրինցևը նկատէր իմ սարսափը, պիտի խնդար չարութեամբ։ Ես հեռացայ խանութիս խորքը և յայտնեցի բոլորը Շմուլ Մօզէրին։ Խորհուրդ կազմեցինք գործակատարների հետ։ Ես այն կարծիքի էի, որ պէտք է մեր կանանց ու երեխաներին հեռացնենք Օդեսայից, իսկ ինքներս մնանք մեր կայքը պաշտպանելու։ Այսպէս էլ արինք։ Ես իմ ընտանիքին ուղարկեցի Քիշինեօվ կնոջս ծնողների մօտ, իսկ Շմուլ Մօզէրն իր մօրը—Բենդէր։ Նա շատ էլ չէր հաւատում յամառ լուրերին և ոչ էլ այդ պարզ սպառնալիքներին։ Արդէն հրէաները շատ են հալածուել, աւելի տանջել նրանց չի կարելի։ Խեղճ մարդ, չըգիտէր, որ այլ էր մեր կարծիքը, այլ էր որոշումներ արձակողների տրամադրութիւնը…

Պարոն, ես ձեզ չեմ ձանձրացնիլ, պատմելով այդ աղէտալի օրերի անցքը։ Դուք բաւական տեղեակ էք, թէև շատ բան չըգիտէք։

Եկան այդ օրերը հէնց այն ժամանակ, երբ մեր գործերը ամենափառաւոր դրութեան մէջ էին։ Երկնային ահեղ դատաւոր, Մովսիսի, Ահարոնի Աստուած, կըգայ, արդեօք, մի օր, որ դու պատժես մեր դահիճներին։ Ոչ այնպէս, ինչպէս այժմ օտարների ձեռքով,

երկրից դուրս, այլ հէնց այստեղ, իրանց հողի վրայ, իրանց արիւնակիցների ձեռքով: Պարոն, քրիստոնեայ պարոն, ես հաւատում եմ Նախախնամութեանը և համոզուած եմ, որ այդ օրը հեռու չէ... Նա արդէն մօտենում է անհուելի կերպարանքով:

Արշաւանքն սկսեց ուրիշ փողոցներից և միայն երկրորդ օրը հասաւ մեզ: Այն միջոցին, երբ մեր հարեան հրէաների խանութները կողոպտում էին, երբ տներից դուրս ձգւող մանկական անկողինների բուրդըն ու փետուրը քամու բերանումն էին, կանանց և երեխաների աղաղակներն ու հեծկլտանքը լցրել էին օդը—մենք փակուած էինք մեր խանութում: Ես էի, Շմուլ Մօզէրն ու Ռաբինօվիչը. տասնուչորս գործակատարներից միայն նա էր մնացել, այդ ազնիւ երիտասարդը: Բոլորը գնացել էին պաշտպանելու իրանց մերձաւորներին: Ռաբինօվիչ, ինչպէս կարող եմ սառնարիւն յիշել քեզ, անվեհեր տղայ, որ այնպէս զոհւեցիր ինձ...

Եւ մենք երեքս պիտի պաշտպանէինք հազարաւոր խուժանի դէմ հարիւր քսան հազարի ապրանք—քսանուհինգ տարուայ դառն աշխատանքիս արդիւնքը:

Շմուլ Մօզէրն ասաց.

«—Այզելման, թողնենք ամեն ինչ ճակատագրի կամքին: Ես կեանքս գերադասում եմ կայքից:

«—Իսկ իմ կեանքը—կայքիս մէջ է,—ասացի ես:

Ռաբինօվիչը բոլորովին ուրիշ կարծիք ունէր: Նա ասում էր, որ ամեն մի հրէայ պիտի սովորի զէնքով պաշտպանել իր կեանքն և ինչքը:

Ահա մօտեցան խուպոտ, բղաւող ձայները: Լսւեց



պարիզից ոչ թէ նա ինձ, այլ ես նրան կարող եմ քշել: Օ՜, պարոն, ինչու՞ կեղծել, այսպէս է հրէան: Նա վաճառականութեան մէջ երբեմն Դաւիթ է, որ կռւում է Գողիաթի հետ. թէև միշտ էլ յաղթող չի լինում, բայց կռւում է: Դա նրա ախտն է պապերից ժառանգած: Ինչ և է: Ես ունէի սրա ու նրա ձեռքում տոկոսով տուած մի փոքրիկ գումար, որ խնայել էի ասեղիս ծայրով: Շատ քիչ էր: Բայց ունէի և՛ մի բարեկամ Շմուլ Մօզէր անունով: Նա այժմ էլ կայ, փառք Աստծու, մահից ազատւեց: Ճարպիկ մարդ է այդ Մօզերը, խելքը գլխին... Այն ժամանակ նա մի հասարակ միջնորդ էր...

—Սրա ու նրա համար ցորեն էր առնում ու ծախում,—լրացրեց Ֆէյլդմանը,—լեզու ունի, որ ածելու նման է կտրում: Հայրն էլ այնպէս էր:

—Կաց, Ֆէյլդման, ես բոլորը կասեմ,—շարունակեց հարևանս:—Ահա՛, պարոն, միտքս յայտնեցի Շմուլ Մօզերին: Ի հարկէ, իսկոյն հասկացաւ և ոգևորւեց: Մենք վճռեցինք մրցել Ագրինցևի հետ: Շմուլ Մօզերն իր ունեցած երեք հազար ռուբլին միացրեց իմ փոքրիկ դրամագլխին և ինքն իսկոյն ուղևորւեց Սիբիր: Ես լուր տարածեցի, թէ վճռել եմ խանութս քանդել, մեծացնել: Եւ, իրաւ, այս մասին բանակցում էի տանտիրոջ հետ: Հարևանս ինձ հրամայեց «խելօք կենալ»: Ես կատակով ասացի. «Ձերդ մեծապատւութիւն, միշտ խելօք լինելը ձանձրալի է, ուզում եմ մի քիչ գժւել»: Մի օր, տեսնելով, որ խանութիս ցուցանակը վերցրել եմ, պատւէրներ չեմ ընդունում և լուսամուտները փոխել եմ տալիս, դարձաւ ինձ.

«—Այգելման։

«—Հրամայեցէք, Սերգէյ Պախոմովիչ։

«—Դու ինձ հետ կատակ մի անիր։

«—Ի՞նչպէս կյանդգնեմ, ձերդ մեծապատուութիւն։

«—Ասում եմ, կատակ մի անիր, ես գիժ մարդ եմ։

«—Ի՞նչ էք ուզում,-հարցրի ես, տեսնելով որ այլեւս շարժել եմ իմ գոռոզ հարեւանի հետաքրքրութիւնը։

«—Ուզում եմ որ դու այստեղից կորչես, քանի որ դեռ գլուխդ չեմ ջարդել։

«—Ո՞ւր կըհրամայէք կորչել, ձերդ վաճառականական գերազանցութիւն։

«—Ուր ուզում ես, թէկուզ Երուսաղէմ։ Ես արդէն զզւել եմ քո հոտից։

«—Անցագիրս տուէք, գնամ։

«—Ո՞րքան արժէ։

«—Հազար երկու հարիւր։

«—Ա՛խ, դու, սատանայի ռեխ եբրայեցի։

«—Այդ միայն տուգանքն է։

«—Է՞լ ինչ ես ուզում։

«—Մի՞թէ չըգիտէք, ձերդ մեծապատուութիւն — խանութիս վերանորոգման ծախքը։ Ուղիղ ինը հարիւր րուբլի էլ այն է։

«—Ես քո դունչը կըջախջախեմ, անիծեալ Յուդա Իսկարիովտացի,—բռնկեց Ազրինցևը։

«—Ջախջախեցէք, Սերգէյ Պախոմովիչ, բայց ամէն մի դունչ որքան էլ ատելի լինի, ուտել է ուզում։

Նա մի քանի օր գոռգոռաց, հայհոյեց պապերիս,



նախահայրերիս, կրօնս, հաւատս, բայց համաձայնեց վճարել թէ տուգանքը և թէ ծախսերս։ Ինձ էլ միայն այդ էր հարկաւոր։ Խանութս դատարկեցի, բայց ես իմ գործն արդէն տեսել էի. դիմացի տանը, ուղիղ Ազրինցևի դէմ ու դէմ վարձել էի չորս աչք։

Գործը շատ բարդ չէր, որ մեծ դժուարութիւն քաշէի։ Ապրանք շուտով ստացայ Վարշաւայից։ Իսկ ընկերս հրաշքներ էր գործում Սիբիրում։ Մի տարի անցած նա գրաւեց մի քանի խոշոր առևտրական տներ և ձեռք բերեց մեծ վարկ։ Դա մի զարմանալի աջողութիւն էր. ունենալով ընդամէնը եօթ հազար րուբլի դրամագլուխ, վայելում էինք յիսուն հազարի վարկ։ Բայց յաջողութիւնը մեզ չըմոլորեցրեց. վճռեցինք արթուն լինել և գործն ընդարձակել պահանջի համեմատ։ Բախտը ժպտում էր մեզ, մենք շատ շուտով անցանք քաղաքի յայտնի վաճառականների շարքը։ Ա՜խ, երջանիկ օրեր, որ այնքան թանգ արժեցաք ինձ ապագայում...

Հրէան տխուր հառաչեց և ձեռով դըստեց իր լայն ճակատը։

Կառախումբը կանգ էր առել։ Մի քանի ճանապորդներ դուրս եկան. նրանց փոխարինեցին նորերը։ Եկան, ի միջի այլոց, նաև երկու նիհար և խիստ միմեանց նման երիտասարդներ լայն վերարկուներով և փոքրիկ գլխարկներով։ Դէս անցան, դէն անցան և վերջը կանգնեցին անցքում ու սկսեցին զննել ուղեւորներին։

Ֆէլդմանը կապկի արագութեամբ մօտեցաւ մեզ և շշնջաց.

—Գրպանահատներ են, որսի են եկել:

Վերջապէս, աղմուկը հանդարտեց. հարևանս շարունակեց:

—Ագրինցևը սկզբում մեզ վերաբերւում էր արհամարհանքով: «Տես, այդ քոսոտ երուսաղէմցիները ուզում են մրցել Ագրինցևի հետ: Չըգիտեն, որ կարող եմ կօշկիս քթով նրանց կոյանոց շպրտել»:

Ճիշտ այս խօսքերն էր նա ասել իմ բարեկամներից մէկին: Եւ ուշադրութիւն չէր դարձնում մեզ վրայ, մինչև անգամ մեր խանութի կողմը չէր նայում: Իսկ ես, ընդհակառակը, առաջւայ պէս խոնարհ էի ու համեստ: Գլուխ էի տալիս Ագրինցևին ամեն անգամ պատահելիս այնպէս, ինչպէս մենք հրէաներս միայն սովոր ենք գլուխ տալ: Յիշում էի հանգուցեալ հօրս խօսքերը. «Տես, չըլինի թէ կեանքումդ շահես որևէ քրիստոնէի թշնամութիւն: Միշտ խոնարհւիր, միշտ գետնին նայիր, այդ քեզ չի ստորացնիլ, բայց կըպաշտպանէ փորձանքներից:»

Եւ խոնարհւում էի: Միևնոյն ժամանակ, աշխատում էի ամենայն եռանդով: Այժմ հասարակ դերձակի գլուխը ներկայացնում էր խոշոր հաշիւների և պէս պէս ծրագրների շտեմարան: Շմուլ Մօզերն ինձանից աւելի յանդուգն էր. միշտ դրդում էր լայնացնել ու լայնացնել գործը: Ապրուստիս մէջ շատ քիչ փոփոխութիւն էի մտցրել: Հագնւում էի առաջւայ պէս համեստ, բայց այլևս ինքս չէի կարում ինձ համար. ժամանակն աւելի թանգ արժէր: Ընտանիքս այժմ կենում էր երկուսի փոխարէն չորս սենեակում: Չէի խմում, չէի շռայլում, կանանց վրայ



աչք չունէի: Բայց զաւակներիս ուսման համար ոչինչ չէի խնայում: Այժմ մեծ որդիս համալսարանումն է:

Սկսեցի, հակառակ հարևանիս սովորութեան, ապառիկ ապրանք բաց թողնել: Բայց, ի հարկէ, գիտէի ում: Դրա համար ունէի առանձին ցուցակ, որից դուրս ամենքին մերժում էի: Դա եղաւ մրցման առաջին միջոցը Ագրինցևի դէմ: Ինքս ոտքի վրայ մնալու համար, պատրաստ էի նրան գլորել գետին: Երկուսս միասին միևնոյն շրջանում, միևնոյն փողոցում միևնոյն առուտուրը չէինք կարող վարել:

Կար և մի ուրիշ միջոց—քաղաքավարութիւն գնողների հետ: Վա՜յ այն վաճառականին, որ չըգիտէ ժամանակին ժպտալ, ժամանակին տխրել, ժամանակին ձևանալ բթամիտ, նայելով իր գնողի տրամադրութեանը: Եթէ գնողդ ցորենի առևտրական է, ասա՛, որ Մովսիսի ստացած պատգամների մէջ այդ առուտուրն էլ կայ. եթէ պետական պաշտօնեայ է, առանց նրան երկրագունդը կըդադարի պտտել արեգակի շուրջը. եթէ ոստիկանապետ է, թող կորչեն բոլոր յեղափոխականները, որ կործանեցին առուտուրը. իսկ եթէ զինւորական է, թող տարտարոսը գլորւի նենգամիտ Անգլիան, որ միշտ դաւեր է լարում «մեր հայրենիքի» դէմ, և այլն և այլն: Եւ ես այսպէս էի անում:

Միւս կողմից, ոչ մի կոպտութիւն ինձ չէր շփոթեցնում կամ վիրաւորում: Տեսնում ես, որ գնողը, հետդ խօսելիս, երեսիդ էլ չի նայում, խօսում է եզակի դէմքով, ինչպէս սպասաւորի հետ: Գրոշը

տանի, ով գիտէ, ինչ-որ նախկին սպայ է կամ պաշտօնաթող և գողութեան մէջ բռնուած ինտենդանտ, կամ սրա պէս մի խրտուիլակ։ Գոհութիւն Աստծու, այսպիսիների թիւը մեծ է սքանչելի Ռուսիայում։ Ես մտածում էի՝ թող գոռգոռայ, փքուի, մի օր կըտրաքուի։ Ես կըշոյեմ առայժմ նրան, միայն թէ ինձանից մի բան գնէ։ Եւ «ձերդ պայծառափայլութիւն, ձերդ գերազանցութիւն, ազնուութիւն» և այլն, ինձ համար այնքան սովորական էին, որքան ռուս զինուորի բերանում «լսում եմ»։ Սակայն չընայելով այս բոլորին, երբեմն լսում էի այնպիսի վիրաւորիչ խօսքեր, որոնք արիւնս էին բորբոքում։ Օ՜, քանի քանի անգամ են երեսիս շպրտել—«անհաւատ, հեթանոս, կապիկի դունչ, քոսոտ շուն» և այլն և այլն։ Այզելման, կուլ տուր մանկութիւնից սկսած մինչև գերեզման, որովհետև կուլ է տուել քո հայրն էլ, քո պապն էլ, քո ամբողջ ցեղը, դարէր շարունակ։

—Ա՜խ, քրիստոնեայ պարոն,—գոչեց նա, յանկարծ բորբոքուելով և տեղից վեր թռչելով,—երկու հազար տարի է մեզ հայհոյում էք և անարգում, ի՞նչ էք առաջացրել, ասացէք։ Եւ ո՞վքեր են անարգում, Աբրահամի և Մովսիսի Աստուա՜ծ, բոլոր աստուածներից վեհը։ Մարդկութեան տականքը—կաշառակեր պաշտօնեաները, գող գանձապետները, լրտեսները, արբշիռները, որդերը, աղբակոյտի ճանճերը, կոյանոցի սողունները։ Արարածնե՛ր, որոնցից գեհենը պիտի գարշի և Կայէնը զազրի։ Մարդասէր Եհովա, գոռգոռում են իրենց խաչով, չեն ուզում հասկանալ, որ այդ խաչը մենք ենք կառուցել։ Հալածում



են մեզ մի Մարդասէրի անունով, և չեն ուզում հասկանալ, որ Նա ինքն արեան գնով կռուել է հալածանքի դէմ։ Ես հարցնում եմ. ո՞ւր էին այդ քրիստոնեաները, երբ մենք պաշտում էինք իսկական Աստծուն, երբ դաւանում էինք կրօններից բարձրագոյնը, երբ ունէինք իմաստուններ և մարգարէներ։ Օ՜հ, նրանք թափառում էին ահա՛ հէնց այդ անտառներում արջի մորթ հագած, անբան, ինչպէս վայրենի անասուններ։ Իսկ մենք մարդ էինք։ Մենք այժմ էլ մարդ ենք։ Գլուխներ ենք տուել աշխարհին, որոնց միշտ պիտի երկրպագութիւն տալ, ով գոռոզներ և ամբարտաւաններ։ Ահա՛ հէնց այժմ, սկսել է մի մեծ շարժում, որ պիտի տակնուվրայ անի մարդկութեան կեանքը։ Ա՛յ, դուք կարծում էք, որ մենք վաճառականներ լինելով՝ իսկի բան չենք հասկանում սօցիալիզմից։ Ո՞վ է նրա առաջին մարգարէն։ Դարձեալ մի հրէայ։ Իսկ սիօնիզմը։ Ա՛յ, այժմ այլևս չէ՞ք ծաղրում, ով քրիստոնեաներ։ Սպասեցէք ամբարտաւաններ, եթէ հին Երուսաղէմը չըգրաւենք, նորը կըկառուցանենք...

—Մի միլիարդ չորս հարիւր միլիօն դրամագլուխ ունէինք Ամերիկայում և Անգլիայում,—մէջ մտաւ Ֆէյլդմանը,—թող այժմ էլ ասեն, թէ հրէան գձուձ է, հի՜ հի՜ հի՜։ Մենք կըստիպենք ձեզ յարգել մեզ, կըստիպենք, հի՜ հի՜ հի՜...

—Կաց, Ֆէյլդման,—փոխեց եղանակը Այզելմանը,—ես բոլորն ասացի։ Ա՛հ, ներեցէք, պարոն, սիրտս լիքն էր։ Գիտեմ, դուք այն քրիստոնեաներից չէք, որոնց հետ խօսելն երկիւղալի է։ Այնպէս չէ՞,

Ցեյլդման, հայերը մեր բարեկամներն են, մենք պատմական եղբայրներ ենք։ Ագրինցև, — գոչեց նա, նորից տաքանալով,—յիշում եմ այսօրւայ պէս այն վիրաւորանքը, որ դու ինձ հասցրիր։ Պարոն, լսո՞ւմ էք Ուռուսով իշխանների մասին։ Նշանաւոր մարդիկ են։ Մի օր նրանցից մէկին ծախեցի մի օձիք և մի զոյգ թևեր հազար երկու հարիւր րուբլով։ Նա Ագրինցևի կթան կովն էր, իմ ձեռքն ընկաւ, որովհետև Ագրինցևը չէր կարողացել լաւ շոյել նորին իշխանութեան սիրտը։ Բայց, ո՛հ, այդ հազա՛ր երկու հարիւր րուբլին ինձ որքա՜ն տանջանքներ տւեց։ Պատմեմ, տեսէք։ Հէնց նոյն օրերը ես ընտրւել էի տեղական ժողովարանի անդամ։ Երեկոյ էր. ես կնոջս և մի երկու ծանօթներիս հետ ընթրում էի սեղանատանը։ Մեզանից ոչ հեռու, մի ուրիշ սեղանի մօտ, նստած էր Ագրինցևն իր ծանօթների հետ։ Նա հարբած էր և բարձր ձայնով պարսաւում էր հրէաներին. այսպէս են, այնպէս են։ Սովորական զրպարտութիւններ։ Մեր սեղանի մօտ կար մի տաքարիւն փաստաբան։ Չըհամբերեց մարդը, բողոքեց։ Եւ նրա ու Ագրինցևի մէջ վէճ բացւեց։

«—Քեզ ո՞վ է խօսեցնում, որ մէջ ես ընկնում— գոռաց Ագրինցևը։

«— Դուք, պարոն,—ասաց սեղանակիցս,—ի՞նչ իրաւունքով էք զրպարտում մեզ։

«—Լռի՛ր, քոսոտ ջհուդ, լռի՛ր։

Մենք վրդովւեցինք։ Ագրինցևը դարձաւ ինձ.

«—Ա՛ն, Այզելման, դու էլ այստե՞ղ ես։ Ժողովարանի անդամ ես ընտրւել։ Շնորհաւորում եմ։ Բայց



հեռո՛ւ, հեռո՛ւ նստիր մեզանից, հոտ է փչում։

«—Հետաքրքրական է իմանալ,—աւելացրեց Ագրինցևի ընկերներից մէկը, որ նոյնպէս հարբած էր, —հրէուհիները երբևէ մաքրո՞ւմ են իրանց եղունգները։

Կինս գունատւեց։ Նա կուշաթափւէր, եթէ ես նրան ժամանակին չտանէի դահլիճ։ Երբ մենակ վերադարձայ սեղանատուն, տեսայ, որ վէճը սուր կերպարանք է ստացել։ Ագրինցևը ոտքի էր կանգնել շիշը ձեռին և սպառնում էր յարձակւել սեղանակիցներիս վրայ։ Ես միջամտեցի։ Եւ ահա այդ միջոցին, պարոն Ագրինցևն ինձ ապտակեց։ Օ՜, այսօր էլ երեսս այրւում է այդ հրապարակական վիրաւորանքից։ Լսո՞ւմ էք, պարոն, նա ապտակեց ինձ հարիւր մարդկանց և մի այդչափ էլ կանանց ներկայութեամբ։

—Եւ դուք չըպատասխանեցի՞ք,—հարցրի ես հարևանիս։

—Ա՛խ, պարոն, ի՞նչպէս պատասխանէի,—գոչեց նա, դարձեալ ոտքի ելնելով,—եթէ շունը կծում է, մի՞թէ այդ նշանակում է, որ մարդն էլ պիտի կծի։ Ես, ի հարկէ, բողոքեցի հասարակութեանը, դիմեցի դատաստանին։ Փաստաբանը լրագրներում տպեց նամակ։ Եւ վերջ ի վերջոյ ես ինքս ստիպւեցի վերջ տալ վէճին, վախենալով հետևանքներից։

Հրէան մի քանի վայրկեան լռեց իր յուզմունքը զսպելու համար. ապա շարունակեց.

—Ագրինցևը քանի գնում, այնքան աւելի կատաղում էր։ Արդէն ես քշում էի նրան ասպարիզից։ Օ՜, Շմուլ Մօզեր, Շմուլ Մօզեր, դու այժմ մանուկ

ես, անցեալ Պասկէքին կոպէկ չունէիր, որ մօրդ համար «մացա» գնէիր։ Բայց համոզուած եմ, մի օր դու կըդառնաս Մորգան կամ Շւաբ և ամբողջ հարաւային Ռուսիայի առևտուրը ձեռքումդ կունենաս։ Օ՜, Շմուլ Մօզեր, Շմուլ Մօզեր, դու վաճառականութեան Սողոմոնն ես։ Դու էիր, որ շարունակ յորդորում էիր ինձ ընդարձակել մեր գործերը։ «Տես, ասում էիր, ես այդ անիծեալ քրիստոնեային պիտի մերկացնեմ և փողոցները ձգեմ։ Նա անարգում է իմ ազգը, ընտանիքը, հաւատը, իմ բոլոր սրբութիւնները։ Ես նրան պիտի կործանեմ»։

Եւ կործանում էինք, պարոն, կործանում էինք այդ Սերգէյ Պախոմովիչ Ագրինցևին։ Օ՜, այնպէս արագ, որ ես ինքս էլ զարմանում էի։ Նա ատամները կրճտում էր և երկար փառահեղ միրուքը փետտում։ Մենք նրան հարկադրել էինք արդէն ապրանքը ապառիկ բաց թողնել։ Բայց ամեն մարդու բանը չէ, պարոն, ապառիկ ծախելը։ Ողորմելին չըգիտէր, որ շատ անգամ գոռոզ արտաքինի և շքեղ հագուստի տակ թագնուած է ինքը չքաւորութիւնը։ Եւ տալիս էր այդպիսիներին ու կորցնում էր անիրաւը...

Այնուհետև մենք նրան ստիպեցինք ապրանքի գինը իջեցնել 20 տոկոս։ Այս էլ մի մեծ հարուած էր նրա համար, որովհետև մենք գիտէինք ապրանքն աւելի էժան գնել և աւելի էժան տեղափոխել։ Մի խօսքով, առաջին անգամ նա կորցրեց տասնուհինգ հազար և այնուհետև սկսեց խելքն էլ կորցնել։ Իսկ ծախսերը չէր պակսեցնում։ Եւ ինչպէս էր ծախսում, Աստուած իմ։ Սեպհական կառք ունէր, Մոսկուայից



բերել տուած, որ սև մարմարիոնի պէս էր փայլում արեգակի տակ։ Նժոյգներ ունէր, որոնցից ամեն մէկըն արժէր հազար հինգ հարիւր րուբլի։ Եւ խմում էր․ սիրում էր ուրիշներին էլ հրաւիրել։ Մի երեկոյ կլուբում երաժիշտներին և ծառաներին հարբեցրեց կոնեակով։ Իսկ կինը, Տէր Աստուած, կինը, մի սաժէն բարձրութիւն ունէր, մի արշին լայնութիւն, փոքրիկ նեղ աչքերով, կատարեալ մօնգօլուհի։ Շատ էր սիրում մեծամեծներին։ Ամիսը մի կամ երկու անգամ երեկոյթներ էր սարքում։ Ինքը նահանգապետի կինը չէր մերժում նրա հրաւէրը։ Դէ, ի հարկէ, այդպիսի մի բարձրաստիճան հիւրին խօմ չէր կարելի տապակած ձկով կամ երշիկով հիւրասիրել։ Շմուլ Մօզերը, ձեռները միմեանց քսելով, հրճւանքով կրկնում էր․

«—Բարեկամդ անդունդն է գլորւում...

Եւ գլորւում էր։

Նոյն ժամանակներն ես օր ու գիշեր հանգիստ չունէի։ Որքան յաջող են գնում հրէայի գործերը, այնքան նա քիչ է քնում։ Զարթնում էի, պարոն, վեց ժամին, եօթին արդէն մագազինումս էի։ Կողպում էինք տասներկու ժամին։ Իսկ Ագրինցևը փաշա էր․ գալիս էր մագազին տասնումէկից ոչ առաջ և երեկոյեան ութ ժամին արդէն թղթախաղի սեղանի մօտ էր։ Սիրուհիներ պահելը վաղուց գիտէինք։ Դեռ մի փոքրիկ սկանդալ էլ պատահեց, որը ծածկելու համար նա կաշառեց ոստիկանապետին։ Գործակատարների հաշիւները չէր քննում։ Եւ գողանում էին անիրաւները։

—Ես գնում եմ, Այզելման,—ընդհատեց հարևանիս խոսքը Ֆեյլգմանը, երբ կառախումբը կանգ առավ։

Ծերուկը բեռնաւորվեց իր բազմաթիվ կապոցներով և մեզ գլուխ տալով չքացավ։

—Այժմ,—շարունակեց հարևանս,—ես մոտենում եմ պատմության կորիզին։ Լավ լսեցեք, պարոն, տեսեք ձեր քրիստոնեաներն ինչպես են վրեժ առնում մեզնից։ Ագրինցեն այժմ հարբում էր շուտշուտ։ Ոչինչ, այդ սովորական բան է Ռուսիայում, չէ՞ որ նա տարենը մի քանի անգամ Մոսկվա էր գնում։ Լսում էի նրա գոռոցները գործակատարների վրայ։ Եվ ինչ խոսքեր, Աստված իմ։ Երբեմն մինչև անգամ ծեծում էր խեղճերին։ Բայց պետք է խոստովանել, յետոյ փող էր բաշխում նրանց։

Մի օր ճաշից յետոյ, Ագրինցևը յանկարծ մտավ մեր խանութը։ Առաջին անգամն էր պատիվ անում մեզ։ Նկատեցի իսկոյն, որ բարեկամս բավական թրջված է և մի քիչ օրօրվում է։ Գործակատարներիս աչքով նշան արի գդոյշ մնալ։ Իսկ Շմուլ Մօզերին խնդրեցի բնավ չխօսել։ Տատ թունավոր լեզու ունի անպիտանը։ Բարեբախտաբար, օրվայ այն միջոցն էր, երբ գնորդներ չեն լինում։

Ագրինցևը, ներս մտնելով, կանգ առավ դռների մօտ, ձեռները դրեց պանթալոնի գրպանները, հաստ փորը դուրս ցցեց և արտասանեց.

«—Զալինկին Զուխոմում։

Իբր թէ ծաղրում էր մեր աղավաղված եբրայերէնը, որով երբէք չէինք պարծենում։ Ես պատասխանեցի.



«—Милостиво просимъ!

«—Այզելման, ուզում եմ խողաբունդ տեսնել։

«—Համեցէք,—ասացի ես քաղաքավարի,—բնավ չըվշտանալով նրա վիրավորական խօսքից։ —Շնորհ արէք ներս գալու։

«—Օ՛օ, էլէքտրական լոյս։ Ո՞ր ժամանակից։

«—Արդէն մի քանի ամիս է։

«—Այդ ի՞նչ իրավունքով։

«—Ինչպէս թէ ինչ իրավունքով, Սերգէյ Պախոմօվիչ։

«—Հարցնում եմ, ո՞վ է քեզ իրավունք տվել։

«—Փողը և իմ ցանկությունը, պատասխանեցի ես։

Ագրինցևը ծիծաղեց։

«—Այո, ուրեմն դու փող էլ ունիս, ցանկություն էլ։ Իսկ ես կարծում էի, որ միայն գողացած ապրանք ունիս։

«—Ի՞նչպէս թէ գողացած ապրանք,—գոչեցի ես,—իմ խանութում այդպիսի բան չըկայ։

«—Ուրեմն ո՞րտեղ ես թաքցնում իմ ապրանքը, այո. դո՞ւ չես սովորեցնում գործակատարներիս, որ մաշկերս գողանան և քեզ ծախեն, այո։

Այդ մի այնպիսի անամօթ զրպարտութիւն էր, որին չէի կարող դիմանալ։ Ուստի տաքացայ և Ագրինցևին անվանեցի ստախօս։

«—Այո, Իսրայէլի շուն,—գոռաց նա այնպէս, որ հարևաններս հաւաքւեցին,—այո, սատկած կատու,

խողի փորոտիք, ես քո ատամները կըջարդեմ, տո՛ւր ապրանքս, տո՛ւր, ասում եմ։

Հարևաններս միջամտեցին և աշխատեցին խաղաղացնել նրա զայրոյթը։ Ամենքը հաւատացրին նրան, որ «Այգելման և Մոզեր» առևտրական տունն երբեք չի ստորացնիլ իրան գողացած ապրանք գնելու չափ։

Ագրինցևը սթափւեց մի փոքր։ Ես լուռ էի, որովհետև նահանգապետը նրա կողմն էր, իսկ ես մի հրէայ։ Սկսւեց մի ուրիշ տեսարան։ Ագրինցևը կամեցաւ ծխել և լուցկի պահանջեց։

Ես ունէի մի գործակատար։ Վիտալի Ռաբինովիչ էր անունը։ Ոսկի էր այդ երիտասարդը, մագազինիս հոգին, աջ թևս։ Խելօք էր նա, պարոն, ընդունակ, եռանդուն։ Միշտ կարդում էր ընտիր գրքեր։ Խեղճ մօր միակ զաւակն էր։ Ա՛խ, ես նրան սիրում էի հարազատ որդուս չափ։ Կորա՛ւ թշուառը, իր անձը զոհեց ինձ, անպիտանիս։ Ա՛խ, ներեցէք, ես չեմ կարող նրան յիշել առանց արտասուքի։

Հրէայի խոշոր աչքերից դուրս ցայտեցին երկու կաթիլ և գլորւեցին այտերի վրայ։ Նա ոտքի կանգնեց՝ իր խորին յուզմունքը զսպելու համար։

Անցան մի քանի լուռ և ծանր րոպէներ։ Հրէան սրբեց աչքերը, զսպեց իրան և նորից նստեց։

—Ներեցէք ասաց նա,—ես շատ էլ թոյլ մարդ չեմ, բայց այս մէկ կորուստը ինձ համար ծանր էր։ Ռաբինովիչը չունէր հալածանքներ քաշած հրէայի փորձառութիւնը և սառնութիւնը։ Նա դեռ չէր գրկւել ինքնասիրութեան կրքից, ինչպէս մեզանից շատերը։ Հպարտ էր, սիրում էր իր ցեղակիցների ոտնատակ



եղող պատիւը։ Դժբախտաբար հէնց նա առաջ եկաւ և լուցկի տւեց։ Վառելով իր թանկագին սիգարը, Ագրինցևը նայեց ոտից մինչև գլուխ Ռաբինովիչին արհամարհական հայեացքով և ասաց.

«—Դու է՛լ ջհուդ ես։

«—Ոչ, պարոն, —պատասխանեց Ռաբինովիչը, գլուխը հպարտ բարձրացնելով—ես հրէայ եմ։

«—Այդ միևնոյն աղբն է։

«—Ներեցէք, պարոն, միևնոյնը չէ։ Ջհուդներ կան բոլոր ազգերի մէջ, իսկ մենք հրէաներ ենք։ Վերջապէս, բաւական է, պարոն, հեռացէք, ես իմ տիրոջ պէս չեմ կարող տանել ձեր վիրաւորանքները։

—Ա՜, ի՞նչ,—գոռաց նորից Ագրինցևը.—չէ՞ս կարող տանել։ Աա, ուրեմն դու յեղափոխակա՞ն ես։ Սև դո՛ւ գարշելի, հոտած։

«—Պարոն,—չըկարողացաւ իրան զսպել Ռաբինովիչը,—գարշելին դուք էք և անարգ հոտը ձեր բերանից է գալիս։ Փորձեցէք շարունակել ձեր հայհոյանքը, և ես ցոյց կըտամ ձեզ...

Այս ասելով, Ռաբինովիչը ձեռը տարաւ գրպանը։ Շմուլ Մոզերը բռնեց նրա թևից և տարաւ մագազինի խորքը։ Ես կարծում էի, որ Ագրինցևը կըյարձակւի նրա վրայ և տեղն ու տեղը կըխեղդի նրան։ Բայց այդ չըպատահեց։ Յետոյ միայն իմացայ, որ այդ մարդկանց խրոխտութիւնը իրանց քաջութեանը չի համապատասխանում։ Նրանք քաջ են միայն խեղճերի համար։ Ռաբինովիչի ատրճանակը սանձահարեց նրա լրբութիւնը։ Այնուամենայնիւ, վերջին խօսքը նա ասաց, դառնալով ինձ.

«—Ես, ինչպէս իմ տէրութեան հաւատարիմ հպատակ և ուղղափառ քրիստոնեայ, պարտքս կըհամարեմ յայտնել ում հարկն է։

«—Ի՞նչ յայտնել, պարոն,—հարցրեց Շմուլ Մօզերը։

«—Այն, որ ձեր այս խոզաբունը լիքն է յեղափոխականներով։ Ա՛յ, անպիտաններ, ուրեմն հայր Վլադիմիրը զուր չի ասում, թէ դուք խորշում էք ուղղափառներից։ Դուք «գօյ» էք անուանում մեզ, ձեր Թալմուտը մեզ պիղծ է կոչում։ Ա՛յ, մենք պի՞ղծ ենք։ Եթէ պիղծ ենք, ապա ինչու համար էք ձեր Պասէքին գողանում մեր երեխաներին, սիրտը ծակում և արիւնը քամում, որ ձեր «մացա»-ին խառնէք, հա՞, ասացէք։

Ո՞վ կարող էր այդ խելացնորին համոզել, որ այդ բոլորը զրպարտութիւն է։ Նա գոռում էր ու պնդում ասածը։ Վերջապէս, հարևաններս ազատեցին մեզ նրանից։

Հետևեալ օրը խուզարկեցին ոչ միայն Ռաբինովիչին, այլև ինձ, Շմուլ Մօզերին, բոլոր գործակատարներիս թէ տանը և թէ մագազինում։ Ի հարկէ, ոչինչ չըգտան։ Բայց այդ բանը բաւական վնաս տուեց մեզ։ Քաղաքական ահաբեկութիւնը այն ժամանակ մեծ էր, մարդիկ վախենում էին իրանց ստուերից։ Ոչ միայն գնողներս պակասեցին, այլև բանկերում ըսկսեցին մեզ վրայ ծուռ աչքով նայել…

Շմուլ Մօզերն ինձ մխիթարում էր.

«—Մի՛ վախենար, մեր բանը շուտ կըդրստուի, բայց Ագրինցևի գործերը շատ վա՛տ են, քանի որ այդպիսի միջոցների է դիմում։



քաղցած և կիսամերկ խուժանի դիւային քրքիջը։ Ես ու Շմուլը սարսափից կուչ եկանք պատի տակ։ Ռաբինովիչը հանեց գրպանից մի ատրճանակ և պահեց ձեռքում։

Մօտ մի ժամ տևեցին աղմուկը, կողոպուտը, կոտորածը մեր փողոցում։ Բայց մեր դռները դեռ անշարժ էին։ Յետոյ մի քանի րոպէ տիրեց չարագուշակ լռութիւն։ Լսում էինք միայն բազմաթիւ քայլերի ձայներ։ Շմուլ Մօզերը կարծեց, որ մենք փրկուեցինք։ Ես մօտեցայ դռներին, նայեցի նրանց արանքով դուրս։ Սիրտս ասում էր, որ այնտեղ պատրաստւում էր մեր դէմ մի վատ բան։ Եւ ահա ինչ տեսայ. փողոցի մէջ տեղում կանգնած էր Ագրինցևը, ձեռքում մի շիշ օղի։ Նա գոռաց.

«—Անիծուածնե՛ր, ու՞ր էք փախչում։ Զօրքի՞ց էք վախենում։ Շարունակեցէք, ոչ ոք ձեզ չի խանգարիլ։ Այս կողմ եկէք, ու՞ր էք վազում, աւանակնե՛ր։

Յետոյ շարունակեց.

«—Ահա՛, լակեցէք այս շիշն էլ։ Չորրորդն է. վերջին հինգ րուբլիս եմ ծախսել։ Լակեցէք։ Քա՛ջ եղէք։ Խփեցէք, կոտրեցէք դռները։ Սնդուկը ոսկով լիքն է։ Այստե՛ղ, մի՛ հեռանաք, ապուշներ։ Լսո՞ւմ էք։ Էհ, ինչ շքեղ ցուցանակ ունի։ Մտէք ներս, տեսէք։ Ամենքիդ մի բան կըհասնի։ Բայց ձեռք չըտաք այն մէկին, միրուքաւորին։ Կըբռնէք և ինձ կըյանձնէք։ Նո՛ւ, սկսեցէք, շան զաւակներ։ Մէկ, երկու, երեք, հուռա՛, կեցցէ…

Խուժանը կրկնեց «հուռա» և կեցցէ»…

Շմուլ Մօզերը գոռաց.

«—Այգելման, մագազինը կորած է, գոնէ մեր գլուխներն ազատենք։

Բայց այլ ևս ուշ էր։ Դռները դղրդացին և խորտակւելով ընկան մայթերի վրայ։ Աչքերիս առջև բացւեց մի տեսարան, որ եթէ երազումս տեսնէի, արիւնս պիտի սառչէր երակներիս մէջ։ Բայց յուսահատութիւնը ինձ տւել էր տարօրինակ քաջութիւն։ Ես չըվախեցայ։ Մօտ հարիւր սրիկաներ Ագրինցևի ղեկավարութեամբ ներս խուժեցին, փայտերով, կացիններով զինւած։ Կային և կանայք ու պատանիներ։

Ես փորձեցի կաշառել խուժանին փողով, որ մագազինս չըկողոպտեն։ Բայց ո՞վ էր լսում։ Այդտեղ միայն Ագրինցևի ձայնն էր ազդու։ Սրիկաներն ինձ հրեցին ներս, և այդ պահին լսւեց ատրճանակների ձայն։ Խուժանը մի վայրկեան յետ մղւեց, գոռալով.

«—Ռումբ, ռումբ...

Բայց ռումբ չըկար։ Դա Ռաբինօվիչի ատրճանակն էր, որ սրիկաներից մէկին թաւալեց դռների մէջ։

Առաջ բռնեցին Շմուլ Մօզերին։ Բռնողը մի յաղթանդամ կին էր Մեհերայի ահռելի կերպարանքով։ Նա գոռում էր.

«—Ես քեզ պիտի կենդանի այրեմ։

Եւ ձգեց ընկերոջս ամբոխի ձեռքը։ Բայց Շմուլ Մօզերին մահ չէր վիճակւած։ Նրան քաշքշեցին, ծեծեցին, ոտնատակ արին, բայց և այնպէս ազատւեց։ Կապկի ճարպիկութեամբ դուրս պրծաւ տասնեակ ձեռքերից, պատառոտւած հագուստով, ջարդւած կո-



ղերով և փախաւ մագազինի ետևի դռներով, թողնելով յատակի վրայ արեան հետք։

Շրջապատեցին Ռաբինօվիչին։ Նա դատարկել էր արդէն ատրճանակը և դարձեալ մէկին սպանել և երկուսին վիրաւորել։ Զէնքը խլեցին ձեռքից, և մէկը սկսեց նրա կոթով զարնել թշւառի բաց գլխին։ Այս բոլորը տևեց մի քանի րոպէ միայն։ Խուժանը արդէն կողոպտում էր ունեցածս։ Ես տեսայ ազնիւ գործակատարիս այլանդակւած դիակը փողոց շպրտւելիս։ Նրա գանգը երկու կտոր էին արել կացնի հարւածով։ Թշւա՜ռ մայր... Նա այժմ թափառում է փողոցներում ցնորւած...

«—Ա՜, վերջապէս, դու իմ ձեռքումն ես,—լսեցի ես Ագրինցևի ձայնը այն ժամանակ, երբ մի թեթև յոյս կար ամբոխի ձեռքից ազատւելու,—ո՞ւր ես ուզում փախչել։

Նրա հուժկու ձեռներն ինձ սեղմեցին պատին։ Ի՞նչ թաքցնեմ, պարոն, ես նրան խոստացայ բոլորը, ինչ-որ ունէի, միայն թէ կեանքս ինձ թողնէր։ Ես ստորացայ այդ սինըլքորի առջև, որովհետև աչքիս առջև կանգնած էին զաւակներս, որոնք պիտի մնային անխնամ։

—Մի՛ վախենար,- գոչեց Ագրինցևը,—-ես քեզ չեմ սպանիլ։ Ընդհակառակը, դու պէտք է ապրես, որ միշտ յիշես Ագրինցևին։ Է՛յ, թաւալեցէք այս քոսոտին գետին...

Սրիկաներից երկուսն օգնեցին նրան և ինձ թաւալեցին։ Գրպանումս ունէի մի մեծ դանակ. այդ էր իմ միակ զէնքը ամբողջ կեանքումս։ Այժմ ուրիշ է»

այժմ ես ատրճանակ ունիմ և պիտի հրացան էլ ձեռք բերեմ։ Ես նշան արի թշնամու սիրտը, բայց վիրաւորեցի միայն նրա թևը։ Կարծես, նա ցաւ չըզգաց, ճիչ անգամ չարձակեց։

«—Այգելման,—գոռաց նա, ծնկները սեղմելով կրծքիս և կոկորդս բռնած,—ընկերդ ասաց, թէ դուք ինձ թալալեցիք և խեղդեցիք։ Բայց այդպես չեն թալալում մեր օրէնքով. այլ այսպէս։ Դէ՛հ, հանիր լեզուդ...

Զուր էի ճիգ անում ազատել նրա ձեռներից։ Նա թքեց երեսիս և մի քանի անգամ ապտակեց։ Սրիկաները ոտներով զարկում էին կողերիս։ Հասկանալի էր Ագրինցևի միտքը։ Ես երեսս իվայր շուռ եկայ։

«—Է՛է, չե՞ս ուզում, որ աչքերդ հանեմ, լեզուդ կտրեմ,—ասաց նա,—ոչինչ։ Թող այդպէս լինի։ Այսքանն էլ բաւական է. ես ուզում եմ միայն քեզ վրայ մի նշան թողնել...

Նոյն վայրկեանին գլխիս վրայ փայլեց դանակի դեղին կոթը։ Զգացի սուր ցաւ և յետոյ երեսիս վրայ տաքութիւն։ Արիւնս էր, որ խառնուելով հողի հետ, փակեց աչքերս։ Ես լսեցի.

«—Է՛յ, սրիկաներ, ես միայն այս ականջն եմ վերցնում Այգելմանի հարստութիւնից։ Մնացեալը ձեզ լինի։ Բաժանեցէք...

Այստեղ ես ուշաթափուեցի...



Հրեան կանգ առաւ։ Օ՜, որքան ատելութիւն, վրիժառութեան կրակ և անզօրութեան կսկիծ կային նրա խելացի աչքերի մէջ։ Մի քանի վայրկեան տիրեց ծանր լռութիւն։

Պէտք է զօրեղ կամքի տէր լինէր Ահարոն Այգելմանը։ Տեսնելով, որ իր պատմուածքը մեզ վրայ գործեց ճնշող տպաւորութիւն, շտապեց զսպել իր սրտի ալեկոծութիւնը։

Եւ, դառնալով աղջկաս, նա դարձեալ ժպտաց սիրալիր և ասաց.

«—Մադմուազել, այժմ մի ականջս ուղղափառ քրիստոնեայ է, իսկ միւսը հրէայ...

Մենք հասանք Վարշաւա»...

## ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ ԳՈՐԾԵՐԸ

1) «Հրդեհ նաւթագործարանում»։
1883 թ. «Մշակ» . . . —
2) «Գործակատարի յիշատակարանից»։
1883 թ. դեկտ. «Մշակ» . . —
3) «Նորերից մէկը»։
1884 թ. «Գործ» ամսագիր . —
4) «Խնամատար»
1884 թ. «Արձագանք» . . . —
5) «Նամուս»։
1885 թ. հրատ. Թիֆ. Հրատ. Ը. ռուս. թարգմ. Ալ. Խատիսեանի։—
6) «Օրիորդ Լիզա»։
1885 թ. «Արձագանք», ռուս. թարգ. Ալ. Խատիսեանի —
7) «Արամբին»։
1886 թ. «Արձագանք» . . . —
8) «Շրջանից արտաքսուածը»։
1888 թ. «Տարազ» . . . . . —
9) «Ջուր Յոյսեր»։
1888 թ. «Արձագանք» . . . —
10) «Խելագարը»։
1880 թ. «Արձագանք» . . . —
11) «Արսէն Դիմաքսեան»։
1892 թ. «Մուրճ» . . . . . —
Ռուս. թարգմ. Ս. Այվազեանի։—
12) «Կրակ»։
Հրատ. «Արօր» տպարանի Բագու 1896. . . . . . . . —
13) «Ցաւագարը» 1895. ռուս. թարգմ.—
14) «Քաօս»։ 1898. «Բագու» «Արօր» տպ.
15) «Մեյանիա»։
1899 թ. «Տարազը» առանձին —

16) «Եւգինէ»։
1900/01 Թիֆլիս . . . . . . . —
Ռուս. թարգմ. Մ. Կարա-Մուրզայի։ . . . . . . . . . . —

17) «Արտխտը»։
1901 թ. «Մուրճ»։ Ռուս. թարգ. —

18) «Վարդան Ահրումեան»։
1902 թ. «Լումա» . . . . . . —

19) «Հաւատարիմ ընկերներ»։
1902 թ. «Լումա» . . . . . . —

20) «Ունէ՞ր իրաւունք»։
1902 թ. «Լումա» . . . . . . —

21) «Պատւի համար»։
1903 թ. «Լումա» . . . . . . —
Թարգմ. ռուսերէն, ֆրանսերէն, տաճկերէն և վրացերէն։ . . . —

22) «Գաղափարի գերին»։
1903 «Լումա» . . . . . . . . —

23) «Երկու եղբայր»։
1905 թ. «Արշալոյս» . — . . —

24) «Ջհուդի ականջը»։
1905 թ. «Արշալոյս» . . . . —

25) «Կործանուածը»։
1906 թ. Փարիզ . . . . . —

26) «Աւերակների վրայ»։
1907 թ. Փարիզ . . . . . . —

27) «Ծառլատանը»։
1908 թ. Փարիզ . . . . . . —

28) «Արմենուհի»։
Զւիցերիա 1909 թ. . . . . . —

29) «Կեանքի բովից»։
1910/11 թ. «Հորիզոն»։ . . . —

30) «Իմ կեանքից»։
1910 թ. «Հասկեր» . . . . . —

1976

ՀՀ Ազգային գրադարան
NL0351691

48391


# Ծ Ա Խ Ւ Ո Ւ Մ  Ե Ն

Բոլոր հայ գրավաճառների մօտ ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ հետեւեալ
երկերը

«Ցաւագարը», գինն է ճանապարհածախսով — 60 կ.
«Նամուս» « » « » » 1 ր. —
«Ժողովածու» I հատոր « » » 1 ր. 50 կ.
„ „ II հատոր « » » 1 ր. 50 կ.
„ „ III հ. (Արսէն Դիմաքսեան) 1 ր. 50 կ.
«Քաոս» ճանապարհածախսով . . . . . 1 ր. 50 կ.
«Կրակ» (սպառուած) . . . . . . . . . — ր. 50 կ.
«Զուր յոյսեր» (սպառուած) . . . . . 1 ր. — կ.
«Աւերակների վրայ» ճանապարհածախսով 60 կ.
«Կործանուածը» « » » » 1 ր. —
«Արտիստը» « » « » » 30 կ.
«Ցաւագարը եւ Ջհուդի ականջը» ճանապ. 50 կ.